 տենը անձ եղիպտացոց սիրտը մէկ  
 վախմբ ձգեց թէ մենք աս մութ գի-  
 շերը ինչ տեղ կը բալենք կոր, ու սաս-  
 տիկ շփոթ վեւոյճոն մէջը կասկեցան  
 մնացին, ոչ առաջ կրնային երթալ  
 ու ոչ ետ դառնալ: Աս որ եղաւ՝ ալ  
 առտըվան գէմ անձ հրամայեց մով-  
 սէսի, որ դառնա ձեռքը ծովուն վրա  
 երկնցունէ. ու անանկ ըրածինսկէս՝  
 ան երկու դի բաժնրված բոլոր ծո-  
 վուն ջուրը քովէ քով եկաւ, ու ան-  
 տեղը բովանդակ եղիպտացոց բա-  
 նակը փարաւոնի հետ՝ անանկ ծած-  
 կեց՝ որ մարգմբ չիխալըսեցաւ: Աս  
 մեծ հրաշքըս որ տեսան ինչացինե-  
 րը՝ այ ահը սրտերնին մէջը աւելի  
 հաստատուեցաւ, ու աղէկ իմացան  
 թէ մովսէս մարգարէն մեծ ծառայ  
 այ է: Անտենը երիկ մարգիքը ու  
 կնիկ մարգիքը զատ զատ երկու դաս  
 եղած, մէկուն դասադլուխը՝ մով-  
 սէս, ու մէկալինը՝ մովսէսի քուրը  
 մարիամըսած, սկսան ուրախութի  
 գոհունի տալ այ, ու նրվագարանով  
 (ցի չալղըյով) սլար բռնած երգել-  
 ան օրհնութիւր որ կըսէ՝ ( ) րհնեցոքաթ  
 Կիք զի Ժամօթ է Ժամաստրեալ. ևն:

ԳՎ : Բ .

Լ՝ Կապարը ԾԺ ԻԷԼացոց ջրին պահասուհիը  
 կը հոգա , ու Տանանան Իրենց կերակուր  
 կուտան :

Ի՞նչ լացոց քանակը կարմիր ծովէն որ  
 ելաւ՝ դէպ՛ի սուր ըսած անասա-  
 ան որ գնաց , հոն իրեք օր ճամբա ը-  
 նելով՝ ալ խմելու ջրերնին պակսե-  
 ցաւ . ու ան անասատը ջուր չէին  
 գտներ , ետքը երբոր մեռա ըսած  
 տեղմը հասան , ու հոնալ եղած ջու-  
 րը տեսան որ անանկ լեղի է՝ որ չէր  
 խմվէր , սկսաւ Ժողովուրդը մտխոյ  
 դէմ արտորնջալ՝ Թէ ինչ պատոր խը-  
 մենք , Ե՛րբ խմեալ ան ատենը նոյ որ  
 դիմեց , Ինձ իրեն մէկ կերպմը փատ  
 ցըցուց՝ որ անիկա ջրին մէջը դնե-  
 լով կանու շնար , ու անանկ խմելով  
 Ժարաւնին անցուցին , և ասով խրա-  
 տեց Ինձ Ժողովուրդը , որ՝ Թէ իրեն  
 տրված պատու իրանքները պահեն-  
 նէ՝ իրենք ամմէն փորձանքներէն կը  
 պահպանէ , ու կը հոգա : Լ՝ նկէ ելան  
 ինչ լացիքը եղիմ ըսած տեղը եկան .  
 որ հոն տասվերկու անուշ ջրի աղ-  
 բուր կար , ու եօթանասուն արմա-  
 շենի (յի խուրմայի ծառ) . ան տեղ-  
 նալ քիչմը ատեն կենալէն ետքը , նո-  
 րէն ճամբա ելան դային դէպ՛ի սին

անապատը . ու անատենը երբորալ  
 ու տելիքնին սկսաւ պակսիլ , ամմէ-  
 նը միաբան տրտնջալով մովսէսի ու  
 ահարոնի վրա՝ կրսէին . երանի թէ  
 եգիպտոս ան նյխրկած պատուհաս-  
 ներովը մէնքալ մեռած ըլլայինք .  
 երբոր մտին պտուկներուն քովը նըս-  
 տած՝ կուշտ մեր հացը կուտէինք ,  
 քան թէ որ մեզ աս անապատ տե-  
 ղըս հանեցիք բերիք՝ որ ամմէնըս սո-  
 վէ ըսպաննէք : Սովսէս ու ահարոն  
 ալ իրենց ըսին թէ՛ ինչ կրնէք , ատ-  
 ձեր տրտունջը մեզի չէ՛ հապա նյ վը-  
 բա կերթա՛ որ ինքը ձեզ եգիպտոսէ  
 հաներ է : ու ետեւ նյ դիէն իրենց  
 խօսք տրվին՝ որ ան իրիկունը ու տե-  
 լու միս գտնան , ու մէկալ առտրվանց  
 հացալ ունենան : և աս մովսէսի խօս-  
 քը նձ իէլայոց հաւտացունելու  
 համար՝ ան իրենց առաջնորդող սիւն  
 ամպոյ ըսածը աւելի լուսաւոր ու  
 փառաւոր երեցուց անատենը : Այտ-  
 քը ըսածինպէս՝ իրիկվան դէմ ան-  
 հուն անհամար լորամարդի (յ՞ պըլ-  
 տրձին) եկաւ ինջաւ իրենց բանակին  
 վրա . ու մէկալ օրը առտրվանց կա-  
 նուխ ելլեն տեսնեն որ բանակին չորս  
 դին գետնին երեսը գինձի (յ՞ քիշ-  
 նիշիպէս) մանտրտիկ կըր ձերմակ  
 բանմը ինջեր է . ու զարմալով սկսան  
 մէյմէկու հարցունել երբայեցերէն՝

Ման հոս , որ ըսել է թէ՛ աս ինչ է .  
 ու ասով անոր անունը մանանա մնաց .  
 Մովսէսալ ըսաւ թէ՛ ասա աս է հա-  
 ցը որ Խժ ձեզի կուտա որ ուտէք : ու  
 ետքը Խժ ինն անոնց ապրստորեց մով-  
 սէս՝ որ ամէն առտու ելլեն՝ իրենց  
 մէկ օրվան պէտք եղածին չափ ժող-  
 վեն , որ ան օրը ուտեն՝ մէկալ օրվան  
 չի ժողուն . ու ուրբաթ օրերը երկու  
 չափ ժողվեն , որ շաբաթ օրվանալ  
 բաւական ըլլա : Ինչու որ՝ շաբաթուն  
 մէջը միան վեց օր կիջնար աս մանա-  
 նաս՝ շաբաթ օրերը չէր ՚ի դար . ու  
 թէ՛ առտրվանց ուշանային՝ կանուխ  
 չի ժողվէիննէ , արևը վրան ծագա-  
 ծինպէս կը հալէր բան չէր մընար .  
 ու թէ՛ շաբաթ օրէն՝ ՚ի դատ ուրիշ օր-  
 վան համը պահէիննէ՝ կաւրէր կորդ-  
 նտտէր : Աւ աս անանկ բանմընէր՝  
 որ առաջ կը ծեծէին ալուրիպէս կը-  
 նէին , ետքը շաղվելով հացիխմորի-  
 պէս կը շինէին , ու այնպէս կեփէին  
 կուտէին . որ շատ անուշ ու համով  
 բան կը լար , և մարդը աղէկ կը կշե-  
 տացունէր : անանկ որ՝ աս մանանայ-  
 ովըս ապրեցան բոլոր ինչացիքը ան  
 քառսուն տարի ճամբորդուե ատեն-  
 նին , ինչվան որ տեղերնին հասան :  
 Ատքը ասալ հրամայեց Խժ ինչացոյ՝  
 որ ան մանանայէն մէկ ամանով մը  
 առնեն զատ սրահեն . որ Խժային բա-  
 րէ



ըրբարուէր յաւիտենական յիշատակ  
մնա իրենց ազգին մէջը, որով անա-  
պատը իրենք կերակրեց անձ : ու ան  
ամանով մանանան ետև տասպանա-

կին մէջը դրվեցաւ սլահվեցաւ :

Բ. սին ըսած անասպատէն երբոր է-  
լան ռափիդիմ ըսած տեղը եկան՝  
հոնալ խմելու ջուր չի գտան. ուստի  
նորէն սկսաւ ժողովուրդը տըրտըն-  
ջալ ու բամպասել մովսէսի դէմ. ինչ-  
չու ըսին մեզ եգիպտոսէ հանեցիր  
աս անասպատ տեղըս բերիր՝ որ մեզ  
ամմէնըս ծարվէն ջարդես : և աս բա-  
նիս համար քիչ մնաց որ մովսէսը քար-  
կործէին : Մովսէսալ գանկտելով  
այ դիմեց՝ որ ասոր ճարը տեսնէ .  
անստէնը անձալ հրամայեց որ՝ մէկ  
քանի հոգիմը անոնց ծերերէն հե-  
տը առած երթա դիմացը քորեք լե-  
ռը, ու հոն իր գաւազանովը ապա-  
ռաժ քարին զարնէ, որ անկէց բխած  
ջուրը ժողովուրդը խըմէ : Մովսէս-  
ալ անանկ ըրաւ, ու ան տեղին ա-  
նունը՝ փորձութի դրաւ. ինչու որ  
իւլայիները ասով ան փորձել ու-  
ղեցին :



ԳՎ : Թ .

Մ. Տաղեհացիները իւրարու վէն Եւրպիներէն .  
 ( Յոնոր հոգա Տովսէսը Բարեւելա :

Մ. ս տեղւանքըս ամաղեկացի ըսած  
 աղղը պինտ առջինը եղան որ իս-  
 րայէլացոց դէմ կեցան , ու հետեր-  
 նին ուղեցին պատերազմ ընելը Մ. ուլ-  
 սէսալ զօրապետ դրաւ յեսու որդին  
 նաւեայ ե փրեմայ ցեղէն , ու իրեն հը-  
 րամայեց որ ժողովրդոց մէջէն կըտ-  
 ըիճ ու ժ ուլ մարդ իք ընտրէ հետը առ-  
 նէ , ամաղեկացոց դէմ ելլէ պատե-  
 րազմի : ու անատենը ինքը դաւաղա-  
 նը ձեռքը՝ ահարոնի ու ուլի հետ լէ-  
 ոան վրա ելաւ , որ անկէց պատե-  
 րազմը տեսնէ , ու աղօթք ընէ վրա-  
 նին : Մ. ն պատերազմին ատենը մուլ-  
 սէս թաւերը վեր բռնած աղօթք որ  
 կընէր՝ Եւրպիները կը յաղթէին , ու  
 երբոր հոգնեւէն մուլսէսի թաւերը  
 վար կինջնար՝ ամաղեկացիները վրա  
 կեւլէին : Մ. ս որ տեսան ահարոն ու  
 ուլը՝ առին մուլսէսը մէկ քարիմը վրա  
 հանդիստ նստեցուցին , ու մէկը աս  
 դիէն՝ մէկալը անդիէն թաւերուններ-  
 քը մտան վեր բռնեցին . ու անանկ  
 ինչվան իրիկուն մուլսէս բազկատա-  
 րած աղօթք ընելով , յեսու բողոր ա-  
 մաղեկացիները տակ առաւ ջարդեց :

Լստ .

Ատքը մովսէսի հրամայեց անձ որ աս  
 յաղթուէս յիշատակարանը գրէ՝ ու  
 յետուայ տա, և ըսէ որ անձ բոլորո-  
 վին ամաղեկացոց յիշատակը աշխար-  
 քէս պիտի վերցունէ: Մովսէսալ ՚ի  
 շնորհակալուի աս յաղթու թէս հոն  
 ան մէկ սեղանմը շինեց, ու անունը  
 դրաւ՝ Տը ապաւէն իմ:

Ըս ատեններըս յոթոր մովսէսի ա-  
 ները անտեղ վանքները մօտ բնա-  
 կած ըլլալով ինքնալ հետը առած  
 մովսէսի կնիկը ու երկու տըղաքը՝ (որ  
 ինչպէս կըսեն նորէն մովսէս եգիպ-  
 տոսէ հոն խըրկերէր,) ելաւ եկաւ  
 որ մովսէսը բարեւէ, ու իրենց՝ եգիպ-  
 տացոց ձեռքէն ազատութիւն համար  
 ուրախակից ըլլաւ: Մովսէսալ շատ  
 սիրով ու մեծարանքով ընդունեց իր  
 աները, ու առաւ տեղն իտեղը անոր  
 պատմեց փարաւոնի ձեռքէն իրենց  
 գլխէն անցածները, ու ան ինչացոց  
 բրած բարիքը և նախախնամութիւն  
 որ յաթորալ լսելով փառք ու դոհուի  
 կուտար ան: Ատքը անոր մէկալ օրը  
 յոթոր տեսնելով որ առտը վանց ինչ-  
 վան իրիկուն ժողովուրդը մովսէսի  
 գլուխը թափերեն, ու մովսէս միս  
 մինաւոր անոնց ամմէն մէկուն դա-  
 տաստանը (յի շէրահաթը) կըարեւու  
 ու իրաւունքը ցուցունելու կըտան  
 ջըվի կոր, սա բանիս չի հաւանեցաւ

յոթոր, ու մովսէսի ըսաւ, առ աղէկ  
 չես քնե՞ր, որ դու նալ՝ ժողովուրդն ալ  
 հետըդ մէյտեղ չափէ՞ դու ըս կը տան  
 ջլովիք. առ մինաւ որ ընելու բան չէ՞ :  
 Ատե իրեն աս խրատս տըվաւ որ՝ ան  
 բոլոր ժղիքդին մէջէն ինքը՝ խելա  
 ցի, արդար, անձավախ ու խոնար մար  
 դիք ընտրէ, և ասոնք իրեն ներքեւը  
 դատաւորներ դնէ, հաղար մարդու  
 վրա՝ մէկը, հարուրին՝ մէկ ուրիշմը,  
 յիստունին՝ ուրիշմը, տասնինալ մէկ  
 մը. որ մանրը բաներուն դատաստա  
 նը անոնք տեսնեն. ու մեծ բանմը որ  
 հանդըղինէ՞ իրեն բերեն՝ որ ինքը  
 կտրէ իրաւունքը : Աս յոթորայ տը  
 ված խրրոտս՝ մովսէս իբրև աստուծ  
 մէ իրեն յայտնըված՝ սիրով մը ռեց :  
 ու ըսած ինպէս ընելով՝ ալ շատ աշ  
 խատանք չէր քաշեր անչափ ժողո  
 վուրդը կառավարելու :

Գ Լ Ժ .

ԼՃ սինա լեւը պատմաբանեաց պատմել  
 բանքները իտպա Թէլադոյ :

ԼԷ լացիները ռաբիդ իմէն ելան՝ ու  
 սինա լեւան տակը եկան հասան  
 նէ՞ լման իրեք ամիս եղաւ եզիպտո  
 սէ ելլելնէն : ու հոն լեւանը դիմա  
 ցը երբոր այ հրամանովք բանակնին  
 դրին կանկառին, մովսէս մինաւ որ  
 սի

սինա լեռան գլուխը ելաւ, ու ան-  
 անոր առջև զնե լույ իրեն ըրած բա-  
 ըրարուին երբ ինչացոց ազգին, հը-  
 րամայեց որ երթա իրենց ըսէ թէ՛  
 ինքը ան հետերնին ուխտու դաշինք  
 կուզէ դնել, որ եքրայեցոց ազգը  
 ուրիշ ազգերուն մէջէն ընտրած ի-  
 ընն մէկ հատիկ սիրելի ժողովուրդ  
 ընէ: Սուսէսալ լեռնէն ինջաւ՝ աս  
 բաներըս բոլոր ժողովոց առջև զը-  
 ռաւ: Ենանքալ ամմէնը մէկ բերան  
 հաւնեցան ու խօսք տրվին թէ՛ ինչ  
 որ ան մեզի կը հրամայէ՛ն, կը հնա-  
 զանդինք անանկ կընենք: Սուսէս-  
 նորէն լեռը ելաւ որ աս ժողովուր-  
 դին պինքը այ տանի. ու անատենը  
 ան մուսէսի ըսաւ թէ՛ ինչպէս աս օ-  
 ըրս հետըդ առանձին կըխօսէի, հիմա  
 ամպերու մէջէն պիտի քու հետըդ  
 յայտնի զուրուցեմ, որ բոլոր ժողո-  
 վուրդնալ իրենց անկաճալք լսեն, ու  
 այսուհետե կատարե՞լ հաւտան քե-  
 ղի: Ատքը հրամայեց որ նորէն եր-  
 թա անոնց ապրսպրէ՛ որ լաթերնին  
 վը լանան սրբը լին մաքրը վին, ու այս  
 պիտի պատրաստուք իրեն օրէնքնե-  
 ըր առնեն՝ որ անկէց երեք օրէն ետե  
 պիտի տա. ու աս ալ ըսաւ որ՝ լեռա-  
 նը չորս դին սահման (յի սինսո) դնեն,  
 որ չըլլա թէ մարդ կի՞ ուրիշ կենդա-  
 նի անկէց աստին անցնի, որ ան տեղը

չարաչար չիմեանի : Աս բոլոր բաները ս մովսէս ինչլացոյ գալէն ըսելէն ետեւ , երբորդ օրն որ եղաւ՝ առտը վանց կանուխ ելաւ տեսաւ ժղիքդը՝ որ սինա լեռան գլուխը ամպերով ծածկած սոսկալիկայծակներով կերի կրմըխա , ու գոռալով զարհուրելի փողերու ձաներ անկէց կուգա : Արբոր անանկ լեռան չորսդին ժողովուրդն որ սարսափած կեցեր էր՝ անատենը սկսաւ լսծ ահաւոր ձանով ան ամպերուն մէջէն իր տասնաբանեայ պատուհիրանքները ըսել , աս  
 հարգ սվըս :

Թ. Ա՛ս եմ քու լոր լսծըդ , որ քեզ եգիպտացոյ ծառայու թէ աղատեցի : Իսմէ ալ ուրիշ լսծներ չունենան : ամենեկին մէկ կերպարանքովմը չըլլա՞ որ քեզի կուռք շինես՝ կի՞ երկինքը տեսածներուդ նմանուիով , կի՞ երկրի վրա եղածներուն , կի՞ ջրի մէջ գտնրվածներուն . ու չըլլա՞ թէ ասոնց երկրպագուի ընես , ասոնք պաշտես . թէ չէ՞ գիտնան որ ես քու լոր լսծդ՝ անանկ նախածոտ լսծ եմ , որ իս ատող հարերուն մեղաց պատիժը՝ կը հատուցանեմ իրենց որդոցը ինչվան իրեք ու չորս պորտը . ու իս սիրողներուն և իմ պատուհիրանքները ս պահողներուն կողորմիմ՝ ինչվան անոնց հազար պորտը :

բ. Վրու ինր աստուծուդ անունը՝ բերան առած պարապ տեղ մի՛ բանեցուներ . գիտնաս որ ի՞նչ ան մարդը անմեղ չիտեպէր, որ իր անունը ան

հարկի տեղվանք կը բանեցունէ :

դ. Յիշէ՛ որ սք պահես շաբաթ օրը : Սեց օրվան մէջ բանէ՛, ինչ գործք ունիսնէ բրէ, եօթնէ՛րդ օրը շաբաթ՝ քու ինր աստուծուդ նըվիրած է . ան օրը ամենեկին բան մի՛ բանիր, ո՛չ դուն, ո՛չ քու տղադ, ո՛չ քու աղջկիդդ, ո՛չ ծառագ, և ո՛չ աղախներդ . ո՛չ էջըդ, ո՛չ եզըդ, և ո՛չ ուրիշ անասուններդ . նաև ո՛չ քեզի հետ կեցող օտար մարդիքը : Արովհետև վեց օրը բրաւ ինր ի՛նչ երկինքը ու երկիրըս ու ծովը՝ և ամէն բաները որ անոնց մէջ են, ու եօթներորդ օրը հանդէցաւ . անոր համար ինքը օրհնեց աս օրըս ու սրբացուց :

դ. Սատի՛ տներ քու հօրրդ ու քու մօրրդ, որ քեզի աղէկ ըլլա . ու շատ ասարիս ան բարի երկրին վրա՛ որ քու ինր ի՛նչըդ պիտի քեզի տա :

ե. Սպաննու թի մի՛ ըներ :

զ. Շնու թի մի՛ ըներ :

է. Վողու թի մի՛ ըներ :

ը. Սուտ վկայու թի մի՛ ըներ քու ընկերիդ վրա :

թ. թ. Սի ցանկար (յի աչք տնկեր) ուրիշի սանը, կի՛ անոր արտին (յի թառ

(Թառաւային)։ Վի՛ցանկար ուրիշի կըն-  
կանը , ոչ անոր ծառային , ոչ աղա-  
խինին , ոչ եղանը , ոչ իշուն , ու ո՛չ  
ալ ինչ որ ուրիշը ունի՛նէ :

Մնատենը ժղի՛բղը որ աս անձային  
սոսկալի տեսիլքըս տեսաւ ու ահա  
դին ձաներն որ լսեց՝ սաստիկ զար-  
հուրեւով ետ քաշված աղաչեցին  
մովսէսի՛ որ անկէ ետքը ինքը երթա  
այ՛հետ մինաւոր խօսի , ու գա իրենց  
հասկըցունէ՛ այ՛ հրամանները . որ  
չըլա թէ ըսին՝ մէյմալ որ ասանկ  
հանտըսի՛նէ՛ վախերնուս մեռնինք :  
Սովսէսալ իրենց սիրտ տըվաւ մխի-  
թարեց : ու երբոր նորէն անձ ինքը  
կանչեց , սինա լեռը ելաւ , ու ամ-  
սով ծածկըված՝ հոն այ՛հետ կեցաւ  
քառսուն որ քառսուն գիշեր : Աւ ան  
ատենին մէջը ալ ուրիշ շատ օրէնք  
ներ և անձպաշտուէ ծէսեր անձ սոր-  
վըցուց մովսէսի՛ որ ինչ լացոց տա . ու  
ետքը ան տասնաբանեայ պատու՛ի  
բանքներնալ երկու քարի վրա գրած՝  
անձ իրեն տըվաւ որ նորէն իսրայի-  
լացոց տանի :

ԳՎ : ԺԲ .

Ինչացի՛ք անձ իլեռդան՝ հորի կը պաշտեն :

Մն քառսուն օրվան մէջը ինչ լացի-  
ները տեսնելով որ ուշացաւ՝ ու չե-  
րեար



րեւար կոր մովսէս , ասոր վրա դժար  
 նին եկաւ՝ գացին ահարոնի վրա թա-  
 փեցան ըսին թէ՛ դուն մեզի անձներ  
 շինէ՛ որ անոնք առաջնորդուին ընեն  
 մեզ տանին . ան մովսէսը որ մեզ ե-  
 գիպտոսէ հանեց՝ չենք գիտեր իրեն  
 ինչ հանդըպեցաւ որ չերեւար : Վ՛հա-  
 ըոնալ հրամայեց որ երթան իրենց  
 կնիկներուն ու զաւկներուն ոսկի օղե-  
 րը անկաճներնէն հանեն իրեն բե-  
 րեն : ու առաւ ահարոն անոնք հա-  
 լեց , անով մէկ ոսկիէ հորթմը թա-  
 փեց : Արբոր աս տեսան ինչացիքը՝  
 խիտ ուրախացան , ու (ինչպէս կը-  
 սեն՝) հրաշք սեպելով աս բանըս որ  
 եգիպտացոց պաշտած անկերպարան-  
 քը ելաւ . անոր համար սկսան ըսել  
 թէ՛ աս է մեր անձը որ մեզ եգիպտո-  
 սէն հանեց : Աւ ահարոնալ դրաւ՝ ա-  
 նոր առջև սեղան շինել տրիւաւ . ու  
 ամմէնուն ծանուցումըրաւ որ վաղը  
 գան անոր տօնախմբուիլ կատարեն ,  
 որ անանկ մէկալ օրը եկան , զո՛հ մա-  
 տուցին անոր առջև . ու ամմէնքը ու-  
 րախուք նստան կերան խմեցին , ու  
 ելան սկսան խաղալ պար ցաթկել  
 ան հորթուն առջև : Վ՛ սկսապաշ-  
 տուին որ ինչացիք հոս կընէին , ան-  
 ատենք ան սինա լեռան վրա մովսէ-  
 սի իմացուց . և վրանին սաստիկ օրը  
 դողելով կուզէր որ բոլորովին ջար-  
 դէ

դէ ջնջէ անսնք , ու մովսէսը պահէ  
մեծ ազգ ընէ : Աայց մովսէս մէջ մը-  
տաւ , ու հաղար աղաչանքով պաղա-  
տանքով ճորով դադրեցուց ինչ բար-  
կուիր : Ատքը երբոր մովսէս ան ինչ  
գրած տասնաբանեայ պատուհիրան-  
քը ձեռքը բռնած ինջաւ լեռնէն ու  
կուգար կոր՝ յետուալիր հետը , հե-  
ռըվանց ժողովրդոց կանչվաւտելու  
ձանմը լսեց անիկա , ու ինքը բանը  
չիղ խոնալով մովսէսի ըսաւ . բանա-  
կէն պատերազմ ընելու ձան կուգա-  
կոր : Մովսէսալ ըսաց . աս՝ յաղթու-  
թի ընողներու կիմ յաղթըվողներու  
ձան չէ , հապա ես թըմրած գինով-  
ներու ձան կը լսեմ : Ատե մովսէսալ  
բանալին որ մօտեցաւ , և ան հոր-  
թը ու առջևը սյար բռնողներն որ  
տեսաւնէ՝ սաստիկ բարկուէններքև  
վրա ըլլալով՝ ան իր ձեռքի տասնա-  
բանեայ պատուհիրանքին քարերը ան  
տեղը գետինը զարկաւ ջարդեց , ա-  
նարժան են ըսելով աս փոփօխամիտ  
ժողովուրդըս այսպիսի անձային սք-  
որինաց : Աւ ետքը դնաց կործանեց  
ան ոսկի հորթը , ու կրակը դրած  
անանկ խարտոցով մանրեց , ու ան  
մանրուքը ջրին մէջը դրաւ թերեհա-  
ւաա ժողովրդոցը խըմցուց , որ իմա-  
նան թէ ան ինտոր ոչինչ բան է , որ  
իրենք ինչ տեղ դրած կը պաշտէին :  
Աւա

Վ, աւե ահարոնի վրայալ սաստիկ սրբ,  
 դողելով երեսը վար տրվաւ՝ որ աս  
 կռատաշտուէս ինքնալ սրատճառ է  
 եղեր՝ դէմ չէ կեցեր : Վտքը աս կեր  
 պով ուղեց մովսէս որ նյ բարկուիր  
 ինչացոց վրայէն վերցունէ . ինքը մէկ  
 դի բանակին դուռը կեցաւ՝ ու ժող  
 ղովրդոց ըսաւ թէ՛ սով որ նյ դիէն է  
 նէ՛ քովրս գա : Վ, ս որ լսեցին զւեայ  
 ցեղին մարդիքը՝ բոլորը քովը ժող  
 վրովեցան , ու մովսէսալ նյ կողմանէ  
 իրենց հրամայեց սր թուրերնին առ  
 նեն՝ բանակը մըտնան , ու չինային՝  
 ոչ ազգական ոչ բարեկամ , առանց  
 խնայելու ըսպաննէն ան կռատաշ  
 տուի ընտղները : Աւանանկ իրեք հա  
 ղարի չափ մարդ ջարդըվեցաւ . և  
 զւտացիները աս նք վրէժխնդրու  
 թերս համար մասնաւորապէս նյ  
 սիրելի եղան՝ ու իր օրհնուիր առին ,  
 որ ետքը ինչացոց քահանայուիր՝ և  
 իրենց ցեղին տրվաւ :

Վնկէ ետե նորէն մէջ մտաւ մով  
 սէս , ու շատ աղաչանքով նյ սիրտը  
 առաւ , որ աս ապերախուէս համար  
 ջընջել վերցունէլ կուզէր ինչացոց  
 ժողիգը . ու անանկ եղաւ որ՝ անճ հրա  
 մայեց իրեն որ առ ջինսինապէս՝ նորէն  
 երկու քար շինէ ու սինա լեռը գա :  
 Մովսէսալ շինեց՝ առաւ տարաւ . ու  
 հոն մէյմալ նյ հետքսուսուէս օր քսու

տուն գիշեր կեցաւ, որ անձան առջի տրված օրէնքները նորէն յիշելով, անատենը մովսէսի դրել տրվաւ անոնց վրա տասնաբանեայ պատուիրանքը : Աւերբոր աս պատուիրանքներըս առած եկաւ մովսէս իշխացոց երեցաւ, մովսէսի երեսը անանկ փառաւ որ ճառագայթով կրվառվէր՝ որ ժողովուրդը վախէն քովը չէին կրննար մօտենալ. անոր համար՝ ալ անկէ ետքը մովսէս սովորուի ըրաւ՝ որ ժողովուրդին հետ զուրուցելու որ կրլար՝ երեսը մէկ քողքովմը կրծած կէր . ու երբոր կերթար անհետ խօսելու՝ քողքը երեսէն կրվերցունէր :

## ԳՎ : ԺԲ .

Խորանին ու ասպանակին շինելը, և ուրիշ անձաշարուէ ծէսերը :

Մովսէս երկրորդ անգամը տասը պատուիրանաց քարերը բերելէն ետեւ՝ մէյտեղ ժողովեց բոլոր ժողովուրդը, ու յորդորեց որ անքառսուն օրվան ան իրեն յայտնրված անձաշարուէ բաներուն ձեռք զարնեն՝ կատարեն : Անոնքալ սիրով խօսք տրվին ընելու . ու սկսան ընծա տալ ան իրենց աղէկ աղէկ հագուաները ու զարդարանքները, նաև ոսկիէ ու արծրթի ամանները, ազնիւ քարեր,

ու ալ ուրիշ այսպիսի սուղ բաներ :  
 Մտոնք առաւ մովսէս՝ այ հրամանո-  
 վը կանչեց բեսէլիէլ ըսած մէկմը  
 յուգայի ցեղէն , ու եղիաբ դանայ  
 ցեղէն՝ իրենց յանձնեց . որ երկուք-  
 նալ (այսպիսի բարակ արհեստներէն  
 հասկընալէն՝ իղատ՝ հողւով սքովալ  
 լուսաւորված)՝ մովսէսի տուն տալովը  
 առաջ՝ խորան վկայուէ ըսածը շինե-  
 ցին , որ մէկ սղտիկ ժամմը կ'ի աղօ-  
 թարանմընէր , վրանի (յմ չատրուի)  
 ունէս շինած . ու ճամբան երթալնինի՝  
 ուր որ ինչացիք բանակնին կը դնէին՝  
 անոր մէջ տեղը աս խորան վկայու-  
 թէր կրկայնեցնէին կը յարմարցու-  
 նէին : Ատքը տապանակ կտակա-  
 րանաց ըսածը շինեցին , ( որ ան խո-  
 րանին մէջը կը պահվէր . ) ու աս մէկ  
 սնտուկմընէր անփուտ (կ'ի ապանօղ)  
 փատէ՝ ներսէն դրսէն ոսկիէ թիթե-  
 ղով (յմ թէնէքէով) պատած . ու վը-  
 րայի խուփը ( կ'ի խափախը ) բոլոր  
 մէկ կտոր թափած ու ոսկիէ՝ որ ասի-  
 կայալ քառուի կը սվէր : Աստոր վրա  
 երկու ոսկիէ թափած քերօքէ հրեշ-  
 տակ դըրած էր , մէկը աստիէն մէ-  
 կալը անդիէն , որ թեւերնին (յմ խա-  
 նատնին) բացած կը ծածկէին տա-  
 պանակը : ու անոր մէջը կը պահվէր  
 տասնաբանեայ պատու իրանաց դը-  
 րած քարերը . մէկ ոսկիէ սափորով

(յի տե՛ստիովմը) մանանան . ու ետքը  
նաև ահարոնի գաւաղանը որ հրաշ-  
քով կանանչցաւ . աս իրեք բանըս  
Վ. սկէ՛ ի զատ՝ վկայուէ խորանին մէ-  
ջը երկու սեղանալ շինվեցաւ օսկիով  
պատած . ասոնց մէկը կըսվէր՝ սեղան  
առաջադրուէ , որ միշտ տասվերկու  
բաղարջ հաց վրան կը դրվէր . և մէ-  
կալը՝ սեղան ինկոց , ուր նոյ ընծայ-  
ված բաները կը դրվէին : ու խորանին  
դրսիդին գաւիթը՝ ուրիշ սեղանմալ  
վրան ողջակէ՛զ զո՛հ ընելու համար ,  
զո՛հին ամմէն գործիքներովը : Վաև  
մէկ մեծ օսկիէ թափած աշտանակ  
(յի ճրագ կալ կի՛ շամտանմընալ՝) բա-  
րակ բանվածքներով զարդարած , որ  
վերի դին եօթը ձեղ կը բաժնրվէր ,  
ու ամմէն մէկին ծարը մէկմէկ կան-  
թեղ . որ բոլոր դիշերը ան վկայուէ  
խորանին մէջը պիտի վառէր : Վաև  
երբոր բոլոր ղևեայցեղը՝ (որ ղև տա-  
ցի ըսվեցան,) նծ իր ծառայուէ համար  
որ առաւ , ու անոնց մէջէն մովսէսի  
եղբայրը ահարոնը՝ իր գաւկըններովը  
որդոց որդի քհնյ ու քհնյապետ սահ-  
մանեց որ ըլան . անոնց նծ պաշտուէ  
ատենի հազուստներնալ շինվեցան :  
ու աս բոլոր ըսածներըս՝ մովսէս որ  
եղով օժեց որ նոյ նու՛ իրվեցան : Վը  
կայուէ խորանը երբոր ասանկ իր ամ-  
մէն պիտանու որու էր՝ որ լըմընցաւ ,  
է  
ան

անատենը նախ ամսույ ծածկեց անիկա . ու բոլոր գիշերները մէկ ճառագայթով լոյսմը կերևար անոր վրան : Նամբա բրած ատեննին որ խորանը կը ժողվէին՝ ան ամսը անյայտ կը լար . ու տեղէ տեղ ուր որ բանակ կը դնէին՝ խորանը կը հաստատէին , նորէն ան ամսը կուգար խորանը կը պատէր , ու միշտ գիշերը ան լուսը վրան կերևնար :

ԳՎ : ԺԳ .

Եւ իհարկաւ աս աբիուար , եւ ուրիշ յանցանորները կը պարծըվին :

Եւ ուրիշ օրէնքներէն՝ իզատ աս ալ հրամայերէր՝ որ քահանաները գիշեր ու ցորեկ կրակը միշտ վառ պահեն սպիտակիզաց սեղանին վրա . որ ան սք կրակէն բանեցունեն բուր վառին մէջը՝ երբ որ խորանը խնկար կելպէ տքը լա : Եւ անգամմը հանտը պէցաւ որ՝ նաբադ կիմ նադաբ ու աբիուդ՝ ահարոնի մեծ որդիքը ( որ իրենքալ քահանայ էին , ) ան հոգ ու բիրենց բուր վառներուն մէջը գըրսէն ուրիշ կրակ գրած՝ անանկ խորանը խունկ կը ծխէիննէ՝ յանկարծ սեղանէն կրակմը ելաւ՝ ու հոն խորանին մէջը երեց մեռցուց իրենք : Եւ որ տեսան՝ ամմէնըր ցաւեցան ու զար





## ԳՎ : ԺԿ .

Ինչպէ՛ր կը պարբերե՛ն ջանս աս դէ՛ժ , ու կը պար-  
ժե՛վին :

Ինչպէ՛ցոց բանակը մէկ տարիի չափ  
սինա լեռան տակը կենսալէն ետե՛-  
կերթոր ելաւ անկէ՛ց իրեք օր ճամբա  
ըրաւ դէպ՛ի փառանու անապատը ,  
անատենը ժողովուրդը սկսաւ տըր-  
տընջալ ւնյ դէմ՝ թէ աս ի՛նչ չարչա-  
րանք է մեր քաջածը : Ընոր համար  
սրգողեցաւ ւնձ՝ սոսկալի կրակմը ձը-  
գեց վրանին՝ որ էրեց լափեց բանա-  
կին մէկ կողմը ուրոր ան տրտնջողնե-  
րը կը լլային . անանկ որ՝ մովսէսի ա-  
ղօթքովը ճորով դագրեցաւ աս պա-  
տիժըս . ու ան պատճառով ան տեղին  
անունը՝ հրայրեայ (ք եանդըն)՝ ըս-  
վեցաւ : Ըսկէ ետքը հասարակ վա-  
րի ժողովուրդին մէկ փափաքմը է-  
կաւ միս ուտելու . ու անոնց հետ  
մէկ եղած մէկալներնալ՝ անանկնըս-  
տէր լալով կըսէին . ա՛խ թէ մեզի  
միս տային որ ուտէինք . դեռ մըտ-  
վընէս չելար ան ձկները՝ որ եգիպ-  
տոս ձրի կուտէինք , ուր է ան սէխը  
ու ձմերուկը , ու պրասը , սոխն ու  
սխտորը , որ անթեցերենք՝ ու մա-  
նանայէն՝ ի զատ աչլընիս ալ ուրիշ  
բան չիտեսնար :

նրս լսելով՝ տակն ու վրա եղու, ու սկսաւ գանկտելով ինչ ըսել, թէ ես մինաւոր կարողուի չունիմ ասչափ ժողովուրդը հողալ ու կառավարել. ես ասոնց ուսկից պիտոր միս տամ, որ չորս դիս առեր կուլան ու կըսեն թէ մեզի ուտելու միս տուր. աս բանրս ես մինաւոր գլուխ չեմ կրնար տանիլ. հասպա թէ չէ՝ ինձի մեծ շը նորհք կընէիր որ իս մեռցունէիր՝ քան որ աս թշվառ ու ինեքը տեսնամ:

Մնատենը անձալ եօթանասուն հոգի հասուն մարդիք ընտրել տրվաւ ժողովոց մէջէն, ու մովսէսի շնորքէն՝ անոնցալ տալով օգնական դըրաւ իրեն, որ հետը մէլտեղ ժողովուրդին պիտանաւորուիր հողան:

Ետքը բարկուք հրամայեց որ՝ ան ժողովուրդը պատրաստըվի որ վաղվան օրէն սկսած միս ուտէ. չէ թէ մէկ քանի օրմը, հասպա մէկ ամիամը ատեն, ինչվան որ ըսաւ՝ ալ յափրտնալիէն (քի պրիսմիշ ըլլալէն) քիթերնէն դուրս գաւ Մ. ս ըսածիս վրա մովսէսալ զարմանալով ըսաւ ինչ, աս ժողովուրդիս մէջը միան կտրիճները վեց հարուր հազար հոգի են, ինչպէս պիտոր ըլլա՝ որ ասոնց ամիամը միս բաւէ. որչափ կով ու ոչխար պիտի մորթըվին, կմ թէ բոլոր ծովու ձրկները հոս մի պիտի բերըվին: Մ. ծաւ  
ի.

իրենն պիտն տըվաւ թէ՛ հիմա կիմա-  
 նաս նոյ կարողուիր, որ ան ինչպէս  
 պիտի ըլլաւ: Անատենը ծովու գիւն  
 մէկ սաստիկ հովիւր ելաւ, ու գէպ'ի  
 ինչլացոց բանակը անչափ լորամարդի  
 (յի պըլտըճին) բերաւ ձգեց, որ բո-  
 լոր բանակը լիցունելէն ետեւ, բա-  
 նակին չորս գին օրով ճամբա՝ երկու  
 կանկուն բարձրը գետինը գիզված  
 կեցաւ, անանկ որ՝ երկու օր մէկ գի-  
 շեր ժողովուրդը վրան թափեցան,  
 ժողվէլէն չէին կըշտանար, որ մէջեր  
 նին պինտ քիչ ժողվողը՝ տասը քոս  
 (կՄ 400 հօխայի չափ) բան գիզեց.  
 անոր համար շատնալ ապըխտեցին  
 ու անանկ պահեցին: Այց շատ չան-  
 ցաւ՝ ու աս միսըս գեռ ժողովրդոց  
 բերանն էր, ուտելով չէին հատու-  
 ցած, որ նձ իր բարկուիր թափեց  
 ան ճըշկոհացող որկրամոլներուն վը-  
 րա. որ չարաչար ըսպաննեց իրենք:  
 Աւ աս պատճառովըս ալ ան տեղը  
 ըսվեցաւ՝ գերեզմանք ցանկուէ. ին-  
 չու որ հոն թաղվեցան ան մըսին ցան-  
 կացողները:

Գ՛Լ: ԺԿ.

Ահարոն ու Տարիամ կըպարծըվին:

Անկէց որ ելաւ ինչլացոց բանակը  
 ասերովթեկաւ, մարիամ մովսէսի

քու ըր. (ինչպէս կրսե՛ն) մովսէսի կըն-  
կանը հետ կովըտեցաւ . ինչու որ՝ աս  
կնիկը տեսնալով որ մովսէս իր էրի-  
կը անանկ այ սիրելի եղաւ առաջ ե-  
լաւ , իրեն քիթնալ մեծցաւ , ու ա-  
նով կը պարծենար : Աստի աս բա-  
նիս չի գիտանալով մարիամ՝ որ մէկ ե-  
թովդացի կի՛մադիանացի կնիկմը ա-  
սանկ գլուխ վերցունէ հպարտանա ,  
իր ահարոն եղբօրը հետ մէկ եղած ,  
սկսան մովսէսի դէմ՝ վար զարնելով  
ըսել թէ՛ միթէ՛ անձ միան մովսէսի՛  
հետ կըխօսի , հասա՛ մեզի հետալ  
խօսեր զուրուցեր է : Ա՛ովսէսալ բնու-  
թիւ խիստ հեզ (ցի մաղլըմ) ու ա-  
նուշ մարդ ըլլալով՝ ամենեին անոր  
վրա չի սրդողեցաւ , դէմ չի զուրու-  
ցեց : Այց անձ իրեն տէր ելաւ՝ ու  
սաստիկ բարկացաւ վրանին . հրա-  
մայեց որ երկուքնալ խորանը գան :  
ու հոն տեղը դռանը առջևը ամպին  
մէջէն խօսեցաւ յանդիմանեց իրենք ,  
ու ըսաւ . ասանկ գիտնաք որ՝ ուրիշ  
մարդարէ՛ներու հետ խօսելու որ կըլ-  
լամ՝ տեսիլքով անոնց երածին մէջը  
կերեւամ՝ այնպէս հետերնին կըխօ-  
սիմ . բայց մովսէսի հետ՝ որ իմ տա-  
նրս հաւատարիմ ծառան է՝ անանկ  
չեմ ըներ , հասա յայտնի բերնէ բե-  
րան կըզուրուցեմ . ուր մնաց որ ինքը  
իմ անձային փառքս ալ տեսեր է , ա-  
նան

նանկէնէ դուք ինչպէս չի վախցաք որ  
 աս իմ մովսէս ծառաս քամահրեցիք :  
 Այրքոր երկուքնալ ասանկ չեխ կե-  
 րած ւնյ առջևէն ելան որ երթան ,  
 շուտմը պատիժը առաջ մարիամու  
 վրա եկաւ , որ բոլոր մարմինը բոր  
 դուրս տրվաւ՝ ձունիպէս վրան ձեք  
 ձերմակ կտրեցաւ : Ան որ տեսաւ ա-  
 հարոն՝ դնաց մեղա ըսաւ մովսէսի ,  
 ու իրմէ թողուի խնդրելով աղաչեց  
 որ ան պատիժը վրաներնէն վերցու-  
 նէ : Սովսէս ալ անոնց համար ւնյ ա-  
 ղօթք որ ըրաւ . ան ատենը ւնճ հրա-  
 մայեց որ մարիամը եօթը որ բանա-  
 կէն զատվի դուրս ելլէ կենա՝ ինչպան  
 որ բորոտուէն բժշկուվի , ու անանկ  
 նորէն բանակը դառնա :

ԳԼ ԺԳ .

Սովսէս Լրբեաներ իշխրիէ աւետայ երկե-  
 ռը . ու եկեացիս նորէն իշխարժը լին :

Այրքոր իսրայէլացոց բանակը կա-  
 դէս բառնեայ եկաւ հասաւ , (որ  
 փառանու անապատին մէջն էր , )  
 մովսէս իրենց ծանուցում ըրաւ թէ՛  
 ալ աւետայ երկիրը մօտեցան մտնե-  
 լաւ՝ որ ւնճ խօստացեր էր որ իրենց  
 տա . բայց ժողովուրդը վախճաւ՝ սիրտ  
 չըրաւ որ ալ առաջ երթա , ու աղա-  
 չեցին մովսէսի՝ որ առաջ մէկ բանի

Հոգիմբ խրկէ ան երկիրները որ տե ս  
 նեն (Թէ ինտորէ : Վ) ուխտէ սալ ան Հրա  
 մանն առաւ , ու անանկ տասվերկու  
 իէլացոց ցեղէն մէյակէկ մարդ ընտ  
 րէյ որ երթան , ու իրենց ապրսպրէյ  
 որ աղէկմբ նային տեսնեն ան երկիր  
 ներուն որախաուիր ու մարդիրը . նաե  
 ան տեղի բուսած պտուղներէն ալ  
 հետերնին առնեն բերեն : Վարնան  
 ատեններն էր երբոր աս տասվերկու  
 լրտեսները ճամբա ելան գացին . ու  
 հոն քառսուն որ ուշանլէն ետե՛ դար  
 ձան եկան իէլացոց բանակը , ու ի  
 րենց ցուցունելու համար՝ անկէց փրը  
 ցուցած հետերնին բերերէին պատ  
 թէական նուռեր ու թուզեր , և մէկ  
 խաւողի կուզմբ , որ անչափ մեծ ու  
 ծանր էր , որ մէջէն փատմբ անցու  
 ցած անանկ երկու հոգի կը վերցու  
 նէին : Վ սպտուղներըս ցուցունելով  
 սկսան պատմել մովսէսի ու ահարո  
 նի՛ բոլոր ժողովրդոց առջևը (Թէ՛ ի  
 րաւի՛ ան երկիրները պարարտ ու բա  
 րեբեր տեղվանք են՝ որ այսպիսի պը  
 տուղ կուտան . բայց շատ զօրաւոր ու  
 ուժով են անոնց մարդիրը . քաղաք  
 նին խոշոր ու պարիսպներով սրատած  
 ամուրցուցած : Վողովուրդը աս բա  
 ներս որ լսեցին՝ սրտերնին տաստիկ  
 վախ ինկաւ , ու մէջերնին մէկ շը  
 շընկոցմբ մտաւ , որ սկսան մովսէսի  
 դէմ

դէմ մըումը աւելի արդէք յուդայի  
 ցեղէն՝ որ ան տասվերկու քէն մէկն էր՝  
 ինքը մէկալներուն ներհակ՝ ժողովը  
 դոցը սիրտ կուտար թէ մի վախնաք  
 կերթանք տակ կառնենք անոնք ։ մէ-  
 կալ տասը հոգին նորէն դէմ կը դը-  
 նէին , ու ժողովը դոց սիրտը աւելի  
 վախ կը ձգէին . ան մեր տեսած տեղը  
 կըսէին՝ մարդածախ (յի մարդ կերող  
 կիմ մարդ զայ ընող) երկիր մընէ . ա-  
 նոր մարդիքը խոշոր մէյմէկ հսկայ  
 էն , անանկ որ՝ անոնց քովը մեք մա-  
 րախ (յի պղտի չէքիրկէ) կը մաննէինք ։  
 Անոր համար ժողովը դոց մէջը շատ  
 մեծցաւ խռովութիւն , ու բոլոր ան  
 գիշերը իրար անցած կու լային ու կը-  
 ճըջգոհային մովսէսի ու ահարոնի  
 դէմ . շատ աղէկ էր կըսէին՝ որ մեք  
 եգիպտոս մեռած ըլլայինք՝ կիմ աս  
 անաստատ տեղըս մեռնէինք , քան թէ  
 մեզ ան հոն տանի՝ որ պտրզմով ջար-  
 դը վինք՝ ու մեր կնիկները ու տղաք  
 նիս թալլը վին ։ Ատքը ելան ասանկ  
 չըլլար ըսին՝ մեք եգիպտոս կը դառ-  
 նանք . ու սկսան խորհուրդ ընել որ  
 մէջերնին մէկը առաջնորդ դնեն՝ որ  
 ելլեն դառնան ։ Անատենը մովսէս  
 ու ահարոն ժողովը դոց առջևը երես-  
 նին վրա գետինը ինկան , ու կաղա-  
 չէին որ աս բանը չընեն . անոնց հետ  
 նաև յետու որդի նաւեայ ու քաղէք

որդի յեփոնեայ, ( որ ան տասալիերկու  
 լըտեսներէն էին, ) իրենքալասոր վրա  
 սաստիկ ցաւելով լաթերնին սլառ  
 ուած կը յորդորէին ժողովուրդը՝ որ  
 տմենեին չլվախնան հող չունենան,  
 միան թէ ան հետերնին ըլլա, ան կը  
 սլատերազմի կըսէին՝ իրենց տեղը ։  
 Վայց ժողովուրդը մտիկ չըրաւ՝ հա  
 պա կատղած սկսան վրանին վաղել,  
 ու հոն տեղը ան չորսնալ կը քարկոր  
 ծէին, թէ որ ան ժամանակը յանկար  
 ծակի անջ փառքը՝ վկայուէ խորանին  
 վրա չերենար, որ ամմէնքը յայտնի  
 տեսան. ու կանչեց մովսէսը ու ըսաւ՝  
 աս քանի՞ մէկէ որ ատ ժողովուրդը  
 իսկըսրդողցունէ. ասչափ հրաշքներ  
 ըրի ատոնց աչաց առջևը՝ ու դեռ ին  
 ծի չէն հաւտար. թող տուր կըսեմ  
 ինծի՝ որ ըսպաննեմ կորսընցունեմ  
 ատոնք, ու քեզ քու ազգովըդ ատոնց  
 մէ մեծցունեմ ու շատցունեմ ։ Սով  
 սէսալ շուտմը սկսաւ նորէն աղաչել  
 ան, որ իր երկայնամտութիւնը աս անգա  
 մալ իր ժողովուրդը մեղաց թողուի  
 տա, որ չըլլա թէ եգիպտացոց և ու  
 ըիչ անհաւատ ազգերուն բերանը  
 իյնա ան, ու ըսեն թէ՛ ինչացոց ան  
 անչափ քաներ ընելէն ետե, չի կըր  
 ցաւ իրեն խոստացած երկիրը տանիլ  
 իր ժողովուրդը, անոր համար տա  
 ըաւ անասպատին մէջը ձգեց մեռցուց



անոնք և այսպիսի բաներ զուրուցե-  
լով մովսէս՝ ճորով քիչմը այ սիրտը  
առաւ՝ որ բոլորովին չի ջնջէ իրենք՝  
Բայց այսու ամիւ երգում ընելով  
ըսաւ ամ՝ Թէ ան եգիպտոսէ և լող  
մարդիքը՝ քսան տարիէն վեր մէկը ան  
աւետեաց երկիրը պիտի չի մտնէ՝  
ինչպէս որ իրենք ուղեցին, յետուէն  
ու քաղեալն՝ ի զատ. հասպամմէնքը  
ան անասպատի ճամբան ոսկորնին  
պիտոր Թողուն։ Աստի անկէց ետե  
հրամայեց ամ որ ճամբանին դարձ  
ձունէն նորէն դէպ՝ ի կարմիր ծովը  
երթան, ու անասպատներուն մէջը  
աստիս անդին մոլորած պըտըտին,  
ինչլան որ քառսուն տարին լրման  
կատարի, ու ետքը աւետեաց երկի-  
րը հասնին, փխնկ ան քառսուն օրվան  
որ լրտեսները հոն ուշացան։ Աս այ  
սպառնչիքը ու պատիժներն որ ինչլա-  
ցիքը լեցին, մտքերնին դարձաւ՝ ըս-  
կսան ցաւիլ ու զղջալ ըրածներնուն  
վրա։ ու մէկալ օրը առտըվանց կա-  
նուխ ելան մովսէսի եկան ըսին Թէ՝  
մենք այ դէմ ըրած Թերեհաւատուե  
մեղ քերնիս կուղենք սրբել. ուստի  
հիմա դիմացի լեռան գլուխը կեւ  
լէնք՝ ու անկէց սրտերազմելով ալ  
առաջ կերթանք։ Սովսէս տեղէն չի  
շարժեցաւ, ու իրենց ալ ըսաւ Թէ՝ մը-  
նէք աս բանը, ամ հետերնիդ չէ՝

ձեր թշնամիները ձեզ տակ կառնեն  
կրկոտրեն: Ասոնք մտիկ չըրին՝ իրենք  
իրենց գլխուն ելան գացին. ու մով-  
սէսի ըսածինպէս ամաղէկացիքը և  
քանանացիքը գէմերնին ելան՝ ու  
խելմբ կոտորվեցան ասոնցմէ, մնա-  
ցածները խախք եղած՝ փախան բա-  
նակը դարձան:

Աս ինչլացոց սլատիժէս ետքը՝ որ եռ-  
սունըութը տարիի չափալ երկընցաւ  
իրենց ճամբորդութիւն. ան ան ատեն-  
ները մովսէսի ձեռքով ուրիշ ալ շատ  
խտրական ծէսեր ու դատաստանա-  
կան օրէնքներ ինչլացոց տրվաւ, որ  
Յ և տացոց ու Նրկորդ օրինաց՝ գրը-  
քերուն մէջը տեղն՝ իտեղը դրած են,  
և ան ժամանակներն ալ՝ ինչպէս կը-  
սեն, հանտըսեցաւ կորխա սլատիժը,  
որ հիմա պիտի սլատմենք:

## ԳԼ: ԺԷ.

Կորի, դա՛նան՝ ու մէկուն՝ ինչպարժը՛ն.  
ու տհարոնին գաաղանը ինձաղի:

Կորիս ղևեայ ցեղէն՝ ահարոնի հօր  
եղբորը որդին, որ քէնյունէ կը-  
բաղձար, ու դաթան և արիրոն (որ  
ուրբենի ցեղէն մեծ մարդիք էին,)  
աս իրեքըս մէկ եղած, ու ուրիշ եր-  
կուհարուր յիսուն հոգիալ ինչլացոց  
խօսքի տէր մարդիքներէն հետեր-  
նին

նին առած՝ մովսէսի ու ահարոնի  
 դէմ գլուխ քաշեցին, յանդգնութիւն  
 վրանին ելան ըսին թէ, աս բաւա-  
 կան է որ ինչացոց ժողովուրդը սուրբ  
 է, ու իրենց ամբը մէջերնին ունին,  
 ալ ձեզի ինչ՝ որ յափըշտակերէք ան  
 ժողովուրդը, ու տակերնիդ առեր  
 կիշխէք վրանին: Անատենը մովսէս  
 անոնց առջևը երեսին վրա ինկաւ,  
 ու պին սըվաւ թէ՛ ամ որնոր ուզեց-  
 նէ՛ ան ընտրեց իրեն առաւ, ու չու-  
 ղածները թողուց: ուստի՛ (կորխայ  
 ըսաւ) աս բանիս վրա մէկալ ցեղե-  
 րուն մարդոցը պիտի դժարնին գար,  
 չէ թէ ղևեայ ցեղին, որով ամբ քեզ  
 ալ քու զաւկներովըդ իրեն առեր մօ-  
 տեցուցեր է. ու աս բաւական չէ՛ քա-  
 հանայալ կուղես որ ըլլաս: Ատքը  
 մովսէս աս նշանաւ դրաւ կորխայ,  
 որ վաղը իր մարդիքներովը ամմէնը  
 բուրվառնին ձեռավընին առած խո-  
 ըանը գան, որ հոն ամ իր կամքը  
 յայտնէ: ու ետև մարդ խըրկեց որ  
 գաթան ու աքիրոնալ իրեն գան: Ա-  
 նոնք ալ պին սըվին թէ՛ չենք՛ իգար,  
 աս հերիք չէ ըսին՝ որ մեզ ան սյա-  
 տոճական եգիպտացոց երկրէն հա-  
 նեցիր՝ որ կաթ ու մեղր կը բրխէր, ու  
 աս անապատ տեղըս բերիր որ ամմէն  
 քըս ըսպաննես, նայէ՛ սըվոր ըսին՝ որ  
 իշխանալ է ղեր ու հետերնիս սաւ-

տեղով (իմ սէրթ) ալ կը դուրուցէ. թէ որ ըսին մեր աչվըներն ալ փորեա հանես նէս նէ՛ մենք քու սաքըդ չենք ի դար :  
 Սովսէս առ բանս որ լսեց՝ սասաիկ ներքև վրա եղաւ . ու դարձաւ ինչ ըսաւ, ինչ որ աս ապերախտներուն աղօթքը մի ընդունիր . ես առնոցմէ ամենեւին բան մը չե՛մ ուզեր առեր, ու մէկուն զրկանք մը չե՛մ ըրած, որ վրաս ասանկ կըխօսին : Առարվանց մովսէսի ըսածին պէս կորխը իրեն երկու հարուրյիսուն հետևողներով բուրվառնին ձեռվընին՝ մէջը խունկ դրած խորանին դուռն որ եկան, ու մովսէս ահարոնի հետ իրեն բուրվառնալ ձեռքը հոն կեցեր էին նէ, յանկարծակի ան տեղը ինչ փառքը ամպով երևցաւ բոլոր ժողովրդոցը, ու ինձ բարկութիւն հրամայեց մովսէսի ու ահարոնի՝ որ մէկդի կենան ան ժողովուրդին մէջէն, որ ինքը ան բոլորը մէկէն ջարդէ կորսունցընէ : Ան ժամանակը շուտ մը երկուքն ալ երեսնին վրա ինկան ինչ առջևը՝ ու աղաչելով ըսին . ինձ ինձ հողւոց և իմ մարմնոց, մէկ մարդու մը մեղաց համար բոլոր ժողովրդին վրա մի պիտի դա քու բարկութիւնդ : Այսքը ինձ նորէն մովսէսի հրամայեց որ՝ ժողովուրդը աս իրեք ասորստամբներուն քովէն զատվին հեռու կենան . ու մովսէս ալ աս բարկութիւնը

նրա ժողովրդոց ապրսպրեց՝ ու ըսաց ,  
 Թէ՛ որ ատոնք ուրիշ մարդոցպէս մեռ-  
 նիննէ՛ , նշան ըլլա որ անձ իս ձեր վրա  
 չէ խորկեր . հասլա Թէ կարգէ դուրս  
 ցուցնքով ողջ ողջ գետինը անցնելու  
 որ ըլլան , գիտնաք որ ատ մարդիքը  
 անձ սաստիկ սրգողցուցերեն : Արքոր  
 աս բանըս կրսէր՝ մէկմալ յանկարծ ա-  
 կի գոռալով գետինը ճրխքըվեցաւ  
 բացվեցաւ , ու կորխը , դաթանը , և  
 արիւրոնը ողջ ողջ իրենց տնով տեղո-  
 վը անձ բաներով մէջը առաւ՝ ծածկը  
 վեցան անյայտ եղան : ու անկէց ժո-  
 ղովուրդը սոսկալով անանկ մէկ զմէկ  
 անցան շփոթվեցան՝ որ կարծես Թէ  
 բոլոր խորայէլացոց բանակը գետինը  
 կանցնի կոր : Ասոնց ետեւէն ան եր-  
 կու հարուր յիսսուն հոգին ալ , որ  
 գլուխ քաշեր անդին խորանին առ-  
 ջւը խունկ կրմատուցանէին՝ անոնց  
 վրայալ կրակինջաւ՝ էրեց մոխիր դար-  
 ձուց իրենք : Ահ հրամայեց անձ որ ան  
 էրած մարդիքներուն ձեռքի պղինձէ  
 բուրվառները մէյտեղ բերեն հալեն ,  
 ու տափկըցուցած ողջակէղի սեղա-  
 նին վրան անցունեն , որ յաւիտենա-  
 կան յիշատակ ըլլա անձային պատու-  
 հասին , որ մէյմընալ ահարոնի դաւկը-  
 ներէն դուրս՝ ուրիշ օտար ցեղէ կո՛  
 ազգէ մարդ՝ այ առջւը խունկ չի  
 ծրխէ :

Ըստ սոսկալի պատուհասները որ եղան, շուտմը անոր մէկալ օրը ժողովուրդը նորէն սկսաւ մումնալ մովսէսի ու ահարոնի դէմ, ու վրանին վազելով կրսէին թէ՛ դուք պատճառ եղաք որ երեկ անչափ հոգի ջարդը վեցան: Ընոնքալ ձեռվրնէն խալըսեցան խորանն որ փախան՝ ամսը ինչաւ ծածկեց իրենք: ան ժամանակը անձալ սաստիկ բարկանալով նորէն աս երկուքին հրամայեց որ ինչացոց ժողովուրդին մէջէն զատվին ելլեն, որ ալ մէկէն անոնք ջնջէ: Իրենք ալ երբոր այ առջև ինկան աղաչելու որ թողուի տա իրենց, անատենը ժողովուրդին մէջը ջարդը ալ ըսկսերէր. ուստի մովսէս շուտմը ահարոնի ըսաւ՝ որ բուրվառը առնէ երթա մէջերնին մտնա՝ ու անանկ անոնց մեղքը քաւելով դադրեցունէ այ պատուհասը, բայց ահարոն ինչպան որ գնաց դադրեցուցնէ՝ տասնը չորս հազար եօթը հարուր հոգի ալ մեռած էին:

Իտե ան աս ինչացոց տրտունջները բոլորովին վերցունելու համար՝ ահարոնի քահանայու թիը նոր հրաշքովմը ուզեց հաստատել Սևտի հրամայեց որ իսրայէլացոց տասնվերկուցեղնալ զատ զատ մէկ մէկ դաւազան առնեն, ամմէն մէկ ցեղը իրեն գա.

և ազանին վրա իր ցեղին անուանը գրէ,  
 ու ահարոնի գաւազանին վրայալ  
 զատ իր անուանը գրվի, և բոլորը մէջ  
 տեղ վկայուէ խորանը դնեն. ետքը  
 ասոնց մէջէն որուն գաւազանն որ  
 ծաղկինէ՝ նշան ըլլա որ ան անիկա  
 իրենք քննուէ համար զատեր առեր  
 է: Ենանկ ըրին՝ վկայուէ խորանին  
 մէջ տապանակին առջևը դրին աս  
 գաւազանները. ու մէկալ օրը մով  
 սէս ու ահարոն խորանը մասն տե  
 սան որ՝ անոնց մէջը միան ահարոնի  
 գաւազանը կանանցեր ծեր ծաղկեր  
 է, ու վրան ընկուղ (ի՞մ ճէվիզի պը  
 տուղալ) բուսեր է: ասոնք դուրս  
 հանեց մովսէս որ բոլոր ժիւղնալ  
 տեսան ան հրաշքը: Ետքը ան հրա  
 մայեց որ ան ահարոնի հրաշալի գա  
 ւազանը առնեն տապանակին մէջը  
 դնեն՝ որ մէկալ բաներուն հետ պահ  
 վի, յիշատակ ըլլա ինչացոց ան հնա  
 զանդուէր, որ մէյմալ չի տրանջան՝  
 ու չիջարդըվին մեռնին:

Բայց ինչացիքը աս մէկ մէկու ետև  
 վրանին եկած պատիժնե ըէս ալ զար  
 հուրած՝ ու խիստ սրտերնին կոտրած՝  
 եկան մովսէսի ըսին թէ՛ մէնք ալ օրէ  
 օր կըջարդըվինք կըհատնինք կըկոր  
 սըվինք. ով որ վկայուէ խորանը կը  
 մօտիկնանէ՝ կըմեռնի կոր, ասոր մէկ  
 ճարմը տէս, մեղի ըսի՛ ինչ ընենք:

Մովսէսաւ ինչ հրամանովք իրենքն որ  
 րէն կարգաւորեց, որ խորանին մէջի  
 սկտք եղածը՝ միան ահարոն իր տղոց  
 մով ընէ. ու զև տացիները ինչ ծառայ  
 ունէ մէջ ինչ գործք իրենց գրածէ՛նէ՛  
 ան ընէն, անկէց աւելի բանի ձեռք  
 չիղարնեն. ու մէկալ մնացած բոլոր  
 ժողովուրդը խորանին հետ ամե  
 նև ին բան չուեննան, գրսէն միան մէ  
 կալնոնց ծառայեն :

ԳՎ : ԺԲ .

Ինչպոյ ճամբորդունէ վերջի քարին հան  
 դըպածները :

Ետ տարիներէն ետև երբոր իս  
 րայէլացիք նորէն սին անապա  
 տը եկան՝ ու կադէս ըսած տեղը բա  
 նակնին գրին, հոն մարիամ մովսէսի  
 ու ահարոնի քուրը մեռաւ՝ ու ան տե  
 ղը թաղվեցաւ : Ինչպոյ աս տեղըս ժո  
 ղովուրդը նորէն ջրի պակասու թի որ  
 քաշեց, սկսան տրտընջալով նորէն  
 մովսէս ահարոն ասի առնել, թէ աս  
 ինչ է որ մեզ աս անապատըս բերե  
 ր՝ որ ծարվէն ջարդէք, երանի թէ  
 մենքալ ան ինչ տրված պատիժներո  
 վը մեր եղբարներուն հետը մեռած  
 ըլլայինք, ու աս նեղութիւները չի քա  
 շէինք : Մովսէս ու ահարոնալ խո  
 րանը գացին ինչ գիմեցին, ինծալ  
 մով



մովսէսի հրամայեց որ գաւաղանք  
առնէ, ու ահարոնի հետ բոլոր ժո-  
ղովուրդն ալ մէյտեղ երթան ան դի-  
մացի լեռը, ու հոն ապառաժ քարէն  
ջուր հանեն՝ որ ժողովուրդը խըմէ :  
Սովսէսալ անանկ՝ գնաց ելաւ ան  
ապառաժին վրտ, ու տարակուսած՝  
խելքը չիկտրելով որ անկէ ջուր ել-  
լէ ան թերեհաւատներուն, աս քա-  
րէս ըսաւ՝ ձեզի ջուր մի պիտի հա-  
նենք. և աս բանըս ըսելունպէս ձեռ-  
քը երկու հեղ որ քարին զարկաւ՝  
սկսաւ անկէց առատ ջուր բխել, որ  
ժողովուրդը իրենց անասուններովը  
խըմեցին : Վայց աս բանիս մէջը ան-  
բարկացաւ մովսէսի ու ահարոնի, որ  
ինչպէս կրսեն՝ իրենք աս գործքըս  
ընելնինի այ ըսածին վրա տարակու-  
սուիմը ցուցունելով չար օրինակ տը-  
վին ժողովրդոցը : Վնոր համար եր-  
կուքինալ աս պատիժըս տրվաւ ան-  
որ աւետեաց երկիրը չի մտնեն : և  
ան պատճառովը աս ջրիս անունը՝  
ջուր բամբասանաց կի՛ հակառակու-  
թե՛ ըսվեցաւ :

Այտքը երբոր կադէսէ ելան ինչ լացիք՝  
հովը լեռան տակը եկան, ( որ ալ ի-  
րենց եգիպտոսէ ելելուն քառսուն  
տարին մտան. ) ան մովսէսի իմա-  
ցուց թէ ահարոնի ալ ատենը հո-  
սաւ՝ որ իրեն ան թերեհաւատուէր  
պա

պատիժ՝ աւետեաց երկիրը չի տե-  
սած՝ մեռնի, ու ինչպէս պիտոր ընե-  
րնէ՝ մովսէսի ասարսպրեց : Մովսէս  
ալ նոյ ըսած ինչպէս առաւ ահարոնը  
ան հովր ըսած լեռը տարաւ, ու հոն  
քէ՛յսպէտական զգեստները վրայէն  
հանեց՝ անոր եղիազար տղին հագվը-  
ցուց, որ հօրը տեղը ինքը քէ՛յսպտ  
ըլլա : ու ան լեռանը վրա մեռաւ ա-  
հարոն հարուր քսանվիրէք տարվան .  
ու հոն թաղվեցաւ : ինչլացիքալ եռ-  
սուն օր անոր մահունը սուգը կա-  
տարեցին :

Հովր լեռնէն որ ելան սելմոնա եկան,  
ժողովուրդը ալ աս ճամբու նեղուի-  
ներէն ձանձրացած՝ նորէն սկսան նոյ  
դէմ ճգոհալ, ու մովսէսի ըսել թէ  
մեղ եդիպտոսէ ինչո՞ւ հանեցիր, ու  
անօթի ծարաւ մեղ աս անապատնե-  
րուս մէջը կըջարդես, որ ալ գանե-  
րենք ան անշահ մանանայէն՝ որ հա-  
ցի տեղ կուտենք : Ա՛՛՛՛՛՛՛ ծալ աս մեղա-  
ցրս պատիժ՝ չար թիւնաւոր (յի դէ-  
հիրլի) օձեր վրանին խրկեց՝ որ շատ  
մարդ զարկին սպաննեցին, ինչվան  
որ խելվրնին գլուխնին եկաւ՝ մովսէ-  
սի դիմեցին որ նոյ աղօթք ընէ աս պա-  
տուհասըս վերցունէ : Մովսէսալ նոյ  
հրամանովը մէկ պղինձէ օձմը շինեց՝  
ձողի (յի սրուրխի) վրա բարձրը կայ-  
նեցուց . որ ան օձերէն զարնըվողնե-

ըր աս սղիինձէ օձը նայելով կը բժշկելովէին . ու ասանկ ընելով դադրեցաւ աս պատիժը :

Գ. Ե. Ժ. Թ.

Բարաստառ պատմութիւն :

**Ի**նչ լացիները ճամբանին առաջ երթալով երբ որ հասան ամորհացոց երկիրը , ու իրենց չի դըստած խաղաղութեան կէտ անցնել կուզէին . սեհոն ամորհացոց թիւրը դէմերնին ելաւ չէր թողուր որ անցնին . ուստի աւսոնքալ հետերնին պտորդմ ընելով իրենք տակ առին ու տիրապետեցին ամորհացոց երկիրը : Ենկէց ետեւ եկան բասան , ու հոնալ յաղթելով անոնց ովք ըսած թագաւորը՝ որ անալ գէմ կը գնէր . առին անոր երկիրնալ : Ես ինչ լացոց յաղթու թիւներն որ լսեց բաղակ մովաբացոց թիւրը վախցաւ որ իր երկիրնալ առնեն . անոր համար խորհուրդ ըրաւ՝ քովը կանչել ուզեց բաղաամորդի բէովրա ըսած մէկ մարդարեմը , որ ինչ լացիները անիծէ , որ չըլլա թէ իր վրան ելլեն՝ ինքնալ յաղթը վի : ու երբ որ խրկած մարդիքը եկան ըսին բաղաամու . անալ այ հարցուց : Ի՞նչ արգիլեց որ չէր թա : Բաղակ թիւրը ետեւէն մէյմալ խրկեց իր իշխանները

աւելի ընծաներով, որ չէ՛ չքսէ դա՛  
 ու իրեն խնդիրքը կատարէ: Մաղա  
 ամալ առջի բերանը ան բերած ըն  
 ծաներուն երեսը չինայեցաւ. ու թէ  
 որ ըսաւ՝ բոլոր իր տանը արծաթն  
 ու ոսկին բաղակ ինծիալ տա՛ ես ւնյ  
 խօսքէն դուրս չե՛մ ելլեր. անոր տուն  
 տրվածէն աւելի սլակաս բան չե՛մ  
 ըսեր: Ատքը ան գիշերը քովը բըռ  
 նեց ան մարդիքը՝ որ ւնյ մէյմալ նո  
 թէն հարցունէ, ու անանկ իրենց սխն  
 տա: Ա՛ծալ երևեցաւ բաղաամու՛  
 ու իրեն թող տրվաւ որ ելլէ հե  
 տերնին երթա, միան թէ ըսածէն  
 դուրս չելլէ՛ անէծք շիկարդա ինչա  
 ցոց վրա: Մայց առտրվանց որ ելաւ  
 բաղաամ իր էջը հեծաւ ու անոնց  
 ետևէն կերթար. ւնձ՝ (գիտնալով որ  
 բաղաամու սիրտը ըստրկին վրա դը  
 նաց, ու միտքը փոխվեցաւ՝ որ երթա  
 թիբին կամքը ընէ.) բարկացաւ վը  
 րան, գիմացէն հրեշտակմը խրկեց  
 ձեռքը թուր բռնած վերցուցած՝ որ  
 ճամբուն վրա կեցած բալաամը ար  
 գիլէ որ առաջ չերթա: Այն որ աս  
 հրեշտակը անանկ գիմացը ելած տե  
 սաւ, (որ բաղաամ չէր տեսներ,) վա  
 խէն սկսաւ ճամբէն դուրս մէկ գի  
 երթալ. բաղաամալ բանը չի գիտ  
 նալով գաւաղանովը զարկաւ էջը որ  
 շիտակ քալէ: քիւմը որ առաջ գացին՝  
 էջը

էշը մէյմալ առջևը տեսաւ ան հրեշ-  
 տակը , ու նորէն ուզելով որ մէկ դի-  
 քաշվի՝ ան տեղը էգիին պատին քո-  
 վէն անանկ քսվելով գնաց՝ որ բաղաա-  
 մու ոտքը ճմլեց ցաւցուց . ան ալ սրը-  
 դողելով նորէն իշուն զարկաւ որ ա-  
 ղէկ քալէ : Ատքը գնաց հրեշտակը  
 մէկ նեղ ճամբումը վրա կեցաւ , որ  
 քովէն ամենեին անցնելու տեղ չի-  
 կար . հոն առջևնոր հասաւ էշը՝ ալ  
 ճարը հատաւ ան տեղը գետինը նրս-  
 տաւ : Անատենը բաղաամ որ ալ չա-  
 րաչար կրծեծէր էշը , ամ յանկար-  
 ծակի իշուն բերանը բացաւ , որ դար-  
 ձաւ մարդուօրէս բաղաամու ըսաւ .  
 ես քեզի ինչ ըրի որ աս իրեք անգամ  
 կը լա որ իս կրծեծես : Աաղաամալ  
 ըսաւ , անոր համար որ իս ծաղը կը  
 նեսկոր , անանկ որ ձեռքրս մէկ դա-  
 նակմը ունենայինէ հիմա քեզ անով  
 կը զարնէի ալ : Անալ նորէն իրեն ը-  
 տաւ . ես ան քու էշըդ չեմ որ պըղտը  
 կուցմէ ՚ի վեր ինչվան հիմա վրաս կը  
 հեծնէիր , ու երբ ծուլացա , քեզի  
 ասանկ բան ըրի : Աաղաամալ երբոր  
 խօսքը բերանը անոր պիսն կուտար՝  
 թէ չէ . յանկարծ ամ աչքը բացաւ  
 որ ինքնալ տեսաւ ան ահաւոր հրեշ-  
 տակը , ու շուտմը վար ինջաւ երկր-  
 պագուի ըրաւ իրեն : Հրեշտակնալ  
 չէխեց զինքը որ անանկ անգ թու թի  
ան

անբան անասունը կրծե՛ծէր , որ ես  
 ըսաւ՝ քու դէմըդ ելէր էի քեզ բռնե-  
 լու արդիլէլու՝ որ ծուռ ճամբա կեր-  
 թայիր . որան՝ թէ՛ որ առջեկէս չի  
 փախչըտէր՝ քեզ պիտոր ըսպաննէի՝  
 ու անմեղ անասունը թող տայի որ  
 երթար : Վաղաամալ մեղա՛ ըսաւ՝  
 թէ՛ որ կամենասնէ ետ կըդառնամ :  
 Հրեշտակը նորէն թող տրվաւ որ եր-  
 թա , միան թէ՛ ըսաւ՝ ինչ որ քեզի ան-  
 տուն տալու ըլլանէ՛ , ան զուրուցես :  
 Արբոր գնաց հասաւ բաղամա՛ , բա-  
 ղակ թիւորը իրեն առջեր ելաւ , ու  
 շատ մեծարանքով առաւ տարաւ ի-  
 թեն փառաւոր սեղան ըրաւ՝ բոլոր  
 իշխաններովը . ու ետքը մէկ բարձրը  
 տեղմը հանեց ինքը , որ անկէց իս-  
 ըայէլացոց բանակը աղէկմը տես-  
 նալով՝ անէ՛ծք կարդա վրանին : Վա-  
 ղաամալ կախարդական բաներ ա-  
 պրապրեց թագաւորին՝ որ անատենը  
 ընելով՝ իրեն ճարմը ըլլա աստուծ մէ-  
 հրաման առնելու որ անի՛ծէ անոնք :  
 Վաղակ թիւրնալ աս ամէն բանե-  
 ըր ըրաւ , բայց չէ թէ՛ միան ուղածին  
 չի հասաւ , հասաւ անոր՝ ներհակը՝ ա-  
 նի՛ծելու տեղը անձ բաղամա՛նու բե-  
 ըանը դրաւ որ իէլացոց վրա որհնէնք  
 կարդա , ու անոնց ընելու յաղ թուի-  
 ները զուրուցէ . նաև իէլացոց ազ-  
 դէն գալու մեսիային վրա փառաւ որ

մարդարէութիւններ ընէ : անոր համար  
բաղաամու վրան սրդողելով ըսաւ ,  
քեզ իմ թշնամիներս անիծելու կան-  
չեցի , ու դուն անոնց օրհնենք տա-  
լէն չես դադրիր . ինծի ալ պէտքը  
չես՝ ուսկից եկարնէ դարձիր տեղըդ  
գնա՛ . ես միտքըս դրերէի որ քեզ ալ  
էվելօք պարգևներով մեծարեմ . ու  
կրտեսնամ որ անձ քեզ աս բարիքնե-  
րէն զրկեց : Նաղաամալ պիտի տը-  
վաւ թէ՛ քեզի չըսի որ տունըդ լեցուն  
ոսկի ու արծաթալ ինծի տալու ըլ-  
լաս նէ՛՝ այ իմ բերանըս դրածէն ա-  
ւելի կիմ պակաս բան չեմ կրնար դու-  
րուցել :

Իրաւցունէ թէպէտ բաղաամ չար  
մարդ մընէր , ու ինչպէս կերեալ նաև  
կախարդ ալ էր , որ ասով անարժան  
էր մարդարէութե . բայց անձ իր մե-  
ծագործութիւնը ցուցունելու համար չի-  
զարչեցաւ իր ճբ պատդամը այսպի-  
սի մարդու բերանը դնել . ինչպէս  
անոր տալու խրատը ու յանդիմանու  
թիւնալարժանապէս իր անբան իշուն  
բերանը դրաւ . որ երկուքնալ իրենց  
բերնովը ըսածը չէին հասկընար .  
Նոր համար բաղաամ ան մարդա-  
րէութիւները խօսելէն ետե , բաղակ  
թիւնորին ճամբա ցուցուց որ ինչ-  
պէս ինչլացիները մեզաց մէջ ձգէ ,  
որ անով աստուծմէ պատժւիին ու

Չարդըվին : Անանկ եղաւ . մովա-  
բացոց ու մադիանացոց երկիրը ինչա-  
ցիները բանակին որ դրին , սկսան  
անոնց աղջիկներուն հետ պոռնկուի  
ընել . ու անոնքալ իրենք գլխէ հա-  
նեցին՝ որ հետերնին երթան կուռ-  
քերու զոհած կերակուրներ ուտեն ,  
ու բէլիեգուլը ըսած կուռքերնին  
սլաշտեն :

Ըս պիտճուովըս անձալ ինչացոց վրա  
սաստիկ բարկացաւ , ու հրամայեց  
մովսէսի՝ որ մարդ մարդու չի խնայէ՝  
բոլոր աս կուռպաշտուի ընողները թը-  
րէ անցունեն . որ անանկ՝ քսանը չորս  
հազար հոգի ինկան : Եւ աս Չարդիս  
ատենը փենեհէս ահարոնի թուր՝  
եղիազարի որդին՝ այ կողմանէ կե-  
ցած մասնաւոր վրէժխնդրուի ցու-  
ցունելով , ան նորէն հաստատեց որ  
քահանայութիւն ինչվան ետքը որ-  
դոց որդի իրենց աղգին մնա : Այց  
աս բաներըս ըլլալէն ետեւ ան ինչա-  
ցոց հրամայեց որ ան մադիանացոց  
վրան ելան ու առանց խնայելու Չար-  
դեն անոնք . որ ասանկ խաբելով մե-  
ղաց տէր ըրին ինչացիները : Ան  
սիտգմին մէջը բաղաամալ անոնց հետ  
ըսպաննրվեցաւ . ու թշնամիներէն  
շատ կողոպուտ ձեռք ձգեցին ինչա-  
ցիները . որ մէջերնին ամմէնուն ար-  
դարուք բաժնեց մովսէս . ու ինչ  
վան



վան ան տեղը յորդանանի քով առաձե-  
 րկիրն երը՝ մովսէս նոյ հրամանովը՝  
 ռուբենի, գադայ՝ ու մանասէի կէս  
 ցեղին տրվաւ ։

ԳՎ ։ Ի .

Սովսէս կը վախճանի, ու յետոյ անոր քե-  
 շը կանցնի ։

Մի որովհետեւ մովսէսի արգիւլեր էր՝  
 որ ինչլացիները ինքը չիտանի ա-  
 ճետեաց երկիրը, ու հսն չիկոխէ . ա-  
 նոր համար ինչլացոց բանակը երբոր  
 յորդանան գետին քովերը հասաւ,  
 որ քանանացոց կի՞ աւետեաց երկրին  
 սահմանը (քի սինսուն) էր. մովսէսի հը-  
 ռամայեց որ՝ յետու որդին նաւեայ՝  
 (որ իր աշակերտն էր) իր տեղը ինչլա-  
 ցոց վրա գլուխ կի՞ առաջնորդ գնէ .  
 ու ինքը մեռնելու պատրաստուիլը  
 տեսնէ ։ Սովսէսալ ինչլացոց ամիէն  
 բանը կարգի գնելէն ետեւ՝ յետուն  
 կանչեց, և ամիէնուն առջևը նոյ հը-  
 ռամանը իրեն յայտնեց, ու սիրտ տը-  
 վաւ որ զօրանա, չի վախնա թշնամի-  
 ներէն, քաջութեանի հասցունէ ժո-  
 դովուրդը՝ նոյ խոստացած երկիրնե-  
 րը ։ Սակէ՛ ի զատ շատ խրատներ ու  
 յորդորանքներ ըրաւ մովսէս ինչլա-  
 ցոց՝ որ նոյ տրված օրէնքները ու պատ-  
 ու՛ իրանքները աղէկ պահեն, որ թո-

Ըրը հինկ գրքի մէջ գրած իրենց  
 Թողուց : Այլ ան վերջի ատենը մէկ  
 օրհնութիւնն ալ շինեց այ, որ կըս-  
 կսի՝ Այեցարուս երկնս. ու սորվոցուց  
 ինչացոց որ ըսեն, և անով շնորհա-  
 կալ ըլլան անձային անբաւ երախ-  
 տեացը՝ որ իրենց վրա ցուցուցերէ,  
 ու սխտոր ցուցունէ՝ թէ որ հաւա-  
 տարմութիւնն այ ծառայեն : Անկէ ետե-  
 յակոբն ահապետինսպէս մարգարէա-  
 կան հոգւով ամմէն ինչացոց ցեղե-  
 րուն վրա զատ զատ օրհնեմքներ կար-  
 դալով, այ հրամանովը աբարիմ կի-  
 նաբաւ ըսած լեռանը գլուխը ելաւ .  
 որ անկէց բարձրէն ան իրեն ցուցուց  
 բոլոր ինչացոց տալու երկիրները .  
 ու հոն տեղը առանձին վախճանեցաւ  
 ու թաղվեցաւ, անանկ որ ամենեւին  
 մարդ չի գիտցաւ իր գերեզմանը՝ թէ  
 ան լեռանը որ կողմը թաղված է :  
 Սովսէս մարգարէն վախճանեցաւ  
 նէ թէսկտ հարուր քսան տարվան  
 էր, բայց ինչպէս ետքի ատենը՝ ծե-  
 րուն նշան վրան չէր երևար, հասա-  
 անանկ ժիր ու կայտառ էր՝ որ երեսը  
 կը ընձմտուքմը չի կար, ու աչքները  
 առողջ աղէկ կը տեսնային : Ասե աս  
 սք մարգարէիսպէս՝ ինչպէս անձա-  
 շունչը կը գրէ՝ ուրիշ մարգարէմը չէ  
 եղած, որ ան գիմարէմ տեսնա, հե-  
 տը բերնէ բերան խօսի, ու անչափ  
 մե

մեծամեծ սքանչելիք գործէ : Մէլա-  
ցոց ժողովուրդն ալ եռսուէն օր մովսէ-  
սի վախճանելուն սուգը կատարեց .  
ու ետեկէն յետու որդիսն աւետայ մով-  
սէսին տեղը առաջնորդ և գլուխ  
ճանչցաւ , որ ան տարաւ մտցուց ի-  
րենք աւետեաց երկիրը . որ ետեւի  
մասին մէջը պիտի պատմենք :

## ՅԵՒԵՂՈՒԵՆՆԵՆ

Յոբ երանելիին պատմութիւն :

**Ե**ւամանակին կարգը անանկ կը բե-  
րէ , որ աս տեղըս՝ մովսէս մար-  
դարէին վախճանելէն ետեւ դնենք  
յոբ երանելիին մասնաւոր պատմու-  
թիւնը , որ ինչպէս յունաց ու մեր անձա-  
շունչը կըսէ՝ ինքնալ աբրահամն ա-  
հապետէն առաջ եկած՝ ետաւայցե-  
ղէն հինկեթո՞ղ կըսեպօլի , ինտոր մով-  
սէսալ անանկ կուգա՞ յակօբ նահա-  
պետին ցեղէն . որ այնպէս յոբ երա-  
նելին ու մովսէս մարդարէն՝ երկու  
եղբոր թոռան զաւկընէր կը լլան :

**Մ**ս յոբ երանելիս՝ որ յոբաբալ կըս-  
վէր , եգովմայեցոց երկիրը աւսիդ ը-  
սած գաւառը կը լլար . և ինքը իշխա-  
նիմբպէս էր , ու իր ազգին մէջը ու-  
նևորներէն մէկն էր . որ եօթը հա-

զար ոչխար ունէր, իրեքհազար ուղտ  
 հինկ հարուր չուխտ եղ, ու հինկ  
 հարուր մատակ էշ. նաև ասոնցմէ՛ի  
 զատ ուրիշալ աշխարքիս բարիքնե-  
 րու տէրէր: բայց աս ամմէն բանե-  
 րէն աւելի հարուստ էր առաքինուք  
 անմեղուք, և կատարե՛լ անձպաշտու-  
 թք: Ա՛ճ իրեն տասը զաւակ տրվեր  
 էր, ետձը մանչ՝ իրեքը աղջիկ. ու  
 յոբայ աչքը միշտ ասոնց վրա էր՝ որ  
 չըլլա թէ աստուծմէ հեռընան՝ չար  
 ճամբա երթան. անոր համար երբոր  
 անոնք մէյտեղ կուգային որ ուտեն  
 խրմեն ուրախուի ընեն, շուտմը յոբ  
 անոնց ամմէն մէկին համար մէյմէկ  
 զոհ կըմատուցանէր անց, որ թէ մեղք  
 մը ըրերեննէ՛ անձ իրենց թողուի տա  
 Ա՛սանկ անձավախ, արդար, ու սիրե-  
 լի անց ըլլալով յոբ, չար սատանան  
 միշտ բարւոյն հակառակ՝ շատ կընա-  
 խանծէր վրան, ու ետեւէ էր որ ինքը  
 փորձուէ մեղաց մէջ ձգելով՝ անց ա-  
 չացը հանէ: Այլ աս բանըս այսպիսի  
 առակով կըպատմէ անձաշունչը:  
 Ա՛նկ օրմը հրեշտակները անցառջևը  
 կեցած որ ինքը կըպաշտէին. սատա-  
 նանալ աշխարքիս վրա պըտրտելէն ե-  
 տե՛ ինքնալ հոն եկաւ. անձ դարձաւ  
 ըսաց իրեն, կըտեսնան սատանա իմ  
 յոբ ծառաս, որ աշխարքիս վրա տ-  
 նորպէս սք, արդար՝ անձապաշտ՝ ու  
ան

անմեղ մարդ չիկա : Սատանանալ  
 այ պիտի տրվաւ թէ՛ ինչ, ձրի (յի ճա-  
 պա) մի յոք անկրպաշտէ կոր . դուն  
 ձեռքդ վրան դրրեր՝ ամմէն գիէն  
 պահպաներես՝ ու օրհնելով հարըստ  
 ցուցերես ինքը, անոր համար ստանկ  
 անմեղ է . թող քիչմը դրպի՛ր իրեն  
 բաներուն, ան ժամանակը կըտես  
 նես որ ինչպէս բրածը սրտանց չէ՛  
 կեղծաւորուի է : Մնատենը անալ  
 ըսաց սատանայի . ահա քու ձեռքդ  
 կուտամ անոր բոլոր ունեցածները,  
 որ ինչ կուղեսնէ ընես, միան թէ իրեն  
 անձին մի մօտենար : Սատանանալ է  
 լաւ գնաց՝ որ յոքը փորձէ . ու ստանկ  
 եղաւ : Տեսնաս որ՝ մէկ օրմը յորայ  
 զաւկները, (ինչպէս որ սովորուի ը-  
 ըրեր էին) երբոր մէյտեղ ժողված ի-  
 ըրենց մեծ եղբորը քով կուտէին կը  
 խմէին, յանկարծ մէկ մարդմը եկաւ  
 յոքայ պատմեց որ՝ քու եղներըդ եր-  
 բոր դետին կըհերկէին, ու անոնց  
 քովը էշերտալ որ կարծէին, մէկէն  
 դերեվարներ (յի թիւրիւտիւներ) վը-  
 ըա հասան՝ բոլորը քաշեցին տարին,  
 ու պահպաններնալ ըսպաննեցին .  
 անոնցմէ ես մինակ իալըսեցա եկա  
 որ քեզի ըսեմ : Մն որ աս բանը յո-  
 քայ կըպատմէր, անատենը մէկ ու-  
 ըիշ մարդմալ վրա հասաւ, ու անալ  
 սկսաւ զուրուցել թէ՛ երկինքէն կը

բակ ինչաւ քու ոչխարներուդ վրա՝  
 էրեց մոխիր դարձուց ան ամմէնը ի-  
 րենց հովիւներովը, անոնցմէ ես մի-  
 նակ փախա խալըսեցա ու եկա որ քե-  
 Վի սլատմեմ: Այրբոր աս կըսէր՝ ու-  
 թիշմընալ ետեւէն եկաւ, սկսաւ ըսել  
 իրեք խումբ աստատակաւ որներ (իմ  
 ձէլալիներ) վրանիս եկան ու ղտերըդ  
 առին տարին՝ ու վրայի եղած պահա-  
 պանները ջարդեցին, որ ես միան փա-  
 խա ազատեցա՝ ու եկա որ քեզի սլատ-  
 մեմ: Ասալ իր խօսքը չի լըմընցած՝  
 մէկ ուրիշ մարդմընալ եկաւ ետեւէն  
 ու ըսաց. երբոր տըղաքըդ ու աղջիկ-  
 ներըդ իրենց մեծ եղբօրը քով կու-  
 տէին կը խըմէին՝ յանկարծակի մէկ  
 փոթորիկմը (իմ խայմը) ելաւ՝ տունը  
 զաւկընէրուդ վրա կործանեց ամմէն-  
 քը մեռցուց իսմէ՛ ի զատ, որ ես մի-  
 նակ խալըսեցա ու եկա որ քեզի սլատ-  
 մեմ: Այրբոր աս ետքինըս ալ ըսեց  
 յոբ, անատենը ելաւ վրայի հագած  
 լաթը պատուեց ու գլխուն մազը կըտ-  
 ըեց, (որ աս բաներըս ան ժամանակի  
 սգոյ նշանն էր,) ու գետինը փրուվե-  
 ցաւ երկրպագուի ըրաւ օոյ, ըսաց.  
 ես իմ մօրըս փորէն մերկ եկա, ու նո-  
 թէն մերկ պիտի դառնամ. աս բա-  
 ներըս ինձի անձ տըվաւ, ու հիմա ին-  
 քը ետ առաւ. ինչպէս որ անձ կամե-  
 ցաւ նէ՛ անանկ եղաւ. օոյ անունը

օրհնեալ ըլլա : Այսպիսի սիրով յոբ  
 երանելին համբերելով աս փորձանք-  
 ներուս , ամենևին չի դիմ չի ճրջո-  
 հաց : Սատանան աս բաները ընելէն  
 ետև երբոր նորէն ինչ առջևը ելաւ .  
 Ինչ իրեն հարցուց , հիմա ըսաւ փոր-  
 ձելով իմացա՞ր մի իմ յոբ ծառաս , որ  
 ինչպէս ըսինէ աշխրբին վրա անոր նը-  
 մանը ճշմարիտ արդար ու ինչ ապաշտ  
 մարդ չիկա . որ ատ փորձանքներն ալ  
 գլուխը գալով ինքը իր անմեղութե  
 մէջը մնաց : Սատանան ալ ինչ պիտի  
 տրլաւ որ՝ ատ մեծ բանմը չի՞ որ մէ-  
 կը իր վրայի կաշին պահելու համար՝  
 անոր տեղը իրեն ունեցածներուն  
 կաշին տա . մարդ ամմէն բանը կու-  
 տա կը կորսունցունէ՞ որ միան թէ իր  
 անձը խալըսէ . անանկ չըլլար ըսաւ ,  
 հասա քիչմը դըսլիր իրեն ոսկորնե-  
 րուն ու մըսին . անատենը տեսնես  
 թէ ինտոր երեսըդ կը վազէ ու քեզ  
 կանիծէ : Ա՞ծալ ան ժամանակը սա-  
 տանային ըսաւ . ահա բոլորովին յո-  
 բը բու ձեռքը կուտամ , որ ինչոր ու-  
 զեսնէ ընես . միան թէ հոգին չի հա-  
 նես՝ չի մեռցունես ինքը : Այրբոր աս  
 հրամանըս առաւ սատանան , շուտ-  
 մը գնաց անանկ հիւանդութիմը ձգեց  
 յոբա վրան՝ որ ոտքէն ինչվան գլու-  
 խը ողջ տեղմը չիմընաց , բոլոր մար-  
 մինը խոցերով լցված (յի եարա՛ փերէ)

եղած) գարշելի թարախները վրայէն  
կըվազէր . ու անանկ իրեն մարդիք  
ներունալ զըզվելի ըլլալով՝ քաղքէն  
դուրս հանած աղբիւսը (յի չէօվիւ-  
կին մէջը) ձգած էր . որ հոն օրերով  
նստած՝ խեցիով (յի թուլլայի կտոր-  
վանքով) ան օրդնօտ թարախները  
մարմնուն վրայէն կը քերէր : Այց  
այսչափ անտանելի տառապանաց ու  
թշուճառուէ մէջը՝ երանելին յոք ա-  
մենեւին չի ճշկոհաց ու իր համբե-  
րուիը չի կորսընցուց , հասլա միշտ  
փառք կուտար նոյ . Աւ ասոր դէմ ,  
յոքայ կնիկը երկանը ասխըղձուի  
ները տեսնելով՝ ալ ձանձրացած , սա-  
տանային տրգմամբը երբոր ըսաւ ի-  
րեն , թէ ինչվան էրք ատ տառապան  
քը պիտի քաշես , պարապ տեղը կը  
յուսաս որ ատկէց խալըսիս , ու ես  
ալ քու պիտձուովըդ տնէ տուն բար-  
բարական եմ եղեր , մէկէն նոյ դէմ  
անկէժքմը կադա , որ հոգիտ առնէ շու-  
տով ազատիս : Յոք ալ վրան սըրդո-  
ղած ծուռ ծուռ նայեցաւ՝ ու ասանկ  
իրեն պիտն տըվաւ . իրաւցունէ որ ը-  
սաց՝ մէկ խենթ կընկանմըպէս բան  
զուրուցեցիր . մենք որ նոյ ձեռքէն աս-  
չապէ՛ բարիքներ առինք , հիմա աս չա-  
րիքներուս պիտի չի համբերէնք մի :  
Ատքը աս յոքայ վրան եկած բոլոր  
փորձանքները լսելով , իրեն տես է .  
կան



կան իրեք հոգի անոր բարեկամնե-  
րէն, (ասոնք եղոմայեցոց երկրին իշ-  
խաներէն էին՝ որ Թագաւորալ կրս-  
վէին,) մէկը եղիփազ Թեմնացի . մէ-  
կալը՝ բաղդատ սաւքեցի, երդը՝ սով-  
փար մինեցի . ու ետև մէկմալ վրա  
եկաւ՝ եղիուս բուղայի : Ասոնք առ-  
ջի բերանը յոք երանելին անխղճու-  
թե մէջը տեսնելով չի կրցան ինքը  
ճանչնալ . ու ետքնոր իմացան՝ սկսան  
լալով վայ տալ իրենց, վրայի լաթեր-  
նին պատրուտեցին, գլուխնին հող-  
ցանեցին, ու խելմը ատեն բերաննին  
կապված՝ յոբայ առջևը իրենքալ  
գետինը նստան, ու անանկ պաղած  
վրան կրնայէին . ինչվան որ յոք բե-  
րանը բացաւ, ու իր գլուխը եկած-  
ները սկսաւ իրենց ըսել : Աայց աս  
բաներըս զըրուցելնինի՝ խօսքը գանկ  
տելուպէս որ ձգեց, անատենը անոնք  
ըսածը ծուռ իմանալով՝ ու ճշգոհան-  
քի կերպ առնելով, ինքը միտթա-  
րելուն տեղը՝ սկսան չեխելով իրեն  
խրատ տալ, Թէ քու ըրած մեղքե-  
բուդ համար ամքեզի աս պատիժ-  
ներըս խրկեց : Յոք ալ անոնց դէմ  
իր անմեղուիը ցուցունելով՝ կըսէր  
որ ամբարդներունալ վիշտնեղուի  
կուտա, որ իրենց համբերուիը փոր-  
ձէ, ու վարձքերնին էվելցունէ : ա-  
նոնքալ մէկ բերան ասոր դէմ կէնա-

լով իրենց՝ կարծիքը կուզէին հաստա-  
տել թէ՛ անմեղ մարդուն պա-  
տիժ չի խրկեր : Այլ աս բաներուս  
վրա շատ երկան կերպ կերպ սխա-  
ճառներով՝ մէյմէյու հետ տաքցած  
հակաճառուի ընելէն ետեւ, անմա-  
պին մէջէն խօսեցաւ հետերնին, ու  
յոբա ըսածները՝ ճշմարիտ է ըսաւ .  
և անոր բարեկամները չէխեց, որ  
ծուռ բան հաստատելով՝ յոբա գէմ-  
անանկ սիրտ ծակելու խօսքեր ըսին :  
Անոր համար ետքը իրենց հրամայեց  
որ եօթը հորթ ու եօթը ոչխար բե-  
րեն յոբա տան, որ իրենց համար զոհ  
ընէ, աղօթք ընէ՝ որ ան իրենց ըրած  
մեղացը թողուի ըլլա :


Յոբ երանելին աս փորձութիւններուս  
քաջասրտութիւն համբերելէն ետեւ,  
նորէն անմեղ իր առջի առողջութիւն դար-  
ձուց, ու առջի ունեցած բարիքնե-  
րուն երկու անչափը իրեն տրվաւ .  
ու նորէն ալ եօթը մանչ զաւակ ու է-  
րեք աղջիկ ունեցաւ . հարուր եօթա-  
նասուն տարի ալ ապրեցաւ : և բոլորը  
երկու հարուր քառասունը ու թը տա-  
րի աշխարհիս վրա կենալէն ետեւ բա-  
րի մահուամբ վախճանեցաւ :





# Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Պատմութիւն յեսոճայ և դատաւորաց  
դրբերուն . ինչացոց աւետեաց երկիրը  
մտնել տիրապետելը , ու իրենց դատա-  
ւորներուն ատենը հանդըպածները :



## Գ Լ : Ա .

Յետո՞ւ հատա՞լսորդէ Ինչացոց՝ որ յորդանան  
Գեորը հանցնին :

**Մ** ուսէս մարդարէին վախճանե-  
լէն ետքը , յետու որդին նաւ-  
եայ Կայ հրամանովը զօրանալով ա-  
սլըսպրեց ինչացոց որ սլատրաստըվին  
յորդանան դետը անցնելու . որ ալ  
սկսին քանանացիքը ջարդել՝ անոնց  
երկիրները տիրապետել : և աս բա-  
նիս համար՝ առաջ երկու կտրիճ լըբ .  
տես (յի չաշուտ) խրկեց երիքով քա-  
նանացոց մայրաքաղաքը , որ ան տե-  
ղերուն որպիսուիը երթան իմանան :  
Աս լրտեսներն որ գացին՝ հոն աւ-  
խաբ ըսած մէկ կնկանմը տունը ին-  
ջան . իրիքովի թագաւորնալ իմանա-  
լով որ ասանկ լրտեսուի ընելու եկեր  
են՝ ետևնին մարդիք խրկեց որ եր-  
թան աւխաբին տնէն բռնեն իրենք :  
Եայց աւխաբը տարաւ գաղտուկ  
տեղ .

տեղմը պահեց անոնք, ու եկողնե-  
րուն խաբեց ըսաւ թէ՛ ատանկ մար-  
դիք իրիկունը ինծի եկան՝ ու առ տը-  
վանց կանուխ ելան չեմ գիտեր ուր  
գացին, նայեցէք որ ետեւին հաս-  
նիք: ու ինքը անոնք ճամբելէն ետեւ՝  
դնաց լրտեսներուն քով, գիտեմ ը-  
սաւ՝ որ ան մեր երկիրը ձեր ձեռքը  
պիտոր տա. ինչու որ՝ ձեր ահը տի-  
րեր է աս մեր մարդոց վրա, լսելով  
ձեր կարմիր ծովէն հրաշքով անցնել-  
նիդ, ու ամորհացոց թագաւորնե-  
րուն տրված ջարդերնիդ՝ ձեր այօգ-  
նականուքը. որ եսալ կըսեմ թէ՛ ան է  
ճշմարիտ անձը. անոր համար կաղա-  
չեմ որ՝ երդուիմ ընէք խօսք տաք ին-  
ծի, որ ինչպէս ես ձեզի աս բարի-  
քըս ըրի՝ ձեզ պահեցի, դուքալ ինծի  
ու իմ տանըս խնայէք ողորմիք՝ երբոր  
աս քաղաքըս մտնելու ըլլաք: Վնոնք  
ալ խօսք տրվին երդվընցան, միան  
թէ ըսին՝ անատենը հարըդ մարըդ  
եղբարներըդ քու տունըդ ժողվես,  
ու նշանով ձանչնըվելու համար՝ տա-  
նըդ պատու հանը մէկ կարմիր չովան-  
մը կապես, որ ան տեսնալով՝ քեզի չի  
դըսչին: Վսանկ մէջերնին խօսք դը-  
նելէն ետեւ՝ կնիկը իրենք տանը պա-  
տու հանէն՝ (որ քաղքին պարըսպին  
վրա կըլլար) չովանով վար ինջեցուց,  
ու անանկ գաղտուկ ելան գացին:

Երտեսները երբոր դարձան պատ-  
 մեցին թէ ինչպէս Կժ անոնց սիրտը  
 վախ ձգեր է, յետու աւելի սիրտ ա-  
 ռաւ ինչլացոց բանակը առաջ բերաւ  
 ինչվան յորդանան գետին քովը . ու  
 ժողովրդոց խմացուց որ՝ հրաշքով ան  
 յորդանան գետէն անդին պիտոր  
 անցնին . և ինչպէս որ պիտի ընէին՝  
 տեղն՝ իտեղը իրենց ապրսպրեց : Աւ-  
 տի իրեք օրէն ետեւ՝ Կժ հրամանովը  
 քահանաները առջեւն տապանակը  
 ուխտին կրօնակնին առած՝ երբոր  
 եկան ալ ոտվընին յորդանանի ջրին  
 դպցունելու եղան, յանկարծակի ան  
 տեղէն յորդանան գետը երկու քճրդ-  
 քրովեցաւ . վերէն եկած ջրերը կե-  
 ցան մէկմէկու վրա դիզվեցան, ու  
 վարի եղածը անցաւ ծովը գնաց . և  
 ան տեղը ցամաք ճամբա որ մընաց,  
 քհնյները տապանակովը մէջ տեղը  
 գացին կեցան ինչվան որ բոլոր ինչլա-  
 ցոց բանակը ամենեին առանց թըր-  
 ջե լու մէջէն անցաւ մէկալ դին դը-  
 նաց : Անատենը որ տապանակը դեռ  
 յորդանանու մէջն էր՝ Կժ հրամայեց  
 յետուայոր՝ ամմէն ցեղէն մէյմէկ հո-  
 գի՝ մէկ մէկ քար առնեն վերցունեն  
 յորդանանի մէջէն, ու անանկ տա-  
 վերկու քար՝ տանին իրենց առջի բա-  
 նակ դրած տեղը տնկեն . որ աս հը-  
 րաշքիս յաւիտենական յիշատակը

ըլլաւ նաև ասկէ՛ի զատ ուրիշ տաս-  
 վերկու քարալ տնկէց յեսու յորդա-  
 նանի մէջը՝ տապանակին կեցած տե-  
 ղը : Ա՛մէնէն ետև երբոր տապա-  
 նակնալ ելաւ մէջէն , ան ժամանա-  
 կը նորէն ջուրը եկաւ առջինինպէս  
 սկսաւ վազել : Յորդանանէն ելե-  
 լէն ետքը՝ յեսու ԿՅ Տրամանովը գայ-  
 լախազէ (ԿՅ չախամախի քարէ) դանակ  
 շինեց , ու անով բոլոր անապատը ծը-  
 նած՝ իէլացոց երիկ մարդիքը թըլ-  
 փատեց , որ չէին թըլփատված : և աս  
 պի՛տձուովրս ան առջի բանակ դրած  
 տեղին անունը՝ գաղգաղա ըսվեցաւ :  
 Ա՛ս տեղըս՝ ա՛լ երկինքէն մանանա  
 ինջնալը դադրեցաւ , ու ցորենէ հաց  
 սկսան ու տել . որ առջի զատիկնինալ  
 հոս ընելով՝ ցորենէ շինած բաղարջ  
 կերան :

Գ՛՛՛՛ : Բ .

Երիտու՛ ու գայի ըսած Կալչընէրոան ու  
 ուսմէ :

Երիբով քաղքին մարդիքը որ խիստ  
 վախցերէին իէլացոցմէն , երբոր  
 իմացան թէ յորդանան գետը անցան՝  
 ու իրենց մօտեցան , քաղքին դռները  
 դոցած՝ անանկ ներսը կեցեր էին :  
 Բայց Կամեցաւ որ նո՛ր կերպով-  
 մը իէլացիք աս քի՛քըս առնեն : հրա-  
 մայեց

մայեց յեսո՛ւայ որ՝ վեց օր մէյմէկու  
 ետեւէ մէկ անգամ խորայէլացոյ զօր-  
 քը ելլէ՛ քահանաներնալ մէկտեղ  
 տապանակը ուխտին հետերնին ա-  
 ռած, ժողովուրդը առանց ցանցուն  
 հանելու՝ եօթը քահանայ միան փո-  
 ղեր չալելով անանկ թափօրիպէս ե-  
 ռիքովի պարըսպին չորս դին պըտը  
 տին. ու եօթնէրդ օրը եօթը հեղ աս  
 պըտուտըս ընեն, ու վերջին անգա-  
 մը փողերը չալելունպէս բոլոր ժողո-  
 վուրդը մէկէն ըսկսին կանչվըռտել:  
 Աս որ ասանկ ըրին իէլացիքը, ան  
 ատենը երիքովի պարիսպները մէկէն  
 չորս դիէն բոլոր կօրծանեցան դետի-  
 նը ինկան. ու այ հրամայած ինպէս  
 վազեցին մէջը մտան: և ինչպէս որ  
 այ ուխտ ըրեր էր յեսու որ բանմը  
 չապրի չի խալըսի, առանց խնայելու  
 բոլոր բովանդակ մարդ ու անասուն  
 ինչ որ կարնէ՛ ջարդեցին թրէ անցու-  
 ցին, ու քաղքին կրակ տըվին մոխիր  
 դարձուցին: Աւ մէջէն միան աւխա-  
 քը իր մարդիքներովը՝ ինչպէս խօսք  
 տըվերէիննէ՛ խալըսեցին. որ եկաւ  
 ինքնալ իէլացոյ հետ մէկ եղաւ, ու  
 ետքը յուդայի ցեղէն սաղմոն ըսած  
 մէկումը հետ կարգըվեցաւ, (որ քնի  
 աղգահա՛րին մէջը կը յիշվի): Ատքը  
 յեսու հերիք չի սեպելով ասանկ չա-  
 ըաչար հիմնայատակ ըլլալը, անէծ-  
 քալ

Քալ կարդաց ան մարդուն վրա՝ թէ որ երիքով քաղաքը նորէն շինէ . ա նանկ որ ըսաւ՝ առջինեկ զաւկովը ա նոր հիմը դնէ , ու պինտ ետքինովը պարըսպին դուռը շինէ : ( Կի ան մար դուն բոլոր զաւկրները մէկմէկու ետեւէ մեռնին : ու ըսածինսէս հինգ հարուր տարիէն ետեւ՝ թագաւորաց ատենը կատարվեցաւ , երբոր ազան կի՛ աքիէլ ըսած բեթելացի մէկմը՝ նորէն որ երիքովը շինեց : )

Երիքով կործանելէն ետեւ՝ յեսու ու զեց գայի ըսած քաղքին վրա երթալ . ու լրտեսներէն իմանալով որ աս ա նանկ ուժովմը չէ , իրեք հազարի չափ մարդ խրկեց որ երթան անալ առնեն : Վայց բանը չի յաջողեցաւ . անոնցմէ յաղթըվեցան ինչլացիք , ու եռսուներ վեց հոգիալ ջարդըված փախան դար ձան բանակը : Վս բանիս վրա յեսու խիստ շփոթեցաւ , ու սաստիկ տըրտ մուծէն վրայի լաթերը պատուեց , գանկտելովոյ առջևը ինկաւ , ու չէր դիտէր ինչ ընէ , որ ժողի՛դին սիրտ նալ անով կոտորեցաւ : Վճալ ան ա տենը պինտ տըվաւ թէ՛ անոր համար աս եղաւ որ ինչլացիք մեղաց մէջ են . որ երիքովի կործանելու ատենը՝ ա նորն զոված արդիլած բաներէն գող ցեր՝ պահեր են . ուստի թէ որ կու ղէք ըսաւ՝ որ աս սպառի՛ծէս խալըսիք ,



ու ես ձեզի ձեռք բռնելով թշնամի  
 ներք յաղթէք, վիճակ ձգեցէք՝ աստ  
 մարդը գըտէք, ու ինքը իր ամմէն  
 բաներով էրեցէք, որ ասով նգովքը  
 մէջերնէդ վերցըվիս՝ յետու ալ անանկ  
 ըրաւ՝ տասվերկու ցեղին մէջը կար-  
 գով վիճակ ձգեց. ու սինտ ետքը վի-  
 ճակը աքար ըսած յուշայի ցեղէն  
 մէկ ղինու՞ որիմը վրա որ ելաւ, յետու  
 ասիկա առջևը կանչեց՝ հարցուց իմա-  
 ցուտներէն՝ որ այ խորանին համար  
 մէկ դի գրերէին՝ անկէց մէկ աղվոր  
 բանած վերարկումը, երկու հարուր  
 արծաթէ երկդրամեան (կի՛ խուռուշ)  
 ու մէկ շեղումը (յի՛ սիւսիւքէմը) յիս-  
 տուն ոսկիի՝ առեր էր, ու տեղնալ  
 ըսաւ ուր որ սլահէր էր: Են ատենը  
 մարդ խրկեց յետու, որ գացին բա-  
 ները առին, ու ան աքարը իր զաւկը  
 ներովը՝ անասուններովը՝ և բոլոր տը-  
 նով տեղովը մէկ ձորմը (յի՛ չոր տէ-  
 րէիմը մէջ) տարին: ու հոն բոլոր ժո-  
 ղովուրդը վրան թափեցան քարկոծե-  
 ցին ասոնք. և ան մէկալ բաներուն  
 կրակ տըվին էրեցին, ու վրանին ալ  
 խոշոր քարերով ծածկած մէկ սղտի  
 շեղումը շինեցին, որ յաւիտենական յի-  
 շատակ մընա աս սլատու հասիս: ա-  
 նոր համար ան տեղին անուննալ՝ ե-

մակ կի՛ ձոր աքովրա ըսվեցաւ:  
 Ետքը

Ետքը նա՛ յեսու՛նայ հրամայեց որ բո-  
 լոր զօրքով ելլէ՛ նորէն գայի քաղքին  
 վրա երթա՛ ու երիքովիսէս անալ  
 հիմնայատակ ընէ : Յեսուալ գիշե-  
 րանց եռսուն հազար զօրք տարաւ  
 քաղքին ետեւները պահվըտցուց , ու  
 ինքը առտրվանց քիւմը զօրքով քաղ-  
 քին առջևը ելաւ երևցաւ : Կայիի  
 մարդ իքնորասոնք դիմացնին տեսան՝  
 ամմէնքը թգրնալ մէյտեղ քաղքէն  
 դուրս ելան որ իէլացոց հետ պատե-  
 րազմ ընեն : յեսու սուտ վախ ցուցու-  
 նելով ետ ետ քաշեց զօրքը՝ ինչվան  
 անոնք աղէկմը իրենց քաղքէն հեռա-  
 ցան : Ան ատենը յեսու ան պահվը-  
 տածներուն նշան տալունսէս՝ ամ-  
 մէնը տեղերնէն ելան քղքը մտան ,  
 մէջը մնացած մարդիքը ջարդեցին՝ ու  
 քաղքին կրակ տրվին : ետե իրենք  
 աստիէն ու մէկալ բանակը ան գիէն  
 ան քաղքէն դուրս ելած թշնամիներ  
 ըր մէջերնին առին , առանց խնայե-  
 լու բոլորը ջարդեցին . որ ամմէնը  
 տասվերիու հազար հոգի էին՝ երիկ  
 մարդ կնիկ մարդ՝ որ գայիի մէջը  
 կը բնակէին : Աւ իրենց թագաւորը  
 ողջ բռնած , յեսու՛ երկճղի ( ցր եր-  
 կու բաժնած չաթալ ) փայտի վրա  
 կախել տրվաւ որ ինչվան իրիկուն կա-  
 խած կեցաւ , ետքը ինջեցուցին մէկ  
 փոսմը ձգեցին՝ վրան քարեր դիզե-  
 ցին ,

ցին, որ աս յաղթուէս յիշատակը լլաւ  
 Լ'ս երկու քաղաքները առնելէն  
 ետե՛ յետու նաւեան ինչացոց ժողո-  
 վուրդը առաւ դեբաղ ու գարիզին  
 ըսած լեռները տարաւ՝ որ մէկմէկու  
 մօտ էին. հոն քարերով նոյ սեղանմբ  
 շինեց՝ վրան դո՛հ ըրաւ, ու նծային  
 պատու իրանքներուն խօսքերը անոր  
 վրա նորէն գրելով՝ դաս առ դաս ան  
 երկու լեռնէն, ան օրհնութիւնները ու  
 անկէճքները կարդալ տրվաւ. որ մով-  
 սէս երկրորդ օրինաց գրքին մէջը  
 գրէր՝ ինչացոց ասըսայրեր էր, որ եր-  
 բոր աւետեաց երկիրը մտնելու ըլ-  
 լաննէ՛, աս բանը ընեն:

Գ. Լ. Գ.

Ղաֆաառնացոց խաբէբայոս-Լի՛ն, ու հանա-  
 նացոց հինգ Լի՛րներուն ջարդելիւն:

Ինչացոց այսպիսի յաղթութիւնները ու  
 առաջ գալը երբոր լսեցին անկող-  
 մերու քանանացոց ազգերը՝ սրտերնին  
 սաստիկ վախ ինկաւ, ու մէյտեղ է-  
 կան խօսք գրին որ անոնց դէմ ելլեն:  
 Լայց ասոնցմէ գաբաւոնացի ըսած  
 ները՝ աղէկ հասկընալով որ ուժով  
 ինչացոց դէմ բան չէն կրնար տես-  
 ներ, մտածեցին որ խաբելով բարե-  
 կամուի ընեն հետերնին, ու անանկ  
 իրենք խալըսին անոնց ձեռքէն: Ս. Կ.  
 տի

տի հին պատրուտած ճամբորդի լա-  
 թեր առին հագան վրանին, ու կտրը  
 տած մաշած կօշիկներ ոտքերնին, ու  
 գինիի կարկտած տիկեր՝ ու քուրցեր  
 կրունակնին զարկած՝ մէջը չորցած  
 որդնոտած հացի կտորվանք՝ իբր ճամ-  
 բու պիտանաւորուէ համար. ասանկ  
 եկան յեսունայ առջևը ելան՝ այնպէս  
 ցուցունելով թէ՛ հեռաւոր աշխարքէ  
 դեսպան խրրկրված եկերեն. ու ըսին  
 թէ՛ մեր կառավարները լսելով իէլա-  
 ցոց մեծ անունը՝ մեզ խրկեցին որ  
 հետերնիդ. ու խտու դաշինք ընենք :  
 Յեսու ալ աս բանիս վրա այ չի հար-  
 ցուցած՝ հաւտաց ըսածներնուն, ու  
 խօսք տրվաւ որ հետերնին միշտ բա-  
 րեկամու թի պահէ. իէլացոց իշխան-  
 ներնալ երգումով աս դաշինքը հաս-  
 տատեցին : Արեք օրէն ետև երբոր  
 իմացաւ ժողովուրդը՝ որ աս դաբաւո-  
 նացիները հոն քովերնին մտ բանա-  
 նացոց աղգերէն են եղեր՝ տրանջացին  
 իրենց իշխաններուն դէմ որ ասանկ  
 խաբվեցան, ուստի սրգողելով ուղե-  
 ցին դաբաւոնացիները ջարդել : Բայց  
 իշխանները անոնք բռնեցին չի թո-  
 դուցին, որ այ անուննը վրա ըրած  
 երգումնին դէմ չի գործեն, ու պատ-  
 ժւրվին : Անոր համար յեսու ետքը  
 կանչեց իրենք՝ ու աս խաբեբայուէս  
 համար սաստիկ բարկանալով վրա-  
 նին,

նին, իրենց պարտք դրաւ՝ որ գերիի-  
պէս միշտ և հանապաղ ինչլացոց աղ-  
գին ու այ խորանին փատ կոտորող՝ ու  
ջուր կրող ըլլան: անոնքալ սիրով  
ընդունեցան:

Ազոնի բեղէկ երուսաղէմայ Թֆւրը  
երբոր լսեց Թէ գաբաւոնացիները  
իրենցմէ զատված գացին իսրայէլա-  
ցոց տակը զիրենք ձգեցին, զարմա-  
ցաւ: ու սիրտը աւելի վախ ինկաւ  
ինչլացիներէն, ինչու որ՝ գաբաւոնա-  
ցիները մէջերնին զօրաւորներէն էին  
ու ասանկ բան ըրին: ուստի ուրիշ  
չորս քանանացոց Թֆրներալ կանչեց  
իր հետը միաբանեց. անանկ հինկ  
Թֆւր մէկտեղ գաբաւոնացոց վրան  
պատերազմ բացին: Աբաւոնայի-  
ներնալ ինչլացոց գիմեցին, որ իրենց  
տէր կենան ազատեն անոնց ձեռքէն:  
Անատենը յետու այ հրամանովը քաջ  
զօրքեր հետը առած՝ գիշերանց ճամ-  
բա ելաւ, ու լուսնալու տտենը յան-  
կարծակի մէկէն գաբաւոն քաղքին  
քովերը ասոնց վրա վազեց. ու չարա-  
չար կոտորելով իրենք, երբոր ալ փախ-  
չողներուն ետեէն ինկաւ՝ անժամա-  
նակը սնծալ վերէն օգնեց ինչլացոց,  
որ խոշոր քարերու պէս կարկուտ ան  
Թչնամիներուն վրան Թափեց. անանկ  
որ՝ ասով մեռնողները աւելի եղան  
բան Թէ Թրով ջարդը վածները:

Եւ յսպիսի յաջողութիւն լացոց պատե-  
 րազմբ ան օրը առաջ կերթար յետու  
 վախնաւով որ չըլլա թէ բոլոր թշնա-  
 միները չի ջարդըված՝ գիշերը վրա  
 հասնի՝ ու ձեռքերնէն ազատին , այ  
 խնդրեց որ քիչմը արևը ու լուսընկան  
 տեղերնին կայնին : Ինչ ալ ինչպէս  
 կըսէ ինչաշունչը , իր խնդիրքը կա-  
 տարեց , որ մէկ օրվան ատենի չափ  
 արևն ու լուսընկան ուր որ հասե-  
 թէին նէ՝ հրաշքով տեղերնին կանկ  
 առնել տըվաւ , որով ան մէկ ցորեկ-  
 վան օրը երկուք եղաւ . ինչվան ինչ լա-  
 ցիքը ան բոլոր թշնամիները ջարդե-  
 ցին հատցուցին , ու անոնց երկիրնե-  
 ըր տիրապետելէն ետե՛ ելան գաղ-  
 դաղա իրենց բանակը դարձան : Եւ այ-  
 աս պատերազմիս ատենը իմանալով  
 յետու որ ան հինկ թգրները փախեր  
 մակեդոն ըսած տեղը մէկ այրի ( քի  
 մաղարայիմը ) մէջ մտեր պահվերէն ,  
 հրամայեց որ ան այրին բերանը քա-  
 րերով գոցեն՝ ինչվան որ պատերազ-  
 մը խալլաին : Եւ տքը բանալ տըվաւ  
 ան հինկնալ հանեց պառկըցուց , ու  
 ինչ լացոց զօրագ լուխներուն ըսաւ որ՝  
 ելլէն ոտքով անոնց վզերուն վրան կո-  
 խեն : ու անով սիրտ առնեն չվախ-  
 նան անոնցմէ , որ ինչ բոլոր ինչ լացոց  
 թշնամիներուն ասանկ պիտոր ընէ :  
 Եւ տքը ըսպաննել տըվաւ , ու ինչվան  
 իրէ .

իրիկուն մարմինն կախելէն ետև՝  
 վար առին նորէն այրին մէջը ձգե-  
 ցին՝ խոշոր քարերով այրը գոցեցին :

ԳՎ : Դ :

Ետև Բուր աւերեաց երկերը փերայեպե-  
 լէն ետև՝ ան Էելացոյ կը բաժնէ : ու ետքը  
 կը մեռնի :

Ես հինկ քանանացոյ թագրներուն  
 ջարդնոր եղաւ և երկիրնին ինչլա-  
 ցոյ ձեռքը որ անցաւ . անդիկէն հիւ-  
 սիսային կողմէն՝ յարին ըսած սուրա  
 թագաւորը՝ որ ինքնալ մեծերէն էր ,  
 չորս դին մարդ խրկեց մէկալ մնա-  
 ցած քանանացոյ թագաւորներուն՝  
 ամորհացոյ , քետացոյ , փերեզացոյ ,  
 յերուսացոյ , խեւացոյ . ու տրոդեց  
 ոտք հանեց անոնքալ , որ ամմէնը մէ-  
 կէն անհամար զօրք թափեն , անանկ  
 իրենց երկրէն ջնջեն վերջընէն ինչլա-  
 ցիները : Այրբոր այսպիսի մեծ պատ-  
 ըստու թիւ ասոնք ժողվեցան եկան  
 մառոն ըսած ջրին քովը , աւաղիպէս  
 շատվոր , իրենց ձիերովը ու պատե-  
 րազմական կառքերով . ան յորդորեց  
 սիրտ տրվաւ յետուա՝ որ ամե՛նեին չի-  
 վախնա . հապա վաղը ըսաւ աս առնն  
 ան ամմէնը ձեր ձեռքը պիտի տամ ,  
 որ իրենք տակ առնէք՝ իրենց ձիերուն  
 ջըղերը ջարդէք ու կառքերը երէք :

**Յ**եսուալ անանկ քաջու թք ելաւ իր  
 զօրքովը՝ լեռան գիէն յանկարծակի  
 ասոնց վրա ինջաւ, ու ւնյ ըսած ինպէս  
 չարաչար կոտորեց իրենք. ետքը փախ-  
 չողներուն ետեւէնալ ինկաւ անչափ  
 ջարդեց՝ որ մարդ չի խալըսեցաւ. ու  
 զնաց անոնց երկիրներնալ՝ իրենց  
 քիչքներովը առաւ: Ասանկ յաղթե-  
 լով ան ամմէն դէմ կեցող թգրնե-  
 րը ու ազգերը, հինկ վեց տարւման  
 մէջ բոլոր քանանացոց երկիրը տա-  
 կերնին առին իսրայէլացիք ուտիրա-  
 պետեցին. անանկ որ՝ ան երկիրները  
 ալ քանի եկող թագաւորմը չի մնաց,  
 հապա մէկ քանի այլազգի տէրուի-  
 ներ ու նախարարու իններ թողուց ւնծ  
 ինչացոց զգաստուէ ու զգուշուէ հա-  
 մար, որ սարապ կէնալով չի թու-  
 նան. ու պէտք եղած ատենը անոնց  
 ձեռքովը պատժէ խրատէ իրենք՝ որ

խելլընին գլուխնին ժողվէն:

**Մ**նկէ ետե ւնծ հրամայեց յեսուա որ  
 ան յորդանան գետէն աստին առած  
 երկիրները՝ մէկալ իննուկէս ինչացոց  
 ցեղերուն բաժնէ. որ երկու ցեղ ու  
 կէսը յորդանանէն անդին արդէն  
 մովսէսի ատենը առերէին իրենց բա-  
 ժինը: **Յ**եսուալ եղիազար քչոյա-  
 պետին ու ինչացոց ցեղապետներուն  
 հետ մէյտեղ եկած՝ մովսէսի սահմա-  
 նած կարգինպէս ամմէն մէկ ցեղին

տեղ,



տեղ վանքը զատ զատ որոշեցին ցրցու-  
ցին: Աւել տացոց ցեղը, որովհետեւ  
ւնձ ըսերէր որ մասնաւոր տեղ չունե-  
նան, անաշ առին աս բոլոր ինչ լացոց ցե-  
ղերուն երկիրներուն մէջը ցրովեցին՝  
քառսունը ութը քիչք արվին իրենց,  
ու անոնցմէ վեցը քաղաք ապաստանի  
ըրին, որ հոն ահամա մարդ մեռցու-  
նողը վախչէրնէ՝ կրխաչոտէր՝ շէին  
բռներ, ինչպէս որ ւնձ ապրստըրեր  
մովսէսի: Ասկէ՛ի զատ քաղէ բայալ,  
որ ան մովսէսի խրկած տասվերկու  
լրտեաներէն մէկն էր, իր բարի վկայ-  
ուէր վարձ (ինչպէս մովսէսի ձեռքով  
ւնձ իրեն խոստացերէր), մասնաւոր  
տեղ արվին: Այլ յետուալ այ հրամա-  
նովը իրեն զատ տեղ առաւ իր եփ-  
րեմի ցեղին երկրին լեռանմը վրա՝  
Թամնաթսարա ըսած: անտեղը քա-  
ղաք շինեց՝ ու ալ ինչվան ետքը ինք-  
նալ հոն կրբնակէր: Աս տեղերուն  
բաժանմունքներուն վրա՛ն ատենը  
Թէպէտ ինչ լացոց ցեղերուն մէջը շատ  
վիճեր եղան, բայց յետու խաղաղե-  
ցուց իրենք՝ ու ամմէնքը որչափ կա-  
րելի էր գոհ ըրաւ: Այտքը երբոր ամ-  
մէն մարդ ալ սկսան իրենց տեղվան-  
քը շինել որ բնակին, վկայուԹէ խո-  
րաննալ՝ տապանակովը ու իր ամմէն  
բաներովը գաղգաղայէն վերուցին՝  
սեւով ըսած քիչքը տարին, որ եփրե-

մի ցեղին երկրին մէջը կը լլար : Ան  
անկէալ թէպէտ ետև ինչլացիք առին  
տեղէ տեղ տարին , բայց իր հաս-  
տատ տեղը հոն եղաւ ինչպէս սա-  
մուէլ մարդարէին ատենը :

Այսու կերպով յետև աս ամէն ցե-  
ղերը օրհնելով իրենց տեղը ճամբե-  
լէն ետև , մէկ բանմը հանդըպեցաւ  
որ ինչլացոց մէջը շատ շփոթուի ձգեց :  
Ան երկու ցեղու կէսը ինչպէս ըսինք ,  
որ յորդանան գետէն անդին իրենց  
քաժինը առին . երբոր ալ տեղերնին  
դարձան՝ հոն յորդանան գետին քովը  
մէկ մեծ սեղանիպէս շինվածքմը շի-  
նեցին : Անկալ տասը ցեղը աստիէն  
որ ասբանը իմացան՝ ծուռ միտք գա-  
ցին վրանին , իբր թէ իրենցմէ զատ  
ված՝ նոր հաւատք կուղեն հաստա-  
տել . անոր համար մէյտեղ եկան խոր-  
հուրդ ըրին որ անոնց վրա պիտրզմ  
ելեն : Բայց նորէն բանը աղէկմը  
իմանալու համար՝ փենէհէս քահա-  
նան՝ ուրիշ խօսքի տէր մարդիքնե-  
րու հետ մէյտեղ անոնց խրկեցին . որ  
գնաց յանդիմանեց իրենք թէ առ-  
պէս բան ընելով՝ կերևցունէք որ՝  
դուք մէկալ ինչլացոց ցեղերէն զատ  
ված՝ անձպաշտուի թողուցեր կու-  
պաշտուի կըսկըսիքկոր ընել . որով  
բոլոր ազգին վրա նոյ բարկուիը կը-  
շարժէք՝ որ նորէն մեզ ամմէնըս պատ-  
ժէ ,

Ժէ, ինչպէս ատեն ատեն հանտըպե-  
 ցաւ: Անոնք ալ դարձան ուխտն տրվին  
 թէ՛ բաւ լիցի որ մենք ատ պատճա-  
 ռով շինած ըլլանք՝ որ զատ ան պաշ-  
 տենք՝ ու վրան զոհ մատուցանենք.  
 ինչպէս աս բանիս մեր ան անձնալ  
 վկայէ. հայրա ասոր համար շինեցինք  
 որ՝ մեր մէջը ու ձեր մէջը՝ որ մեր  
 եղբարն էք՝ միաբանու թէ յիշատակ  
 մը ըլլա ասիկա՝ մեր ետեւէ եկող ար-  
 զաքներուն: Փենէ հէսի սիրտնալ աս  
 լսելով հանգ չեցաւ՝ հաւնեցաւ անոնց  
 ըրածը, ու անանկ եկան հասկըցու-  
 ցին մէկալնոնց. ու անոնք ալ փառք  
 տրվին անձ որ աս մեղքէս ազատ են  
 եղեր: Անոր համար յետուալ ան սե-  
 ղանին անունը դրաւ՝ վկայութի կի՞  
 յիշատակ՝ որ ան ցեղերնալ մէկալ-  
 նոնց հետ մէկ ան կը պաշտեն:  
 Աս ամմէն բաներէն ետե յետու եր-  
 բոր ալ ծերացաւ, բոլոր ինչլացոց մե-  
 ծերը քովը կանչեց. ու անոնց առջևը  
 դնելով ան ըրած անհամար բարե-  
 բարութիւնները, բարի խրատներով յոր-  
 դորեց իրենք, որ չըլլա թէ ան իրենց  
 քովը մնացած կռատաշտ ազգերուն  
 նայելով կամաց կամաց թու ընան ան-  
 պաշտութիւն թողուն՝ անոնց կռոքե-  
 րուն ետեւէն երթան. որ ան ատենը  
 անձալ վրանին բարկանալով իրենք  
 երեսէ ձգէ, ու նորէն երթան անոնց

տակը գերի ըլլան՝ ու չարչարվին հո  
 գինին ելլէ : Այլ ասոր վրա ինչացոց  
 բերնէն երդումով հաստատ խօսք ա  
 ռաւ՝ որ յաւիտեանս յաւիտենից ի  
 րենց տր ամբ պաշտեն , անկէց ուրիշ  
 ալ ամ չի ճանչնան : ու աս բանիս  
 յիշատակ՝ խորանին քովը մէկ մեծ  
 քարմը տընկեց , որ որդոց որդի աս  
 նորէն այ հետ ըրած ու խտուդաշին  
 քը յիշեն : Անկէ ետքը բարի ծերու  
 թք հարուր տասը տարվան մեռաւ  
 յետո նաւեան՝ իր թամնաթսարա  
 ըսած քաղաքը , ու հոն իրեն քարէ  
 շինած դանակը հետը մէյտեղ դրած  
 անանկ թաղվեցաւ : Աստուայ Ե  
 տեւնալ շատ ջանցաւ որ եղիազար  
 քհնյապետնալ մեռաւ , ու անոր  
 տեղը անցաւ փենէհէս իրեն որդին :

Գ Լ : Ե .

Աստուայ երես ինչացոց որդիստեղ՝ դասա  
 ւորաց տրենը :

Աստուայ մեռնելէն ետե՛ւ առջի  
 տարիները քանի որ ան հին ծե  
 բերէն մնացած կային՝ ինչացիք ամ  
 պաշտուիր չի թողուցին . բայց եր  
 քոր անոնքալ մեռան հատան՝ կամաց  
 կամաց ժղվիլը իրենց քովը մնացած  
 այլազգիներուն հետ բարեկամութի  
 ընելով՝ հետերնին խառնըվեցան , ու

անսոց պէս սկսան կռաօղաշտուի ընել : Եւ ծալ ան ժմկները հրեշտակ մը խրկեց , որ եկաւ մեղքերնին երեսնին տըվաւ խրատեց իրենք . որ թէ չի դառնաննէ ըսաւ՝ անձ պատիժնին կուտա : Եւ լացիքալ աս լսելով անատենը զղջում ցուցուցին լացին : ու այսու անմի՛ իրենց բռնած շար ճամբէն որ ետ չիկեցան , անձալ վրանին բարկանալով շատ անգամ թողուց որ երթան գերի ըլլան ան այլազգիներուն , որ անոնց տակը տանջուի : Եւ լսելով լսելով լսելով վրանին գա : Եւ անկ երբոր կըզգաստանային՝ նորէն այ կըդիմէին , անձալ իրենց ողորմելով՝ մէյմէկ ու թով մարդ կը հանէր մէջերնէն , որ ան թշնամիներուն ձեռքէն խալըսեն , ու պէտք եղած ատենը իրենք կառավարեն . որ ասոնք դատաւոր կըսուին :

Եւ այց ասկէց առաջ երբոր այլազգիներուն ձեռքէն չարչարված ինչլացիքը այն ինկան՝ ու առաջնորդ մը խընդրեցին , ան յուգայի ցեղը ցուցուց , որ անալ շմառոնի ցեղը հետը առած փերեղացիներուն գէմը ելան , ու տասը հազար հողի ջարդելով՝ անոնց թագաւորը ադոնիբեզէկ ըսած բռնեցին , ու ձեռվըներուն ոտվընէրուն ծարերը կտրեցին : Եւ նքնալ անատենը դարձաւ ըսաւ թէ՛ իմ ըրա

Տիս սրատիժը աստուծմէ գրտա,  
 որ եսալ եօթանասուն թիւերն որ  
 բռնեցի, անոնց ձեռվըներուն ու ոտ  
 վըներուն ծարերը կտրած՝ սեղանիս  
 ներքեւ կըդնէի՝ որ շանպէս վար ին  
 կած փշրանքներըս բերնով առնեն ու  
 տեն: Եւ իւրայիք ասանկ քիչմը քաջու ի  
 ներ ընէլէն ետե՛ նորէն իմ սրաշտու  
 թիւ թուլցան, ու կռապաշտներուն  
 հետ խառնըվեցան, մէջերնին աղջիկ  
 տըվին առին, ու անոնց բահաղը  
 սած կռոքնալ սրաշտեցին: անոր հա  
 մար իմ սրդողեցաւ վրանին, ու քու  
 սարսաթեմ ասորոց թիւերին ձեռքը  
 տըվաւ իրենք, որ ութը տարի անոր  
 տակը չարաչար ծառայելէն ետե՛  
 ինէվընին վրանին եկաւ ու նորէն իյ  
 գիմեցին: Եւ ծալ անատենը իրենց  
 առաջնորդ տըվաւ դոթոնիէլ քա  
 ղեբայ պզտի եղբարը, (կիմ ինչպէս  
 կըսեն՝ եղբօրը որդիս) որ քաջու թիւ  
 ելաւ յաղթեց անիկա, ու ինչլացիքը  
 ազատեց անսր ձեռքէն: որ քառսուն  
 տարի ազատ ինքնագլուխ մնացին:  
 Եւ թոնիէլի մեռնելէն ետե նորէն  
 ինչլացիքը սկսան մեղանչել՝ իմ թու  
 ղուլ: ուստի իմ իրենք նորէն մատ  
 նեց եգղոմ ըսած մովաբացոց թա  
 գաւորին ձեռքը: որ վրանին ելաւ  
 տիրապետեց, ու տասներու թը տա  
 ըի տակը առած կըչարչարէր իրենք:

ինչ

ինչպէս որ ալ չի սխալանալ ինչ ինչ կան  
 որ իրենք անոր ձեռքէն խալըսէ : Ան  
 ժամանակը անձալ իրենց ողորմեցաւ  
 աւովդ ըսած մէկմը բենիամեհնի ցե-  
 ղէն իրենց առաջնորդ ցուցուց, որ ա-  
 նանկ քաջ մարդմընէր որ՝ երկու  
 ձեռքնալ հաւասար կը բանեցունէր :  
 Պէտք եղաւ որ աս աւովդը ինչպիսի  
 ընծան կ'մտուրքը՝ եզղամ թագաւո-  
 ըին տանի . անատենը ինքնալ մէկ  
 թիզմը երկան երկսայրի (ք երկու  
 բերնէ) դանակմը՝ աջ մէջքը վերար-  
 կուին ներքեւէն առաւ սրահեց, ու  
 այնանկ ելաւ եզղամի քովը եկաւ . ու  
 ընծաները տալէն ետքը՝ իր հետի  
 մարդիքը քովէն դուրս ձամբեց, ու  
 եզղամի ըսաւ որ՝ քեզի հետ գաղ-  
 տուկ խօսքմը ունիմ : եզղամնալ քո-  
 վի մարդիքը դուրս հանել տրվաւ՝ որ  
 մտիկ ընէ : Այրբոր երկուքը մինա-  
 ւոր մնացին, աւովդ նորէն ըսաւ ի-  
 ընէ՝ թագաւոր ես անկողմանէ եկած  
 քեզի բանմը սիտի ղուրուցեմ : եզ-  
 ղամալ՝ որ խիստ գէր մարդմընէր,  
 նստած տեղէն ելաւ քովնոր մօտեցաւ  
 անատենը աւովդ շուամը ձախ ձեռ-  
 քովը իր աջ մէջքէն դանակը քաշեց  
 ու եզղամի կուշտը այնանկ ու ժովմը  
 խսթեց որ՝ դանակին կ'օթնալ ձեռ-  
 քէն սրկրդեցաւ հետը ներս մտաւ,  
 ու գիրուցը վրան եկաւ բռնեց՝ որ

ալ չիկրցաւ դանակը դուրս հանել .  
 ու անանկ արտօրնօք մարդ չիտեսած  
 դուրս ելաւ դուռը վրայէն գոցեց ,  
 պատուհանէն դուրս ցաթկեց փա-  
 խաւ գնաց : Սա գաւորին ծառանե-  
 րը անդին դուրսը կեցած , կարծե-  
 լով թէ ինքը ներսը հարկի համար  
 կուշանա կոր՝ խելմը ըսպասելէն ե-  
 տե , բանլիք բերին՝ դուռը բացին  
 տեսան որ եգղմը մեռած գետինը  
 փրովեր էր : Արբոր իրենք առ բանիս  
 վրա շիթած իրար անցերէին , ա-  
 ւուլդ անատենը գնաց շուտով իելա-  
 ցիքը ժողվեց՝ ու ասոնց վրա եկաւ  
 տասը հազար հոգի մէկ օրվան մէջը  
 ջարդեց , ու անանկ իելացիները մն-  
 վարացոց գերուէն խալըսեց . որ ու թ-  
 սուն տարիի չափ ազատ մնացին . ու  
 ինչվան մեռաւնէ՝ աւուլդ անոնց դա-  
 տաւորուի կնէր : Ատեէն մէկ քաջ  
 մարդմը ելաւ սամեգար ըսած որդի  
 անաթա , որ աս ալ շատ օգնուի ըրաւ  
 իելացոց , անանկ որ՝ մէկ հեղմը գե-  
 տին հերկելու հարորովը (յի սապա-  
 նով) վեց հարուր այլազգի մեռուց ,  
 ու անոնց անասուններէն՝ կով , ոչ-  
 խար , հորթ , շատ բան կողոպտեց  
 աստին առաւ :



ԳՎ : Օ :

Վե՛հորայի , Բարակայ , սիսարայի , ու յայն  
Լի՛ պատմութիւն :

Սամեգարի մեռնելէն ետեւ՝ ինչլացիք նորէն ճամբանին փոխելով ինձ որ բարկացուցին , իրենք մատնեց յարին ըսած քանանացոց թագաւորին ձեռքը , որ քսան տարի տակը առած չարչարեց : Աստե՛ններըս իսրայէլացոց մէջը մէկ բարեպաշտ մարգարէ կնիկմը կար դէքորա անունով եփրեմի երկիրը նստած , որ ինչլացիք մէջերնին վէճմը ունենայիննէ՛ անոր կերթային ան կըտեսնար իրենց դատաստանը : Ասիկա քովը կանչեց բարակ ըսած մէկ մարդմը նեփթաղեմի ցեղէն , ու իրեն ըսաւ թէ՛ ինձ քեզի կըհրամայէ որ թափոր լեռը երթաս , ու նեփթաղեմի՛ զաբուղոնի ցեղերէն տասը հազար հոգի ժողովես առնես երթաս կիսոնի հեղեղատը (ք չայը) , սիսարա ըսած յարին թագաւորին զօրապետին դէմ . որ հոն անոր բոլոր զօրքը քու ձեռքըդ մատնեմ : Արակ վախցաւ սիրտ չըբաւինքը մինաւոր աս բանըս տեսնելու , ու դարձաւ դէքորայի՛ ըսաւ , թէ որ դունալ հետըս կուգասնէ՛ կերթամ , որ ինձի ատենովը իմացունես թէ

անձ էրբ բանքս կը յաջողէ . չէ՛նէ՛  
 չէ՛մ երթար : Ա՛նքորայալ օրին տը  
 վաւ թէ՛ կուգամ, բայց գիտնան որ  
 անատենը յաղթուիր քու կը գ չը  
 լար : ու անանկ մէյտեղ ելան տասը  
 հաղար մարդ ժողովեցին թափոր լե  
 սը գացին : Ա՛ս էրբոր իմացաւ սի  
 սարա զօրապետը՝ բոլոր իր զօրքերը  
 առաւ՝ ինը հարուր պատերազմական  
 երկրթէ՛ կառքերով եկաւ կիսոնի հե  
 ղեղատը , պատրաստը ված կեցաւ  
 իէլացոց գէմ : Ա՛րբոր ատենը եկաւ  
 ու գերորայի ըսած ինպէ՛ս բարակը  
 թափոր լեռնէն ինջաւ՝ որ թշնամիներ  
 ըուն գէմը պատերազմ սկսի՝ ան ժա  
 մանակը անձ անանկ վախմը ձգեց սի  
 սարայի սիրտը , ու շփոթ ված մէկ ի  
 ըրար անցումը թշնամիներուն բա  
 նակին մէջը՝ որ փախչող փախչողի  
 եղան , ու բարակը իր զօրքովը ետե  
 նին ինկած ամմէնքը ջարդեց սրբեց :  
 Մասարանալ անխուսիւ թէ՛ մէջը շու  
 տով փախչիլ ուզելով իր կառքէն  
 գուրս ցաթկեց , ու ոտքով վազեց  
 գէպ՝ ի կիներցոց կողմը գնաց : ( Ա՛ս  
 կիներցի ըսածը պղտիկ ազգամընէին որ  
 եկեր վրանով անտեղ վանքը կը բնա  
 կէին . ու ինչպէ՛ս կըսեն՝ մովսէսի  
 կնկանը գիէն իէլացոց խնամի ըլլա  
 լով հետերնին բարեկամ էին . բայց  
 այլազգիներուն հետալ աւրբ ված  
 չէ .

չէին : ) Ան ատենը յայել ըսած քա-  
 ռերի կինեցիին կնիկը . իրեն գէ՛մը  
 հանտըսեցաւ , ու մեծարելով կան-  
 չեց իր վրանը տարաւ սիսարան՝ որ  
 հանգչի , ու անանկ յոգնած տաքցած  
 խմելու ջուր որ ուզեց , յայելը ջրին  
 տեղը կաթ տրվաւ որ գէն չընէ , ու  
 ներսը անոր ուզածինսկէս գաղտուկ  
 տեղմը պառկըցուց՝ վրան ծածկեց որ  
 մարդ գալու ըլլանէ չխմանա թէ հոն  
 փախեր է : Արեւանց յայելը ասանկ  
 բարեկամուի ցըցուց սիսարայի , բայց  
 իր սիրտը ինչացոց հետ մէկ ըլլալով ,  
 երբոր նորէն քովը դարձաւ տեսաւ  
 որ ալ սրտկած խորունկ քուն եղեր  
 է , անատենը վրանին ցիցը ( քի չատը  
 ոին խազը խը ) առաւ՝ անով գետինը  
 գամեց սիսարայի դլուխը , ու անանկ  
 մեռցուց ինքը : Ատքը երբոր բարա-  
 կը վրա հասաւ՝ որ սիսարայի ետեէ  
 ինկէր կըփնտուէր , յայել առջևը ե-  
 լաւ ու ըսաւ՝ եկոր որ քու փնտուած  
 մարդըդ տեսնես . ու անալ ներսդը  
 նաց տեսաւ սիսարան անանկ ինկած  
 մեռած : Աս կերպովուս ամ ինչացիքը  
 խալըսեց քանանացոց յաբին թագա-  
 ւորին ձեռքէն . որ անկէ ետքը քառ-  
 սուն տարի աղատ հանգիստ մնացին :  
 Վեբորայալ բարակա հետ՝ այսպիսի  
 հրաշքի յաղթուէս վրա փառք տալով  
 նայ՝ շնորհկլուէ գովատանքմը ըրին :  
 Վ. :



մարդ մը, որ խորայէլացիքը ազատեմ  
 Հրեշտակնալ պիսն տըվաւ թէ՛ ւծ  
 հետըդ որ ըլլա՛ բոլոր մադ իամացի-  
 ները մէկ մարդ ու մը պէս կը ջարդես  
 Մնատենը գեղէննալ ասոր ճշմար-  
 տուէր համար՝ որ ինքը աստուծ մէ-  
 խրկած է, իրմէ մէկ նշանմը ու զեց,  
 ու աղաչեց հրեշտակին որ հոն կենա՛  
 ինչպան ինքը երթա իրեն համար  
 սեղան պատրաստէ բերէ. ու քնաց  
 գեղէնն շուտմը մէկ ուլմը խաշեց՝  
 ու բաղարջ հաց շինեց, առաւ ա-  
 սնոք հրեշտակին որ բերաւ, հրեշ-  
 տակը ըսաւ որ առջևը քարին վրա  
 դընէ ան բաները, ու ինքը ձեռքի  
 գաւազանովը ան մսին ու բաղարջին  
 դըսած ինչպէս՝ կրակմը ելաւ ան քա-  
 րէն էրեց լափեց կերակուրները. ու  
 ինքը հրեշտակնալ աներևոյթ եղաւ  
 ան տեղէն: Վեղէնն աս բանս որ  
 տեսաւ՝ ահռեցաւ, ու ալ հաւտաց որ  
 հրեշտակ այ է եղեր. և ան տեղը այ  
 մէկ սեղանմը շինեց: Մն գիշերը ւծ  
 իրեն հրամայեց որ՝ երթա՛ բահազ  
 կուռքին սեղանը քակէ կործանէ,  
 անոր քովը եղած կռասպաշտական  
 ծառերը կտրէ. և ան կտրած փա-  
 տերովը իր հօրը երկու եզը առնէ՝  
 մէկը ողջակէզ ընէ ան նոր շինած սե-  
 ղանին վրա: Վեղէննալ ցորեկը վախ-  
 ցաւ աս բանըս ընելու. ու ստի մէկ

գիշերմը դադարուկ ելաւ տասը հողի  
իր հօրը ծառաներէն հեար առաւ  
գնաց անանկ ան ւոյ հրամայածը կա-  
տարեց : Առտըվանց երբոր ելան սս  
բաներըս տեսան քաղքին մարդիքը  
ու փնտռեցին իմացան որ գեղէնն ը-  
րեր է , սրդողելով անոր հօրը վրան  
եկան , ու իրմէ կուղէին որ տըղան  
հանէ ձեռվընին տա որ սպաննեն :  
Հարնալ ասով խալըսեց գեղէնը ,  
որ անոնց քսաւ թէ՛ ձերինչ վրանիդ  
պէտք է , բահաղը թէ՛ որ ւժ է նէ՛  
թող ինքը իր սեղանը կործանողնե-  
րուն վրէժը առնէ (կի՛ հախէն գա) ,  
մեռցունէ : Եւ աս պատճառովըս հա-  
րը գեղէննի անունը յերոբոաղ՝ դը-  
րաւ , իբրթէ բահաղ կուռքը յաղ-  
թեց :

Ասկէ ետքը երբոր իմացաւ գեղէնն  
որ մադիամացիքը ու ամաղէկացիք  
մէյտեղ նորէն ինչացոց վրա կուգան  
կոր , ինքը աստուծմէ ուժ առած՝  
կանչեց ժողվեց ինչացիները՝ ասերի ,  
չաբուղոնի ու նեփթաղէմի ցեղերէն  
որ անոնց դէմ ելէ : Վայց նորէն  
դիտնալու համար՝ թէ իրաւ ւժ ինքը  
ինչացոց առաջնորդ ընտրեր է՝ որ  
մադիամացոց ձեռքէն իրենք խալը-  
սէ , ւոյ աս նշանըս ուզեց , որ մէկ  
գղաթմը ( քի փէօստէքիմը ) գիշերը  
դուրս տեղ փռած թողու , ու բոլոր  
գէ .

գետինը չոր ցամաք մնա, ու ան դը  
 զաթին վրա միան անձրև գա: Կճալ  
 գեղէոնին խնդիրքը կատարեց, որ  
 երբոր առտը վանց ելաւ ան գզաթը  
 քամեցնէ՝ վազած ջուրը կոնքմը (յթ  
 լէյէնմը) լեցուց: Աս հերիք չէ, ե  
 տեէն մէյմալ օյ խնդրեց որ՝ ասոր  
 ներհակը՝ ան գզաթը չոր մնա, ու  
 բոլոր գետինը թըջըվի: Արբոր աս  
 երկու հրաշքըս տեսաւ գեղէոն, ե  
 անոր վրա աւելի սիրտ առած բոլոր  
 զորքը հետը առաւ որալ թչամինե  
 բուն գէմ երթա, անատենը Կճ գար  
 ձաւ գեղէոնի ըսաւ որ՝ ատ զորքըդ  
 շատ են, ես ատչափովըդ մադիամա  
 ցիքը ձեր ձեռքը չեմ՝ իտար, որ չել  
 լեն ինչացիքը ըսեն թէ՝ մենք մեր  
 ուժովը անոնք յաղթեցինք. հասցա  
 իրենց ըսէ որ մէջերնին վախիտանե  
 ըր ետ դառնան: ու աս խօսքիս վրա  
 քսանվերկու հազար հողի ելան ետ  
 դարձան, որ միան տասը հազար մնա  
 ցին: Ատքը ասոնց համարալ Կճ ը  
 սաւ թէ շատ են, ու գեղէոնի հրա  
 մայեց որ անոնք առնէ մէկ ջրիմը  
 քով տանի, որ ծարվերէին. ու խը  
 մե լնինի՝ նայի անոնցմէ որը ջուրը ա  
 փը առած մէջէն շանպէս լափէնէ,  
 անիկա մէկ դի կայնեցունէ, ու ո՛վ  
 որ ծնկան վրա ինկած խըմէնէ՝ անալ  
 մէկալ գին զատէ: Անանկ որ ըրաւ

միան

միան իրեք հարուր հոգի եղան որ շան  
 սէս լափելով խըմեցին . ու բոլոր մէ-  
 կաները ծնկան վրա ինկած ջուրեր  
 նին խըմեցին : անատենը ան ըսաւ  
 գեղէննի թէ՛ ան իրեք հարուրովը  
 ինչ լացիք պիտի մադ իամացոց ձեռքէն  
 ազատեմ . մէկալ բոլոր մնացածը ի-  
 րենց տունը ձամբէ որ երթանս ) , տքը  
 ան իրեն նորէն սիրտ տալու համար՝  
 հրամայեց որ ինքը մինաւոր իր փա-  
 րա ըսած մանչը հետը առած՝ գիշե-  
 րանց դաղտուկ թշնամիներուն քա-  
 նակը երթա , որ լսէ թէ անոնք մէ-  
 ջերնին ինչ կը զուրուցեն : Վեղէնն  
 ան ըսած ինսպէս գնաց՝ ու մտիկ ըրաւ  
 որ զինձ որին մէկը մէկալին կը պատ-  
 մէր թէ՛ երած մը տեսա որ՝ մէկ գա-  
 րիէ շինած նկանակմը (յի սոմունմը )  
 անդիէն կը տորվէ լով եկաւ գէսլի  
 մեզ , ու զարկաւ կործանեց բոլոր  
 մադ իամացոց բանակը : մէկալն ալ ա-  
 նոր ըսաւ թէ՛ ատ գեղէննի յովասի  
 տղին թուրը պիտոր ըլլա , կերեա  
 որ ան մեզ անոր ձեռքը տըվեր է :  
 Ասոր լսեց գեղէնն՝ այ շնորհակալ  
 ըլլալով շուտմը իր բանակը դար-  
 ձաւ , ու ըսաւ՝ ալ ելէք երթանք ,  
 ան մադ իամացիները մեր ձեռքը տը-  
 վաւ . ու ան իրեք հարուր հոգին իրեք  
 դաս բաժնելով անոնց գէնքի տեղ  
 ամմէնուն մէկ մէկ ձեռվրնին եղջու-  
 րէ



բէ փող (յի սու յսուզէ շինած զուռնաւ  
մը) ու մէկալ ձեռ վընին մէյմէկ վա-  
ռած ճրագ սափորի (յի տէստիի) մէջ  
դրած որ չերեա . ու իրենց ապրսալը-  
րեց որ ինքը ինչ որ ընէ նէ՛ ամմէնք  
նալ անանկ ընեն : Աստի կէս գիշեր  
վան մօտ ելան ասոնք յանկարծակի  
թշնամիներուն բանակը գացին , ու  
ըսած ինպէս մէկէն փողերնին չալե-  
լով սափորնին կոտորտեցին ճրագնե-  
րը դուրս երեցան , ու ամմէնը մէկ  
բերան սկսան կանչալուտել Ասոր քն  
ե գէդէնի : Աս բանովրս ան մագիա  
մացոց բանակին մէջը մէկ սոսկու մ-  
մը ձգեց , որ ան տեղը իրար անցնե-  
լով ան մու թ գիշեր ատեն մէկը զմէ-  
կալը իրենց թշնամիներէն կարծելով  
անինա առ ջլենին եկածը կը ջորդէին ,  
անանկ որ՝ հարուր քսան հազար հո-  
գի իրենցմէ հոն կոտորվեցան : Ա-  
տասնը հինկ հազարալ որ աստիս ան  
դին սկսան փախչիլ , անոնց համար  
ալ մարդ խրկեց գեդէոն մէկալ իս-  
րայէլացոց , որ ելան դեմերնին առին  
ու անոնքալ ջարդեցին . ու իրենց եր-  
կու իշխաններունալ մէկը զորէք ու  
մէկալը զէք ըսած՝ գլուխնին կտրե-  
ցին գեդէոնի բերին : Ատքը գեդէո-  
նալ ուրիշ երկու իշխաններ բռնեց՝  
զէբէէ ու սաղմանա ըսած , ասոնք  
ալ ինքը իր ձեռքովը մորթեց :

Ղեկեղծոն երբ որ աս քաջուհիս ըրաւ լը  
 մընցաւ, անատենը ինչլացիք իրեն ե  
 կան ըսին թէ՛ ասկէ ետե քեզի կը  
 վայլէ որ դուն ու ետեկէդ քու տղաքըդ  
 մեզի առաջնորդ իշխան ըլլաս՝ որ մեզ  
 մագիստրոսոց ձեռքէն ազատեցիր :  
 Անալ քաւ լիցի ըսաւ՝ ձեր իշխանը  
 անկէ ես միան ըսաւ՝ աս մէկ բանըս  
 ձեզմէ կրկնողրեմ, որ թշնամիներուն  
 կողոպուտներէն մարդ գլուխ հանէք  
 ինծի մէյմէկ օղ տաք : (սյնճուն որ ան  
 կոտորվածներուն մէջը շատ խամայէ  
 լացին երալ կային, որ ասկիկէ օղ կրողը  
 նէին :) Անոնք ալ սիրով հանեցին տը  
 վին : որ ասանկ ընելով՝ բոլորը մէյ  
 տեղ գեղեղոն շատ բան ձեռք ձեց,  
 ան մագիստրոսոց իշխաններուն ոս  
 կիկէ զարդարանքներէն՝ իզատ : Ատ  
 քը ինքնալ առաւ անով աւելորդա  
 պաշտական բաներ շինեց իր եփրա  
 ըսած քաղաքը . որ ան ետքը մեղաց  
 սյնճու եղաւ իրեն՝ ու իր զաւկներուն  
 ու բոլոր մէկալ ինչլացոյցալ : Թե  
 պէտինքը իր անպաշտունալ ձեռքէ  
 շիթողուց, ու հետը ինչլացիքալ այ  
 ծառայելով քառսուն տարի՝ քանի որ  
 գեղեղոն ողջ էր՝ նէ՛ ազատ մընացին  
 մագիստրոսոց, և ուրիշ այլազգիներ  
 րուն ձեռքէն :



Եկած՝ արիմեւելքայ թագաւոր դնէ-  
 լուն հանդէսը որ կընէին . ան ատե-  
 նը գնաց յովաթամ ասոնց զիմացը  
 գարիզին ըսած լեռանը վրա , ու հե-  
 ուրվանց կանչելով ըսաւ իրենց . մտիկ  
 ըրէք սիկիմացիք՝ ինչ որ սխտի ձեզի  
 ըսեմ : Սառերը ուղեցին որ իրենց  
 մէկ թգրմը դնեն , ու գացին ձիթե-  
 նիին . (յի զէթինի ծառին) ըսին թէ՝  
 մեզի թգւր եղիր , անալ իրենց պիսն  
 տըվաւ թէ՝ Ես ինտոր թողում իմ  
 պարտը եղրս , որ անով ամ ու մար-  
 դիք իս կըմեծարեն , ու գամ՝ ձեզի  
 սէս ծառերուն իշխան ըլլամ : Ետքը  
 գացին թղենիին (յի ինձիրի ծառին)  
 ինկան՝ որ ան գա իրենց վրա թգրէ .  
 ան ալ ըսաւ թէ՝ ինչպէս թողում  
 իմ անուշ պտուղըս , ու երթամ փա-  
 տերուն իշխան ըլլամ : Վս ալ որ չե-  
 դաւ՝ գացին որթին (յի ասմային) .  
 որթնալ պիսն տըվաւ թէ՝ Ես ինտոր  
 կըլլա որ իմ գինիս թողում որ ան ու  
 մարդիքներուն ուրախու թին է , ու  
 գամ ձեզիպէս փատերուն իշխան ըլ-  
 լամ : Վս ալ որ չէ՝ ըսաւ . ան ատե՛նը  
 ելան զըփնիկին (յի գարա չալըին) ը-  
 սին թէ՝ դուն եկո՛ մեր վրա թագաւո-  
 րէ : զըփնիկնալ ուրախացաւ՝ ու ը-  
 սաց իրենց՝ թէ որ իրաւ իս ձեր վրա  
 թգր կըդնէքնէ՝ Եկէք իմ շուքիս տա-  
 կը պարտըկվեցէք , չէնէ՛ զըփնիկէն

կրակ կելլէ՛ ու ձեզիպէ՛ս եղևնափայտ-  
 ները (յի չամի ծառերը) կերէ՛ կուտէ՛ :  
 Մս առակիս ետեէն ըսաւ յովաթամ-  
 նայեցէ՛ք, ատարդարուի էր մի՛ որ գե-  
 դէոնի ձեր բարերարին ատանկ հա-  
 տուցու մըրիք, որ անոր եսթանասուն  
 զաւակը մէկէն ջարդել ուզեցիք, ու  
 արիմե լէքը անոր ազախինին որդին՝  
 ձեզի թփը դրիք . եթէ աս բանըս շի-  
 տակ է՛ նէ՛ բարով կրվայլէք մէկ ըզ-  
 մէկ . հասկա թէ չէ՛ պիտի կրակ ելլէ՛  
 ան արիմե լէքէն որ ձեզ էրէ ու լափէ .  
 կի՛ թէ՛ ձեզմէ ելած կրակը անիկա՛  
 կուտէ : { Յովաթամ ասանկ ըսելով  
 ելաւ փախաւ գնաց՝ երեսը ծածկեց :  
 Մայց իր ըսածը ճըշմարիտ ելաւ . որ  
 արիմե լէք իրեք տարիի չափ անկար-  
 գուք իէլացոց տիրապետելէն ետքը ,  
 ալ չիղիմացան սիկիմացիները անոր  
 բռնակալուէր , ուստի մէկ գաաղ  
 ըսած իշխանիմը հետ մէկ եղած իր-  
 մէ գլուխ քաշեցին , ու էտեէ էին որ  
 զինքը բռնեն մեռցունեն : Մբիմե-  
 լէքալ իր զօրքովը սիկիմացոց վրան  
 գնաց , ու ջարդելով իրենք՝ բերդին  
 կրակ տրվաւ հազար հոգիի չափալ  
 հոն էրեց : Մնկեց ելաւ թէքէս ը-  
 սած քաղքին վրա գնաց, որ ասոնքալ  
 իրմէ գլուխ քաշերէին . ան քաղքին  
 մէջ տեղը մէկ ամուր բերդ մը կար ,  
 քաղքին մեծամեծները խելմը անոր

մէջը

մէջը մտան սրահվեցան : Այդքող ա-  
 բխմե լէք ասոր տակը դնաց մօտեցաւ  
 որ բերդին դռանը կրակ տա , ան ա-  
 տենը վերէն մէկ կնիկմը երկանի ( յի  
 տէյիւմէնի ) քարի կտորմը ձգեց վրան  
 որ եկաւ արբիմե լէքա դ լսուն գաղա-  
 թը ջարդու բուրդ ըրաւ . անալ շուտ  
 մը կանչեց իր կապարճակիրը ( յի սի-  
 լիհտարը ) ու ըսաւ որ հանէ թուրը  
 ինքը ըսպաննէ , որ չըսվի թէ մէկ  
 կնիկմը մեռուցերէ ինքը . ու անանկ  
 անտեղը չարաչար մեռաւ արբիմե լէք ,  
 աստուծ մէ առնելով իր անողորմուէ  
 և չարուէ սլատիժը սիկիմացոց հետ ,  
 ինչպէս որ առակով իրենք անիծե-  
 րը յովաթամ :

ԳՎ : Թ .

Հեգնայէի պարմուէր :

Արբիմե լէքայ ետե ինչ լացոց դատա-  
 ւոր եղաւ թուղա մէկմը իսաքա-  
 ըի ցեղէն , որ քսանվիրէք տարի նըս-  
 տաւ . անոր ետեէն յայիր դաղայա-  
 դացին , որ եռսունվերկու որդի ու-  
 նէր , ու ասանք եռսունվերկու աւա-  
 նակ հեծած անանկ կերթային . ու  
 ամմէն մէկը մէյմէկ քաղաք ունէին ,  
 որ՝ աւանք յայիրա ըսվեցան : Հայիր  
 քսանվերկու տարի դատաւորուի ընէ  
 լէն ետքն որ մեռաւ , ինչ լացիք նորէն  
 է  
 կաւ

կուսպաչտուէ ետևէ ինկան որ սկսան  
 ասորոց , մովաբացոց , ու ամնացոց  
 կուռքերը պաշտել . անոր համար ան-  
 տլ սրդողեցաւ իրենք երեսէ ձգեց ,  
 թող տրվաւ որ տասնըութ տարի  
 ան աղգերը աստին անդին իրենց եր-  
 կիրները դանձ տակնու վրա ընեն : Ան-  
 կէ ետև երբոր ալ ամնացիք բանա-  
 կով առաջ եկան գաղայադու մօտիկ  
 ցան , որ անկէց ալ երթան կարդով  
 բոլոր իէլացոց երկիրները աղէկմը  
 տիրեն . ան ատենը իէլացիք ալ խել-  
 վընին գլուխնին ժողովեցին , ու ան  
 կուռքերը մէջերնէն վերցուցին , մե-  
 ղա՛ ըսին՝ այ դիմեցին : Աս ամնաց-  
 ցոց դէմ գաղայադու մեծերը ասանկ  
 խօսք գրին մէջերնին , թէ ո՛վ որ ա-  
 ռաջ իյնա պատերազմ ելլէ , անիկա  
 իրենց իշխան նրստեցունեն : Բայց  
 ետքը տեսնելով որ մարդ սիրտ չընկեր  
 կոր աս բանիս , մտմտային որ յեփ-  
 թայէն կանչեն բերեն՝ անիկա աս պա-  
 տերազմիս ճարը հողա : Աս յեփ-  
 թայէ ըսածըս մէկ ուժով քաջ գա-  
 ղայադացի մարդ մընէր , ու անկէց ի-  
 րեն եղբարները հայրենական ժա-  
 ռագունէն զրկելով՝ տնէն դուրս վը-  
 ռնատեր էին , դուն մեր հօրը խորթ  
 դաւակնես ըսելով . ու ինքնալ գացեր  
 մէկ ուրիշ տեղմը քաչվեր՝ բովը սրի-  
 կա մարդիք ժողված անանկ քաջութ  
 թ I ինք

ինքնագլուխ կրկենար : Աստի եր  
բոր ասոնք իրեն եկան աղաչելու որ  
ելլէ՛ դա՛ ինքը աս պատերազմըս ա  
ռաջ տանի , յեփթայէն առջի բերանը  
ծանրէն քաշեց , երեսնին տրվաւ դա  
ղայագացոց իրեն դէմ բրած անի  
բաւուիր : Ատքը անոնցմէ երդումով  
խօսք առած՝ որ եթէ անձ յաջողէ  
պատերազմը յաղթէնէ՛ ինքը իրենց  
վրա իշխան ըլլա . անանկ ելաւ հե  
տերնին եկաւ մասեփա ըսած տեղը ,  
ուր որ ինչացիքը մէյտեղ ժողվեր  
էին . ու մէկէն դեսպան խրկեց ամ  
նացոց թիւրին՝ թէ դուն ինչու իմ  
երկիրս եկեր պատերազմ կրնես : Ա  
նալ իրեն պիտն տրվաւ թէ՛ աս տեղ  
վանքըս իմ երկիրներս էին , որ ինչա  
ցիք եղ իստոսէ ելան եկան տիրապե  
տեցին : Յեփթայէնալ նորէն իրեն  
խրկեց ըսաւ թէ՛ ան ատենը երբոր  
աս տեղի մարդիքը մեզի չուզեցին  
ճամբատալ՝ հետերնիս պատերազմ  
բացին , մենքալ անոնք յաղթելով մեր  
նյ օգնուքը՝ պատերազմական իրա  
ւունքով աս երկիրները մեզի առինք ,  
որ իրեքհարուր տարի կըլլա ձեռվը  
նիս է . ու դուն հիմա ելեր կուզես  
որ մեր ձեռքէն յափշտակես . ատքու  
ըրած անիրաւուեղ դատաստանը անձ  
ինքը տեսնէ : Ատքը երբոր տեսաւ  
յեփթայէն որ անձ իր խօսքին վրա կե  
ցեր՝



ցեր՝ կուզէկոր առաջ գալ . ան սե-  
տենը ինքնալ տստուծմէ շարժած  
շուտմը ելաւ նորէն զօրք ժողովեց . ու  
գէմը սրատերազմեր թալու ժմկը՝ ան  
ասանկ ուխտ ըրաւ որ՝ ան ամոնսւ  
ցիքը յաղթելէն ետե խաղաղու չ իր  
տունը դառնալու ըլլանէ, ով որ պինտ  
առաջ տանը դռնէն դուրս ելլէ իրեն  
դիմացը գալու, անիկա ան ողջակէ գ  
ընէ : Ա՛ս ուխտըս ըրած դնաց յեփ  
թայի՝ ան օգնու չը թշնամիները ա  
ղէկմը կոտորեց, քան քաղաքալ ձեռ  
վրնէն ետ առաւ . ու մնացածները  
փախցունելով ցիրուցան ըրաւ : Ետքը  
մասեփա քիքը իր տուննոր կրդառ  
նար՝ տեանա որ իր մէկ հատիկ սիրա  
կան կոյս աղջիկը պար բռնած ուրիշ  
աղջիկներու հետ՝ ուրախու չ թրմ  
քուկ զարնելով դիմացը ելաւ : Ա՛ն  
ատենը յեփթայէնալ տակնու վրա ե  
զաւ, ու սաստիկ տրտմութէն վրայի  
լաթը պատուեց՝ վայ ինծի ըսաւ իմ  
աղջիկըս՝ ինչ ձուն բերիր գլուխս .  
որ ես չի գիտնալով՝ քեզի համար ան  
ուխտ եմ ըրեք . ուխտսքէս չեմ կրնար  
ետ դառնար : Ա՛ղջիկնալ քաջասրբ  
տու չ վրա տրվաւ թէ՛ ինծի համար  
ինչ որ ուխտերեսնէ՝ պէտք է որ կա  
տարես, որ անով անքեզի աս յաղ  
թուխ տրվաւ . միան թէ ըսաւ՝ աս  
կը խնդրեմ որ երկու ամիս ինծի ա

տէն տաս , որ աս իմ ընկերներուս  
 հետ լեռները երթամ պրտրտիմ , ու  
 իմ կուսուիս լամ ողբամ : { } Եփթայ  
 էնալ ըսածինպէս անանկ թող տը  
 վաւ , ու երկու ամսէն ետեւ որ դար  
 ձաւ՝ կատարեց իր նոյ ըրած ուխտը :  
 { } Եւ ան ատենէն սովորուի մտաւ ինչլա  
 ցոց մէջը՝ որ ամսէն տարի չորս որ  
 աղջիկ աղաքը մէյտեղ եկած յեփ  
 թայէի աղջիկանը վրա ողբ կընէին :  
 { } Ենկէ ետքը եփրեմի ցեղը յեփթայ  
 էին վրան նախանձելով՝ յորդանան  
 դետը անցան իրեն եկան սրդողելով  
 ըսին թէ՛ ինչու մեզ մարդու տեղ չի  
 գրիր ու հետըդ պատերազմ չի կան  
 չեցիր . Եւ աս բանիս համար վախ կու  
 ապին իրեն թէ՛ տունըդ տեղըդ  
 վրադ կերենք : { } Եփթայէնալ պինս  
 տրվաւ որ՝ ես ձեզ կանչեցի . ու տե  
 սա որ մարդ չեկաւ նէ , ես իս վտան  
 գի մէջ դրի , ու նձ ալ բանըս աջ  
 ղեց : { } Ետքը երբոր յեփթայէ տեսաւ  
 որ անոնք նորէն հանդարտ չեն կե  
 նար՝ բան կըգրգռեն կոր , գաղայա  
 դացոց սիրաւ ծակելու խօսքեր կըսեն՝  
 շուտմը վրանին զօրք հանեց ետեւէ ե  
 կողները ջարդեց , ու փախչողները  
 որ յորդանանի մէկ նեղուցէմը պի  
 տոր անցնէին իրենց տեղը երթալու՝  
 բռնել կուտար ասոնք , ու իրենք փոր  
 ձելու համար թէ եփրեմի ցեղէն են  
 մի՛

մի իրենց ըսել կուտար աս էքրայե  
ցոց բառը՝ շեպուլէն, որ կընշանակէ՝  
Հասկ կիմցորենի գլուխ . ու ովոր շե  
տակ չէր կրնար ըսեր, հասպա (ինչպիսի  
կըսեն) սիպուլէն կըսեր, ան էփրե  
մի մարդոցը նշանը կըլլար՝ անիկոս կը  
մեռցունէին . ու ասովսլ բոլոր քառ  
սունվերկու հազար հոգի կոտորվեցան  
անոնցմէ աս պատերազմիս մէջը :  
Քեփթայէ ասանկ վէց տարի դատա  
ւորուի ընելէն ետքնոր մեռաւ, է  
տեէն դմուր եղաւ եօեբոն բեթղե  
հէմացին, որ վաթսուն զաւակ ունէր՝  
եռսունը մանչ, եռսունը աղջիկ . և  
աս ամիէննալ ինքը իր ձեռքովը կար  
գեց . ու եօթը տարի իւլացոց դա  
տաւորուի բրաւ : Անոր ետեէն նըս  
տաւ էլ ին զաբուղոնացի՝ տասը տա  
րի : Ատքը աբգոն փարաթոնացի եփ  
րեմի ցեղէն, որ քառսուն տղաք  
ունէր, անոնցմէսլ եռսուն եղած՝  
բոլորը մէկէն եօթանասուն աւանակ  
կըհեծնէին . ու ասալ ութը տարի  
դատաւորուի բրաւ, ու մեռաւ :

Գ . Լ . Ժ .

Սահխոնի պարմուխը :

Սերի ըսած դատաւորներէն ետե  
՝ իւլացիք ամպաշտուէ թու ընա  
լով՝ ու քառսուն տարիի չափ անտէր

մնալով նորէն այլազգիներուն տակը  
 ինկան : Վնատենները ինչլացոց մէջը  
 դանայ ցեղէն մէկմը կար մանովէ ա-  
 նսնով , որ ասոր կնիկը ամուլէր տը-  
 ղա չէր բերէր : Վէկ օրմը հրեշտակ  
 այ՛ մարդու կերպարանքով սո կնկա-  
 նը երեցաւ , ու իրեն ըսաւ թէ՛ դուն  
 ազա պիտի բերես , որ ան ուխտաւոր  
 ին՛ այ՛ նո՛ւ իրեալ պիտոր ըլլա . անոր  
 համար պիտի զգուշանաս որ բերա-  
 նըդ դինի կի՛ օղի ( ին՛ ըռախի ) և ու-  
 բիշ պիղծ կերակուրներ չի գնես՝ ու  
 երբոր ազան ըլլա՛ ամենեկին անոր  
 գլխու մաղերուն պիտի չի դըբջումի  
 չի կըտըրվի . ան պիտոր ինչլացիները  
 այլազգիներուն ձեռքէն աղատէ :  
 Վանովէ որ աս բանըս չէր դիտէր՝  
 երբոր իր ընկերոջմէն լըսեց , ազա  
 չեց այ՛ որ ան թք մարդը մէյմընալ  
 խրկէ իրենց՝ որ նորէն աղէկմը իմա-  
 նան թէ՛ ինչ պիտոր ընեն աս տըղիս :  
 Վ՛ճալ ան հրեշտակը նորէն կնկանը  
 երեցուց , որ շուամբ վաղեց էրիկը  
 կանչեց անոր քովը բերաւ . հրեշտակ  
 նալ ինչ որ առաջ կնկանը ըսեր էր՝  
 ան բաները նորէն ապրսպրեց : Ետև  
 մանովէ իրեն կերակուր բերած , այ  
 զոհ ընէ ընինի , հրեշտակը ան կրակին  
 քոցովը դէպ՛ ի երկինքը ելաւ անցայտ  
 եղաւ : ու էրիկ կնիկ աս հրաշքս որ  
 տեսան՝ սաստիկ վախցան , ու իմա-  
 ցան

ցան որ հրեշտակն իջէ եղեր ան իրենց  
 երևցողը : Ատե ատենն որ հասաւ  
 կնիկը մանչ տղամը բերաւ , որ անու  
 նը սամիսոն գրին . ու ինչ որ հնու իր  
 միշտ անոր վրան ըլլալով մեծցաւնէ  
 խիստ ուժով մարդմը եղաւ . ու իր  
 ծնողացը հետ մէյտեղ դանա ցեղին  
 մէջը կրկենար՝ սարաա ու եսթա  
 ու ըսած քաղքներուն մէջ տեղը :  
 Սամիսոն մէկ անգամմը ինչնախախ  
 նամուրը թամնաթա ըսած այլաղգի  
 ներուն քաղաքը գնաց , ու հոն մէկ  
 այլաղգի աղջկանմը հետը սիրտը  
 կասովեցաւ , եկաւ իր ծնողացը ըսաւ  
 որ ան աղջիկը իրեն առնեն : ծնողքն  
 ալ չի գիտնալով որ աս բանըս աւ  
 տուծ մէն է ( որ ան սրտառով սամիսոն  
 այլաղգիներուն մէջը մտնալով . ա  
 նոնց ըրած անխրաւու թիներուն հա  
 տուցումը տա , ) առջի բերանը իրեն  
 դէմ կեցան , կըսէին թէ քու ազգէդ  
 աղջիկ մի կըսակսի՝ որ երթաս այլ  
 աղգիմը առնես : Ետքը երբոր տե  
 սան որ ճար չըլլար՝ իրենքալ սամիսո  
 նի հետ մէյտեղ ելան թամնաթա եր  
 թալու որ աղջիկը առնեն : Նամբան  
 որ կերթային՝ սամիսոն գլուխը քա  
 շեց մինաւ որ դէպի էգիներուն մէ  
 ջէն երթալնինի՝ յանկարծակի մէկ  
 առիւծի ( իմ ասլանի ) ձագմը իրեն  
 գիմացը վազեց . սամիսոնալ ձեռքը

դէնքմը չունէր , անանկ այ ուժ ալ  
 ուսած՝ ասիկա բունեց ու բերանը բացաւ  
 երկուք ճըղքեց մեռցուց . ու նորէն  
 դարձաւ եկաւ ծնողայր քովը՝ բան  
 մը չըտաւ իրենց , որ անանկ եկան աղ  
 ջրկանը հետ խօսքը կապեցին : Քիչ  
 մը ատենէն ետե նորէն որ Թամնա  
 Թա դառնալու եղաւ սամփսոն՝ որ  
 ալ հարսնիքը ընեն , գնաց ան մեռու  
 ցած առիւծը նայելու , ու տեսնա որ  
 մեղուներ մէջը մեղրը շիներեն , ինք  
 նալ առաւ ճամբան սկսաւ ուտելով  
 երթալ , հօրը մօրնալ տրվաւ որ ու  
 տեն : Արքոր ալ հարսնիքը սկսան  
 ընել , որ եօթը օր կըքըշէր , վախժան  
 իրմէն՝ անոր համար հետը եռսուն  
 կտրիճ մարդիք գրին որ ասոնց հետ  
 ընկերուի ընէ ուրախանա : Ան ու  
 ըրախուէ ատենը սամփսոն մէկ հա  
 նելու կ'մը ( քի պիլմէ ճէմը ) ըսաւ ա  
 սոնց , որ ան եօթնօրվան մէջը գիտ  
 նալու որ ըլաննէ՝ իրենց եռսուն կտոր  
 ( կիճ Թօի ) բարակ կտաւ տա՝ ու եռ  
 սունալ հագնելու լաթեր . հապա որ  
 չի կրնան գիտնալ , անոնք աս բանե  
 րըս իրեն տան : Ե հանելու կը ան էր .  
 կերողէն կերակոր ելաւ , ու ուժովէն ա  
 նուշ ելաւ : Ասոր վրա իրեք օր տանջը  
 վեցան ան կտրիճները , ու տեսան որ  
 չեն կրնար մեկներ՝ եկան գաղտուկ  
 սամփսոնի հարսին ինկան , որ էրիկը  
 լաւ

խաբելով բերնէն առնէ իրենց զու-  
րուցէ, շէնէ ըսին՝ դիտնաս որ քեզ  
քու տընով տեղովոյ կերենք, որ մեզ  
աղքատցունելու համար հոս կանչե-  
ցիր: Անիկնալ սամիսոնի աղաչելով  
ըսով անչափ բան ըրաւ որ եօթներ-  
որդ օրը ալ ճարչեղսւ բերնէն առաւ,  
ու գնաց զուրուցեց անոնց. որ անոն-  
քալ ելան սամիսոնի ասանկ ըսին.  
Ս'եղբէն ալ անուշ էնչիս, առիծէն ուծով  
ն'չիս: Ընատենը սամիսոն անոնց  
խաբեբայուիր իմացաւ, ու ինքնալ  
առաւելով իրենց սինն տըվաւ՝ Եւ որ  
ըսաւ ի՛՛մ երէնջ ըս ( քի կէնճ ի՛՛նձ-ի՛՛ն ) նեղը  
է՛ լըծէէ՛՛ ի՛՛մ հանելուի՛՛ն շէէ՛՛ գոնէր: ու  
սրդողելով շուտմը ելաւ ասկազոն  
քաղաքը գնաց, այ օգնուքը հոն եռ-  
սուն այլազգի սպաննեց, ու անոնց  
վրայի լաթերը բերաւ ասոնց տըվաւ.  
Ետքը կնիկնալ հոն տեղը ձգեց՝ ինքը  
սրդողած իր հօրը տունը դարձաւ:  
Ետև ատենով սամիսոնի բարկուին  
որ անցաւ, մէկ ու լմը հետը սարգև  
առած՝ նորէն ուզեց որ կնկանը քով  
երթա. ու երբոր եկաւ տեսաւ որ ա-  
ները իր կընիկը առեր ուրիշիմը հետ  
կարգեր է. աս բանըս սրտաճառ ա-  
ռաւ սամիսոն՝ որ այլազգիներէն ա-  
ղէկմը սխը հանէ. ու ստի գնաց իրեք-  
հարուր ազունէս ( քի թիլքի ) բունեց,  
( որ ան երկիրները շատ կար կըսեն. )

ասոնք երկու երկու պոչերնին մէյմէ  
 կու կապեց , ու մէջ տեղը մէկմէկ  
 ջահ կի՛մ ճրագ դրաւ կապեց , ու ա-  
 նանկ այլազգիներուն ցորենի արտե-  
 ըր թող տրվաւ . որ գացին կրակ ձը-  
 գելով երեցին մոխիր դարձուցին ա-  
 նոնց բոլոր ցորենները էգիները ու  
 ձիթենիները , որ բանալը չիմնաց : Աս-  
 սոնց տէրերը որ իմացան թէ աս բա-  
 նըս սամիսոն է ըրեր , ու պատճառը  
 իր աները եղեր է՝ որ կնիկը հաներ  
 ուրիշի է արվեր , եկան անոր տանը  
 կրակ տվին , սր իր աղջիկնալ հետը  
 տնով տեղով երեցաւ : Այց աս բա-  
 ներըս սամիսոն հերիք չիտեպելով  
 նորէն ուրիշ շատ այլազգիներալ ըս-  
 սյաննեց . ու ետքը գնաց յուգայի ցե-  
 ղին մէջս՝ ետեմ ըսած մէկ այրմը՝  
 հոն կրկենար : Այլազգիներնոր աս  
 լեցին զօրք ժողվեցին ու անանկ բա-  
 նակով յուգայի ցեղին վրան գացին ,  
 ու անոնցմէ ուղեցին որ սամիսոնը  
 կապած իրենց ձեռքը տան : Հու-  
 գայի մարդիքնալ վախցան՝ իրեք հա-  
 ղար հօդի մէկէն ելան սամիսոնի ե-  
 կան , ըսին թէ աս ինչ է քու ըրածդ ,  
 չես գիտեր որ մենք այլազգիներուն  
 տերու թե ներքեն ենք . ու ասի հիմա  
 եկանք որ քեզ կապենք ձեռվոնին  
 տանք : Սամիսոնալ առաջ երգվին  
 ցուց իրենք՝ որ չի բռնեն ըսպաննեն :



ու անանկ թող տրվաւ որ իրեք նոր  
 հաստամուր չըվաններով կապեն ին-  
 քը՝ որ այլազգիներուն տան խալը-  
 սին : Արբոր սամփսոն ասանկ կա-  
 պած այլազգիներուն բանակին ե-  
 կաւ մտեցաւ , ու անոնքալ սկսան  
 ուրախուիլ կանչվըռտել՝ ու վրան վա-  
 զեցին որ բռնեն , անտեղը այ զօրու-  
 թիր սամփսոնին հասաւ , որ մէկէն  
 թօթվեց կտրրտեց ան չըվանները ,  
 ու հոն գետինը մէկ իշու ծնոտմը (յթ  
 չէնեկի ոսկորմը) գտաւ , ան ձեռքը ,  
 առած վազեց այլազգիներուն վրան ,  
 ու անով հաղար հոգի մեռցուց : Աս  
 աշխատանքէս ետե սաստիկ ծարվե-  
 ցաւ սամփսոն՝ ու այ ջուր խնդրեց  
 անձալ ան ծնօտէն ջուր քխեցուց . որ  
 խմեց՝ ու անով ուժ առաւ : Ատքը ե-  
 լաւ սամփսոն գազա ըսած այլազգի-  
 ներուն քաղաքը գնաց . ան որ իմա-  
 ցան իր թշնամիները՝ եկան ան գիշե-  
 ըր քաղքին դռները առին , որ առ-  
 տուն ելլեն ինքը բռնեն մեռցունեն :  
 Աայց սամփսոն կէս գիշերանց ելաւ ,  
 ու քաղքին դռները իր շեմերովը  
 կղպաքներովը վրըցուց կռնակը զար-  
 կաւ տարաւ լեռան գլուխը հանեց  
 ձգեց , ու անանկ ձեռքերնէն խալը-  
 սեցաւ :

Աս բաները օրլալէն ետե՝ այլազգի-  
 ներուն իշխանները տեսան որ սամփ-

տոն իրենց երկիրը մէկ դալիլա ըսած  
կրնկանմը քով շատ անգամ կուգա ,  
անոր հետ խօսք կապեցին՝ որ եթէ  
սամփսոնը խաբելով բերնէն առնէ  
խմանա որ՝ անոր ուժը ինչ բանով կը  
կապվինէ , մարդ գլուխ իրեն հաղար  
ու հարուր արծաթի (կի՛ խուռուշ)  
տան . ուստի սկսաւ կնիկը անուշ ա-  
նուշ խօսքերով սամփսոնի ետեւէն իյ-  
նալ որ աս բանըս ըսէ իրեն : Սամփ-  
սոնալ առջի բերանը ըսաւ , թէ որ  
եօթը նոր ջիլով (յի՛ քիրիշով) իս կա-  
պեննէ՝ ուժըս վրայէս կըփախչի , ու-  
րիշ մարդ իքներուպէս կըլլամ : Կնիկ  
նալ անանկ կապեց ինքը ան ջիլերու  
վը . ու ետքը փորձելու համար ետեւէն  
մէյմը կանչեց , սամփսոն՝ այլազգիներ  
ըր եկան հիմա վրատ կըհասնին (ու  
անատենը անոնք դադարուկ պահվը-  
տերիին , որ եթէ ըսածը իրաւ ըլլա-  
նէ՝ վրան վազեն բռնեն ) : Սամփսոն  
աս ձանրս ըսած ինպէս՝ մէկէն ցաթ-  
կեց թօթվեց կտրեց ան ջիլերը՝ ու  
տեսաւ որ մարդ չիկար , ինքնալ ծաղ-  
րաբանուի (յի՛ շախա) կարծեց , անոր  
համար նորէն որ աղաչեց կնիկը որ  
իրաւը ըսէ , սամփսոնալ ըսաւ թէ  
անանկ չէ՝ հապա թէ որ եօթը նոր  
ամուր չըվաններով կապվելու որ ըլ-  
լամ նէ՝ անատենը ուժըս կըթա-  
փի՝ ու կըբռնելվամ : Ասալ փորձեց  
կը

կնիկը, ու տեսաւ որ անովալ չեղաւ, նորէն աղաչեց թախանձեց որ շիտակը ըսէ: Սամիսոն մէյժընալ ծաղրաբանուք ըսաւ՝ թէ որ գլխէս եօթը մազ բռնես ծարերը դերձանի հետ կապես ու անոնք սլատը գամեսնէ՝ ու ժըս կերթա: Կնիկը աս բանսալ ըրաւ. ու տեսաւ որ անանկ զինքը կրխաբէկոր, ալ սրտանց սկսաւ սամիսոնի ետեէն իյնալ շողոքորթել, ու անչափ բան ըրաւ որ սամիսոնի ճարը հատաւ չի կրցաւ դիմանալ, ալ բերնէն փախցուց ըսաւ թէ՛ գիտնաս որ ես իմ մօրըս փորէն անոնք իրաժեմ, որ իմ գլուխըս պիտի ածըլի (քի ուստուռա) չիղըպչի, ու թէ որ մազըս կտրըվելու ըլլանէ՛ ու ժըս վրայէս կրփախչի՛ եսալ ուրիշ մարդիքներունպէս կըլլամ: Անատենը ալ հաւտաց կնիկը՝ որ իրաւ է զուրուցածը. ուստի շուտմը այլազգիներուն իշխանները գաղտուկ տունը կանչեց, որ անոնքալ իրեն տալու ըստակնին մէյտեղ առին եկան. ու ինքը սամիսոնը խարխըբելով ծընկանը վրա գիրկը առաւ քնացուց. ու ան քընուն մէջը գլխուն մազերը ածըլել տալունպէս՝ սկսաւ սամիսոն թուլնալ ու թմրիլ: Անքնեւէն ետեերքոր կանչեց՝ սամիսոն այլազգիները վրատ հասերեն, սամիսոն արթըն

[Թընցաւ՝ ուզեց մէկէն ելլել ցաթ-  
 կէլ, բայց տեսաւ որ ան ան զօրութիւն  
 վրան չիկա՝ հոն մնաց: ուստի վրան  
 եկան այլապէսները զինքը ալ բռնե-  
 ցին ու աչվըները փորեցին հանեցին,  
 երկաթներով կապած գաղա քաղա-  
 քը տարին, ու հոն գերիիպէս ջա-  
 ղացքը (յի աւելիւրմէնը) դրին՝ որ եր-  
 Թա բանի աղա: Վիչմը ատենէն  
 ետքը որ ալ սամիսոնի մազերը սկը-  
 սերէին երկննալ, ու անով առջի ու ժ-  
 նալ վրան գալուպէս էր. այլազգի-  
 ներուն իշխանները իրենց դագոնը  
 սած կուռքին մեծ տօնախմբութիւն  
 րին՝ կեր ու խումով ուրախուի, որ  
 իրենց [Թնամին սամիսոնը ձեռվընին  
 տրվերէ: Աւ երբոր աս ուրախութիւն  
 կընէին իրենց կնիկներով տղաքնե-  
 րով անհամար բաղմուծի մէկ մեծ  
 պալատիմը մէջ՝ վերը վարը լեցուն. ու  
 զեցին որ սամիսոննալ հոն բերել  
 տան, ու առջևնին անանկ կուր կուր  
 խաղա՝ ծաղը ըլլա, որ սրտերնին վը-  
 րան աւելի պաղը շարկի: Սամիսոն  
 ալ ասանկ խաղալէն ետե՛ գնաց ան  
 պալատին երկու սիւներուն (յի [Թէ-  
 մէլ տիրէ կներուն) քովը՝ որ ան բոլոր  
 շինվածքը անոնց վրա հաստատված  
 կեցեր էր, ու գէպի ան կանչելովը  
 սաւ. Ինր Ինր զօրութեց՝ յիշի իս, ու աս  
 մէկ հեղսալ ինծի ու ժ տուր, որ այ-  
 րազ-

լազդիներէն իմ երկու աչացրս սիրը  
 հանեմ: Ասաղօթքը ըրաւ՝ ու երկու  
 ձեռքովը ան երկու սիւները բռնեց,  
 ես ալ աս այլազդիներուս հետ մեռ-  
 նիմ՝ ըսելով՝ անանկ ուժով քաշեց  
 թօթիւնը, որ հոնտեղը մէկէն քայ-  
 քայեցաւ հիմնայատակ եղաւ ան բո-  
 լոր շինվածքը, ու իրեն հետ մէյտեղ  
 բովանդակ մէջի եղած այլազդիներ  
 ըր մեռցուց. որ մեծ ու պզտիկ իրեք  
 հազար հոգի էին. ու ասով՝ սամի-  
 սոն մեռնելովը աւելի մարդ ըստան-  
 նեց՝ քան ողջուէր ատենը: Ատքը ի-  
 ընն ազգականները եկան մարմինը  
 անկէց վերուցին, իրենց երկիրը իր հօ-  
 ըր գերեզմանը տարին թաղեցին. որ  
 քսան տարի ինչացոց քաշած նեղուէ-  
 նին թեթեւցուց, ու անով դատաւոր-  
 ներուն կարգը սեպվեցաւ:

ԳԼ: ԺԸ:

Մի քայի պատմութիւն, ու բեմեմեմի ցեղին  
 Զարեմիւն:

Պատաւ որաց գրքին մէջը սամիստ-  
 նէն ետե ուրիշ երկու պատմու-  
 թիւնը կըստատմելի, որ կերեւա թե-  
 յեառայ մեռնելէն ետքը շատ ջան-  
 ցաւ որ անոնք պատահեցան:

Ընջինը. որ միքա ըսած մէկ մարդ-  
 մը եփրեմի ցեղէն աւելորդապաշ-  
 տու

տուր արծրութե կուռքիպէս բանմը  
 շինեց իր տունը դրաւ , ու ղևտացի  
 մը գտաւ քովը բունեց որ իրեն քա-  
 հանայուի կրնէր : Անատեննալ դա-  
 նա ցեղը , տեղերնին իրենց նեղվածք  
 գալով , հինկ հոգի լրտես խրկերէին  
 որ երթան պըտըտին ուրիշ բնակե-  
 լուալ տեղ գտնան ։ ասոնք ճամբան  
 երթալնին ան միքայի տանը ղևտա-  
 ցիին հանդըպեցան . ու անոր ձեռ-  
 քով այ հարցուցին՝ իմացան իրենց  
 բանին յաջողուի : Արքոր գացին  
 բաներնին տեսան , ու ալ վեց հա-  
 ռուր հոգի մէկ եղած՝ ելան որ եր-  
 թան լայիսա ըսած քաղաքը այլադ  
 գիներուն ձեռքէն առնեն հոն բնա-  
 կին , նորէն եկան՝ ան ղևտացին իր  
 աւելորդապաշտական բաներովը մի-  
 քայի տրնէն վերուցին յափշտակե-  
 ցին՝ ու հետերնին առին ան լայիսա  
 քաղաքը տարին , որ հոն իրենց ա-  
 ճանձին քհնյութի ընէ . ու քաղքին  
 անուննալ փոխեցին , Վան՝ դրին : Այլ  
 անատենէն աս աւելորդապաշտուիը  
 ան տեղը մնաց ինչպան յերոբովամ  
 իէլացոց թագաւորին ժամանակը ,  
 որ անալ իր շինած երկու ոսկի հոր-  
 թերուն մէկը հոս տնկեց , ինչպէս իը  
 տեղը պիտի պատմենք :

Արկորդ՝ բենիամենի ցեղին ջարդը  
 կը պատմըվի , որ մէկ ղևտացի կնկան  
 մը

մը պատճառով եղաւ : Արքոր դա-  
 քաա ըսած բենիամեհի քաղքին ան-  
 շահ մարդիքը սս կնիկը խայտառա-  
 կուք մեռուցին , երիկը առաւ անոր  
 մեռելը տասվերկու կտոր ըրաւ , ու  
 ինչացոց ամիէն ցեղերուն անկէց մէյ-  
 մէկ կտորը խրկեց՝ որ երթան տես-  
 նան , ու ասոր դատաստանը ընեն :  
 Ինչացիքալ աս անորէնուէր վրա սոս-  
 կալով , մէյտեղ եկան խորհուրդ ը-  
 րին , ու մարդիք խրկեցին բենիամին  
 ցոց՝ որ ան չարուիւր ընողները երթան  
 բռնեն մեռցունեն : Բայց բենիա-  
 մինցիք տէր կեցան ան չարագործնե-  
 րուն , ու սկսան առնց դէմ պատե-  
 րազմի պատրաստութի տեսնել , որ  
 քսանըհինկ հազար եօթըհարուր  
 քաջ պատերազմող մարդիքալ հանե-  
 ցին : Ասոր վրա բանը տաքցաւ , ու ս-  
 տի աստիէսալ ինչացոց բոլոր ցեղե-  
 րը մէկ եղած իրենքալ չորսհարուր  
 հազար զօրք ժողվեցին , ու այ հար-  
 ցուցին հրաման առին անանկ բե-  
 նիամինցոց վրա ելան : Առջի զարնը  
 վելուն մէջը՝ քսանվերկու հազար իս-  
 ռայեչացիներէն ջարդ ըվեցան . անոր  
 վրա թէպէտ սրտերնին կտարեցաւ ,  
 բայց նորէն այ հարցուցին , ու ա-  
 նանկ մէյմալ որ զարնըվեցան , և ու-  
 թը հազար հոգ իալ կորսնցուցիննէ .  
 անատենը ալ սպք պահելով ու զոհ  
 մա .

մատուցանելով, տարակուսեցան՝ այ  
 աղաչեցին որ իրենց յայտնէ թէ ինչ  
 բնէն, նորէն ելլան՝ թէ դադրին մի։  
 Վ՛ճալ փենէ, հէս քէնյասլետին բեր,  
 նովը հրամայեց որ չիվախնան ելլեն։  
 որ վաղը անոնք բոլոր իրենց ձեռ,  
 քը պիտի տա ըսաւ։ Աւանանկ եղաւ,  
 մէկալ օրը քսանը հինգ հազար ու հա  
 բուր հոգի բենիամինէն ջարդեցին,  
 ու դաբաս մայրաքղբը՝ և բոլոր իրենց  
 մէկալ քաղաքներնալ մտան առանց  
 ինտյելու ամմէնը կոտրեցին կնիկ՝  
 տղա՝ իրենց անասուններովը, որ բան  
 չիխալըսեցաւ անոնց մէջը, ու շին  
 ու՛ած քներունալ կրակ տրովին մոխիր  
 դարձուցին, անանկ որ բոլոր բենիա  
 մենի ցեղէն միան վեց հարուր կտրի՛ձ՝  
 ճորով չորդ լուխ մէկ սնառիկ տեղ  
 մը փախան ինկան, որ վէ՛մ ուեմոնայ  
 կըսվէր։ Այտքը ասչափովալ չիկըջ  
 տացան իէլացիքը, հասա ալ գլուխ  
 նին տարցած՝ ուղելով որ ան ցեղը բո  
 լորովին աշխրբէս վերնա, մէկ եղան  
 այ առջևը երդումով ուխտ ըրին որ  
 ան մնացած վեց հարուր հոգիին ի  
 բենց մէ մարդ աղջիկ չիտա։ Վ՛սանկ  
 որ չափը անցուցին իէլացիք. եաքէն  
 խելվընին վրանին եկաւ, ու սկսան  
 զղջալ ան ըրած երգումին վրա. ու  
 անոր ճարը այսպէս մոմտացին որ՝  
 յաբիս գաղայադին մարդիքը ջար  
 դէն



դէն՝ իրենց կոյս աղջիկնեքէն՝ իզատ,  
 ու անոնք աս բենիամեների մնացած  
 կտրիճներուն տան, որ անով անցե-  
 ղը մնա չիկորսովի. ինչու որ՝ բոլոր  
 ինչացոց մէջը միան յարիսցիները  
 գլուխ քաշեր՝ չէին եկեր ան սրտե-  
 րաղմբ, որ մէջերնին երգումով հաս-  
 տատված էր որ՝ ամմէնը գանձ յտե-  
 երբոր տեսան որ յարիսէ միան չորս  
 հարուր աղջիկ ելաւ, որ բաւական  
 չէր ըլլար ան բենիամեների կտրիճնե-  
 րուն. մնացած երկու հարուրնալ տե-  
 լով քաղքէն ուրիշ ձամբով հանեցին  
 անոնց տրվին. ու ասով բենիամեների  
 ցեղը նորէն ստքի վրա կայնեցուցին.

ԳՎ. ԺԲ.

Հարաւայ պարմաւելը :

Ինչացոց դատաւորներուն ատենը՝  
 ու ինչպէս կերևա՝ սկիզբները աս  
 հռութայ քանը եղաւ. որ ամձաշուն  
 չը դատաւորաց ետեէն մասնաւոր  
 գիրքով կը պատմէ, որ դաւիթ մար-  
 գարէին պապերը կարգով բերէ,  
 մանաւանդ թէ՛ յօի քնի մեսիային  
 ցեղը ըստ մարմնայ, որով իրեն ազդաւ  
 համարին մէջը հռութնաւ կը յիշ-  
 աւետարանիչը :

Ինչացոց երկիրը մէկ ստատիկ սովմը  
 ինկաւ, ու ան պատճառով ելիմեւէք

ըսած մէկ մարդմը յուդայի ցեղէն  
 որ բեթղէհէմ կը կենար՝ առաւ իր  
 նոռմին կնիկը ու երկու տղաքը մո-  
 վաբացոց երկիրը գնաց որ հոն նստի  
 ապրի : Եւ այնչառ աս մարդըս  
 մեռաւ , ու ետքը ան երկու տղաք-  
 նալ հոն կարգը վեցան մոխաբացի  
 այլազգի հարսեր առին , մէկին ա-  
 նուէր որիա , ու մէկալինը հռութ :  
 հասը տարիէն ետե աս երկու տղաք-  
 նալ որ մեռան առանց զաւկի , նոռ-  
 մին մարերնին լսելով թէ ինչացոց  
 երկիրը ալ շըտկը վերէ , ու զեց որ աս  
 հարսերը իրենց տներնին ճամբէ , ու  
 ինքը գլուխը քաշէ իր երկիրը դառ-  
 նա : Ասոնց մէկը ինչոր էնէ գնաց .  
 քայց հռութը ճար չեղաւ իր կեսու-  
 րէն չիղատվեցաւ . ու ըսաւ որ իս  
 քեղմէն միան մահը պիտի բաժնէ .  
 դուն ուր որ երթաս՝ ես ալ հետդ  
 եմ . քու ազգըդ իմ ազգս է , ու քու  
 անձըդ իմ անձս ալ է : Այսպէս որ ե-  
 ղաւ , նոռմին հռութը հետը առաւ  
 բեթղէհէմ դարձաւ . ու հոն ելիմե-  
 լէրի ազգականմը կար բոոս ըսած ,  
 ասիկա նոռմինին վրա ձեռք դրաւ՝ ի-  
 րենց տեղ տրվաւ որ բնակին : Ան  
 ատենը որ արտերը ցորեն կը բաղէին՝  
 հռութ նոռմինի ըսաւ որ երթա ինք-  
 նալ արտերը բանի , որ անով իրենց  
 աղքատուիլ անցունեն ապրին . ու

գնաց ան բռնսի արար ցորենն կտրել  
 լու : Տոտս երբոր իմացաւ որուն  
 հարսը ըլլալը, վրան մասնաւոր հոգ  
 ցուցուց, իր աղջիկներուն հետ դը  
 բաւ որ կերակուրը մէյտեղ ուտէ,  
 ու բանվորներուն ապրսպրեց որ ին  
 քը աղէկ նային . ու ցորենի հասկե  
 բուն մնացածը թողուն որ կուզէնէ  
 ժողովէ տուն տանի : Հունձէն երբոր  
 տուն դարձաւ հռու թ, ու բոտսի ի  
 բեն ըրած պատիւնոր պատմեց կե  
 սերոջը . անալ շատ խնտաց վրան, ու  
 հռու թի ճամբա ցուցուց որ բոտսի  
 հետը կարգըվի, ու ասանկ կրվայլէ  
 ըսաւ, ինչու որ՝ ան ելիմե լէքի ազ  
 գական է : Աւտի բոտս երբոր հռու  
 թի միտքը իմացաւ՝ չէ չըսաւ . բայց  
 որով հետե իրմէ աւելի մօտ ելիմե  
 լէքի ուրիշ ազգականմընալ կար՝ որ  
 առաջ անոր կիյնար որ հռու թը առ  
 նելու, բանը ասանկ ձգեց՝ որ կար  
 գով ըլլաւ : Վաղքին ծերերը մէյ  
 տեղ բերաւ՝ ու անոնց առջևը ան մէ  
 կալ ազգականին ըսաւ որ նոտմինը  
 ելիմե լէքի որբեարին իր երկնէն մը  
 նացած գետիններուն մէկ կտորը ծա  
 խել կուզէ, առաջ քեզի կիյնա որ  
 առնես, չէնէ եռ կառնեմ : Ետե աս  
 ալ ըսաւ՝ գիտնաս որ՝ ան տեղը առ  
 նողը՝ իրեն հարսը հռու թնալ պիտի  
 առնէ, որ անկէց ան մեռնողին ժա  
 րանդ .

ունից թողու : Եւ որ լսեց ան մէ-  
 կալք՝ ետ կեցաւ , դուն առ ըսաւ :  
 Եւնատենք բոսս վրկա բռնելով ան  
 ծերերը ու բոլոր հոն գըտնելով թո-  
 դովուրդը՝ հառ թը իրեն հարազատ  
 կնիկ առաւ , որ ամմէնքը օրհնենք  
 կարդացին վրանին : ու ամալ օրհնե-  
 լով շատ ջանցաւ որդիմը տրվաւ ի  
 ընց , որ անուեր ուլուդ դրին , ու  
 անկէց եղաւ յեսսէն դաւիթ մար-  
 գարէին հարը :

Գ. Լ. Ժ. Կ.

Եւնատի աղօթքով սամուէլը ինծնանի՝ ու  
 այ ինչը լիւր լի :

**Է**ղի երբոր ինչացոց քհնյայետունի  
 կընէր , որ ետքը դատաւորուի  
 ալ սկսաւ ընել . անատենք եղկանա  
 անուերով մէկ ղետացիմը կար արի-  
 մաթեմ քաղաքը . որ երկու կնիկ ու-  
 նէր , մէկին անուեր աննա , ու մէկա-  
 լինը՝ փեննանա : Եւնան ամուլ էր  
 տղա չէր բերէր , ու փեննանան զաւ-  
 կներ ունէր . ու տի աննա միշտ սրբա-  
 ցաւ էր աս բանիս համար : Աղկա-  
 նան սովորուի ունէր , որ տարին հեղ-  
 մը կնիկները ու տղաքը հետը մէյ-  
 տեղ առած ուխտ կերթար տելով  
 քղքը՝ տասրանակին այ : Այն ան-  
 գամմալ էր բոր ասանկ ուխտ գացին ,  
 եղ .

Եղկանանն նոյ զոհ ընելէն Ետև սե-  
 ղան որ նուտաւ՝ փեննանայի ու անոր  
 տղոցը բաժինները մէյտեղ տրվաւ .  
 ու աննայիալ զատ մէկ բաժինմը որ  
 տրվաւ ,աննան անանկ մինաւ որ նրս-  
 տած ու տէ ընինի ,նորէն միտքը ինկաւ  
 աս իր ամըռ իր , ու ախ վախ ընելով  
 կը հաւէր կը մաշվէր . Թէ նոյն եղկանն  
 աւելի սէր ունենալով աննային վրա ,  
 սիրտ կուտար իրեն ու կը սէր Թէ՛ մի  
 վախնար ես քանի որ կամ նէ քեզի  
 տասը զաւկի տեղ եմ . բայց ճար չէր  
 ըլլար որ աննան աս բանըս մոռնա :  
 Աւտի երբ որ սեղանը խալըսեցաւ՝  
 աննան մինաւ որ ելաւ գնաց նոյ տա .  
 ճարին դռանը առջևը ինկաւ , ու սըր-  
 տանց լալով սկսաւ տղաչել պաղա-  
 տել նոյ , որ իրեն ողորմի մէկ զաւակ-  
 մը տա , ու ուխտ ըրաւ որ անիկա ինք-  
 նալ նոյ նըվ իրէ : Աստղօթքըս ընելն  
 ինի աննայի բերանը չէր շարժէր ,  
 հասպա սրտանց կը սէր ու կը հաւա-  
 չէր , անոր համար հեղի քհնյպետը  
 որ հոն նստած էր՝ բանը չի գիտնա-  
 լով , երբ որ տեսաւ որ աննա շատ եր-  
 կընցուց հոն անանկ կենալը , կար-  
 ծիք գնաց Թէ գիտովցեր է . ու տղան  
 խրկեց որ երթա չախէ վըռնտէ ան-  
 նա տեղէն : Աննայալ խոնարուք ա-  
 նոր պինս տրվաւ Թէ՛ քաւ լիցի ես գի-  
 նով չեմ . հասպա տրտմուք ըրցված  
 կը

կնիկմբնեմ, որ այ առջև եկերեմ  
 իմ սրտիս ցաւը կրբանամ: Հեղիաւ  
 անատենը իրեն ըսաւ, անանկ է նե  
 խաղաղութեան երթաս, անքո խնդիր  
 քրդ լըսէ: Ասով խիստ միտթարութե  
 ցաւ սննա. և երբոր անկէց իրենց  
 տունը արիմաթեմ դարձան, աննա  
 յղացաւ մանչ զաւակմը բերաւ, ու  
 անոր անունը՝ սամուէլ դրին, որ ը  
 սել է՝ աստուծմէ խնդրոված: Անկէ  
 ետև աննանաւ էրկանը հետ սելով  
 չիղնաց՝ ինչպէս որ տղան քիչմը մեծ  
 ցաւ ու կաթէն կտրեց. անատենը  
 առաւ ընծաներով սելով բերաւ, ու  
 հարը զոհ մատուցանելով անանկ այ  
 նրվիրեցին: ու աննան տղան հեղի  
 քհնյալետին ձեռքը տալնինի ըսաւ,  
 տէր իմ՝ ես ան կնիկն եմ, որ ատե  
 նով քո աչքիդ առջևը այ աղաչեցի  
 աս տղիս համար, ու ան իմ խնդիր  
 քրս կատարեց. հիմա եսաւ ինչպէս  
 որ այ ու խտ ըրինէ, ասիկա իրեն միտ  
 կուտամ կընրվիրեմ: Ատքը աննա  
 ան մարդարեւական շնորհակալութե  
 օրհնութիւն ընելով այ, որ կըսկըսի՝  
 Հաստատեցաւ սիրտ իմ՝ ի քր. հոն թո  
 զուց սամուէլը. ու ինքը հեղիի օրհ  
 նենքը առած՝ երկանը հետ տուն  
 դարձաւ: Ա՛ճաւ օրհնեց ինքը, ու  
 սամուէլի տեղը, նորէն ուրիշ իրեք  
 մանչ ու իրեք աղջիկ զաւակ արվաւ  
 թ

իրենն . Քայց ինքը ամմէն տարի որ  
սեւով կերթար՝ սամուէլը չէր մոռ-  
նար , միշտ իրեն լաթ կը շինէր կը տա-  
նէր : Սամուէլը անանկ պըղտը կուց  
սկսաւ նոյ տանը ծառայուիլը ընել ,  
ու որէ որ անմեղու թք մեծնալով՝ չէ  
թէ միան նոյ՝ հապա ժողովրդոց ալ  
աչքը կը մանար՝ որ կը սիրէին զինքը :

ԳՎ : ԺԴ .

Հեղի էր Գառնէրովը իւրապէս լի բահանայ-  
ունէն ինչնա , ու Գեղը սամուէլ իւրապէս :

Հեղի քննյապէտը երկու որդի ու-  
նէր , մէկուն անուոր ուրիշի կըս-  
վէր , ու մէկալինը՝ փենէ՛հէս : ասոնք  
երկուքնալ իրենց հօրը ներքե ինչա-  
ցոց քննյուի կընէին՝ նոյ տապանակին  
առջևը՝ անոնց զոհերը մատուցանե-  
լու , և ուրիշ անձաշտու թէ ծէսերը  
կատարելու . բայց իրենց չար ու գայ-  
թակղական գործքերով ժողովրդին  
սիրտը կերէին , ու ստի անձալ խիստ  
սրդողերէր վրանին : Հեղիալ թէ  
պէտ ասոնց անկարգ ու ինները միշտ կը  
լըսէր գիտէր , բայց ինչպէս պէտք  
էնէ աս բաներուս դեղ չէր գնէր՝  
չէր պատժէր իրենք . հապա անհո-  
գուք մէկ թուլ խրատովմը կանցու-  
նէր . որդիք կըսէր՝ ձեր վրա աղէկ  
չէմ լսէր , ինչու ատանկ կընէք , ինչ :

ու անսնքալ իրենց գիտցածէն չէին  
անցնէր : Անոր համար անհ հեղին  
վրայալ սաստիկ բարկանալով՝ մէկ  
հրեշտակմբ խրկեց, որ եկաւ չարա-  
չար յանդիմանեց ինքը աս իր տղոցը  
ըրածներուն համար . ու իրեն աս  
տրվաւ թէ քննյապետութիւնդ պիտի  
քու տնէդ ջնջեմ վերցունեմ, ու ու-  
րիշ իմ հաւատարիմ ծառայիս տամ .  
որովհետեւ ըսաւ դուն ապերախտ ե-  
ղար իմ շնորհքիս . և աս բանիս նշանը  
ան պիտոր ըլլա՛ որ ուինի ու փենէ-  
հէսը մէկ օրվան մէջ պիտի իյնան  
մեռնին :

Ատքը ան աս բանըս սամուէլիալ  
յայտնեց . որ երբոր ինքը տղակուց  
տաճարը կը պառկէր, մէկ գիշերմբ  
յանկարծակի անկաճը ձանմբ եկաւ՝  
որ ինքը կը կանչէր՝ սամուէլ սամուէլ .  
անալ գիտնալով թէ հեղին անդիւն  
զինքը կը կանչէ, ելաւ վաղեց քովը  
գնաց՝ ասա՛ եկա ըսաւ ինչ կը հրամ-  
մես : Հեղիալ ըսաւ, ես քեզ չի կան-  
չեցի որդի, գնա՛ տեղըդ պառկէ՛ :  
Ասանկ իրեք հեղ որ եղաւ՝ ու սա-  
մուէլը վաղեց քովը եկաւ . անատե-  
նը հեղի կուս հնաց թէ՛ անձ տա-  
պանակէն ինքը կը կանչէ կոր, ուստի  
երբորդ անգամին սամուէլի խորատ  
տրվաւ, որ մէյմալ կանչելու ըլլանէ,  
ինքնալ ըսէ՛ ան ինչ կը հրամանես քու  
ճա-



Ծառայիդ : Սամուէլալ հնազանդե-  
լով գնաց, ու երբոր չորրորդ հե-  
ղը կանչուիլեւուն անանկ ըսաւ՝ ան-  
ատենը ամ իրենալ բանը բացաւ,  
ու դուրուցեց թէ՛ ինտոր սաստիկ  
բարկացերէ հեղիին վրա՝ իրեն տղո-  
ցը պատճառովը, որ իրենք չի յան-  
դիմաներ ճամբա բերեր. անոր հա-  
մար ըսաց՝ ճար չիկա պիտոր զիրենք  
չարաչար պատժեմ քչիյսկտու թիր  
ձեռվրնէն առնեմ : Արբոր առտու  
եղաւ, սամուէլ վախէն չէր ուզեր այ  
խօսածները հեղիին պատմել. բայց  
համք անչափ ետեէն ինկաւ՝ որ ճո-  
րով բերնէն առաւ : ու երբոր լսեց,  
կամք ամն օրհնեալ եղիցի ըսաւ. ու  
անովալ չիզցաստացաւ. նմանապէս  
տղաքնալ իրենց բրածէն ետ չէին կե-  
նար : Իսոյց ամ անատենէն սկսաւ  
ալ սամուէլի հետ ընտանուի ընել  
իր կամքը անոր յայտնել. որ ասով  
օրէ օր սամուէլի անունը բոլոր ինչա-  
ցոց մէջ հաչակվեցաւ, թէ այսիրելի  
ու հաւատարիմ մարդարէ է ինքը :  
Ատե ամ աս հեղիին պատիժնոր տա-  
լու եղաւ. թող տըլաւ որ այլազգի-  
ները ինչացոց վրա պարզմ ելեն. ու  
երբոր առջի զարնըվեւուն ինչացիք  
տեսան որ իրենք յաղ թըլեցան՝ չորս  
հազար հոգի կորսընցուցին, ու զեցին  
որ տատանակը այ բանակը բերեն՝ որ

անով ի՞նչ իրենց՝ օգնուի՞ն հասնի : Այս  
 սելովէն տասպանակը որ վերցուցին  
 բանակը բերին՝ ուինի ու փենէհէս  
 ալ հետը . անատենը այլազգիները  
 ինչլացոց ժողովրդին ձանէն իմանա  
 լով տասպանակին գալը . սրտերնին  
 սաստիկ վախ ինկաւ . վայ է ըսին մե  
 զի , ալ բաներնիս բուսաւ , ինչու որ՝  
 ան ինչլացոց ի՞նչը մէջերնին եկաւ՝ որ  
 ինչվան հիմա բոլոր իրենց թշնամի  
 ները ջարդեր կորսընցուցեր է : Աւս  
 տի մէկմէկու սիրտ տալով անանկ  
 յուսահատու թի՛ք որ սկսան ինչլացոց  
 վրան վազել . ի՞նչ այնպէս կարգաւո  
 րեց՝ որ եռսունհաղար հողի ինչլացի  
 ներէն կոտորեցին՝ ուինի ու փենէհէս  
 ալ մէյտեղ . ու մնացածը ցիրուցան  
 փախուցին , և ի՞նչ տասպանակնալ գե  
 ըի առին իրենց ազովտոս քի՛քը տա  
 ըին : Այս որ եղաւ՝ շուտմը մէկ մարդ  
 մը լաթերը պատռտած գլուխը հող  
 ցանած վազեց սելով քի՛քը՝ որ աս  
 խրդձուիններըս պատմէ . ու անատե  
 նը հեղիալ ծերացած իննըսսունըու  
 թը տարվան՝ որ աչքին լուսնալ կոր  
 սընցուցեր էր , տանը դրանը առջևը  
 աթոռով նստէր կըսպասէր , ու սիր  
 տը կեփէր տասպանակին վրա : Այրբոր  
 աս մարդէս լսեց որ՝ պատերազմին  
 բանը ձախորդ գացեր է , իր երկու  
 տղաքնալ մեռեր են , ու տասպանակը

այ անընդհատ է . ան տեղը հեղի սաս-  
տիկ ցաւէն՝ աթոռէն կընըկին վրա  
գետինը ինկաւ՝ ու մէջքը կուտրեցաւ  
մեռաւ : Բնկէ ետե փենէ հէսի կը-  
նիկնաւ , որ ան օրերը տղաբերքի մատ  
էր , անալ իր պարոնտատին ու եր  
կանը մեռնիլը մէկէն լսելով՝ ցաւը  
բռնեց ու տղաբերքին ատենը խեղ-  
ճաբար մեռաւ :

Գ | : Ժ | Ե .

Բնազգիները քաղաքնակին պարստաւի  
դարձելէն՝ ու նորէն Բեւաջոյ իւրաքանչեւ

Բնազգիները որ տապանակը գե-  
րի բռնեցին ազովտոս տարին , ա-  
նիկա իրենց դագոն ըսած կուռքին  
տաճարը դրին . ու երբոր մէկալ օրը  
առտըվանց կանուխ ելան տաճարը  
գացին՝ տեսնան որ դագոն կուռքը  
տապանակին առջևը երեսին վրա  
գետինը փռված էր . ու անկէց վե-  
րուցին նորէն իր տեղը կայնեցուցին .  
Բայց անոր մէկալ առտուն մէյմալ  
գան գտնան որ՝ դագոն նորէն գե-  
տինը կործանած՝ ողնայարը (քի կէօլ-  
տէ քիւթիւ իւն) միան ողջ մնացեր  
է , ու գլուխը երկու սովընները տա-  
ճարին մէջ տեղը ինկեր ջախջախեր  
է , ու երկու թւերը գռանը շեմին վը-  
րա կեցեր է : Բնկէ՛ի զատ՝ ան ուրիշ

պատիժ ալ խրկեց այլազգիներուն  
 վրա, որ նստուկ տեղերնին խոց կեւ-  
 լար՝ սաստիկ կը տանջուէին, ու անով  
 ալ շատ մարդ կը մեռնէին: Ասե ի-  
 րենց արտերը անհամար մըկներ կը  
 վըխտային ու բոլոր վարուցաննին  
 կուտէին հաւրէին: Աս պատուհաս-  
 ներնոր ազովտացիքը տեսան, կար-  
 ծիք երթալով որ տապանակին պատ-  
 ճառովը կըլլա, խորհուրդ ըրին մե-  
 կալ այլազգի իշխաններուն հետը,  
 ու նորէն վորձելու համար՝ անկէց  
 վերուցին գէթ ըսած քիչը տարին.  
 քայց հոնալ տեսան որ ան պատու-  
 հասները կըլլան, ու երբոր անկէց  
 ալ ուղեցին որ ասկաղոն տանին,  
 ասկաղոնցիները ասոր գէմ կեցան,  
 մեք բոլորս ջարդըվիլ չէնք ուղեք  
 ըսին: Աւտի ասանկեօթը ամիս տա-  
 պանակը այլազգիներուն քովը կե-  
 նալէն ետե՛ալ մտմտացին որ նորէն  
 ինչացոց ճամբեն՝ խաղըսին աս պա-  
 տուհասներէս. ու ասոր վրա իրենց  
 քուրմերը խորհուրդ տըվին որ պա-  
 րապ չիխաւրեն, հապա այլազգիներ-  
 րուն հինկ իշխաններուն համրանք-  
 վը՝ հինկ հատ ոսկիէ նստուկ տեղի  
 պատկերք շինեն, ու հինկալ ոսկիէ  
 մըկներ, և ասոնք տապանակին նը-  
 վիրեն տան, որ ան պատիժները վրա-  
 ներնէն վերնա: Ատքը աս ալ ապրու-

սրբեցին որ՝ մէյմալ աղէկմը փորձե-  
 լու համար, որ իմանան թէ սս պա-  
 տիժներըս անկէ՛ց է՝ թէ չէ, տապա-  
 նակը ան ըսած ոսկիէ բաներովը առ-  
 նեն մէկ նոր սայլի (յի առապայիմը)  
 վրա դնեն, ու երկու մատղաշ կովեր  
 որ առջինեկ հորթերնին բերերեն,  
 ան սայլին լծեն, ու հորթերնին քո-  
 վերնէն բաժնեն տունը սրահեն, ա-  
 նանկ ճամբա դնեն անոնք որ երթան.  
 Եթէ տեսնան որ սս կովերը շտակ  
 գէյ՛ի ինչլացոց երկիրը կերթաննէ,  
 գիտնան որ ան պատիժները տապա-  
 նակին սրճուովը եղած է: Անոնք  
 ալ անանկ որ ըրին, ու ետեւէն գա-  
 ցին նայելու. տեսան որ կովերը ա-  
 ռանց մէկ դին մէկալ դին ծռելու՝  
 շիփշիտակ գացին գէյ՛ի բեթսամիւս  
 ըսած ինչլացոց երկիրը, որ անատենք  
 ցորեն կը հնձէին անոնք: Աւ յովսեա  
 բեթսամիւսացիին արտը որ մտան.  
 ինչլացիները իմացան ինտալով տա-  
 պանակին վրան վաղեցին առին սայ-  
 լէն վերուցին. ու սայլը ջարդեցին  
 վառեցին, անոր կրակովը ան երկու  
 կովերը եկան ղևտացիները ողջ՝ կէղ  
 ըրին տապանակին առջև: Ասայց  
 ինչլացոց ուրախուիը մեծ տրամա-  
 վերջացաւ, որ յիստուն հազար ու  
 եօթանասուն հոգի անատենք այ  
 պատժըլեցան մեռան: ինչու որ, կը-

սեն թէ, երբոր տասրանակը ասանկ  
 հոն հասաւ. ինչացիք մեծ ու պզտիկ  
 վրան թափեցան, ու առանց անոր  
 պատիւը պահելու սկսան տասրանա-  
 կին դպչիլ հետաքրքրուք մէջը խառ-  
 նեցին նայեցան. որ աս բանըս իրենց  
 սաստիկ արդիւրէր իմ: Աստի բեթ  
 սամիւսցիքը ալ տասրանակէն սոսկա-  
 լով դողալով կարիաթարիմցոց աղա-  
 շեցին որ իրենց քաղաքը առնեն տա-  
 նին. ու անանկ կարիաթարիմը տա-  
 ըին, որ հոն շատ տարի կեցաւ ամբ-  
 նադաբ քչիյին տունը:

Հեղի քահանայապետէն ետե ինչ  
 սէս ըսինք՝ սամուէլ մարդարէն որ  
 սկսաւ ինչացիքը կառավարել, իր  
 առջի հոգը աս եղաւ՝ որ բոլոր կուռ-  
 քերը ու կռասպշտական բաները մէ-  
 ջերնէն վերցուց մաքրեց, ու իմպաշ-  
 տուիր նորոգեց, մանաւանդ տասրա-  
 նակը դառնալէն ետքը: Աւ աս ա-  
 տեններըս մէկ հեզմը սամուէլ բո-  
 լոր ինչսցիները մէյտեղ մասեփաթ  
 ըսած տեղը ժողված՝ իրենց քարոզ  
 որ կուտար՝ ու նյ աղօթք որ կընէին,  
 ան ժամանակը այլազգիները յան-  
 կարծակի ուղեցին վրանին պատե-  
 ըազմելէլ. ան որ իմացան ինչացի-  
 ները՝ սրտերնին դող ինկաւ, ու սա-  
 մուէլի դիմեցին որ նյ աղօթք ընէ՝  
 ձեռքերնէն խալըսին: Սամուէլ ալ  
 մէկ

մէկ գառնուկմբ առաւ նայ ողջակէզ  
որ ըրաւ . նձ երկինքէն անանկ սոս-  
կալի գոռալու ձանմբ հանեց , որ բռ-  
լոր այլազգիները իրար անցած սկը-  
սան փախչիլ , ու իէլացիները ետենին  
ինկած ջարդեցին իրենք , ու իրենց  
քաղաքներնալ նորէն անոնց ձեռ-  
քէն առին : և ասով այնպիսի վախ ին-  
կաւ այլազգիներուն սիրտը , որ սա-  
մուէլի օրը մէյմալ իէլացոց վրա պա-  
տերազմչի բացին : Ալ ինքը սամուէլ  
մարգարէն սովորու թի ըրեր էր , որ  
տարին հեղմը կեւէր իէլացոց քա-  
ղաքները կը պըտըտէր՝ անոնց պիտա-  
նաւորու թիը կը հոգար գատաստան-  
նին կը տեսնէր , ու մէկալ մնացած  
ժամանակը արիմա թեմ իրեն տու-  
նը կը նըստէր :





# Մ Լ Ս Ն Չ Ո Ր Ր Ո Ր Գ

Պատմութիւն թագաւորուէց և մնացորդաց գրքերուն . իէլացոց թագաւորնէրուն ատենը եղածը մինչև իրենց դերութիւր :

## Գ Լ Լ :

Իսրայէլացիք իրենց Ռաֆաւոր հուշէն դնել . թաւ սառուղի իշխորէ առջին Ռաֆաւոր Իսրայէլացոց :

**Լ**րջորալ ծերացաւ սամուէլ, կառավարուէ բեռք իր վրայէն քիչմը թեթեցունեւու համար՝ իրեն երկու որդիքը յովէլ ու աբիա ըսած՝ դատաւոր դրաւ իսրայէլացոց վրա : Լսոնք իրենց հօրը բարեպաշտուէ ու արդարուէ ճամբէն դուրս ելան , որ կաշառքներով և ուրիշ անիրաւու թիներով ժողուրդը կը չարչարէին : Լսոր համար ալ չի դիմանալով , ամ մէնքը եկան սամուէլի ինկան՝ ու միաբերան ըսին թէ՛ մեզի մէկ թագաւորմը դիր , որ ուրիշ աշխարքի ազդերունակէս մենքալ մեր թագաւորէն կառավարվինք : Աւասով ժողովուրդը չուզէլմը ցուցունեւով անմիջապէս ասաուծմէ կառավարվլը՝ իր պաշ .



պաշտօնակից ձեռքով, (ինչպէս ինչպիսի  
ան ատենը եղած էր .) սամուէլ որ  
աս բանը ընց՝ խիստ վշտացաւ ու  
զանկտեցաւ նոյն հետ : Եւ ալ հրա-  
մայեց որ անոնց ուղածը կատարէ ,  
միան թէ՛ առաջ իրենց առջևը դնել  
Թագաւորներուն իրաւունքը, որ ինչ-  
պէս սովորուի է՝ Ժողովրդոց վրա բեռ  
կրլան , ու իրենք գերիխպէս կրբա-  
նեցունեն : Եւ այց աս բաներովս ալ  
խորայէլացոց աչքնոր չի վախցաւ ,  
և իրենց խօսքին վրա հաստատ կե-  
ցերէին , ան ատենը նախ նորէն հրա-  
մայեց սամուէլի որ սաւուղը խորայէ-  
լացոց Թագաւոր օծէ : ու ասանկ  
եղաւ : Եւ նիսիամինի ցեղէն մէկ մարդ-  
մը կար՝ կիս անունով . ասիկա մէկ  
կտրիւժ տղամը ունէր խիստ շնորհա-  
լի պատուական , ու բարձրը հասա-  
կով ( քի պոյլու պօսլու ) , անանկ որ  
ինքը մէկ հատիկմընէր բոլոր իէլա-  
ցոց մէջը , որ սաւուղ կրսվէր : Պա-  
տահեցաւ որ աս կիսը իր էշերը կոր-  
սընցուց , ու ինքնալ ան սաւուղը մէկ  
ծառայիմը հետը դրաւ ետեւէն խրկեց  
որ ան էշերը փրնտուտեն , անոնք ալ  
աս բանիս համար ելան շատ տեղ-  
վանք պըտըտեցան . ետքը երբոր չի  
դտան ու յուսահատած պիտոր ալ  
ետ դառնայիննէ՛ յանկարծ ծառային  
միտքը եկաւ սամուէլ մարդարէն՝ որ

Հոնտեղվանքը կը գտնուիլէր, ու ըսաւ  
 որ երթան իրեն հարցունէն ան կոր  
 սրված էշերուն համար: Նայց օրով  
 առաջ ան յայտներէր սամուէլի թէ՛  
 վաղը աս առտեն քեզի բենիամինի երկ  
 րէն սաւուղը պիտոր խրկեմ, որ ա  
 նիկա թփւոր օժես իմ ժողովրդոցը ս  
 վրա. ուստի երբոր ինքը տեսաւ սա  
 մուէլ՝ ճանչցաւ որ սաւուղն է. ու անոր  
 սիրտը հանգչեցնելէն ըսելէն ետե՛  
 թէ իր հօրը էշերը գտնուած են,  
 բռնեց զինքը ուրախուիմ հետը առաւ  
 սեղան տարաւ. ու հոն պատիւ ըրաւ՝  
 ամմենէն վեր նստեցուց սաւուղը,  
 ու աղէկ պատառներն ալ իրեն առջևը  
 դնել տրվաւ: Սեղաննոր լամբնցան՝  
 չի թողուց որ երթա, ան գիշերը հոն  
 բռնեց. ու աւտրվանց ելաւ գըլու  
 խը եղ լեցուց՝ ըսաւ թէ անքեզ թա  
 գաւոր օժեց իր ժողովրդոցը վրա,  
 որ թշնամիներուն ձեռքէն իրենք ա  
 զատես: Ատե ալ իր հօրը տուննոր  
 ճամբելու եղաւ, աս թփւր ըլլալուն  
 ճամարտուէր նշանի համար մէկ քա  
 նի բանմը մարգարէացաւ սամուէլ,  
 որ ան երթալնինի ճամբան իրեն պիտի  
 հանտըպիին. ու հետը խօսք դրաւ  
 որ ետքը գաղգաղա քաղաքը երթա  
 իրեն սպասէ. որ եօթը օրէն ետե  
 ինքնալ հոն կուգա, ու ինչ որ պիտոր  
 ընելնէ՛ ան կօղմանէ՛ հոն տեղը իրեն

պիտի յայտնէ : Անամիսն նշաննել ըստ  
 սաւուղի վրա կատարվէլէն ետքը ,  
 ինչպէս խօսք կատարէրնէ , քնաց սա-  
 մուէլ՝ ու բոլոր ժողովուրդը մասե-  
 փաթ ժողովեց , որ հոն իրենց թա-  
 գաւոր ընտրէ : Այսպէս ըրաւ՝ ա-  
 ռաջ տասվերկու խորայէլացոց ցեղե-  
 րուն վրա վիճակ ձգել տրվաւ , ու  
 երբոր բենիամեանի ցեղին վրա ելաւ  
 վիճակը , ան ատենը սամուէլ անայ-  
 ին յայտնուք սաւուղը պահվրտած  
 տեղէն բռնեց բերաւ ժողովրդոց մէ-  
 ջը կայնեցույ՝ ու ըսաւ , ահա՛ ան մար-  
 դը որ անձ ձեզի թագաւոր դրաւ :  
 Վճողովուրդնալ ուրախուք մէկ բե-  
 րան կանչեցին՝ կեցցէ՛ տրտայ : և ալ անայ-  
 ին տրորմամբը սաւուղի քովը սկսան  
 ժողովրդիլ ու ժով ու բանի եկող մար-  
 դիքները , որ անանկ ինչացոց նոր թա-  
 գաւորուի կայնեցաւ :

Գ Լ Բ .

Սաւուղ Ած յաղթուի՛ն ընելէն ետե՛ն ու  
 բէն Ռաֆաւոր իօծվի :

Աս բաներէս մէկ ամսէն ետքը՝ նա  
 աս ամնացոց թագաւորը ելաւ  
 խորայէլացոց երկրին մէկ կողմը յա-  
 բիս ըսած գաղայագացոց վրա . ա-  
 նոնքալ դէմ կենալու ու ժ չունենա-  
 լով իրեն խրկեցին ըսին թէ՛ մէջեր-  
 նիս

նիս ու խտուդ աշինք դնենք՝ ու անանկ  
 քու ներքեդ ըլլանք : Մնալ ասանկ  
 սրտասխան տրվաւ թէ՛ մէջերնիս  
 դաշինքը աս ըլլա՛ որ ամմէն մէկեր  
 նիդ ձեր աջ կողմի ( ցի սաղ գիի ) աջ  
 քերնիդ հանէք : Յաբիսցիքը աս որ  
 լսեցին՝ իրենց եօթը որ ատեն ուղե  
 ցին , ու աստին անդին խորայէլացոց  
 երկիրը իմացուցին աս բանը : Աւու  
 ղալ որ լսեց ան անիրաւ բանը՝ վառ  
 վեցաւ անձային զօրուք , ու սաստիկ  
 սրդողելով՝ առաւ իր երկու եզը կտոր  
 կտոր բրաւ , ան կտորվանքը չորս դին  
 խորայէլացոց երկիրը խրկեց ըսելու  
 թէ՛ ո՛վ որ սաւուղի ու սամուէլի հեռ  
 չի գար՝ ասանկ կտոր կտոր կընեն ան  
 նոր եզները : Մս բանովըս անանկ  
 սոսկումնը ձգեց ժողովրդոց սիրտը ,  
 որ ամմէնք ոտք ելան եկան սաւուղի  
 քով բոլորը վեցհարուր եօթանա  
 սուն հազար հողի . ու ասոնք սաւուղ  
 իրեք բանակ բրած անանկ ան ամննա  
 ցոց վրան վազեց , ու աղէկ ջարդմը  
 տալով մնացածը ցիրուցան փախուց  
 կորսնցուց յաբիսցիքը ազատեց : Աւ  
 ասով սաւուղ շատ սիրելի եղաւ ժո  
 ղովրդոցը , ու սրբտերնին տաքցաւ  
 վրան , անչափ որ՝ ոտք ելան բռնեւ  
 մեռցունել կուղէին ան մարդիքը ,  
 որ սաւուղը բանի տեղ չի սեպելով՝  
 զլուխքաշեր իրեն տուրք չէին ի տար

ու սամուէլ արդէլեց խաղաղցուց  
ամմէնքը : Ատքը սամուէլ առաւ թո-  
լոր ինչացիքը դադդադա ատրաւ . ու  
հոն շնորհակալուէ զոհ մատուցանե-  
լով այ , նորէն սաւուղը թագաւոր օ-  
ծեց . ու անտեղը ամմէնուն առջևը  
սամուէլ իր ինչվան ան ատէնը ար-  
դարկառավարուէ վկայու իր՝ Ժողովը  
դոց բերնէն առնելով , և այ իրենց  
վրա ըրած բարեբարու ինէրը՝ առջև-  
նին դնելով , խրատեց ու յորդորեց որ  
իրենց թագաւորին հետ միաբան աւ-  
տուծ մէ վախնան , անոր պատուի  
բանքները պահեն : Մայց աս բանիս  
նշան թէ մեծ անիրաւու ի ըրին այ՝  
որ թագաւոր ուղեցին , աղօթք ըրաւ  
սամուէլ՝ ու շուտմը երկինքը սկսաւ  
սասաիկ գոռալով անձրև թափել  
անչափ որ՝ Ժողովուրդը սոսկալով մե-  
ղա՛ ըսին , ազալեցին սամուէլի , որ ան  
այ պատու հասը դադրեցունէ :

Գ. Բ. Գ .

Սառու խորէն այլադիւնէրը իշյաղնէ , ու  
անհնապանդոռնէը համար այ տէրէն ինչնա :  
Հոգնախան իր բաշտալէը մտնելէն հաղապի :

Սէկ տարիէն ետև ինչացոց պա-  
տերազմ հանտըպեցաւ փղը շտա-  
ցոց հետ . աս բանիս համար ամմէն-  
քը մէկտեղ դադդադա Ժողովեցան .

ու սամուէլ լալ եօթնօրէն ետքը հոն  
 գտնուիլու խօսք տրվերէր՝ որ գա  
 մայ զոհ մատուցանէ, ու ժողովրդոցը  
 սիրտ տա պատերազմ ելլալու: որ  
 ամմէնքը սոսկացերէին՝ լսելով որ  
 իրենց թշնամիները սաստիկ ուժով  
 եռսուն հազար կառքով վեցհազար  
 ձիաւորով ու ալ անհամար զօրքերով  
 վրանին կուգանկոր: Այրքոր եօթը  
 օրը եղաւ՝ ու տեսաւ սաւուղ որ չի  
 հասաւ սամուէլը, ու ժողովուրդն ալ  
 տրտնջալով կը ցրվէինկոր, ինքը ձեռք  
 զարկաւ զոհ մատուցանելու, որ ալ  
 չըսպասէ թշնամիներուն գէմը ելլէ:  
 Օրհնոր լըմըննալու եղաւ՝ ան ա  
 տենը հասաւ սամուէլ, ու խիստ  
 սրգողելով սաւուղի անհամբերուէր  
 և յանդըգնուէր վրա՝ ըսաց թէ Խժ  
 քեզ ատ բանիդ համար երեսէ ձգեց,  
 անանկ որ՝ քու թագաւորուիդ քեզմէ  
 քու տղիդ պիտի չանայնի: ու այնպէս  
 թողուց ելաւ գնաց: Աս լսելով զօր  
 քը՝ աւելի սրտերնին կոտրեցաւ, ու  
 սաւուղի հետ միան վեցհարիւր հոգի  
 մնացած՝ անանկ սկսան թշնամիներ  
 ուն գէմ երթալ:

Ան ատենը յովնաթան սաւուղի որ  
 դին մարդու բանմը չըսած՝ միան իր  
 կապարձակիրը (քի սիլիհտարը) հե  
 տը առած թշնամիներուն բանակը  
 մօտեցաւ, ու գնաց մէկ լեռանմը  
 նե.

նեղուցի բերան կեցաւ, անոնցմէ դէ-  
 մը եկածը մէկմէկու ետեւէ քսան հո-  
 գիի չափ մեռցուցւեալ ասով անանկ  
 վսխամբ ու շփոթութիւնը ձգեց թշնա-  
 միներուն մէջը, որ կարծելով թէ  
 ետեւին կեցած է իսրայէլացոց մեծ  
 բանակը՝ սկսան ցիր ու ցան ըլլալ  
 փախչիլ: Արբոր աս հեռւիանց տե-  
 սաւ սաւուղ, ու բանը իմացաւ թէ  
 ինչպէս եղէրէ, ինքնաւ սիրտ առաւ,  
 (մանաւանդ երբոր ժողովուրդնաւ աս  
 բանը իմանալով նորէն տասը հազար  
 մարդու չափ իր քովը ժողվեցաւ )  
 ուստի ուժով ետեւին ինկաւ աղէկմը  
 ջարդեց՝ ու մնացածը փախցուց: Աս  
 մեծ յաղթութեւնըս մէջը զարմանաւ  
 լին ան էր, որ իսրայէլացոց կողմէն՝  
 բոլոր այնչափ հոգիէն միան երկու-  
 քը՝ սաւուղ ու յովնաթան գեղարդ  
 ու թուրունէին, ինչուոր՝ այլազգիքը  
 իսրայէլացոց վրա տիրապետած ա-  
 տեննին այսպիսի պատերազմական  
 զենքերը արգելէրէին անոնց, նաև եր-  
 կաթագործները անոնցմէ վերցուցե-  
 րէին. որ իսրայէլացիքը իրենց երկրա-  
 գործուէ խօփը՝ մանգաղը ու գե-  
 րանդին սրելու համար՝ այլազգիներ  
 բուն երկիրը կերթային, ու հոն շե-  
 նել կուտային:

Բայց աս փառաւոր յաղթութեւնը ու  
 բախուիլը մէկէն կտրեց մէկ տրտմաւ

ըի դ իսրո՛ւ ած քո՛ւր . պի՛տ ճան որ՛ սաւու զ  
 ան այլազգ ինե՛րուն վրա վաղե՛լուն ա  
 տենը անխոհե՛մու թք՛ . այ երդու՛մով  
 ուխտ ըրաւ՝ որ ան օրը ինչվան բոլոր  
 թշնամիները չի կորսրվիննէ՛ . ինչվան  
 իրիկուն ծոմ կենան՝ մարդ բերանը  
 բան չի դընէ : Յո՛վնա թան չէր դ ի  
 տեր աս իր հօրը երդու՛մը , ուստի  
 մեղուներուն փեթակներուն քովէն  
 անցնի ինի՛նի՛ խիտ անօթի ըլլալով  
 ձեռքի գաւազանը երկնցուց անկէց  
 մեղքը առաւ կերաւ , ու անով աչքը  
 բացվեցաւ՝ ու ժը վրան եկաւ : Այրբօր  
 իրիկուն եղաւ՝ զօրքը ալ սաստիկ յագ  
 նած ու անօթեցած , թշնամիներէն  
 ինչոր ձեռվընին ինկեր էր՝ ոչխար ,  
 հորթ , անհամբերուք գետինը սկը  
 սան մորթել , ու օրինաց դէմ արուն  
 թաթախուտել : Ա՛սիկա որ իմացաւ  
 սաւու զ՝ մնացածը իր առջևը բերել  
 տրվաւ՝ ու մէկ քարի մը վրա մորթած՝  
 անանկ միսը սրունէն մաքրած իրե՛նց  
 տրվաւ որ ուտեն : Այտքը ան գիշերն  
 ալ սաւու զ նորէն ուղեւոր որ թշնա  
 միներուն վրա երթաւ , քահանային  
 ձեռքովը հարցուց այ . երբօր տեսաւ  
 որ ն՛ծ պատասխան չի տրվաւ , գիտ  
 ցաւ որ մէկ մեղքովը պատահած է ,  
 անոր համար հրամայեց որ ամմէնուն  
 վրա վիճակ ձգվի , ու թէ որ ըսաւ՝  
 յո՛վնա թան տղիս վրայս վիճակը ել  
 ւէ .



լէնէ՛ շէմ խնայեր մեռցունեւ կուտամ : Ա իճակը որ ձգեցին , ու յովնաթանու վրա ելաւ . սաւուղ իրեն հարցուց թէ ի՞նչ բերեա , անալ ըսաւ թէ կտորմը մեղրը ուտելու համար ես պիտոր մեռնիմ մի . սաւուղ ալ երդում ըրաւ թէ անակ է՛ պիտի ասոր մեռնիս : Անատենը ելաւ ժողովուրդը ասոր դէմ կեցաւ , քաւ լիցի ըսին ինչպէս սպաննըվի ան մարդը , որ սլատձառ եղաւ իսրայէլացոց ազատուէր . ու անանկ ժողովուրդը աս մեղքս վրանին առած՝ այ աղօթք ընելով յովնաթանը մեռնեւ լէն խաղտեցին :

Գ Լ Գ .

Սաւուղ ամաղեկացոց խնայելով , բռնորովին այ ալ էն իեւա :

Ամաղեկացոց մեղացը չափն որ լըցվեցաւ , այ հրամանովը սամուէլ գնաց սաւուղի ըսաւ որ՝ սլատերաղմեւէ ամաղեկացոց վրա , ու չի խընայէ բոլորը ջարդէ՛ երիկ մարդ՝ կընիկ մարդ , ինչվան մանրը տղաքնալ , ու անոնց անասուններնալ : Սաւուղ ալ զօրք ժողվեց չորս հարուր եռսուն հազարի չափ , ու ելաւ կտարեց ամաղեկացիքը : Այց այ հրամանը լըման չիկատարեց , ինչու որ ողջ բունեց սլա

սրահեց ադ ագ. ըսած անոնց թագա-  
 ւորը, ու իրենց կենդանիներուն և  
 ուրիշ բաներուն աղէկներնալ մեղ-  
 քընցաւ սրահեց: Անոր համար սաւ-  
 տիկ բարկացաւ ինձ, ու աս բաները  
 սամուէլի պատմելով հետը գանկը  
 տեցաւ ու ըսաց թէ՛ զղջացերեմ որ  
 սաւուղ թագաւոր դրի, որ ասանկ  
 իմ խօսքըս չիմըռեց: Սամուէլալ ան  
 դիշերը անանկ տրտմած՝ ինչ առջևը  
 ինկաւ. ու առտուն գնաց անատենը  
 վրա հասաւ՝ որ սաւուղ ամաղէկա-  
 ցոյ առած կողոպուտները ինչ զոհ  
 կրմատուցանէր. երբոր սաւուղ սա-  
 մուէլը տեսաւ, առջևը վաղեց ու ը-  
 սաւ. ահա՛ ինչ հրամանը ինչպէս ըսե-  
 թէրնէ կատարեցի: Ան ժամանակը  
 սամուէլ ալ իրեն հարցուց, հասա  
 ինչ է ըսաւ ան ոչխարներուն ու կո-  
 վերուն ձանը որ ես կըլսեմ կոր. ան  
 ալ պիտի տրվաւ թէ՛ ատոնք ամաղէ-  
 կացոցմէ բերածս է, որ աղէկները  
 ժողովուրդը ու զեց պահել որ ինչ զոհ  
 րնեն: Սամուէլալ ինձային նախան-  
 ձով վառեղ՝ հան տեղը չարաչար յան-  
 դիմանեց ինքը, ինչ ըսաւ աւելի հա-  
 ճոյ է հնազանդուիլ, քան թէ զոհ  
 մատուցանելը. անոր համար ինչպէս  
 որ դուն ինձ բանի տեղ չի սեպեցիր,  
 ինձալ քեզ երեսէ կըձգէ ու թագա-  
 ւորութիւն ձեռքէդ կառնէ: Աս բա-  
 նէս

նէս սաւուղի սիրտը գողաց՝ մեզա՛  
 ըսաւ՝ Թողուի տունը ինձի, ու եկոր  
 մէյտեղ այ աղօթք ընենք որ մեզքս  
 Թողու: Սամուէլ ալ մտիկ չըրաւ,  
 ու երբոր երեսը դարձուց որ երթա,  
 ետեւէն վազեց սաւուղ, ու անոր վե-  
 րարկուն բռնել քաշելն ինի որ չի Թո-  
 ղու որ երթա, կտորմը պատուեցաւ  
 ձեռքը մնաց. ասոր վրա դարձաւ սա-  
 մուէլ ու նորէն իրէն ըսաւ՝ Թէ ասոր  
 պատուեց ու քեզմէ առաւ անձ քու  
 Թագաւորութիւղ, որ քեզմէ աղէկ  
 մարդումը ձեռքը տա. ու աս այ ը-  
 սած բանը ետ չի դառնար: Ատրը  
 սամուէլ՝ ալ տեսաւ որ սաւուղի ձեռ-  
 քէն չիխալըսիր՝ դարձաւ հետը եկաւ  
 որ այ աղօթք ընէ. ու ուզեց որ ա-  
 գագ Թագաւորը իր առջևը բերեն:  
 անալ երբոր գողալով առջևը ելաւ-  
 նէ՛ անատենը Թուրմը առաւ սամու-  
 էլ ու իր ձեռքովը հոն տեղը մեռցուց  
 զինքը, ասանկ ըսելով Թէ՛ ինչպէս  
 քու Թուրդ անչափ կնիկները իրենց  
 տղոցմէ զրկերէ, այսպէսալ հիմա  
 քու մարդը քեզմէ զրկւի: Անկէ  
 ետե՛ ալ սամուէլի սիրտը կտորած՝  
 Թողուց ելաւ արիմաթեմ իր տունը  
 գնաց, ու անանկ քաշված նստեցաւ,  
 մէյմընալ սաւուղի հետ չի տեսնուի-  
 ցաւ:

ԳՎԵՆ

Վաստիւնը Լազարոսը կօծէի :

Ը որ այսպէս սաւուղը երեսէն ճը  
 գեց՝ անկէ ետքը սամուէլ մար  
 գարէն միսի թարեւոյ՛ հրամայեց իրեն  
 որ ելլէ՛ բեթղէհէմ երթա, ու հոն  
 յեսսէին տղոցը մէկը, որ ինքը իրեն  
 կը յայտնէ՝ անիկա թգլոր օծէ սա  
 ւուղի տեղը : Սամուէլ ալ բեթղէ  
 հէմ որ գնաց, աս բանըս սաւուղէն  
 գտղտուկ ըլլալու համար՝ որ իրեն  
 զէնմը չընէ, այ հրամանովը՝ ասանկ  
 ձան հանեց թէ՛ զոհ ընելու համար  
 բեթղէհէմ եկերէ : Աստի երբոր  
 հոն ան զոհին եկաւ յեսսէ ըսած  
 մարդը յուգայի ցեղէն՝ իր տղաքնե  
 բովը, սամուէլ ուղեց որ յեսսէն ա  
 նոնք մէկիկ մէկիկ իր առջևը բերէ  
 օր տեսնէ : Աւսինտ առաջ տեսնե  
 լով եղիարը յեսսէին մեծ տղան, սա  
 մուէլ կարծեց թէ՛ ան ըլլա այ ընտ  
 բաժը, բայց ան ըսաւ իրեն, ատոր  
 երեսը ու հասակին մեծ ուիր մի նայ  
 իր, իմ ընտրածըս ատ չէ՛ : մարդը  
 մարդուն երեսը նայելով անանկ գա  
 տաստանը կընէ, բայց ան մարդուն  
 երեսը չի նայիր, հապա սիրտը կը  
 նայի : Ասոր ետեւէն յեսսէն բերաւ  
 ամինադար ըսածը, անալ չեղաւ .  
 ան

անկէ ետքը մէկալ մնացածները բո-  
 լոր եօթնալ կարգաւ առջևը ելան :  
 Ա երբոր տեսաւ սամուէլ որ անոնց-  
 մէ մէկնալ նոյ ուզածը չէ՛, յետսէի հար-  
 ցուց թէ՛՝ ատչանի է մի տղաքնէրդ .  
 անալ ըսաց , մէկ սղտիկմընալ կա որ  
 ոչխար կարածէ , որ դաւիթ կըսվի .  
 սամուէլը կանչել բերել տրվաւ ա-  
 նիկայալ՝ ու տեսաւ որ մէկ շիկուկ  
 շնորհալի տղամընէր աս դաւիթ ը-  
 սածը , ու նոյ հրամանովը անտեղը  
 սամուէլ անոր գլխուն վրա եղը լէ-  
 ցուց թագաւոր օծեց ինքը : ու ան ա-  
 տէնէն՝ ալ նոյ հողին սաւուղէն ելաւ  
 հեռացաւ , ու դաւ թին վրան եկաւ :  
 Ա սանկ որ՝ նոյ երեսէն ինկաւ սաւուղ ,  
 ալ դե մտաւ իրեն , որ ատեն ատեն  
 անով խիստ կըտանջուիէր . ու ասնե-  
 ղու թին քիչմը թեթեցունելու հա-  
 մար՝ մէկ քնար (նոյ սանթուռ) չալող-  
 մը փրնտուէն ինի՛ դաւիթը դտան ,  
 սաւուղի քովը բերին . որ երբոր ա-  
 նոր ցաւը ու խենթուիը կըբռնէր,  
 նէ՛՝ դաւիթ անուշիկ չալելով կըգաղ-  
 բեցընէր , ու կըհանգչեցնէր ինքը :  
 Ատե անանկ սիրելի եղաւ դաւիթ  
 սաւուղի՛ որ առաւ իրեն կասարճա-  
 կիր ալ ըրաւ :

ԳՎ : Թ .

Դաս-ի-ն գորշ-ա-մ-ը եւս պո-ն-ն-է , ու ան-ով-ի-ս  
 Լ-ը ալ-ա-շ-ք-ի-ն-է-ր-ը եւս ա-շ-ք-ը-լ-ի-ն :

**Մ** յլազգիները նորէն ուժ-ա-մ-ն-ա-լ-ով  
 ի-ն-չ-ա-ց-ո-ց վրա պատերազմ-բ-ա-ց-ին ,  
 սաւուղնալ-ի-ր զօրքով-ը գնաց անոնց  
 դիմացն-ին բանակը դրաւ կեցաւ :  
**Մ** յլազգիներուն բանակը մէկ հըս-  
 կա մարդ-մ-ը կար գող-ի-ա-թ անունով ,  
 որ վեց կանգուն ու մէկ թիզ-մ-ը եր-  
 կան էր՝ (իբր երկու մարդու հասու  
 կէն երկան) , ու վրայի ունեցած զէն-  
 քերնալ անանկ խոշոր ու ահաւոր  
 է-ին՝ գլուխը պըղն-ծ-է սաղաւարտ դը-  
 րած , ու բոլոր մարմինը երկը-թ-է դը-  
 րահով (յի դըռխով) պատած . վահա-  
 նը (յի խալխանը) վրան առած , և  
 ձեռքը իրեն մեծուէ չափ մէկ ծանր  
 տէգ-մ-ը (յի մզրախմը) բըռնած . ( ա-  
 նանկ որ՝ կըսվի թէ բոլոր վրայի զէն-  
 քերուն ծանրու-ի-ր իբր հարուր քսան  
 հօխայէն աւելի էր ) : **Մ** սիկա ամմէն  
 իժիբ իրենց բանակէն դուրս կու-  
 գար . ու գէսվ ի ի-ն-չ-ա-ց-ո-ց բանակը քա-  
 մահրե-լ-ով կը կանչէր թէ՛ գուք-ն-ով էք  
 որ մեր դիմացը ելէրէք . գոնէ ըսաւ՝  
 սասանկ ընենք որ պարապ տեղը չի  
 ջարդը-լ-ի-ք . ձեզմէն մէկ-մ-ը ընտրե-  
 ցէք որ դիմացս ելլէ , էս ու ան մի-  
 նակ

նուկ ծեծկրովինք . թէ որ ան իս յաղ-  
 թեւու սպաննեւու ըլլա՛ մենք ձեր  
 ներքեւ ըլլանք , հապա թէ ես ինքը  
 յաղթեմ նէ , դուք մերներքեւ ըլլ-  
 լաք , ու ասով պատերազմը դադրի :  
 Սաւուղ և բոլոր ինչլացիքը աս սոս-  
 կալի հըսկաս ան իրեն զնքերովը  
 տեսնելով՝ ու անոր ըսածը լսելով  
 սարսափած կեցերէին քառսուն օր ,  
 ու չէին գիտեր ինչ ընեն : թէպէտ  
 խոստացաւ սաւուղ թէ՛ ո՛վ որ սիրօտ  
 ընէ , անոր դէմը ելլէ սպաննէ նէ ,  
 իր աղջիկը անոր կուտա , ու ինքը իր  
 աղգովը ազատ կըդրէ . բայց մարդ-  
 չի գտնուկեցաւ որ աս բանիս սիրտ  
 ընէր : Ան օրերը հանդըսեցաւ որ՝  
 յեսսէն իր պզտի դաւիթ տղան իւ-  
 ըսյէլացոց բանակը խրկեց , որ երթա  
 հոն իրեն իրեք եղբարներուն հաց տա-  
 նի , ու տեսնէ թէ ինչպէս են : Աս-  
 ւիթ որ եկաւ աս գողիաթին բանը  
 իմացաւ տեսաւ նէ՛ խիստ տաքցաւ  
 վրան , որ մէկ անհաւատ այլազգի-  
 մը նոյ բանակը ասանկ քամահրէ :  
 ու սկսաւ ինքը՝ բանակին մէջը աս-  
 տին անդին ձան հանեց թէ՛ ինչ կու-  
 տան ինձի , ես աստուծով անոր դէ-  
 մը կելլեմ ու կը յաղթեմ : Այդիաբ  
 իր մեծ եղբարը աս որ լսեց՝ չեխեց  
 ինքը , թէ՛ անդին օչխարները երե-  
 սին վրա ձգեր՝ ինչ հոս եկեր հետա-  
 ժն

քրքրու թի կրնես, ու մեծ մեծ կը-  
ղուրուցես:

Եւ տքր սաւուղի անկաճը հասաւ աս  
բանըս, ու երբոր առջևը կանչել տը-  
վաւ. դաւիթալ ըսաւ իրեն թէ՛ ա-  
մենեւին մի վախնար, ես կերթամ  
ան կը յաղթեմ: Սաւուղալ ըսաւ.  
վախնամ թէ՛ չի կրնաս, ինչու որ դուն  
տղամընես, ու անիկա պղտրկուցմէ  
տատերազմի մէջ մեծցած մարդ է:  
Դաւիթ ասոր պինս տըվաւ թէ՛, ես  
քու ծառատ իմ հօրըս ոչխարները  
արածեւնինի՛ երբոր առիւծ կի՛ արջ  
վրա կուգար կը յափշտակէր, ես ե-  
տեւէն կը վազէի ու բերնէն կը փրը-  
ցունէի կառնէի, ու թէ՛ որ վրաս ել-  
լերնէ՛, անոր վիզէն կը ռռնէի կըս-  
պաննէի. յուսամ որ ասանկալ անձ  
աս այլադդիին ձեռքէն իս խալըսէ,  
ու ան անհաւատին բերնէն իկլա-  
ցոց տըված նախատանքը վերցու-  
նեմ: Սաւուղի խելքնալ պառկեցաւ  
ան ատենը աս բանիս վրա. ուստի  
հրամայեց որ իր պտրղմական երկը-  
թէ՛ հագուստները դաւիթին հագ-  
ցունեն, ու իր ղէնքերը անոր տան՝ որ  
անանկ գողիաթին գէմը ելլէ: Բայց  
դաւիթ սորված չըլլալով այսպիսի  
ծանր հագուստներու ու ղէնքերու՝  
մէկդի թողուց անոնք, ու իր ցուպը  
(յի տէյէնէկը) մէկ ձեռքը առած, ու



Ահալ ձեռքը պարսաթիկը (յի սա  
 փանը) , ու հինգ քարալ առաւ իր  
 մախաղին (յի չանթային) մէջը դը-  
 րաւ , անանկ ելաւ դողիաթին առ-  
 ջւը : Գողիաթն որ տեսաւ զինքը  
 ասանկ մէկ շիկուկ ու փափուկ տղա-  
 մը՝ առանց պատերազմական զէնքի  
 իր դէմը ելած , պահ ըսաւ՝ ես շուն  
 եմ մի՛ որ ցուպով ու քարով վրաս կու-  
 գասկոր : դաւիթալ իրեն պիտի տրվաւ  
 թէ , շունէն ալ դէշ ես . անալ ըսաց՝  
 եկոր եկոր մօտեցիր քովըս՝ որ քու մի-  
 սրդ թռչուններուն ու դազաններուն  
 տամ որ ուտեն : Գաւիթալ ըսաց ,  
 դուն քու զէնքերովդ իմ դիմացըս  
 ելերես , քայց ես նոյ զօրուէց անու-  
 նովը քու վրագ կուգամ . ու յուսամ  
 ան որ քեզ իմ ձեռքըս կուտա որ ըս-  
 պաննեմ , ու գլուխըդ վրայդ վեր-  
 ցունեմ . և քու ու քեզի հետ եզած  
 բոլոր այլազգիներուն մարմինը աս-  
 օրըս թռչուններուն ու դազաննե-  
 րուն տամ որ ուտեն , և ասով բոլոր  
 աշխարքս դիմնա որ՝ ինչացոց մէջն  
 է՝ ճշմարիտ անձը , որ առանց թուրի  
 ու զէնքի երբոր ինքը կրկամենանէ՝  
 յաղթուի ընեւ կուտա : Աս որ ըսաւ  
 դաւիթ՝ ու ալ քիչմը մօտեցան մէկ  
 մէկու , շուտմը քարմը հանեց պար-  
 սաթիկը դրաւ՝ դէպի վրան ու թով  
 քաշածին պէս , քարը գնաց դողիա-

Թին ճակատին մէջը մտաւ , ու հոն  
տեղը մէկէն երեսն 'ի վար գետինը  
փռւեցաւ . ան ժամանակը շուտմը  
վաղեց վրան ցաթկեց դաւիթ , ու ա-  
նոր թուրը մէջքէն հանեց անով իր  
գլուխը կտրեց իրցուց վրայէն : Այ-  
լազգիները աս տեսածինպէս սկսան  
ցիրուցան ըլլալ փախչիլ , ու ինչացի-  
քը ետեւնին իյնելով խելմը ջարդե-  
ցին անոնցմէ , ու բոլոր բանակը կո-  
խեցին առին : Ատքը դաւիթ երբոր  
գողիաթի գլուխը անոր թուրովը  
առած սաւուղի առջև ելաւ՝ սաւուղ  
ղարմանալով վրան 'իրեն հարցուց թէ  
դուն որուն տղան ես : Անալ պա-  
տասխան տրվաւ որ՝ քու ծառայիդ որ  
յեսաէ բեթղէհէմցի կըսվի : Ան-  
ատենը յովնաթան սաւուղի տրղան  
դաւիթին աս մեծ քաջուիր տեսնու-  
լով ու իրեն ասանկ շնորհալի զրուց-  
վածքը , անանկ սիրտը հետը կապ-  
վեցաւ , որ իր վրայի զինվորական հա-  
գուստը ու զէնքերը հանեց անոր տը-  
վաւ , ու հետը խօսք կապեց աղբրգիր  
եղաւ : Սաւուղալ անկէց ետև չի թող-  
ղուց՝ որ դաւիթ իր հօրը տունը դառ-  
նա , հապա իր քովը առաւ :



ԳՎ : Լ :

Սաւուռի նախանձուհիը դասնի լրա :

Դաւիթ ասքաջուհիս ընեւէն ետեւ ,  
 երբորալ սաւուռի հետ սլատե-  
 ըազմէն կըդառնային , անատենը ժո-  
 ղովուրդը քաղաքներէն չնահաւորե-  
 լով սկսան դիմացնին ելլել , ու խըն-  
 տու մով առջևնին ինկած , կնիկներ  
 նալ սյար բռնելով ծնծղաներ չալե-  
 լով՝ անանկ ուրախութե կերդէին ու  
 կըսէին , սաւուռ հաղար ջարդեց ,  
 ու դաւիթ՝ տասը հաղար : Ասոր  
 վրա սկսաւ խիստ նախանձիլ սաւուռ ,  
 ու ըսաւ՝ նայէ դաւիթի տասը հաղար  
 տրվին , ու ինծի միան հաղար . ալ  
 ինչ կըստակսի դաւիթի , միան իմ թա-  
 գաւորուհիս՝ որ անալ առնէ : Աւան  
 օրէն ետեւ սկսաւ ծուռ ծուռ նայիլ  
 դաւիթի վրա , անանկ որ մէկ օրմը իր  
 սովորական դիւահարութիւնը բռնած՝  
 երբոր առջևը քնար կըսալէր դաւիթ ,  
 յանկարծ գեղարդը անոր վրա շտ-  
 կեց նետեց , ու հոնտեղը կըստան-  
 նէր , թէ որ դաւիթը չի թրմնէր ան-  
 կեց փախչելնէ : Ատքը աս ճամ-  
 բաս դտաւ սաւուռ դաւիթը մեռ-  
 ցունեւու : Ինչպէս որ առաջ ըսինք՝  
 սաւուռը իր խօսք տրված ինպէս՝ մե-  
 րովք ըսած իր մեծ աղջիկը դաւ-

Թի պիտոր տար , գողիաթը ըստան-  
 նելուն համար . բայց անկէ ետև մոռ-  
 անցունելով աս բանըս՝ հանեց ուրիշի  
 հետ կարգեց անիկա . ետքը իմանա-  
 լով որ իր մէկալ մեղքող ըսած աղ-  
 ջիկը դաւ թի վրա աչք ձգեր էր , մը-  
 տածեց սաւուղ որ անով դաւիթը ո-  
 թոգայթի մէջ ձգէ որ մեռնի , ուս-  
 տի խրկեց դաւ թի ըսաւ թէ՛ քեզմէ  
 ուրիշ բան չե՛մ ուզեր որ մեղքող աղ-  
 ջիկս քեզի տամ՝ ինծի փեսա ըլլաս ,  
 հաստ ինծի երթաս հարուր այլաղ-  
 դի մեռցունես : ու անով կը յուսար  
 սաւուղ որ այլաղգիներուն ձեռքը  
 իյնա մեռնի : Աս բանէս թէպէտ  
 առջի բերանը խոնարհութիւն ետ կե-  
 ցաւ դաւիթ , ըսելով թէ ես արժա-  
 նի չե՛մ թիւորի փեսա ըլլու . բայց  
 ետքը դնաց քաջութիւն սաւուղի ուզա-  
 ծը կատարեց , ու ողջ առողջ դար-  
 ձաւ , մեղքողը իրեն կին առաւ :  
 Ղառ թի անանկ օրէ օր անձային շնոր-  
 քովը որչափ առաջ կերթար , ու իր  
 խոհեմութիւնը և ըրած քաջութիւնովը  
 սիրելի կըլլար ժողովրդոցը , այնչափ  
 սաւուղի նախանձութիւն անոր վրա  
 կէմէ ընար , որ ալ յայտնի սկսաւ ե-  
 տևէն իյնալ որ ինքը սպաննէ : Անչ-  
 պէս մէկ օրմը նորէն իր գիւհ հարու-  
 թիւր բռնած՝ երբոր առջևը քնար կը-  
 չալէր դաւիթ , ան մէկալ հեղուն

պէս մէյմալ գեղարդովու վեց որ զար  
 նէ մեռցունէ : Ղաւիթալ առջևէն  
 փախաւ իր տունն որ գնաց , սաւուղ  
 ետևէն մարդիք խրկեց որ երթան  
 գիշերանց տանը դուռը առնեն՝ որ  
 առտըլանց դուրս ելած ինպէս բռն  
 նեն ըստաննեն : Սեղքողը իմացաւ  
 աս բանս՝ ու ան գիշերը դադտուկ  
 սրտու հանէն վար ինջեցուց գաւի  
 թը՝ որ երթա ազատի . ու իրէն փախ  
 չելու ատեն տալու համար՝ մէկ խա  
 մածիկմը (կմխուխլամը) շինեց դաւ  
 թի սպառկած տեղը դրաւ՝ վրան ծած  
 կեց , ու առտըլանց սաւուղէն խրը  
 կած մարդիքնոր կեան՝ ցուցուց ըսաւ  
 թէ՛ հիւճանդ է չի կրցնար դար : Սա  
 ւուղալ նորէն հրամայեց որ թնղ մա  
 հիճովը առնեն բերեն . ու ետքը եր  
 բոր իմացաւ աս խաբէբայուիը , ու  
 լսեց որ գաւիթ ելեր սամուէլի քով  
 փախերէ , անոր ետևէնալ թէ՛ պէտ  
 իրէք հեղ մարդիք խրկեց , ու ետքը  
 ճարը հատած՝ ինքնալ ելաւ գնաց ,  
 բայց ան հոնալ գաւիթը խալըսեց :

Գ Վ Ն Ը :

Ղաւիթ սաստուղի յեռսէն քախարտիան  
 կը դուրսի :

Սաւուղ որչափ որ թշնամի էր դաւ  
 թի՝ անոր ներհակը յովնաթան  
 L 4 իր

իր որդին՝ սրտանց սաստիկ բարեկամուհի ունէր դաւ թի հետ , ու կըջանար որ հօրը սրտէն ալ նախանձ ուիր ու թշնամու թիր հանէ : Վայց ետքը երբ որ տեսաւ որ ճար չիկա աս բանիս , գաղտուկ մէյտեղ խօսք դրած՝ դաւ թի գտաւ , ու լալով հետը պագտը վէլով իրեն ըսաւ որ գլուխը քաշէ երթա՛ ալ չէրեն սասաւ ուղի առջևը : Ուստի դաւ թի ալ չուշացաւ . ու աւանակ առանց պատրաստուէ որ ճամբաւ ելաւ , շուտմը դնաց աքիմէլէք քէ՛յ յապեալին հանդըպեցաւ , ու աւոր ասանկ ցուցուց թէ՛ թագաւորական բանիմը համար ինքը՝ ծածուկ տեղմը խրկըված է , ու հինկ օրհնաց հացերէն ուղեց առաւ անկէց , որ իբէն ու հետը եղած մարդիքներուն ճամբու պաշար ըլլա , ու գողիաթի թուրը որ նոյնը վիրված՝ հոն կըպահվէր՝ անալ վրան առաւ , ու այնպէս ելաւ այլ զգիներուն ելիկիրը դնաց՝ անքուս ըսած՝ դէ թացոյ թիւրին քովը : Վայց անտեղը երբ որ բանը իմացվեցաւ թէ՛ աս ան դաւ թին է որ իէլացոց մէջէն իրենց դէմ ան յաղթութիները ըրերէ , անկէց դաւ թի սիրտը շատ վախ ինկաւ , ուստի սկսաւ անոնց առջևը անանկ ցուցունել ինքը թէ խէնթմընէ , ( կի՛թ թու թու ըրիսը ) . որ անով թագաւորը քովէն վը .

վըտ ընտեց, ու ինքնալ առ ի թ գտաւ  
անկէց ելլէլու աղատութիւն : Ատօքը  
դնաց ինչ լացոց սահմանին մօտ մուտ  
բացոց երկիրը, ու իր քովը եկան իր  
հարը մարը եղբարները, նաև ուրիշ  
ինչ լացոց երկրէն փախստական մար  
դիք կամաց կամաց հօն ժողովեցան  
դաւթի հետ մէկ եղան՝ բոլորը չորս  
հարուր հողի չափ, որ ասոնց դա  
ւթի գլուխ եղաւ՝ ու իրենց զօրապե  
տութի կրնէր :

Աս բաներս որ լսեց սաւուղ, ու իմա  
յաւ որ աքիմէլէք քհնյայետը դաւթի  
տէրու իէրրեր, անիկա առջևը կան  
չեց՝ բոլոր իրեն ներքևը եղած քհնայ  
ներու իր եք հարուր հինգ հողի . ու  
վրանին սրդողելով հօն տեղը իր ա  
չաց առջևը քհնյական զգեստովն ին  
ամ մէնքը ջարդել տրվաւ՝ դովեկ ա  
սորիին ձեռքովը, որ ինքը եկեր աս  
բանըս մատներէր սաւուղի : Ատօքը  
ասովալ սաւուղի սիրտը չի սլաղը շ  
տրկեցաւ՝ խրկեց նոմբա ըսած քահա  
նաներուն քաղաքը թրէ անցունել  
տրվաւ՝ բոլոր բովանգակ թէ մարդ  
թէ անասուն կենդանի, անանկ որ  
միան աքիմէլէքի մէկ տըղան աքիաւ  
թար ըսած՝ խալըսեցաւ փախաւ  
դաւթի քովը գնաց, որ դաւթալ  
սիրով ընդունեց ինքը քովը առաւ :  
Անկէ ետև ալ սկսաւ սաւուղ զօր

քով դաւ թի ետեւէն իյնալ՝ որ դըտա-  
 ծինայէս ստաննէ ինքը . դաւ թալ  
 իր հետը եղածներովը ելաւ աստին  
 անդին բարբարական կըղըտըտէր ,  
 ու անձ ամմէն վըտանդներէն ինքը կը  
 խալըսէր : Այլ երկու հեղալ այն-  
 պէս յաջողէց անձ՝ որ սաւուղը դաւ-  
 թի ձեռքը ինկաւ , ու թէ որ անոր  
 զէնմը ուղերնէ՝ կրնար ընել , ինչպէս  
 իր հետի մարդիքնալ շատ վրա տըվին  
 անատենը՝ որ սաւուղը ստաննէ ու  
 խալըսի ձեռքէն . բայց դաւ թի ան-  
 մեղ ու երախտագէտ ըլլալով , քան  
 ընցի ըսաւ որ ես աստուծմէ օծած  
 մարդուն վրա ձեռք երկնցունեմ , անձ  
 թող ինքը խրատէ : Ան ատենները  
 սամուէլ մարգարէն ալ խիստ ծերա-  
 ցած վախճանեցաւ :

ԳՎ : Թ .

Նախադի ու աբեգեայի պարմոնիլ :

Նաւ թի երբոր փախստականուելը  
 ատենը հետը վեց հարուր մար-  
 դով կարմեղոս լեռը կը լլար , հոն մէկ  
 հարուստ մարդմը կարնաբաղ անու-  
 նով չար ու ազահմը . որ կնիկմը ու-  
 նէր արիգեա ըսած՝ խիստ իմաստուն  
 ու գեղեցիկ , ու ինքը հազարաւոր  
 օխարներու և այծերու տէր էր : Ան-  
 սոր հետ դաւ թի բարեկամուք կեր-  
 թար ,



Թար, ու գողերէն կը պահպանէր աւ  
 նոր բաները, և չէր Թողուր իր մար  
 դոցը որ նաբաղի զէնմը հասցունեն :  
 Աստի երբոր ոչխարներուն խուզե  
 լու օրերը եկանէ, ( որ ուրախուի  
 կէր ու խուժով սուլորուի էր որ կընէ  
 ին, ) դաւիթ տասը հոգի խրկեց նա  
 բաղի, որ երթան իրեն գիւն քաղա  
 քաւարու ք շատ բարեւ ընեն, ու ըսեն  
 որ՝ յիշէ ան իր ըրած պահպանուիլը,  
 ու ինչպէս որ յարմար տեսնէ՝ իրենք  
 ալ ան ուրախութէն չի զրկէ, իրենց  
 ալ բաժինմը հանէ : Աբաղ որ սա  
 բանըս լսեց, սրգողելով անոնց վրա  
 ըսաւ, ո՞վ է ատ դաւիթը՝ մէկ իր տի  
 րոջմէն փախստական ծառամը, որ  
 ես իմ մարդիքներուս բերնէն հացս  
 կտրեմ, ու իմ չի ճանչցած մարդիք  
 ներուն տամ : Այրբոր դարձան ան  
 նաբաղի տըված պիներ դաւիթի որ  
 ըսին, դաւիթը կրակ կտրեցաւ վրան,  
 ու շուտմը չորս հարուր հոգի թրեր  
 նին մէջ քերնին կասպած՝ հետը առաւ  
 ճամբա ելաւ, որ երթա նաբաղը իր  
 բոլոր բաներովը ջարդ բուրդ ընէ ձգէ  
 հոն տեղը : Մայց ան ատենը աս նա  
 բաղի ըրած կոպտուիլը աբիգեա կըն  
 կանը դժարն եկաւ չի հաւնեցաւ : ու  
 սիրտը վկայելով վախնալով թէ աս  
 բանիս վրա մէկ բոժմը կելլէ, ինք  
 նալ շուտմը իր երկնէն դաղտուկ գը  
 Լ 6 նաց

նաց երկու հարուր հաց ճարեց , երկու  
 աման դինի , հինգ եփած ոչխար ,  
 ու ուրիշ ալ ուտելիքներ . ասոնցմով  
 ելաւ գնաց դաւիթը դիմաւորեց : ու  
 խոնարհուի իմաստունն և անուշխօս  
 քերով դաւիթի սիրտը այնպէս ինջեց  
 ուցոր՝ անալ ընդունելով բերած ըն-  
 ծաները՝ ճամբէն ետ դարձաւ իր տե-  
 դը գնաց : Աբիգեանալ երբոր տուն  
 դարձաւ տեսաւ որ էրիկը գինովցած  
 ուրախուէ մէջէ , բան չտաւ իրեն  
 ան իրիկունը . ու առտրվանց ելաւ  
 տեղն՝ ի տեղը որ սլատմեց իրեն՝ թէ  
 զորայիսի փորձանքէ խալըսերեն , նա  
 քաղ վախէն ու սաստիկ սրտագողէն  
 յանկարծակիի եկաւ հիւճնոցաւ ,  
 ու տասը օրէն ետքը մեռաւ : Արբոր  
 լսեց դաւիթ որ նաքաղը մեռաւ ,  
 փառք տրվաւ նոյ որ արդարուք նա  
 քաղի դատաստանը կըտրեց , ու խոր-  
 կեց արբեան բերել տրվաւ իրեն  
 կին առաւ : Անկէ ետեւ նորէն սա-  
 լուղի ձեռքէն փախչելով դաւիթ՝ ի  
 րեն վեց հարուր մարդովը՝ ելաւ գնաց  
 այլազգիներուն երկիրը ան անքուս  
 ըսաց գեթացոց թագաւորին քովը ,  
 բայց աս անգամըս խիստ սիրելի ե-  
 դաւ դաւիթ անքուս թագաւորին ,  
 անանկ որ՝ սիկելակ քաղաքը դաւիթի  
 պարգև տրվաւ՝ որ իր մարդիքներովը  
 հոն կընստէր , ու անկէց կելար ա-  
 տեն

տեն ատեն ուրիշ այլազգիներու վրա՝  
որ անքուսի թշնամի էին, անոնցմէ  
գերի կրթունէր կողոպուտներ կառ-  
նէր, որ ասովալ գաւ թի անունը շատ  
կըմեծնար :

Գ. Լ. Ժ .

Սառուշի Տահը, ու գաւթի անոր վրա ըրած  
Բարի հարուցումը :

Սա ատեններըս այլազգիները մէկ  
եղան զօրքերնին մէյտեղ ժողովե-  
ցին . ու սաստիկ ու ժով ինչլացոց վրա  
պատերազմ բացին : Սառուշալ բո-  
լոր ինչլացիքը ժողովեց՝ դնաց գեղբվե-  
րսած լեռանը քովը անոնց դէմ բա-  
նակը դրաւ : բայց երբոր տեսաւ այ-  
լազգիներուն բանակը ահաւոր պատ-  
րաստուք՝ սիրտը վախ ինկաւ . ու ստի-  
նայ գիմեց հարցուց թէ ինչպէս պի-  
տոր ըլլա աս պատերազմիս վերջը ,  
կի՞ ո՞վ պիտի յաղթէ : Վճալ ամե-  
նեին իրեն պատասխան չի տրվաւ ,  
նչ տեսիլքով՝ նչ մարգարէի ձեռքով ,  
ու ստի ինքը ելաւ լաթերը փոխեց ու  
անանկ գաղտուկ դիշերանց մէկ վը-  
հուկ ( քն պիւ յիւ ձիւ ) կընկանմը քով  
դնաց , որ իրեն ցուցունէ սամուէլ  
մարգարէն, որ երկու տարիով առաջ  
մեռած էր : Աւ կնիկնալ քիւմը դ ժ վա-  
րուի ցուցունելէն ետքը՝ երեցուց ի-  
րեն

րեն սամուէլ մարգարէն, որ սրդողէ  
 լով ըսած սաւուղի, ինչո՞ւ իս աշխատ  
 ցուցիր տեղէս շարժեցիր, ինչ էկեր  
 կը հարցունես ինձի, որ անձ քեզ է  
 րեսէ, ձգերէ, ու քու թադաւորուիդ  
 քու ձեռքէդ քաշեր առեր՝ դաւթի  
 պիտոր տա, որովհետեւ դուն անհոն  
 դանդուի չըրիր. ու քեզ հետդ եղած  
 ինչ լացիներովքդ այլադդիներուն ձեռ  
 քը պիտի մասնէ, անանկ որ վաղը  
 դուն տղոցդ հետ պիտի մեռնիս: Աս  
 որ լեց սաւուղ՝ սարսափեցաւ ու հոն  
 գետինը ինկաւ, ետքը ելաւ գիշե  
 րանց դարձաւ իր բանակը գնաց:  
 Այրքոր ատենը եկաւ պատերազմը  
 սկսան, ինչ լացիքը յաղթը վեցան, ու  
 ջարդը վեցան, անոնց մէջը սաւուղի  
 իրեք տղաքնալ զարնը վեցան ինկան.  
 ու սաւուղալ տեսնելով՝ որ ինքնալ  
 նետով չարաչար զարնը վեցաւ, յու  
 սահատած ըսաւ իրեն կապարձակի  
 ին որ թուրը հանէ իրեն խօթէ մեռ  
 ցունէ, որ չըլլա թէ այլադդիներուն  
 ձեռքովը մեռած ըլլա: Ապարձա  
 կիրն որ ետքաչ վեցաւ չուղեց աս բանս  
 ընէլ: ան ատենը սաւուղ առաւ իր  
 թուրը՝ ու փորուն կռթնցունելով  
 վրան ինկաւ՝ անանկ մեռաւ: Ատքը  
 իր կապարձակինալ աս տեսնալով  
 չիդիմացաւ՝ ինքնալ իր թրին վրա ին  
 կաւ ինքը զինքը մեռուց: Ասանկ որ  
 է

եղաւ՝ այլազգիները մեծ խնտու մով  
 եկան սաւուղի դուխը վրայէն կտրե-  
 ցին, ու քաղքէ քաղաք իրենց կուռ-  
 քերուն տաճարները շնորհակալութեամբ  
 տանելով ստորոցունեւում բերին դա-  
 դոնի տաճարը դրին՝ իր ղէնքնալ հե-  
 տը մէյտեղ, ու նախատանքով՝ իրեն-  
 և իր տղոցը մարմինները բեթսան  
 քաղքին սարիսպէն վար կախեցին,  
 Ետքը գիշերանց գաղտուկ յարիս գա-  
 ղայադացոց կտրիճները եկան ան-  
 կէց գողցան ան մարմինները, յարիս  
 քաղաքը բերին թաղեցին. ու քաղա-  
 քացիներնալ եօթը օր մեռելի սուդ-  
 կատարեցին վրանին, որ իրենքալ բե-  
 նիամենի ցեղէն էին:

Իսայց դաւիթ աս բաներուս վրա ու-  
 րախանալու տեղը, որ իրեն թշնամին  
 մեռաւ կորսրվեցաւ, էվելըք սրտանց  
 ցաւ ցուցուց ու լացաւ, անանկ որ մէկ  
 ողորմուկ ողբմբնալ ըսաւ սաւուղի  
 ու յովնաթանի վրա, ու յաբիսցոց  
 երախտադիտուիը խիստ գովելով օ-  
 րհնեց: Մանաւանդ աս ետքի գործ-  
 քովըս ալ յայտնի ցուցուց իրեն բա-  
 րի սիրտը սաւուղի վրա. որ աս պա-  
 տերաղմէս երկու օր ետև՝ մէկ ամաղե-  
 կացիմը եկաւ բուրդու բապուճ սիկե-  
 լակ դաւ թի քովը՝ իբր թէ ինչացոց  
 բանակէն խալըսած կուգա: Եւաւ թի  
 հարցուց իրեն թէ ինչպիսի եղաւ ինչա-

ցոց բանը, ով ով ինկաւ, սաւուղ ու  
 յովնաթան ինչ եղան, անիկայալ սրա  
 տասխան տրվաւ թէ գեղըվէ լեռն  
 էի եսալ. ու հոն տեսա որ սաւուղ  
 իր նիզակին (յի մզրախին) վրա կըռ-  
 թընած զինքը մեռցունել կուղէր.  
 Երբ որ դարձաւ իս տեսաւնէ, կան-  
 ջեց աղաչեց որ վրան ելլամ կոխեմ որ  
 շուտով մեռնի, ես ալ այնպէս ըրի.  
 ու մեռնելէն ետքը՝ ահա՛ անոր գլխու  
 թագաւորական թագը ու թելի ա-  
 պարանջանները առի հրամանոցդ բե-  
 րի: Վս որ լսեց դաւիթ՝ սաստիկ տրտ-  
 մու թիւ վրայի լաթը պատուեց. ան  
 որ տեսան իր քովի մարդիքնալ՝ ա-  
 նանկ ըրին, ու ինչպէս իրիկուն սուղ-  
 կեցան լացին ու ծով պահեցին: Այտ-  
 քը նորէն ան մարդը առջևը կանջեց  
 դաւիթ ու ըսաց, հասա դուն ինչպէս  
 չի վախցար աստուծոյ՝ օծածին ձեռք  
 գըպցուցիր ու ըստաննեցիր: Աստի  
 հրամայեց իրէն մարդիքներէն մէ-  
 կուն՝ որ հոն իր առջևը ըստաննէ ան  
 ամաղեկացին, ու ըսաց՝ արունըդ  
 քու գլուխդ ըլլա, որ քու բերնովըդ  
 բռնըվեցար: Վս ինչ լացոց դէմ պա-  
 տերազմին մէջը անքուս գեթացոց  
 թագաւորնալ գտնըվէ լով, թէպէտ  
 առջի բերանը դաւիթալ իր մարդիք-  
 ներովը հետը առաւ, բայց անձային  
 կարգաւորութիւնը՝ ետքը թագաւորին

իշխանները ասոր դէմ կեցան չուղեցին որ մէջ մանէ : Աստի երբոր ասանկ դաւիթ ետ դառնալու եղաւ , գատեանէ որ՝ իր սիկեւակ քիչքը ամայ ղեկացիները մտեր կրակ տըվերեն , ու իրենց բոլոր կնիկները ու տղաքները ամմէն բաներովը կողոպտեր քաշեր տարերեն : Շատ նեղուի քաշեց գաւիթ աս բանիս համար՝ իր հետի եղած մարդիքներէն . ինչպիսի որ աստուծմէ հրաման առած՝ ան թշնամիներուն ետեւէն հասաւ , ու աղէկմը ջարդելով անոնք ու փախցունելով , ան գերի ինկածները բոլոր իրենց յափշտակած կողոպուտներովը էվել լոք ձեռվընէն առաւ՝ անանկ քաջութեա դարձուց :

Գ Լ : Ժ Ը .

Աստուդի որունը կըմարի , ու դաւիթ Ռաֆաւորունիը առաջ կէրէնա :

Աստուդի մեռնելէն ետքը՝ դաւիթ այ հրամանովը իր ամմէն մարդիքներովը ու կնիկներովը՝ այլադղիներուն երկրէն սիկեւակ քաղքէն ելաւ , ու իէլացոց երկիրը դարձաւ , յուդային ցեղին քերբոն ըսած քաղաքը եկաւ բնակեցաւ : Հոն պիտա առաջ եկան յուդային ցեղին մեծաւ մեծները զինքը թաղաւոր օժեցին ,

որ

որ այսպէս եօթը տարի ու կէս թա-  
 դաւորեց դաւ ի թ միայն յու գայի վը-  
 րա : Պիճան որ՝ արեւնէր խօսքիտէր  
 մարդ՝ իէլացոց զօրասկտը , սաւուղ  
 մեռնելէն ետե՛ւ անոր յեբուսթէ ը-  
 սած տղան առաւ իէլացոց տասնըմէկ  
 ցէղին վրա՝ հօրը տեղը թիւր դրաւ . ու  
 անանկ միշտ կրուի՛ր ու պատերազմը  
 պակաս չէր ըլլար անոնց՝ ու դաւթի  
 մարդիքներուն մէջը . թէպէտ դաւ-  
 թի բանը օրէօր այլաջողու իր առաջ  
 կերթար , ու անգիկններունը ետ կը  
 մընար : Այսքը արեւնէր մէկ պատ-  
 ճառովմը յեբուսթէի հետ որ արը-  
 վեցաւ , ալ ետեւէ էր որ անիկա թա-  
 դաւորուէն ձգէ ու բոլոր իէլացիքը  
 դաւթի դարձունէ : բայց աս բանըս  
 եփելու ատենը՝ յովար դաւ թի զօրա-  
 սկտը որ առաջուց արեւնէրի սխ պա-  
 հեր էր՝ իր ասայէլ ըսած եղբարքը  
 պաննելուն համար , արեւնէրը խա-  
 բեքայու ի կանչել տրվաւ , ու մէկէն  
 զարկաւ մեռուց : Վսոր վրայալ շատ  
 ցաւեցաւ՝ սուգ մտաւ դաւ ի թ , ու  
 մարմինը պատվով թաղել տրվաւ ,  
 և յովարա սաստիկ սրգողելով՝ ա-  
 նէժք կարդաց վրան :

Վսկէ ետեւ շատ ջանցաւ որ յեբուս-  
 թէն մէկ օրմը քնուն մէջը՝ իրեն եր-  
 կու զօրասկտները դաղտուկ գացին  
 մորթեցին , ու գլուխը առին դաւ-  
 թի



Թի ընծա բերին՝ իբր իրեն աչքի լուս  
 ընելով: Մայց դաւ ի թ իրենց շնոր  
 հակալ ըլլալուն տեղը. ինչպէս մէ  
 հալսաւ ուղի մեռնելուն աւետիս բե  
 րողին ըրաւ, ասոնց վրայալ սաստիկ  
 բարկացաւ, որ անմեղ մարդը անանկ  
 անողորմութի ըսպաններեն, ու շուտ  
 մը հրամայեց որ ան երկու հոգինալ  
 հոնտեղը բռնեն մեռցունեն, ու ձեռ  
 վընին ոտվընին կտրեն՝ տանին կա  
 խեն, ու ան բերած յերուսթէի գը  
 լուխը մեծարանքով գերեզմանը թա  
 ղեն: Մ. ս բաներով լոս դաւ ի թ ինչ  
 ցոց աւելի աչքը մտաւ. անոր հա  
 մարալ տեսնալով անոնք որ սաւու  
 ղի ազգէն ուրիշ թագաւորուէ յար  
 մար մարդ չիմընաց՝ մէկ մե մի իբոս  
 տէէն՝ ի զատ, որ յովնաթանի որդին  
 էր, ան ալ սլզտի տղամը՝ ու ոտվընե  
 րը կաղ անդամալուծ, (որ ետքը դա  
 ւ ի թ իր հօրը սիրուն ինքը քովը առա  
 իր սեղանէն կրկերցունէր.) ինչլացոց  
 տասնըմէկ ցեղերուն մեծամեծները  
 ելան քերրոն քաղաքը դաւ թի քով  
 եկան, ու հետը մէյտեղ ուխտ ու  
 դաշինք ընելով նորէն ինքը թագա  
 ւոր սժեցին բոլոր ինչլացոց տասվեր  
 կու ցեղին վրա:

Մաւ ի թ երբոր բոլոր ինչլացոց վրա  
 տերութիւր առաւ, ու անով աւելի ու  
 թովցաւ, ալ ուղեց որ երթաւ առաջ  
 Ե.

երուսաղէմը առնէ իր լեռանը վրայի  
ամրոցովը (քի խալէովը), որ սիոն կըս-  
վէր. որ անստե՛նը անհաւատ յեքու-  
սացոյց ձեռքն էր: Այրքոր ասոր վը-  
րա գնաց պաշարեց, [Թշնամիները  
ներսէն ծաղը ընելով՝ դաւ [Թի ասանկ  
պատասխան խաւրեցին [Թէ՛ գուն  
հոս չէ՛ս մտներ, պատճառն որ՝ կու-  
րերը ու կաղերը քեզի գէմէլեր՝ կը-  
սեն [Թէ՛ դաւիթը հոս պիտի չիմըա-  
նէ: (ինչպէս ոմանք կըմեկնեն՝ որ աս  
ըսել էր [Թէ, պարապ տեղը ետեւէ  
միյնար, ինչու որ՝ անանկ անառիկ  
է բերդերնիս՝ որ միան մեր կուրերը  
ու կաղերը գնենք անիկա պահելու  
նէ՛ մարդ չի կրնար անոր սւժ հաս-  
ցուներ առնէր): Ասոյց աս խօսքը դա-  
ւիթ անոնց վրա դարձուց, իր զօրա-  
պետներուն խոստացաւ որ՝ ո՛վ որ բեր-  
դին վրա վազէ առնէ՛ ու ան կուրերը  
ու կաղերը ջարդէ անկէց վերցունէ  
նէ՛ անիկա իմ զօրապետըս ըլլա: Աւ-  
յովաքը եղաւ՝ որ գնաց քաջու [Թք  
անոր վրան վազեց առաւ՝ անանկ ը-  
րաւ. ու ասով իր զօրապետու [Թիր  
նորէն հաստատուեցաւ: Աւաւի [Թաւ  
հոն իրեն նորէն քաղաք շինեց, ու ա-  
նոր մէջը իր փառաւոր [Թագաւորա-  
կան պալատը ազնիւ փայտերով, որ  
իրեն խրկեց քիրամ տիւրոսի [Թագա-

ւորը:

Ատ

Ատքը այլազգի փղշտացիները եւ-  
 բոր իմացան որ դաւիթ ասանկ օրէ-  
 օր կը մեծնա կուժ ունա կոր, վախնա  
 լով թէ օրմը յանկարծ վրանին ելլէ .  
 իրենք առանց իմացունելու՝ մէկէն  
 ինչացոց երկիրը թափեցան, ու բեթ-  
 ղէհէմի և եղէմի մէջ տեղը բանակ-  
 նին դրին : Կաւիթ ալ այն հարցուց՝  
 այնպէս ասոնց վրա որ եկաւ, ան ատե-  
 նը մէկ հեղմը տաքուն սաստիկ ծար-  
 վեցաւ դաւիթ, ու անանկ ինքիրեն  
 զուրուցեց՝ հայ թէ ըսաւ մէկը ինձի  
 բեթղէհէմի դրան քովի հորէն ջուրմը  
 բերէր որ խմէի ծարաւս անցնէր : Ա-  
 որ լսեցին իրեք հօգի իր քաջ զինվոր-  
 ներէն շուտմը վազեցին գացին ան  
 թշնամիներուն բանակը ճրդքեցին  
 մէջը մտան, ու մէկ ամանովմը ան  
 ջրէն քաշեցին առին դաւիթի բերին :  
 Կաւիթ որ աս բանըս տեսաւ՝ սիր-  
 ար լեցվեցաւ, բաւ լիցի ըսաւ՝ որ աս  
 մարդիքներուն արունը ես խմեմ, որ  
 իրենց կեանքը մեռնելու վտանգի  
 մէջ դրած՝ բերին ինձի . ու չիխըմեց՝  
 այն ջրովիրեց ան ջուրը : Ատե ան  
 թշնամիներուն վրա քաշելով յաղ-  
 թեց . ու անանկ չարաչար փախցուց,  
 որ իրենց ուրիշ բաներուն հետ կուռ-  
 բերնինալ հոն թողուցին գացին :

ԳՎ : ԺԲ .

Դաստի՛ն՝ այ տապանակը հըվերցունէ երու  
սաղէ՛մ հըրանի :

Մնկէ՛ց ետքը անձային օգնուքը ու  
ըիշ յաղթու թիներալ ըրաւ դա  
ւիթ այլադդ իներուն գէ՛մ . ու ամմէ՛ն  
կողմանէ, իր բանը յաջող երթալով,  
ուզեց որ ՚ի շնորհակալուի՛ն այ բարե  
բարուէցը՝ այ տապանակը կարիա  
թարիմէն վերցունէ՛, իր նոր շինած  
էղէ՛մ քաղաքը բերէ հանգչեցունէ :  
Աստի բոլոր ինչացոց մեծամեծները  
և ղևատացիները մէյտեղ ժողվեց . ա  
նանկ եօթանասուն հազար մարդով  
կարիաթարիմ գացին , ամինադաբի  
տնէն վերուցին մէկ նոր սայլիմը վրա  
դրին , ու ուրախուք առջևէն կերպ  
կերպ ծընծղաներ չալելով , և այ գո  
վասանքներ կարդալով . ու ինքը  
դաւիթալ անոնց հետը պար ցաթ  
կելով՝ անանկ ճամբա ելեր կըբե  
րէին : Արբոր հասան քելն ըսած  
մէկ տեղմը , սոյլին կուլերուն մէկը  
անկարգ քալելով ծռեց տապանակը,  
անատենը ողա ղևատացին ամինադա  
բի տղան՝ որ տապանակին քովէն  
կերթար, (ինչպէս կըսեն՝ վախնալով  
որ չըլլա թէ կործանի,) ձեռքը որ եր  
կընցուց բռնեց տապանակը , ան տե

զը յանկարծ անկի ինքը պատժեց անձ ,  
 որ գետինը փռվեցաւ մեռաւ : ( Վս  
 պատիժըս անձ իրեն տրվաւ կըսէն :  
 կամ որ՝ թէպէտ ողան զլետացի էր՝  
 բայց քահանայ չէր , որ անոնց միայն  
 կիյնար անմիջապէս ծառայել տա  
 պանակին . և կամ որ՝ օրինաց գէմ  
 ուսերնին վրա չէին վերցուցած տա  
 պանակը , հասլա սայլի վրա դրեր  
 էին : ) ( Վս որ համար ասոր վրա ամ  
 մէնքը զարհուրեցան , ու դաւիթալ  
 վախցաւ անկէ ետե տապանակը թա  
 դաւորական քաղաքը իր տունը տա  
 նէ լու . ուստի մտածեց որ ան տեղ  
 վանքը մտ՝ արեգ դար գեթացի ըսած  
 զլետացիին տունը տանին գնեն . ինչ  
 վան տեսնա ինչպէս կըլլա բանը :  
 Իրեք ամսէն ետե երբոր լեց խմա  
 ցաւ դաւիթ՝ որ տապանակին : պատ  
 ճառովը օրհնեց անձ արեգ դարի տու  
 նը տեղը՝ որ ամմէն բարիքներով ու  
 յաջողութիւն լեցվեցաւ , ինքնալ սիրտ  
 առաւ , ու նորէն ուղեց որ ալ անկէց  
 վերցունէ առնէ եղէմ տանի , և հոն  
 անոր համար շինած մէկ խորանխմբ  
 մէջ գնէ : ( Ստի առջինէն աւելի  
 պատրաստութիւն ու հանդիսաւորութիւն  
 կարդացմունքներով և ծնծղաներով  
 գնաց անկէց առաւ տապանակը , ու  
 անկէ ետե ալ զլետացիներուն և քա  
 հանաներուն ուսը դրած վերցուցած

անանկ աւելի մեծարանքով երուսա  
ղէմ բերաւ :

Ս տապանակը բերելու հանդիսու  
թէս ատենը դաւ իժաւ որ ուրախու  
թիք տապանակին առջևը կը չալէր ու  
պար բռնելով որ կըխաղար , ան որ  
վերէն սրտուհանէն տեսաւ մեղ  
քող սաւուղի աղջիկը՝ իրեն անշը  
նորք բանմը երեցաւ դաւ թի ըրա  
ծը . ուստի երբոր հանդէսը լըմըն  
ցաւ , դաւ իժ տուն դարձաւնէ՝ ծաղր  
ընելով առջևը ելաւ մեղքող ու ը  
սաց . ասորինչպէս փառաւ որ կերևար  
իւլացոց թագաւորը՝ որ անանկ սօթ  
տրված իր ծառաներուն ու աղախին  
ներուն առջևը , մէկ կաքաւ չի (կի՞  
չէնկի իմը) պէս կը խաղար ու կը ցաթ  
կէր : Ղաւ իժաւ իրեն սրտասխան  
տրվաւ , անանկ է ըսաւ՝ Ի՞նչ առջևը  
կըխաղամ , որ մէկդի ձգեց քու հա  
րըդ և եղբարներըդ , ու իս առաջ  
նորդ ընտրեց գրաւ իրեն իւլացոց ժո  
ղովրդոցը վրա . իրաւ է կըխաղամ ու  
պար կը ցաթ կեմ Ի՞նչ առջևը , որ ա  
սանկ քու առջևդ բանմը չեմ երե  
նար , ու աղախիններուս առջևը ինչ  
պէս ըսիրնէ՝ կը փառաւ որ վիմ : Վճ  
աւ (ինչպէս կը ցուցունէ՝ Իմ աշունչը՝)  
աս բանիս սրտիժ , մեղքողի ամե  
նեին զաւակ չի տրվաւ :

Ղաւ իժ երբոր տապանակը Եղէմ  
ժիւ  
բէ

ընդունա՛նք ու անոր համար շինած խո-  
րանին մէջը որ դրաւ , ետքը սկսաւ  
խղճմտանքը զարնել թէ՛ ինչպէս  
կըլլա որ ես լան ու արձակ փառաւոր  
պալատի մէջ ընակիմ , ու նոյ տապա-  
նակը ան պղտի խորանին մէջ անանկ  
կենա : անոր համար կանչեց խոր-  
հուրդ ըրաւ նաթան մարդարէին  
հետ , որ ձեռք զարնէ : նոյ մէկ իրեն  
արժանաւոր մեծ փառաւոր տաճար  
մը շինէ : Տայց նոյն նաթան մարդա-  
րէն նորէն իրեն խրկեց ըսաւ որ՝ դուն  
ինձի տաճար մի շիներ . հապա քեզի  
մէկ որդիմը պիտոր տամ որ քու մեռ-  
նելէտ ետե՛ ան տեղըդ նստի , ու սո-  
պատիւը անոր պիտի ընեմ , որ իմ  
տաճարըս ինքը շինէ :

ԳՎ : ԺԳ .

Գաւիտի ուրիշ յաղթուածիները , ու իր ձեռ-  
նիցը եւ ապաշխարութիւն :

Սկիւ ետքը ալ ուրիշ շատ յաղթու-  
ածիներ ըրաւ դաւիթ այլազգի  
թագորներուն վրա , ու անոնց ձեռ-  
քէն շատ տեղվանք առաւ . և իրենք  
որ ինչպոցմէ հարկ կառնէին , ա-  
նոնք տակը առաւ՝ իրեն հարկատու  
ըրաւ , ինչպէս եղովմայեցիքը , մո-  
վաբացիքը , ամննացիքը , ու ասորի-  
քը . և ասով է վելօք ոսկի՛ արծաթ՛

պղինճ դիզեց դաւիթ, որ ետքը տա-  
 ճարը շինելու ատենը պէտք եղաւ :  
 Վիչմը ժամանակ խաղաղանալէն  
 ետև՝ նորէն պատերազմ բացաւ դա-  
 ւիթ ամոնացոց վրա : Ասոր պատ-  
 ճառը ան եղաւ որ, նաստ ըսած ա-  
 նոնց թագաւորը դաւիթի հետ խիստ  
 բարեկամ ըլլալով, երբոր ինքը ին-  
 կաւ մեռաւ՝ դաւիթ անոր անոն ը-  
 սած աղին (որ հօրը ետևէն նըստաւ,)  
 երկու դեսպան խրկեց, որ քաղաքա-  
 վարութիւն իր կողմանէ երթան հօրը  
 մահունը ցաւակից ըլլան ու մխի-  
 թարեն : Վայց անոն իրեն իշխան  
 ներուն ծուռ խօսքը մտիկ ընելով,  
 (որ կըսէին թէ դաւիթ ատմարդի-  
 քը քու երկիրներըդ լրտեսուի ընե-  
 լու խաւրերէ,) բռնեց ան դեսպան-  
 ները խայտառակելու համար մորուք-  
 նին անըլել տրվաւ, վրայի լաթեր  
 նին մէջքէն ի վար կտրած, անանկ  
 նախատանքով վաւրնտեց քովէն . որ  
 անոնքալ եկան երիքով կեցան ինչ-  
 վան որ մորուքնին նորէն երկըննա :  
 Աս բանս որ լսեց դաւիթ՝ կրակ կըտ-  
 րեցաւ, ու ուզեց որ պատերազմով  
 անոնց ըրած նախատանքին հատու-  
 ցումը տա . ուստի յովաբ զօրապետը  
 իր քաջ զօրքերովը ան ամոնացոց  
 դէմ խրկեց, որ իրենքալ առաջուց  
 աս պատերազմիս վրա կռահ երթա-  
 լով



ըով՝ աստիկն անդիկն շատ զօրք իրենց  
 օգնու թի առերէին : Յովաբ՝ զօրքին  
 կէսը արեսաս զօրասլետին տրվաւ ,  
 ու կէսը ինքը առած՝ ասոնց դէմ ե-  
 լան , ու քաջութեւն թօթը հարուր պա-  
 տերազմական կառքեր , ու քառսուն  
 հազար ձիաւոր ան պատերազմին մէ-  
 ջը կոտրեցին , ու փախած ասրած-  
 ները իրենց տակը առին՝ դաւ թի հար-  
 կատու ըրին : Ատքը ամոնացիները  
 աս ջարդովս չի կշտացած՝ նորէն որ  
 ուղեցին պատերազմ ելլել . դաւ թի  
 մէյմալ խրկեց յովաբը , որ ելաւ ա-  
 դէկմը ջարդեց իրենք , ու առաջ քա-  
 լեց ինչլան իրենց ռաբաթ ըսած  
 թագաւորական քաղաքը որ հասաւ  
 պաշարեց՝ և առնելու մօտ էր , խրը  
 կեց կանչեց դաւ թի՝ որ գա իր ա-  
 նունովը առնլովի : Անանկ քաղաք-  
 նոր առին՝ չարաչար տանջանքով ըս-  
 պաննեցին մէջի մարդիքը , ու շատ  
 կողոպուտ վերցուցին անկէց , որ ա-  
 սոնց մէջը թագաւորական թագը  
 կմ ամսհոլանին խիստ փառաւոր  
 բան էր՝ տաղանդմը ոսկի ծանրութի  
 ունէր , (որ ինչպէս կրսեն՝ իբր տաս-  
 նը հինկ հօխա կուղար ,) օղնի՛ քարե-  
 ըով զարգարած , որ անկէ ետե անի-  
 կա դաւ թի ինքը առաւ բանեցուց :  
 Աս պատերազմիս ատենները դաւ թի  
 եղէմ իր տունը հանգիստ որ նստած

էր, մէկ օրմը իրիկվան դէմ թագաւ  
 ւորական պալատին երդիքին վրա  
 ժուռգալնինի՝ յանկարծ տեսաւ որ  
 տնդին մէկ աղվոր կնիկմը աւաղա-  
 նին քովը կը վլացղիկոր. դաւիթ վառ-  
 վեցաւ անոր ցանկու թքը, ու երբ որ  
 իմացաւ թէ՛ ան բերսաբէն է ուրիա  
 քետացիին կնիկը, որ իր զօրատէտնե-  
 րէն մէկնէր, աս կնիկը քովը կան-  
 չել տըվաւ: Աւ անոր հետ մեղքը  
 կատարելէն ետե՛ երբ որ իմացաւ որ  
 կնիկը յղի է, ան խայտառակու թիւր  
 ասանկ ուղեց որ դոցէ. շուտմը խաւ-  
 րեց յովաբի քովէն ուրիա քետացին  
 եղէմ իրեն բերել տըվաւ, իբր թէ  
 անկէց պիտոզմին որ պիտուիը տեղն՝ ի  
 տեղը իմանա: Ատքը երբ որ ուրիան  
 եկաւ դաւ թի առջևը ելաւ, դաւիթ  
 պատերազմին բաները իրեն հարցու-  
 նելէն ետե ըսաց՝ որ երթա իր տու-  
 նը վլացղի սրբըվի քիչմը հանդ չի:  
 Աայց ուրիան իր տունը չի գընաց,  
 հապա հոն դաւ թի պալատը ծառա-  
 ներուն քովը մնաց պառկեցաւ: Աս-  
 ւի թն որ աս իմացաւ, կանչեց նորէն  
 իրեն ըսաւ որ՝ ճամբէ եկած ես դը-  
 նա՛ տունդ հանդ չէ: ան ալ պինն տը-  
 վաւ թէ, տապանակը նայ ու բոլոր  
 ժղվուրդը անդին վրաններուն ներ-  
 քև են, ու յովաբ իմ տէրըս, ու քու  
 մէկալ ծառաներըդ բաց տեղը կե-  
 ցեր

ցերէն , ինչպէս կըլլա որ ես իմ տու  
նըս երթամ ուտեմ խմեմ ու կնկա  
նըս հետ սլառկիմ , քաւ լիցի որ ես  
ատ բանդ ընեմ : Անոր մէկալ օրնալ  
դաւիթ եղէմ բռնեց ուրիան , ու իր  
քովը աղէկմը հերցունելէն խմցու  
նելէն ետե , տեսաւ որ ան գիշերն  
ալ ճար չեղաւ ուրիան իր տունը սլա  
կելու չի գնաց , անատենը դաւիթ  
առջի գործած մեղքը մէկ ուրիշ ա  
ւելի մեծ մեղքովմը գոցել ուզեց :  
Ուստի ալ առտըվանց որ ելաւ ուրիան  
ճամբելու՝ յովաբի մէկ գաղտուկ  
թուղթմը գրեց՝ իրէն ձեռքը տըվաւ  
որ տանի , ու անոր մէջը կըհրամայ  
էր որ՝ ուրիան առնէ սլատերազմին  
վտանգաւոր կողմը դնէ՝ ու ինքը մի  
նաւոր թողուն որ զարնըվի մեռնի :  
Հովաբալ ըսածինպէս խեղճ ուրի  
ան անանկ անիրաւու թիւ սպաննելէն  
ետքը՝ երբոր դաւիթ խրկեց իմա  
ցուց . դաւիթ կեղծաւորուք՝ առջի  
բերանը սաստիկ սրդողել ցուցուց  
յովաբի անխոհեմութիւնը վրա՝ որ ա  
ռաջ վազեր իրէնք վտանգի մէջ ձը  
գերէն . բայց ետքը դարձուց բանը՝  
թիւ յովաբի ըսէք որ սիրար չի կտա  
րի , սլատերազմին բանը ասանկ է ,  
թուրը երբեմն աստիէն կըկտրէ , եր  
բեմն անդիէն . դուն մի յուսահա  
տիր ըսաց՝ նայէ որ քաղաքը առնես :

Բերսաբէնալ երբոր իմացաւ որ ուրիա իր երիկը մեռերէ՛ սաստիկ սուգ մտաւ . ու սուգը անցնելէն ետեւ դաւիթ ինքը քովը առաւ , ու իրեն կը նիկ ըրաւ :

Բայց աս բաներուս համար խիստ բարկացաւ Իմ դաւթի վրա , ու ստիան շնու թէ զաւակը աշխարք դա՛նլուն պէս՝ խրկեց նաթան մարգարէն որ գնաց դաւթի առջևը ելաւ , ու աս առակովս իրեն ըրած մեղքերը և անօրէնութիւնները երեսը տըվաւ : Մէկ քաղաքիմը մէջ ըսաւ՝ մէկ հարուստ մարդմը՝ ու մէկ աղքատմընալ կար , հարուստը շատ ոչխարներու ու կովերու տէր էր . իսկ ան աղքատը ալ ուրիշ բան չունէր՝ հասցա մինակ մէկ գառնուկմը՝ որ իր բոլոր ունեցածովը գնէրէր , ու անոր վրա դողալով կը պաշէր , անանկ որ՝ իր զաւակացը հետ մեծցուցեր էր , ու իր բերնի հացը և ջուրը կը կերցունէր , ու իր ծոցը կը պառկեցունէր : Այլաւ որ մէկ ճամբորդմը եկաւ ինջաւ ան հարուստին քովը . ու ասիկա ագահութիւնն անորն ցած ոչխարներուն ու կովերուն չի խըմըշէլով՝ գնաց քաշեց առաւ ան խեղճ աղքատին մէկ հատիկ գառնուկը , ու մորթեց իրեն եկած հիւրին (քի միսաֆիրին) առջևը անիկա կերակուր ըրաւ : Աս որ լսեց դաւիթ

անանկ սրդողեցաւ կրակ կտրեցաւ՝  
որ նաթան խօսքը չիլը մընցած՝ ինքը  
ցաթ կէց ըսաւ թէ, անձ վկա որ՝ մեռ-  
նելու արժանի է ատ բանը ընողը,  
ու եօթը հեղ պէտք է որ տուժէ վը  
ճարէ՛ ան գառնուկին տիրոջը : Ան-  
ատենը նաթանալ դարձաւ համար-  
ձակուք երեսը զարկաւ . դուն էս ը-  
սաւ ան մարդը՝ որ ատ բանը ըրիր .  
տոր անը ինչի քեզի կըսէ որ՝ էս քեզ  
թագաւոր օժեցի բոլոր ինչացոց վրա,  
ու քու տիրոջդ տեղը նստեցուցի . և  
քեզի այսչափ բարիքներ ընելէս ե-  
տե՛ դուն իմ օրէնքս կոխես, ուրիա  
քետացիին կնիկը յափշտակես . ու  
աս հերիք չէ՛ ինքնալ հաւատարիմ  
ու անմեղ մարդը անգթուք այլադ  
դիներուն ձեռքը մատնես ըսպան  
նես : Աւտի ըսաց՝ չի կարծես թէ ա-  
սոր պատիժը պիտի չիքաշես, հասլա  
ասանկ դիտնաս որ՝ թուրը յաւիտ-  
եան պիտի քու տընէդ չիպակսի . ու  
քու կընիկներտալ թողում որ ուրի-  
շը խայտառակէ : դուն աս մեղքերըս  
գաղտուկ ուղեցիր ընել, էս յայտնի  
սմմէնուն աչաց առջև պիտի ընեմ  
աս ըսածներըս : Աւաթիթ այ կողմա-  
նէ աս յանդիմանու թիները որ լսեց՝  
շուտմը ըրածին վրա դղջաց, ու խո-  
նարհուք մեղա՛ տն ըսաւ : Աթան-  
ալ իրեն պիտի տըվաւ թէ՛ անձ մեղա-

ցրդ թողունի կուտա՝ որ դուն չիմեռ  
 նիս , բայց մեղացրդ պատիժ՝ ան քու  
 շնուք ծնած սրդիդ մեռնի : ու ըսա  
 ծինպէս եղաւ , շատ չանցաւ հիվընտ  
 ցաւ մեռաւ տըղան : Ատքը այ օրհ  
 նու թքը դաւ թի հարազատ կնիկ ե  
 ղաւ բերսաբէն , և անկէց ծնաւ սո  
 ղոմննը , ու Թժ նաթան մարդարէին  
 ձեռքովը յեղեղի կանչել տըվաւ ա  
 նոր անունը , որ սիրելի այ ըսել է :  
 Այնպէտ ինչպէս ըսինք՝ աս ըրած  
 մեղքերուն կատարեալ թողու թիւր  
 առաւ դաւիթ՝ ճշմարիտ զղջումով  
 մեղա որ դուչեց ու ապաշխարեց , բայց  
 մեղացը պատիժները մնաց որ քաշէ ,  
 ինչպէս կըտեսնենք աս ետեւի գըլ  
 խուն մէջը :

ԳՎ : ԺՂ .

Լ՛. Բիսպոսի յեռնն դաւիթի քաշած նե  
 ղուիները՝ երեն մեղացը պատիժ :

Դաւիթ իր մաաքա ըսած կընի  
 կէն երկու զաւակ ունեցաւ , մէ  
 կը մանչ՝ որ արիսողում կըսվէր , ու  
 մէկալը աղջիկ՝ թամար ըսած : Լ՛. ս  
 արիսողումըս մէկ անլման գեղեցկու  
 թիմը ունէր , որ բոլոր իէլացոց մէ  
 ջը անօրպէս չիկար աղվոր՝ ու լեցուն  
 գեղեցիկ մազերով , ու իրեն թամար  
 քրոջնալ աղվորուիլը իրմէ վար չէր  
 մնար .

մնար . անոր համար երբոր ամոն դաւ-  
 թի անդրանիկ որդին աչք զարկաւ ա-  
 սոր ու սղծեց . արիսողոման պատճա-  
 ռովը սաստիկ ոխ պահեց ամոնի վրա ,  
 որ կուղէր անիկա ըսպաննել : Աստի-  
 իրեք տարիէն ետեւ եղէմէ դուրս իր  
 գեղը մէկ սեղանմը ըբաւ , ու իր բո-  
 լոր եղբարները հոն կանչեց՝ ամոնալ  
 հետերնին : Արբոր կերան խըմե-  
 ցին՝ ամոնիալ գլուխնոր տարցաւ , ա-  
 րիսողոմ իր ծառաներուն ձեռքովը  
 անտեղը ամոնը ըսպաննեց . ան սլատ-  
 ճառով ամմէնքը ցիրուցան եղան , ու  
 ինքը արիսողոմալ ելաւ գեսուր ըսած  
 այլաղգիներուն երկիրը փախաւ : Ա-  
 սոր վրա շատ սրտագող քաշեց դա-  
 ւիթ , ու սաստիկ բարկացերէր արիսո-  
 ղոմի վրա . բայց իրեք տարիէն ետեւ  
 յովաբ զօրապետը մէջ մտաւ , ու  
 վարպետ ճամբովմը դաւթէն հրա-  
 ման առաւ՝ որ երթաւ արիսողոմը  
 եղէմ գարձունէ բերէ . անանկ որ՝  
 գա իր տունը նստի՝ սլալատը չերթա  
 դաւ թի առջևը չերևա :

Արիսողոմ երկու ամիս անանկ կե-  
 նալէն ետեւ՝ ըբաւ չըբաւ նորէն յովա-  
 բի ձեռքովը գնաց հօրը հետ հաշտը-  
 վեցաւ . ու անկէ ետքը ալ կամաց կա-  
 մաց սկսաւ իր հօրը կենացը ու թա-  
 գաւորուէր որոգայթ լարել , որ ա-  
 նիկա վար ձգէ՝ ու ինքը տեղը նստի :

Աստի պինտ առաջ նայեցաւ որ ժողովրդոց սիրտը վաստըկի : ամմէն որ ձիով ծառաները առջևէն կանուխ կելլէր դուռը կերթար, ու ո՛վ որ կը հանդըպէր՝ որ կուգար իր վիճը դատաստանը թագաւորին առջևը տեսնելու կտրելու, աբխոզոմ ասոր դէմը կելլար՝ սիրով իրեն կը հարցունէր, ուսկից եկերեւի՞նչ բան ունիս : ու անոր դանկատը լըսելով սրտցաւ կըլլար իրեն, ախոս կըսէր որ թագաւորը մէկ մարդմը չէ գրեր որ աս բաներս հոգա . ո՛ւր էր որ ես ձեզի դատաւոր ըլլայի, ու ամմէնուն պիտանաւորուիր տեսնելի : ու թէ որ մէկը կուգար իրեն ծռելու բարեւելու, շուտմը կը բռնէր կը սպազնէր անիկա :

Նորս տարիիչափ այսպիսի կեղծաւորութիւն իսաբեբայութիւն ժողովուրդին սիրտը իրեն քաշելէն ետեւ, հորմէն սուտ հրաման ուզեց որ քեբրոն քաղաքը երթա իր ուխտը կատարէ, որ փախըստահանուէ ատենը՝ այ ըրելէր կըսէր : Այրբոր ասանկ աբխոզոմ երկու հարուր հոգի բանի եկող մարդիքներէն հետը առած քեբրոն գնաց, հան իր թագաւորուէ բանը դուրս հանեց . ու ան որ լսեցին՝ գրեթէ բոլոր ինչացոց ժողովրդը հետը մէկ եղան, դաւիթը թողուցին՝ ինքը թագաւոր ձանչցան : և ասոնց



Տետ աբխտոփէլ ըսած դաւ թի խորհրդ  
 դակիցը՝ որ շատգէտ մարդմընէր ,  
 ինքնալ դաւթէն բաժնըված՝ աբխ-  
 սողոմի քովը գնաց , որ իրեն խոր-  
 ուրդ տա ճամբացուցունէ . որ ալ է-  
 լեր դէս՝ի երուսաղէմ դաւթի վրա  
 կըքալէր :

Ըս բաներս որ լսեց իմացաւ դաւիթ՝  
 չորս դին ջուր կտրեցաւ , ու աղէկ  
 հասկընալով որ աս ւնյ բաննէ՝ ճար չի-  
 կա դէմ կենալու , զինքը ւնյ ձեռքը  
 յանձնելով իր քովը գըտնըված քիչ-  
 մը զօրքը հետը առած ինքնալ էղէմէ  
 ելաւ որ փախչի՝ երթա երեսը պահէ :  
 Աւ ան ատենը սագովկ քհնյապետը  
 բոլոր քհնաները մէյտեղ տասպանա-  
 կը վերուցին որ հետը առնեն երթան .  
 դաւիթ ետ դարձունել տըվաւ , թէ  
 որ ըսաւ՝ ւնձ իս արժանի ըրերէնէ՝  
 նորէն կըդառնամ իր փառքը կըտես-  
 նամ . չէնէ՝ ահա իր ձեռքն եմ , ինքը  
 ինչպէս կըկամինէ անանկ ընէ : Ատ-  
 քը սագովկայ ասըսպրեց որ՝ ինքը ու-  
 իր տղաքը հոն կենան , որ աբխտոլոմի  
 ընելիքները դաղտուկ իրեն խրկեն ի  
 մացունենն : և ասոնցմէ՝ի դատ՝ իր քու-  
 սի արաքացի ըսած բարեկամինալ ա-  
 սըսպրեց՝ որ աբխտոլոմի քովը երթա ,  
 ու հետը բարեկամուի ցուցունելով  
 աբխտոփէլին տըված խորուրդը փձա-  
 ցունէ , և ինչոր աբխտոլոմ պիտոր ը-  
 նէ

նէնէ՛ իմանա՛ , ու իրեն իմացունէ՛ :  
 Ղաւիթ բանը ասանկ կարգի դնե-  
 լէն ետե՛ լալով ու բոպիկ օտքով եր-  
 ֆոր ճամբա ելաւ կերթար , մէյմալան  
 դիէն իրեն դէմը ելաւ սեմէի ըսած  
 մէկ մարդմը՝ սաւուղի աղգականնե-  
 լէն , որ հազար նախատինք տալով  
 դաւթի , վրան քարեր կրնետէր , ու  
 քամահրելով կըսէր . ելի՛ր կորի՛ր ա-  
 ըրնտէր անօրէն մարդ , հի՛մա քու  
 գլուխդ բերաւ թափեց ան սաւուղի  
 տանը արունը . դուն անոր թագա-  
 ւորուի՛ր քաշեցիր առի՛ր , անոր հա-  
 մար անձալ քու ձեռքէդ առաւ՝ ու  
 աբխողոմ տղիդ տրվաւ . և ուրիշին  
 ըրածըդ քու գլուխըդ դարձուց : Վ՛ն  
 ատենը արեւսա զօրապետը յովաբի  
 եղբարը՝ ալ չիդ իմացաւ ասոր , դար-  
 ձաւ դաւթի ըսաւ , աս ի՞նչ է՝ որ մէկ  
 սատկած շունմը ասանկ կը հայհոյէ  
 իմ տէր թագաւորըս . ես՝ ալ չեմ  
 համբերեր , հի՛մա կերթամ ես անոր  
 վրայէն գլուխը կառնեմ : Ղաւիթ  
 ալ իրեն սրդողելով , ձեզի ի՞նչ ըսաւ՝  
 Թո՛ղ տրվէք որ ընէ , ան անանկ կու-  
 ղէ՛ որ անիկա դաւիթը անիծէ ու  
 հայհոյէ , ո՛վ կրնա իրեն դէմ բան ը-  
 սեր . ահա իմ որդիս որ իսմէ եղած  
 է՝ իմ ետեւէս ինկէր իս մեռցունել  
 կուզէ , հապա ի՞նչ պիտոր ընէ սաւու-  
 ղի աղգականը : Աստի մի գպչիք՝  
 Թո՛

Թողուցէ՛ք ըսաւ՝ որ իս ասանկ անի  
 ծէ . կարելի է որ անձ տեսնելով աս  
 իմ քաշած տառապանքս՝ ինձի անոր  
 տեղը բարիք հատուցանէ : Ասելի՛թ  
 տասանկ ըսելով խոնարհու թիւ իրեն  
 մարդիքներովը կը քաշէր կերթար .  
 ու սեմէինալ ետենին չէր զատվեր ան  
 նախատանքները կը զուրուցէր՝ ու վը  
 ըրանին հող ու քար կընէտէր . ինչվան  
 որ ալ ամմէնքը հողնած մէկ տեղմը  
 եկան ինկան՝ որ հանգչին :

Աս ատենները աբխոզումալ մէկալ  
 դիէն եկաւ եղէմ մտաւ տիրապետեց՝  
 ու պինտ առաջ աբխոփէլի խորհը  
 դովը՝ դաւթի հոն տունը թողուցած  
 կնիկները խայտառակեց : Ատքը ա  
 քխտոփէլ իրեն ըսաւ թէ՛ ատեն չի  
 կորսընցունենք , հապա տասվերկու  
 հաղար հողի ինձի հերիք է , որ շուտ  
 մը դաւթի ետեէն երթամ՝ քանի որ  
 անոր զօրքը հողնած է . ու ինքը միան  
 մեռցունեմ , հետի եղածները քու  
 կողմը դարձունեմ : Աս խորհուրդս  
 որ շատ գէշ էր դաւթի համար , ան  
 իր ողորմութիւնը այսպէս խափանեց՝ որ  
 աբխոզում աս բանըս քուսի արաքա  
 ցիինալ՝ ( որ դաւթի հետ ինչպէս ը  
 սինք՝ գաղտուկ սրտանց բարեկամ  
 էր , ) ու զեց որ հարցունէ : Առսինալ  
 ըսաց թէ՛ աս հեղուս աբխտոփէլ ա  
 ղէկ խորհուրդ չխորվաւ : ու ալ ինքը  
 ըս .

սկսաւ արխողոմի աչքը վախցունել  
 թէ՛ վտանգաւոր բան է ատանկ մէ-  
 կէն վրանին վաղելը, դուն գիտես  
 ըսաւ՝ որ քու հարըդ ու իր հետը ե-  
 դածները ինտոր ուժով չար մարդիք  
 են . հասկա խոհեմու թի պէտք է որ  
 առաջ զօրքըդ շատցունես՝ ու անանկ  
 վրանին ելլես, որ անոնք բոլորը մէ-  
 կէն կըլլես : Վուսի ասով ուզեց որ  
 արխողոմ ուշանա ետ մընա, որ դա-  
 լի թ փախչելու պատրաստուի տես-  
 նալու ատեն ունենա . անոր համար  
 շուտմը գաղտուկ խրկեց բանը դաւ-  
 թի անկաճը հասուց : Աս խորուը  
 դիս՝ ան կուրացուց, որ խիստ հաւ-  
 նեցաւ արխողոմ . բայց արխողոմի  
 ասով յայտնի տեսնալով արխողոմի  
 կործանումը՝ ինքը գլուխը քաշեց ե-  
 լաւ իր տունը գնաց, ու յուսահա-  
 տուէն զինքը կախեց խըխտեց :

ԳՎ : ԺԵ .

Արխողոմ կըսպաննըլի, ու դասի մը նորէն  
 եր Կեզը կըբարանա :

Արխողոմ որ ասանկ ուշացաւ՝ դա-  
 լի թ անդին ժմկ գտաւ որ յոր-  
 դանան գետը անցնի . ու նորէն զօրք  
 ժողվեց, անիկա իրեք բանակ բաժ-  
 նեց, ու վրանին զօրապետ դրաւ յո-  
 վաքը, արեստան, ու ե թ թի գե թ ա-  
 ցին .

ցին . և ինքնալ ուզեց որ հետերնին  
 մէյտեղ ելլէ , բայց զօրապետները չի  
 թողուցին : Ատքը աս զօրապետներն  
 որ ալ ճամբա դրաւ երթալու , սիր  
 տը չիդիմացաւ անոնց ասլըսսլրեց որ  
 աբխոզոմին խնայեն չիմեռցունեն :  
 Արքոր աբխոզոմալ իր զօրքովը ե  
 կաւ , ( որ վրանին զօրապետ դըրերէր  
 մէկ քաջ մարդմը ամեսայի ըսած , որ  
 անալ դաւ թի ազգական էր , ) ու յոր  
 դանան անցաւ սկսաւ դաւ թի զօրա  
 ցը հետ պատերազմիլ՝ մէկէն քսան  
 հազար իրմէն ջարդըվեցան : Ետքը  
 ցիրուցան եղած եփրեմի ըսած անտա  
 ռին մէջնոր ինկան՝ հոնալ թրով մե  
 ռածներէն աւելի մարդ փճացաւ կո  
 րաւ : Աբխոզոմալ իր ջորին հե  
 ծած ան անտառին մէջէն փախչիլնի  
 նի՝ դլխուն մազերը մէկ կաղնիիմը  
 ծառին ճեղերուն պըլըվեցաւ , ու  
 ջորին տակէն ելաւ՝ ինքը անանկ կախ  
 վեցաւ մնաց : Աս բանըս մէկ զինվոր  
 մը տեսաւ՝ շուտմը եկաւ յովաբայ  
 պատմեց , ան ալ իրեն ըսաւ թէ ինչու  
 չսպաննեցիր , որ ես քեզի հիմա յիս  
 սուն սիկղ արծաթ ու մէկ թուրմը  
 կուտայի : Օ ինվորնալ իրեն պին  
 տըվաւ թէ՛ հազար ալ տայիրնէ ես  
 իմ թագաւորիս տղին վրա իմ ձեռ  
 քըս չի երկնցուներ , որ մեր առջևը  
 ձեզի ասլըսսլրեց որ աբխոզոմի խը  
 նայ .

նայէք : Մեն ատենը յովաբալ ըսաւ ,  
 հիմա կըտեսնես թէ ես ինչպէս կը  
 մեռցունեմ . ու գնաց իրեքնետ զար  
 կաւ աբխոզումի . ու անովալ որ չի  
 մեռաւ՝ տասը հոգի յովաբի մարդի  
 քը վրան հասան , հոն տեղը զարնե  
 լով մեռցուցին , ու մէկ խորունկ փո  
 սիմը մէջ ձգեցին անոր մարմինը :  
 Ատքը յովաբ փող չալելով դադրե  
 ցունել տրվաւ պատերազմը . ու եր  
 կու հոգի մէկմէկու ետեւէ՝ մէկը ա  
 քիմասս ըսած , մէկալը քուսի՝ վա  
 ղեցին եկան որ դաւ թի աւետիս տան :  
 'Վաւիթ երբոր հարցուց՝ անոնցմէ  
 իմացաւ որ աբխոզումը մեռած է ,  
 վրան սաստիկ տրտմեցաւ . ու մինա  
 ւոր տեղմը քաշված , սկսաւ լալ ող  
 քալ ու ըսել , որդեանկ իմ աբխոզում ,  
 աբխոզում որդեանկ իմ , երանի՛ թէ  
 ես քու տեղըդ մեռած ըլլայի՝ աբխ  
 սոզում որդեանկ իմ : Ատե յովաբը որ  
 զօրքերովը դարձաւ , ու իմացաւ որ  
 դաւիթ աբխոզումի վրա ասանկ լաց  
 ու ողբ կընէկոր , քովը գնաց՝ ու իրեն  
 ծանրը խօսքեր զուրուցելով , առաւ  
 ինքը դուռը բերաւ , որ ան պատե  
 րազմէն յաղթող դարձած զօրքը սի  
 րով ընդունի : Վայց ասով և առջի  
 ըրած յանդգնական գործքերովը՝ յո  
 վաբ անանկ դաւ թի աչքէն ինկաւ  
 որ , ան ամեսայի ըսած աբխոզումի զօ  
 րա .

րասպետին խրկեց դաւ ի թ խօսք տը  
 վաւ թէ՛ քեզ յովաբի տեղը ինձ ի զօ  
 րասպետ կընեմ : Աւ աս բանըս յովա  
 բաւ լսելով մէկ օրմը կեղծաւորութ  
 ամեօսային բարեւէնիննի՛ դանաւը փո  
 րը խօթեց մեռցուց , ինչպէս ատե  
 նով աբե՛նների սաւուղի զօրասպետին  
 աւ ըրերէր : Արբոր բանը ասանկ  
 դարձաւ , ու քոչոր իէլացոց ցեղերն  
 աւ դաւ թի առջևը դացին՝ որ զինքը  
 մեծարանքով առնեն յորդանան գե  
 տէն աստիս անցունեն՝ նորէն Եղէ՛մ  
 իր աթոռը բերեն նստեցունեն , ան  
 ատենը սեմէինաւ հազար հողի բե  
 նիամենի ցեղէն հետը առած՝ ինք  
 նաւ արտորաց դաւ թի առջևը ելաւ  
 իրեն պատիւ ընելու , ու դնաց ոտքը  
 ինկաւ՝ մեղա՛ ըսաւ ան իրեն ըրածնե  
 րուն համար : Ան որ տեսաւ աբես  
 սա զօրասպետը , ինչ ըսաւ՝ պիտոր սե  
 մէին չի մեռնի՛ մի , որ նոյ օծեալը հայ  
 հոյեց : Աւաւ թալ անիկա չեխելով ,  
 դարձաւ երգում ըրաւ սեմէինն թէ՛  
 մի՛ վախնար քեզ չեմ մեռցուներ : Աւ  
 տե մեմի իբոս թէ՛ յովաթանի որ  
 դինաւ խոնարութի՛ւ եկաւ դաւ թէն  
 թողուի խնդրեց , ու պատճառը ը  
 սաւ թէ՛ ինչու ինքնաւ դաւ թի փախ  
 չելու ատենը հետը չէ՛ գտնուիկր . ու  
 բանը հասկըցուց որ՝ իր սիրա ըսած  
 ծառան՝ սուտ դացեր իրմէ՛ դաւ թի  
ան

անցեր է, ու անով բոլոր սաւուղի ժա-  
ռանգու թիւ իր վրա դարձուցեր է :  
Դաւիթալ աս բանըս իմանալով՝ ի-  
րեն հրամայեց որ՝ ան ժառանգու  
թիւ մէջերնին սիբայի հետ կիսվա-  
կէս բաժնեն :

Դաւիթ որ փառաւորապէս եկաւ  
նորէն եէմնստաւ , ան ատենը մէկ  
մարդմը բենիամեանի ցեղէն սաբէէ  
անուհով՝ գլուխ քաշեց դաւթի դէմ,  
ու յուգայէ՝ ի շատ մէկալ իէլացոց ցե-  
ղերէնալ շատ մարդիք իրեն ետեէն  
գացին : Յովաբ ու աբեսսան իրենց  
զօրքերովը անոր ետեէն որ ինկան ,  
անիկա դնացաբէլ ըսած քիչքը մտաւ  
գոցվեցաւ . ասոնքալ վրան գացին ու  
քաղաքը պաշարելով՝ պարիսպներնոր  
սկսան կործանել , վերէն պարիսպէն  
մէկ խելացի կնիկմը կանչեց յովաբը ,  
ու ինքը մէջ մտաւ իր քաղքի մարդիք-  
ներուն խօսք անցուց՝ որ սաբէի գլու-  
խը կտրեցին վերէն պարիսպէն վար  
յովաբայ առջևը ձգեցին , որ անանկ  
պատերազմը վերջացաւ : Վսկէ ետե  
իրէք տարիի չափ մէկ սովմը ինկաւ  
իւլացոց երկիրը դաւիթալ հարցուց  
այ , ու իմացաւ որ սաւուղի պատճա-  
ռովնէ , որ դաբաւոնացիները՝ (իւլա-  
ցոց յեսուայ ատենի ըրած երդումին  
դէմ , ) սաւուղը ջարդերէր . ուստի  
դաբաւոնացիները կանչեց դաւիթ



ու հարցուց թէ ի՞նչ հատուցում կու-  
զեն որ սաւուղի ընեն : Դ՛նոնքալ եզ  
թը հոգի ուղեցին սաւուղի մնացած  
աղաքներէն կի՛թ թոռներէն , որ կա-  
խեն մեռցունեն : Դաւիթալ առաւ  
սաւուղէ երկու մնացած խորթ տղա-  
քը , ու մերովբ աղջ ըկանը հինգ տղա-  
քը՝ ձեռվընին տըվաւ , որ անանկ  
մեռցունելով , աս սովըս դագրեցաւ :

Գ. Լ : Ժ. Գ .

Ի՛նչպիսի՜ Տակասրածաճով էլ պատժւէն :

Իսորայէլացոց վրա անձ բարկանալով  
իրենց մեղացը համար , դաւթի  
թոյլտըվաւ որ հպարտութիւն անոնց  
ամմէնուն համրանքը գիտնալ ուղէ ,  
երբոր ալ ամմէն դիէն հանգըստա-  
ցած բոլոր ինչպացոց վրա խտղաղութե-  
նստէր կը տիրապետէր : ուստի յովաբ  
զօրապետին հրամայեց՝ որ երթա՛ծ ա-  
րէ՛ ի՛ծար սըտըտի , ու բոլոր ժողովոց  
համրանքը իրեն բերէ : Ե՛ւ յովաբ աս  
բանիս դէմ կեցաւ , տէր իմ ըսաւ ի՞նչ  
սէտք է համրել , անձ տա որ եղածին  
վրայ հարուր անչափալ էլ վէլնանս : Դայց  
այտու անիւ՛ դաւիթ մտիկ չըբաւ , ու  
ասոր վրա սաստիկ վառված՝ խօսքը որ  
ուղեց քալեցունել . ան ատենը յովա-  
բալ ելաւ ինը ամսէն էլ վէլ սըտըտե-  
ցաւ՝ ու ժողովոց համրանքը բերաւ ,



վրա, որ օղը կեցած սուրը ձեռքը աս  
 պատիժս կուտար ժողովրդոցը, խո-  
 նարհուք աղաչելով ըսաւ, տէր Ես-  
 հայի՛նքս մեզանչեցի, աս բոլոր չարիք-  
 ներուս պատճառ Էս եմ, ատ ոչխար-  
 ները ինչ մեղք ունին. ուստի ատոնք  
 թող տուր՝ ու իս, և իմ տունըս պատ-  
 ժէ: Ան ժմիլը անձալ դու թ շարժե-  
 ցաւ՝ դադրեցուց պատիժը, և նորէն  
 գագ մարգարէին ձեռքովը դաւ թի  
 հրամայեց որ չուշանոս՝ ան կալին մէ-  
 ջը շուտմը սեղան շինէ՝ ու այ զոհ մա-  
 տուցանէ, որ անով անձ հաշտեցունէ:  
 Կաւ թալ վաղեց դնաց, ու ըստակ  
 տրվաւ ան կալին տեղը՝ իրեն եզներո-  
 վը և սայլերովը ոռնայէն գնեց. հոն  
 սեղան շինեց՝ ու եզները այ որջա-  
 կէզ բրաւ. որ ասով ան մահուան պա-  
 տիժը դադրեցուց անձ: Աւ ան տե-  
 զըս կըսեն թէ ան է, որ ետքը սողո-  
 մոնի տաճարը շինվեցաւ:

ԳՎ: ԺԿ:

Դատիկ իր երեւէն սողոմոնը Թագաւոր կը  
 դընէ՝ ու ինչը կը վախճանի:

Արքոր դաւ թալ ծերացաւ, ադ ո-  
 նիա՝ որ անոր մնացած աղոցը մէ-  
 ջը մեծն էր, հարը չի մեռած ուզեց  
 որ թագաւորուէ պտրստուի տեսնէ՝  
 որ հօրը ետեւէն ինքը նստի. ու յովաբ  
 զո-

զորապէ տնալարիաթարքէնյալե տին  
 հետ իրեն դիէն աս բանըս կընայէին  
 որ առաջ տանին , ( չիդիտնալու զար  
 նելով դաւթի ըսածք՝ որ ատենով  
 խօսք տրվէրէր որ՝ սողումնը բերսա  
 բէի որդին իր ետեւէն (Թճւր նստի : )  
 Ա՛յկ որմը ադոնիան աս իրեն բա  
 րեկամներուն , և ուրիշ իշխաններուն՝  
 Էդէմէ դուրս մէկ տեղմը մեծ սեղան  
 որ ըրաւ , ան ատենը նաթան մար  
 դարէն ալ գնաց աս բանը հասկըցուց  
 բերսաբէին , ու ապրսպրեց որ երթա  
 դաւթի միտքը ձգէ իր սողումն տղին  
 վրա ըրած խոստմունքը . դուն դնա՛  
 ըսաւ , որ ետքը եսալ վրա կըհաս  
 նիմ՝ ու ըսածներդ կըհաստատեմ :  
 Վերսաբէնալ դնաց դաւթի առջևը  
 երկրպագութի ըրաւ ու ըսաց . տէ՛ր  
 հրամանքդ ինձի երդում ընելով  
 խօսքտրվիր որ՝ սողումն տղա ետեւէդ  
 թագաւոր նստեցունես , ու հիմա ա  
 դոնիան առանց քու դիտնալուդ թա  
 դաւորուի կընէ . բոլոր իէլայիները  
 քու բերանդ կընային՝ որ չիմեռած  
 իրենց թագաւորը ցուցունես . չէնէ  
 ըսաւ՝ ետեւէդ ադոնիան կելէ ու իս  
 ալ սողումնի հետ թրէ կանցունէ :  
 Վ՛ս որ բերսաբէն կըզուրուցէր՝ անժա  
 մանտկը նաթան մարդարէն ալ վրա  
 եկաւ՝ ու ինքնալ դաւթի հարցունե  
 լով սկսաւ ըսել . տէ՛ր թագաւոր հրա  
 ման

մամբըրդ ըսերես որ ազոնիան ետեկդ  
 Թագաւոր նստի, ինչու որ՝ ասոր դա-  
 ցեր մէկ փառաւոր սեղանմը ըրեր է,  
 ու բոլոր Թագաւորի տղաքը, և զօ-  
 րապետները հոն կանչեր է, արիա-  
 Թար քհնանալ մէյտեղ. ու ամմէնքը  
 կերած խմած՝ կեցցէ արտա ադոնիա կը-  
 սեն. միան իո ու սագովկ քհնան, ու  
 բանեա որդի յովիդեա զօրապետը,  
 ու սողոմոն տղադ Թողուց չի կանչեց:  
 Ան ատենը դաւիթ բերսաբէն քովը  
 կանչեց՝ ու նորէն իրեն երգվոննալով  
 ըսաւ Թէ՛ իմ ետեկս սողոմոն որդիս  
 սխտի նստի: ու շուտմը հրամայեց որ  
 սագովկ քահանան, նաթան մարգա-  
 րէն, ու բանեան՝ առնեն սողոմոնը  
 իր Թագաւորական ջորին հեծցու-  
 նեն, ու գեհոն ըսած տեղը տանին,  
 հոն Թագաւոր օժեն բոլոր իկլացոց  
 վրա: Այրբոր անանկ ըրին, ու փող  
 չալելով չորս գին իմացվեցաւ որ սո-  
 ղոմոն Թագաւոր օժվեր է, ու բոլոր  
 Ժողովուրդը պար բռնելով ուրախու-  
 Թք՝ կեցցէ արտայ սողոմոն կրկանչէին,  
 անգին ազոնիայի հետը եղած բարե-  
 կամները ամմէնքը սարսափած վա-  
 խերնուեն ելան փախան ցիրուցան ե-  
 ղան. ու ազոնիանալ իր յանցանքը  
 գիտնալով՝ ինքնալ վազեց այ խորանը  
 ապաւինեցաւ, ու անկէց դուրս չե-  
 լաւ՝ ինչվան որ սողոմոն իրեն խօսք չի-

տրվաւ՝ ու չըսաւ՝ թէ որ հանդարտ  
կէնասա՝ քեզ չեմ մեռցունէր, ու անանկ  
ելաւ իր տունը դնաց :

Վաւիթ օրէ օր ալ մեռնելու որ մօ-  
տեցաւ, կանչեց սողումներ՝ իրեն բա-  
րի խրատներ տրվաւ որ այս պատուի  
բանքները աղէկ պահէ, ու մովսէսի  
օրինաց ըսածինպէս արդար դատաս-  
տան ընէ, որ անալ իր թագաւորու-  
թիւն օրհնէ : Ետքը ասալ ապրսպրեց  
որ յիշէ յովարի ըրած անիրաւ մար-  
դասպանութիւնները, ու արդարու թք ի-  
րեն գիտցածինպէս անոնց հատու-  
ցումը ընէ՝ զինքը մեռցունէ. ասանկ  
ալ սեմէ ին բանը հողա, անոր ըրած-  
ները իրեն չի թողու՝ անալ մեռցու-  
նէ : Վսկէ՝ ի դատ՝ այ տաճար շինելու  
վրա իրեն ապրսպրեց յորդորեց, ամ-  
մէն բաներուն օրինակնալ ցուցուց  
տրվաւ թէ՛ ինչպէս պիտի ընէ, նաև  
այսպիսի մեծ գործքիս համար իր ա-  
ռաջուց պատրաստած ոսկին արծա-  
թը և ուրիշ նիւթերը սողումնի ձեռ-  
քը յանձնելով ու սիրտ տալով և օրհ-  
նելով ինքը, բարի ծերու թք եօթա-  
նասուն տարվան վախճանեցաւ, բո-  
լորը քառսուն տարի թագաւորու թի  
ընելէն ետև. ու իր Էղէմ քաղաքը  
թաղվեցաւ :

Վաւիթ՝ մանկուէն ըսկսած անչափ  
սիրելի եղաւ այ որ՝ իրեն թքւորուէ՛  
թք

ի զատ մարգարէական շնորհքալ տը  
վաւ ամ, որով շարագրեց ան սքանչ  
լի սաղմոսները յօրհնութիւն և ի փա  
ռաբանութիւնս . որ միշտ և հանասպազ  
աղօթագիրք եղաւ ամ ամասպաշտ  
ժողովրդոց : Աւատնք հերիք չէ,  
նաև երգումով իրեն խոստացաւ ամ  
որ մե սխային մարմնաւ որ ծնունդ ը իր  
աղգէն ըլլա, ինչպէս որ կը ցուցունեն  
աւետարանիչները :

## ԳՎ : ԺԲ .

Սողոմոնի Ռաբա-որու-թիւր :

Սողոմոն տասվերկու տարվան էր եր  
բոր թագաւ որ օժվեցաւ . ու քիչ  
մը ատեն հօրը հետ կենալէն ետև  
երբոր սկսաւ ինքնագլուխ թագա  
ւորութիւնել, անատենը ազոնիա իր  
մեծ եղբարը նորէն թագաւորութե  
կտակէ իյնալով, դնաց բերօաքէի ա  
ղաչեց որ՝ երթա սողոմոնի իր տղին  
խօսք անցունէ՝ որ աբիսակ սոմնացի  
ըսած կոյս աղջիկը, ( որ դաւիթ ծե  
րուն ատենը քովը աւերէր, ) իրեն  
կնիկ առնէ : Այրբոր բելասաքէն միամը  
տուք աս բանը բացաւ սողոմոնի՝ ու  
աբիսակը ուզելու եղաւ, սողոմոն  
ազոնիայի վրա՝ տասաիկ բարկանա  
լով իրեն պին տրվաւ թէ՛ ինչո՞ւ ա  
բիսակ սոմնացին կըսես, հապա իմ  
ժգ. N [Ժա

Թիքրուին ըսէ՛ որ ադոնիայի տամ, որ  
ինքը իամէ մեծալ է, ու աբիաթար  
ու յովաբ զօրապետը խօսքիտէր մար-  
դիք՝ իրեն գինեն։ Աստի շուտմը  
վրան վճիռը կտրեց սողոմոն, ու բա-  
նեա որդի յովիգեայ ըսած զօրապե-  
տը խրկեց որ երթա ադոնիան ըս-  
պաննէ։ ու աբիաթարնալ քհնյա-  
պետութի ձգեց՝ իր անաթովթ գե-  
ղը աքսորեց, անոր տեղը սադովկը  
դրաւ։ Յովաբ աս բաներս որ լեց,  
ինքնալ իր վրա վախնալով՝ վազեց ան  
խորանը մտաւ ապաւինեցաւ՝ որ չի  
բռնեն մեռցունեն, սողոմոն անոր-  
ալ բանեա որդի յովիգեան խրկեց ը-  
սաւ որ անկէց ելլէ։ անալ որ չուզեց  
ելլել, անատենը սողոմոն բանեային  
հրամայեց որ երթա հոն տեղը յու-  
վաբը սպաննէ։ ու անոր տեղը բա-  
նեան զօրապետ ըրաւ բոլոր ինչլացոց  
վրա։ Ատքը սեմէինալ առջևը կան-  
չեց սողոմոն, ու իրեն վրա աս սլարտ-  
քըս դրաւ որ՝ գա էղէմ բնակի, հա-  
պա թէ անկէց դուրս ելլելու ըլլա-  
նէ՝ ըսպաննըվի։ Արեք տարիի չափ  
անանկ կեցաւ սեմէին. ետև հեղմը  
սրատահեցաւ որ իր ծառաները իս-  
րայէլացոց երկրէն փախան գէթ գա-  
ցին. սեմէիալ անոնց ետևէն որ գը-  
նաց՝ բռնեց էղէմ բերաւ, անատե-  
նը սողոմոն քովը կանչեց ինքը ու ի-  
րեն



բենան հնազանդութիւնը և առջիւրս  
 անօրէնութիւնները երեսը տալով՝ հրա-  
 մայեց բանեային որ անալ սպաննէ :  
 Սողոմոնի թիւորութիւնը երբոր հաս-  
 տատեցաւ, պիտա առաջ իշխաննե-  
 ըն ու բազմութի ժողովրդոց հետը ա-  
 ռած ելաւ գաբաւոն ըսած տեղը գը-  
 նաց, (որ հոն էր մովսէսի շինած վը-  
 կայուն խորանը.) որ այն խաւ ընէ :  
 ու ան տեղը հազար ողջակէզ մա-  
 տուց այ : Վճալ ան գիշերը քնուն  
 մէջը սողոմոնի երեցաւ՝ ու ըսաց թէ  
 ինչ որ կուզեսնէ խնդրէ իսմէ : սո-  
 ղոմոնալ շնորհակալ ըլլալով այ իր  
 հորը և իր վրա ցրցուցած բարիքնե-  
 ըուն համար, որ անանկ պըղտըկուց  
 զինքը թիւր ընտրեց դրաւ անհա-  
 մար իէլացոց ժողովրդոց վրա . ու իշ-  
 ըսաւ՝ բան չեմ ուզեր, միան ինձի  
 իմաստութի տաս որ՝ ասչափ ժողո-  
 վուրդըս կառավարեմ, ու արդարուք  
 անոնց դատաստանը տեսնեմ : Վս սո-  
 ղոմոնի ըրած խնդիրքը անանկ հա-  
 նեցաւ անձ, որ ըսաւ իրեն . որովհե-  
 տե դուն ոչ երկան կեանք, ոչ հա-  
 ըրստութի, ոչ թշնամիներուդ վրա  
 յաղթութի, հապա միան իմաստութի  
 իսմէ խնդրեցիր . անոր համար քեզի  
 անչափ իմաստութի կուտամ, որ քեզ-  
 մէ առաջ այնպիսի իմաստուն մարդ  
 աշխարք եկած չըլլա, ու քեզմէ և

տեալ պիտի չիգա և ասկէ՛ր զատ՝  
 ան որ դուն իսմէ չի խնդրեցիր՝ քեզի  
 այնպիսի հարբստուի տամ որ՝ քու օ-  
 րերուդ թագաւորներուն մէջը քե-  
 ղիսկէս հարուստ մարդ չի գտնուիւ-  
 ու թէ՛ որ իմ պատուի րանքներըս ա-  
 ղէկ պահես, ու քու հօրըդ դաւթի  
 շիտակ ճամբէն դուրս չելլես՝ նէ՛ քե-  
 ղի երկան կեանքալ տեսցունել կու-  
 տամ ։ Առտուն որ ելաւ եղէ՛մ քիչքը  
 դարձաւ սողոման, հոնալ նորէն այ  
 ողջակէզ ընելէն ետե, շուտմը յայտ-  
 նըվեցաւ իր իմաստուիը պինտ առջի  
 դատաստանովը՝ որ ասանկ եղաւ ։  
 Արկու աշխարհի կնիկ՝ սողոմանի առ-  
 ջըը դատաստան ելան, ասոնցմէ մէ-  
 կը կըսէր թէ՛ էս ու աս կնիկը մէկ  
 տուն կըկենայինք՝ ու մեզմէ՛ր զատ  
 ուրիշ մարդ չիկար ան տանը մէջը .  
 էս տղա բերի, ու իրեք օրէն ետե աս  
 կնիկնալ իր տղան բերաւ ։ Աղաւ որ՝  
 մէկ գիշերմը ասիկա իր տղին վրա  
 ինկած պառկելնինի՛ տղան մեռուցե-  
 լէ, ու իմ քնուս մէջը եկեր գաղտուկ  
 իմ ողջ տղաս գրկէս առեր տարեր՝  
 իր հետ պառկեցուցեր է . ու իր մե-  
 ռած տղան իմ քովըս գրեր է ։ առտը  
 վան դէ՛մ ելլեմ ըսի կաթտամ տղիս,  
 տեսնամ տղան որ մեռած է . ետքը  
 աղէկմը որ լուսցաւ, նայիմ որ ան  
 իմ բերած տղաս չէ ։ Ահկալ կնիկ  
 նալ

նալ անոր դէմը ելեր կըսէր թէ՛ ա  
 տանկ չէ, հասոյա մեռածը քո՛ւ տղատ  
 է, ու ողջը իմս է: ու ասանկ մէյմէ  
 կու դէմ կեցեր կռիւ՛ կրնէին: Սո  
 ղոման ասոր ուրիշ ճար չի գտնելով,  
 մայրական սիրովը ուղեց իմանալ աս  
 բանիս ճշմարտութիւնը. ուստի հրա  
 մայեց որ թուրմը բերեն՝ ան ողջ տը  
 դան երկու կտոր ընեն, կէսը մէկուն՝  
 ու կէսը մէկալին տան: Աս որ լսեց  
 ան ողջ տղին մարը՝ սիրտը չի գիմա  
 ցաւ իր հարազատ դաւկին վրա, ու  
 տղաչեց որ միան թէ չի մեռցունեն,  
 թող ողջ անոր տան: մէկալ կնիկը  
 նորէն չէ՛ կըսէր, ո՛չ ինձի ըլլա ո՛չ ա  
 նոր՝ թող կարբլի: Սողոմոնալ բանը  
 իմացաւ, ու հրամայեց որ տղան ան  
 մեռցունել չուզողին տան, որ ա  
 սով իր անոր հարազատ մարը ըլլա  
 լը ցուցուց: Աս սողոմոնի բրած խե  
 լացի դատաստանը որ ինչլացոց ժո  
 ղովուրդը լսեց, ամմէնքը իր իմաս  
 տութե՛ վրա զարմացան մնացին. ու  
 խելովնին կտրելով թէ՛ այ բանն է,  
 սկսան սողոմոնը մեծ սեպել, իրմէն  
 պատկառիլ վախնալ:



ԳԼ ԺԹ .

Մոզոնն սաճարը ու իր պաշարը կը շինէ :  
 Սաբա Ռաֆուհին իրեն սէս կուգա :

Ինչպէս որ ըսինք՝ գաւթի սրտին  
 բաղձանքը՝ որ կուզէր այ մէկ ի-  
 րեն վայել փառաւոր տաճարմը շի-  
 նել, ան սողումնի յաջողութի տրվաւ  
 որ անիկա գործքով կատարէ : Աստի  
 ինքը ամմէն գիւնն իտաղաղ ու հան-  
 գիտ ըլլալով, և անով հարրատութի  
 նալ օրէ օր է վէ ընալով, իր թագաւոր  
 բութէ չոյր տարին մեծամեծ պատ-  
 րաստութիք ձեռք զարկաւ որ աս տա-  
 ճարը շինէ : անանկ որ՝ ու թսուհա-  
 զար հոգի դրաւ՝ որ լեռնեթէն անոր  
 շինվածքին պէտք եղած քարերը կը տ-  
 րեն, ու ուրիշ եօթանասուն հազար  
 հոգիալ՝ որ ասնք կրեն բերեն . և  
 աս բանվորներու սալ վրակեցու՝ երեք  
 հազար հինգ հարուր հոգի կային,  
 թողունք ուրիշ վարպետ արվեստա-  
 ւորները . որ քիրամ տիւրոսի թագա-  
 ւորը, ու փարաւոն եգիպտացոց թա-  
 գաւորը՝ սողումնի հետ քարեկամ  
 ըլլալով իրեն խրկեցին, Վս կերպո-  
 վըս տաճարը եօթը տարիին մէջը  
 շինվեցաւ . ու անանկ փառաւոր բան  
 եղաւ՝ որ աշխարհիս վրա անոր նմա-  
 նը չիպատմը լի, թէ հարրատութի  
 գիւնն,

դիէն, որ բոլոր մէջը ազնիւ՝ փատե-  
 թով շինած՝ ու սրժաթով ոսկիով ծե-  
 փած էր, և թէ՛ վարպետաբան զար-  
 դարանքներուն կողմանէ, իր ամմէն  
 սխտանաւորութիւնը: Արբոր ասանկ  
 տաճարը լրմննցաւ, ու նոյ տասրանակ-  
 նալ մեծ հանդիսաւորութիւն բերաւ  
 ան տաճարին մէջը իր տեղը դրաւ,  
 տասնըչորս օր բոլոր ինչ լացիքը մէջ  
 տեղ ժողոված՝ մեծ տօնախմբուի կա-  
 տարեց. և ան տեւնը քսանվերկու  
 հազար կով՝ ու հարուր քսան հազար  
 ոչխար զոհ մատուց նոյ: Այւ ան օրհ-  
 նելու ու նոյ նրվիրելու տեւնը՝ ինքը  
 սողմնալ ամմե՛նուն առջևը թևե-  
 թը վեր տարածած սկսաւ նոյ աղօթք  
 ընել, շնորհակալ ըլլալով իր բարե-  
 բարութեցը՝ որ արժանի ըրաւ ինքը որ  
 ան տաճարը շինէ՝ ի փառս նոյ. ու  
 խնդրեց որ ինչ աղօթք և խնդրը  
 ու՛ածք ժողովորդը ան տեղը ընէ՛նէ,  
 անձ լսէ՛ ու աղաչանքնին կատարէ:  
 Ասանկ երկան աղօթք ընելէն ետե՛  
 անձալ յայտնի հրաշքով ցրցուց որ՝  
 աս տաճարըս իրեն ընդունելի եղաւ,  
 անտուենը մէկ լուտաւոր ամսվը ե-  
 կաւ բոլոր տաճարին մէջը լեցնեցաւ,  
 ու երկինքէն կրակ ինջաւ ան ըրած  
 ողջակէզները ու զոհերը էրեց լա-  
 փեց. ու ան որ տեսաւ ժողովորդը՝ սու-  
 կալով երեսնին վրա ինկան փառք

կուտային այ : Այսքը ան գիշերը ան  
 մէյմալ երեցու սողոմննի , ու ըսաւ  
 թէ՛ քու բրած աղօթքներըդ մտիկը  
 բի , ու աս տաճարիս համար ինչ որ  
 խնդրեցիր՛նէ կրկատարեմ . անիկա  
 իմ տունըս կըսեպեմ , միան թէ իմ  
 տըված օրէնքներըս և պատու իրանք  
 ներըս պահես . ու դաւիթ հօրըդ  
 պէս հաւատարմութիւն իմ ծառայես .  
 որ անատենը որդւոց որդի քու թա  
 դաւորականն աթուրդ կը հաստա  
 տեմ . հասպա թէ դուն կի՛ք քու որդի  
 բըդ կի՛ք ժողովուրդը դառնաք՝ կու  
 սըք պաշտելու որ ըլլաք , ձեղ կըջն  
 ջեմ կըվերցունեմ աս երկիրներէս ,  
 ու ստ տաճարը երեսէ կըձգեմ՝ կը  
 թողում որ երթա կործանի :

Տաճարը լմբննալէն ետև սողոմնն  
 սկաւ իր թագաւորական պալատը  
 շինել , անանկ հարուստ՝ մեծաշէն ու  
 փառաւոր՝ որ տեսնողին աչքը կառ  
 ներ , բովանդակ մէջի բանեցուցած  
 փատերը ու տախտակները սուղ ու  
 աղնիւ՝ լիբանան լեռանը մայր ըսած  
 ծառերէն կըտրուված էր . անոր հա  
 մար , ինչպէս որ կըսեն՝ դոան անպատին  
 լիբանանու ըսվեցաւ ան պալատը : Այւ  
 ասոր մէջը ամմէնէն փառաւոր բանը  
 իր թագաւորական աթուր (կի՛ք թախտն)  
 էր , որ փղոսկրէ (ցո՛ Ֆիլտիշիէ) էր ,  
 ասկի զարդեր անոր վրա հողցուցած ,  
 վեց

վէց աստիճանով վեր կելլով, ու  
ամէն մէկ աստիճանին վրա երկու  
դիմնալ մէյմէկ առիւծի կերպարանք  
շինած էր : Ասկէ՛ի զատ՝ մէկ առան-  
ձին խիստ փառաւոր սլաւամբնալ  
սողոմոն շինեց փարաւոն Թադառ-  
րին աղջրկանը համար , որ իրեն կը  
նիկ էր առեր : Եւ աս բոլոր շինվածք-  
ներըս քսան տարվան մէջը խալոսե-  
ցաւ : Այսքը ծովու վրա՛նաւերալ շե-  
նել արվաւ սողոմոն՝ ու սովիւր ըսած  
երկիրը խրկեց . որ իրեք տարին հեղ-  
մը անկէց շատ սսկի ու ազնիւ քարեր  
և ուրիշ հազար բարիք կը բերէին սո-  
ղոմոնի : Այսպիսի կերպով սողոմոն  
իր մեծ իմաստութեան՝ ի զատ հարբու-  
տութե կողմանէալ մէկ հատիկ ե-  
ղաւ , անանկ որ՝ չորս դին աշխարհըս  
իր անունը ելաւ . ու ան պատճառով  
շատ մեծ ամեծ մարդիք անոր տե-  
սուն կրկարօտէին :

Ասոնցմէ մէկը որ սաբա ըսած աշ-  
խարհին Թադառ հին էր , իր զօրքերու  
վը՛ ու ուղտերով ընծաներ վրան բեռ-  
ցուցած երուսաղէմ եկաւ՝ որ սողո-  
մոնը տեսնէ , ու անոր իմաստութիւնը  
փորձէ նայի Թէ լսածները իրան է մի :  
Աւստի երբ որ սողոմոնի առջևը ելաւ ,  
ու իր միտքը դրած բաները հարցուց ,  
անկէց տեղն՝ իտեղը ամէնուն իմաս-  
տութիւն պատասխանը առաւ : Ետե-

անոր պալատին փառաւոր շինվածք  
ները, ու իր սեղանին կերակուրները  
և հարուրաւոր ծառաներուն կարգն  
ու կանոնը, ու տաճարը ըրած զոհե-  
րը. աս ամենն բաներն որ տեսաւ  
խելքը [Թաւաւ արմընցաւ մնաց, ու  
դարձաւ սողոմանի ըսաւ. Այս հեռը  
վանց լսելով քու իմաստուիդ ու մե-  
ծուիդ՝ հաւտալըս չէր՝ իդար. բայց  
հիմա իմ աչքով ըս որ տեսա, աս կը  
սեմ որ՝ ան լսածներըս կէսնալ չէ՛ ե-  
ղեր աս է վել լօք տեսածներուս. երա-  
նի ըսաւ անոնց որ միշտ քու հետդ  
են, ու քեզի կրճառայեն, և քու ի  
մաստուիդ կը լսեն: օրհնեալ է Խր  
Խճը, որ ինչացիները սիրելուն՝ քե-  
զիպէս մարդ վրանին [Թագաւոր դը-  
րերէ՝ որ արդարուք կառավարես ի  
րենք: Այտքը ան հետը բերած սլար  
գլեները ընծայեց սողոմանի, հարուր  
քսան տաղանդ ոսկի, (որ մէկ մի լոն  
մը խարախուրու շէն աւելի կընէր կը-  
սեն), ու պատուական քարեր (յի ճէ  
փահիրներ), ու կերպ կերպ անուշա-  
հոտ ազնիւ խունկեր (յի պուհուր  
ներ): Մողոմանալ աս ընծաները ա-  
ռաւ, ու ինքնալ անոր տեղը ինչ որ  
ուղեցնէ տրվաւ իրեն. ու անանկ ե-  
լաւ [Թագուհին սաքա իր երկիրը

դարձաւ:



ԳՎ : Ի :

Սողոմոնի Տեղը՝ ու Տակը :

Սողոմոն տարիքն որ առաւ՝ կամաց  
 կամաց նոյ սիրուն պաղեցաւ, ու  
 մարմնական ցանկութե տրվաւ զինքը -  
 անանկ որ՝ փարաւոնի աղջկէն՝ ի զատ  
 չափէն աւելի ուրիշալ շատ կնիկներ  
 առաւ այլազգի կռապաշտներէն . որ  
 առ ամօ օրինաց մէջը ինչլացոց արդե-  
 շերէր : Ատքը առ անհաւատ կնիկնե-  
 րուն կամքը կատարելու համար՝ չէ՛  
 թէ միան անոնց կուռքերուն տա-  
 ճարներ շինեց, հասպինքնալ սկտա-  
 ան սուտ ամօները պաշտելիքն կնիկ-  
 ներուն հետը առջևնին զոհ մատու-  
 ցանել : Ի՞նչ որ համար ամալ սատիկ  
 բարկացաւ սողոմոնի, ու ըրած ա-  
 պերախտուիք՝ երեսը զարնելով, (որ  
 իրմէն այսչափ բարիք առած մէկ-  
 դի ձգեց՝ զնաց սուտ կուռքերուն ե-  
 տեկն ինկաւ,) իրեն ըսաւ որ՝ ահա  
 քու մեղացրդ պատիժ՝ ձեռքեդ կը  
 պատուեմ կառնեմ քու թագաւորու-  
 թիդ՝ ու քու ծառայիդ ձեռքը կու-  
 տամ : Ի՞նչ այցաս բանըս, իմ հաւատաշ-  
 րիմ դաւիթ ծառայիս սիրուն համար  
 քեզի խնայելով, քու օրըդ չե՛մ ըներ,  
 և բոլորովին թագաւորութիւն քու  
 ազգեդ չե՛մ առնէր, հասլա մէկ դաւ

ւազանմը կի՛ցեղմը կը թողու մքեղի :  
 Ատքը ան ինչպէս որ ըսաւ՝ ընե լիքը  
 պատրաստեց , որ սողումն աչքը չի  
 դոյած՝ երկու հոգի այլադդ ինեբէն  
 մէկը ադեր ըսած , ու մէկալը ու  
 սոն , իրեն դէմ դուխ քաշեցին , ու  
 թշնամու թի կընեին իսրայէլացոց  
 հետ :

Մտնցմէ ՚ի զատ՝ մէյմընալ յերոբո  
 վամ որդի նաբատայ ըսած՝ իէլացոց  
 մէջէն եփրեմի ցեղէն՝ որ սողումնի  
 ծառայուէ մէջն էր , ան աքիա սիւ  
 նացի մարգարէն ասոր խրկեց՝ որ նոր  
 լաթմը վրան առած եկաւ յերոբո  
 վամի բոլը , ու ան լաթը պատուեց  
 տասվերկու կրտոր ըրաւ : Ատե անոր  
 տասը կտորը յերոբովամի ձեռքը  
 արվաւ ըսաց թէ՛ ան պիտի այսպէս  
 սողումնի թագաւորու թիը պատուէ ,  
 ու անկէց տասը ցեղին տերու իր հա  
 նէ քեզի պիտոր տա , ու միան երկու  
 ցեղը անոր տղին պիտի թողու , որ  
 երթաւ Էղէմ թագաւորու ի ընէ : ան  
 ալ դաւ թի սիրուն համար . ու աս բա  
 նիս պատճառն որ՝ սողումն տակերախ  
 տու թ ան մէկ զի ձգեց՝ ու գնաց գա  
 շելի կուռքերուն ետեւէն ինկաւ : Աւ  
 դունալ ըսաւ՝ թէ որ ան պատուի  
 րանքները պահես ինչպէս իմ դաւ թ  
 ծառաս ըրաւ , քու վրա ձեռք կըդը  
 նեմ , որ սրգւոց որդի թագաւորու  
 թիը

Թէ՛ր քու անկէ՛ղ չիպակո՛սի : Ե՛ւ քան՛ըս  
 երբոր սողումննի անկամ՛ը հաստաւ ,  
 ուզեց որ յերոբովամբ բռնե՛ մեռցու  
 նէ . անալ շուամբ փախաւ եգիպտացոց  
 Թագաւորին քովը գնաց , ու  
 անկէց չի դարձաւ՝ ինչվան որ սողո-  
 մնն մեռաւ . որ բոլոր քառսուէն տա-  
 ըի Թադաւորուի քշեց :

Ը առ վգնիտներ կրսեն որ սողումնն  
 ետքերը խելքը վրան ժողվեց ու ը-  
 րած մեղքերը ապաշխարեց , և ան-  
 ատենը ան Սողովող ըսած գիրքը  
 գրեց աշխարքիս ունայնու Թէ՛ր վրա ,  
 որ ասանկ կրսկըսի , Խնայնուի ունայ-  
 նուից ամ ինչ ընդ ունայն է : Եւ այց որով-  
 հետև ամաշուունչը իր մեղքերը պատ-  
 մե լէն ետև՝ անոր դարձին վրա յայտ-  
 նի քանմը չի յիշեր , անոր համար ինչ-  
 վան ան օրըս տարակուսանքի տակ  
 կրսեպվի անոր փրկուիը կի՛ դատա-  
 պարտուիը , Թէ՛ պէտ և իր դրածնե-  
 րը ամաշուունչի կարգին մէջն է :

ԳՎ : ԻԸ .

Ի՛նչացոց ԲագաւորուիԷ երկուս իւրեւծ  
 նը՛ն :

Սողումննի մեռնե լէն ետև երբոր ող-  
 բովամ՝ ( իրեն՝ ինչպիս կրսեն՝  
 մէկ հատիկ մանչ զաւակը ) սիկիմ  
 քաղաքը գնաց՝ որ բոլոր ինչացիքը  
 հսն

Հոն ժողոված յերոբովամալ Հետեր  
 նին՝ զինքը Թագաւոր դնեն . առաջ  
 աս ժողովուրդը միաբան ասանկ խըն  
 դիրք ըրին ռոբովամի , քիչէր ըսին՝  
 մեզ Թեթեցուր ան հօրըդ դրած  
 ծանրք տուրքերէն , որ քեզ Թագաւոր  
 ճանչնանք ու քեզի ծառայենք : Սո  
 բովամալ իրեք օրէն ետե եկէք ըսաւ ,  
 որ ատոր պատասխանը ձեզի տամ : ու  
 ինքը առաջ սողոմնի խորհրդատու  
 ծերերուն հարցուց աս բանըս . ա  
 նոնք ալ մէկ բերան իրեն խորուրդ  
 արվին օր՝ անոնց ուղածը ընէ , ու առ  
 ջի բերանը հետերնին անուշուք վար  
 վի սրտերնին վաստըկի , որ ետքը իր  
 ուղածինպէս անոնք կառավարէ :  
 Սայց ռոբովամ , աս ծերերուն տը  
 ված խեղացի խորուրդը հերիք չիսե  
 պեց , նօրէն կանչեց խորուրդ հար  
 ցուց իրեն բարեկամ արզոցը ( կի՛ ի  
 րեն սրջտաշ ճահիլներուն ) . անոնք  
 ալ տուն արվին՝ որ ատանկ պատաս  
 խան տա ժողովրդոցը . գիտնա՛ք ըսէ՛  
 որ իմ պինտ պղտի մատըս՝ հօրըս մէջ  
 քէն հասաէ . հարըս ձեր վրա ծանրը  
 բեռ դրաւ , ես ան բեռանը վրա՛նո  
 րէն պիտի էլիւցունեմ . հարըս ձեզ  
 գաւազանով կըծե՛ծէր , ես ձեզ քու  
 քով ( կի՛ փշոտ Թօփուղով ) պիտի ծե  
 ծեմ : Սոբովամալ այ Թոյլարվուէն  
 կուբացած՝ ծերերուն խորուրդը մէկ  
դի

դի թողուց, ու աս անխելք խորուր  
 դիս հաւնեցաւ, ուստի խօսք դրան  
 ծինալէս երրորդ օրն որ անանկ պա-  
 տասխան տրվաւ, ան ատենը ինչա-  
 ցոց ժողովուրդնալ գլուխ քաշեց ու-  
 ժեւ կուզեսնէ՛ անիկա՛ աս բանիս հա  
 մար եղէմ խրկէ. ու կը տեսնես թէ  
 ինչպէս չարաչար ծեծած փեթտած  
 կը

կըդ առնա, միան թէ չիմեռնի ողջ  
մնա. աս ստոյգ է որ՝ անձային զօրուի  
մը կա ան տաճարին մէջը, որ՝ ո՛վ որ  
անոր դըպէլու ըլլա՝ չարաչար կը  
պատժըվի :

Գ. Լ. Գ.

Տրեից Խաղաղութիւն ներսեւ ըրա կըլլա ան  
դիտոսի ադենը :

**Ս**ե լև կիսսի մեռնե լէն ետքը անտիտ  
քոս եպիսիան կի՛ք երևե լի ըսած ա  
նոր եղբարը յափշտակեց թփրուիը,  
որ սաստիկ թշնամի էր հրէական  
օրինաց : Ընտուե՛նը յասոն ոնիա  
քճիյպետին եղբարը՝ գնաց թփւրին  
աւելի տուրք ըստակ խոստացաւ,  
ու իրեն խօսք տըվաւ որ՝ հրէից մէջը  
կա ապաշտական բաներ մտցունէ,  
կամաց կամաց անոնք կա ապաշտու  
թի դարձունէ : ասանկ ոնիայի ձեռ  
քէն քճիյպտուիը ինքը առաւ յափշ  
տակեց : Բայց աս չար յասոնը՝ իրեք  
տարի իր ըսածինպէս հրէից բարե  
կարգուիը ու անձաշտուիը աւրե լէն  
ետքը, երբոր մենեղաւոս ըսած մէ  
կիմը ձեռքովը իր տարեկան տուրքը  
անտիտքոս թփրին խրկեց. մենեղա  
ւոսը գնաց թագաւորին սիրտը իրեն  
դարձուց, ու յասոնի վրա ինքը տա  
րեկան տուրքը է վե լցնելով՝ եկաւ յա

սոնի ձեռքէն յափշտակեց քֆյայե տուիր : Ատքը աս մե՛նեղաւոսը տեսնելով որ չի կրնար անչափ խոստացած թիֆրին տուրքը լեցունել, Կաղտուկ տաճարին արծ թեղէններուն ձեռք զարկաւ, ու անկէց խելմը անդրոնի կոսի կաշառք տրվաւ, (որ թիֆրին մեծ իշխաններէն մէկն էր,) ու կէսմընալ ծախեց : Ատե երբոր իմացաւ որ՝ ո՛նիա քֆյայե տր աս իր ըրած գողուիր գուրս հանեց, անդրոնիկոսի ձեռքովը անողորմաբար բռնեց մօրթել տրվաւ որ քֆյայե տր : Աս անդրոնիկոսի ըրած անօրէնուէր վրա սաստիկ ցաւեցաւ ժողովուրդը . ուստի երբոր Գացին թագաւորին գանկտելով աս անողորմութիս որ հասկըցուցին, անորալ անանկ գուձը շարժեցաւ՝ սիրտը լեցվեցաւ անմեղ մարդուն վրա, որ շուտմը հրամայեց որ անդրոնիկոսի վրայէն իշխանական լաթերը հանեն, ու անանկ խայտառակ բօլոր քաղաքը պըտըացունելէն ետե՛ ան ոնիայի սպաննած տեղը տանին՝ գլուխը կտրեն :

Աս ատենները լիւսիմաքոս մե՛նեղաւոսի եղբարը, որ մե՛նեղաւոս թիֆրին քովը երթալնինի՝ իր տեղը եղէմ քֆյայետ գրեր էր, ու իրեն յանձներէր որ տաճարին արծաթները կամաց կամաց կողոպտէ իրեն խրկի :

Ժողովուրդն որ աս բանըս իմացան՝  
 ստք ելան զինքը ձգել կուզէին :  
 Սուսիմաքոսալ անոնց վրա երեք հա-  
 ղար հոգի հանեց . ու երկու գիէնի-  
 բար անցած՝ մէկ մէկէ շատ մարդ  
 սպաննեցին : ու աս խռովութիւներուս  
 սլոճաով թէպէտ հրէից կողմանէ  
 թիւրին առջևը ամբաստանվեցաւ  
 մենեղաւոս , բայց թագաւորին մէկ  
 բարեկամին ըստակ խոստանալով ,  
 անոր ձեռքովը բանը անանկ դար-  
 ձուց որ՝ իր տեղը ան ամբաստանող-  
 ները յանցաւոր ինկան , ու ըստան-  
 նրվեցան : Աս էղէմի խղճութենս ա-  
 տենը իժծալ վերէն նշան տրվաւ ե-  
 ղածները ու դալու թշվառութիւները  
 ցուցունելով . որ քառսուն որ էղէմի  
 վրա երկինքը ձիաւոր մարդիք կերե-  
 նային՝ սպտերազմական գործիքներ  
 ձեռվընին , ու մէյմէկու հետ կրղար-  
 նրվէին . անանկ որ՝ ասոնց ձաննալ  
 կը լրավէր . ու ժողովուրդը սոսկալով  
 կաղաչէին նյ որ ՚ի բարին կատարէ  
 աս նշանները :

Անկէ ետքը անտիոքոս թիւրը եգիպ-  
 տացոց վրա սպտերազմ որ գնաց , ու  
 հոն քիչմը ուշացաւ . աստին էղէմի  
 կողմերը սուտ ձանմը ելաւ թէ՛ թա-  
 գաւորը մեռերէ : ու ասոր վրա հը-  
 բէայքը ուրախութիւն կը ցուցունէին ,  
 անդ իէն յասոննալ որ ամոնացոց եր-  
 կի .

կիրը փախստական էր եղեր, շուտմը  
 հազար մարդով եկաւ Եղէմ մտաւ՝  
 որ քհնյսպետութիւնսորէն ձեռք ձգէ .  
 ու մեներաւոսը անկէց փախցունէ  
 լով ինքը սկսաւ տիրապետել . ու իր  
 ազգին հայրու թիւնելու տեղը՝ դա  
 հիճիպէս մարդու չէր խնայէր անո  
 ղորմաքար կըջարդէր : Մայց շատ  
 չիքըչէց՝ որ իմանալունպէս թէ ան  
 ախոքոս թագաւորը ողջ է, նորէն ե  
 լաւ փախաւ ու տեղէ տեղ փախստա  
 կան պտրտելով և ամմէնուն ատելի  
 քլալով՝ ետքը անանկ օտար երկիր  
 ները չարաչար մեռաւ : Մնտիոքոս  
 երբոր աս հրէից մէջը եղածները ի  
 մացաւ, կարծիք երթալով թէ հը  
 բէայքը իրմէ ապստամբիլ կուզեն,  
 եգիպտացոց յաղթելէն ետքը՝ դա  
 ղանիպէս կատղած իր բոլոր զօրքով  
 Եղէմի վրա եկաւ . ու քաղաքը մըտա  
 ծինպէս՝ հրամայեց որ ամենեւին մէ  
 կումը չիխնայեն՝ բռնածնին ջար  
 դեն . ու անանկ միայն երեք օրվան  
 մէջը ու թսուն հազար հոգի կոտորը  
 վեցան, ու քառսուն հազարալ բռնե  
 ցին գերիիպէս ծախեցին :

Ատքը ասչափովսալ չի կըշտացաւ,  
 հասաւ մեներաւոսի մատնուքը տա  
 ճարինալ ձեռք զարկաւ, յանդգնու  
 թք մտաւ տաճարը՝ ու բոլոր բովան  
 դակ արծաթ եղէնները ու ոսկեղէն  
 նէ



ներք ուրիշ սլահճու բաներու հետ՝  
 հազար եօթը հարուր քանքարի չափ  
 ժողվեց առաւ, անտիոք իր թիւրա-  
 կանքիքը տարաւ. ու եղէմ մնացած  
 հրէից վրա մէկ փիլիպոս անունով  
 փռիւ գիացի չար բարբարոս մարդ մը  
 իշխան դրաւ՝ որ անխնա չարչարէ հը-  
 բէայքը: Անկէ ետեւ ապողոնիոս ը-  
 սած մէկ զօրասլետմը քսան հազա-  
 րով հրէից վրա խրկեց՝ որ երթա թա-  
 գաւորական տուրքերը ժողվէ ա-  
 նոնցմէ, ու չափահաս մարդիքը՝ որ  
 զինվորութե կրնան դարձարդէ ա-  
 նոնք՝ ու իրենց մնացած կնիկնին ու  
 տղաքնին ծախէ: Ապողոնիոս որ ե-  
 կաւ, առջի բերանը սիրով վարվե-  
 ցաւ հրէից հետ, տպասեց մինչև շա-  
 բաթ օրը, և ան ատենը ապահով  
 ըլալով թէ հրէայք շաբաթը ծա սլա-  
 հելով դէմ չեն կրնար կենալ, յան-  
 կարծակի վրանին ելաւ՝ ու խեղմը  
 մարդ ջարդեց: Արքը շատ չանցաւ  
 որ անտիոքոս թիւրը մէկ ծեր իշխան-  
 մալ խրկեց հրէաստան՝ ամենոքիոս  
 անունով, որ ինչ կրնէ ընէ՝ բոլոր  
 հրէաները կռատաշտական օրէնք  
 դարձունէ, վերցունէ զո՛հ մատու-  
 ցանելը, շաբաթ սլահելը, ու տա-  
 ճարը կուռքերու տուն շինէ, անանկ  
 որ հրէայ անունը մէյմալ չիլըսվի,  
 ու կուռքերու զո՛հ մատուցանեն, ա-  
 նոնց

նոնց նրվիրած տօնախմբուիը կատա-  
րեն. և ո՛վ որ չէր հնազանդէր ասանկ  
չէր ընէր, ամենևին առանց խընայե-  
լու կըսպաննէր: Ա՛ս լսեց որ երկու  
կնիկ իրենց նոր ծնած տղաքը մովսի-  
սական օրինացպէս թլփատեր են.  
ասոնք բռնել տրվաւ, տղաքնին ծը-  
ծերնէն վար կախած՝ անանկ մերկ  
խայտառակ բոլոր քաղաքը ստըա-  
ցունելէն ետե՛ւ բարձրը պարխսպէն  
վարձկել տրվաւ: ու ալ ուրիշ ասանկ  
անողորմ տանջանքներով կըսպաննէր  
ով որ չէր ուրանար: Այլ աս պատճա-  
ռով շատ մարդիք ելան անասրատ  
տեղվանք փախան, որ հոն դաղտուկ  
իրենց անձպաշտուիը պահեն:

ԳՎ: Ե .

Վահագանի ունի էղիազար ծերոսնիին, ու  
եօթը էղեարց մահաբայեցոց՝ իրենց Տօրը հետ:

Ա՛ս սաստիկ հալածանացս ատենը  
քննայմնալ բռնեցին էղիազար ա-  
նունով, որ մէկ տարիքը առած շնոր-  
հալի ու անձավախ իմաստուն վար-  
դապետմընէր. ասոր բերանը գայլ  
(ի՞նք բէլէփչէ) դրած՝ անանկ բռնի բա-  
ցած՝ խողու միս կըխոթէին, որ օրի-  
նաց դէմ ընէ՛ ուտէ: Ա՛նալ բոլոր ու-  
ժովը ասոր դէմ կենալով, կըսէր որ  
աւելի կուզէմ մեռնիլ քան թէ՛ օրի-  
նաց

նաց դէմ ընել, ու յօժարու թ տանջա  
 նաց տեղը կը վազէր կերթար: Տանող  
 ներուէն մէջէն իր ճանչլորները վրան  
 խզճալով՝ գալտուկ խրատ կու տային  
 կը յորդորէին թէ՛ քեզի՛ ուրիշ միս  
 կու տանք որ ուտես, ու դուն ցուցուր  
 թէ թագաւորին կը հնազանդիս խո  
 դու միս կու տես, որ գոնէ ասանկ խա  
 բելով մեռնելէն ազատիս: (Նայց ե  
 ղիազար՝ քաւ լիցի կըսէր՝ ատ բանրդ  
 ինձի չի վայլէր՝ որ կեղծաւորու թիւ  
 խղճմտանքս մաքուր պահելու համի՛  
 կտրիճ մարդիքը գայ թակղեցունեմ,  
 որ ըսեն թէ՛ նայէ եղիազարը իննըս  
 սուն տարվան ծերմը՝ ալ մահուն դու  
 ոը հասած՝ չի համբերեց գնաց այլ  
 աղգի եղաւ. ու ասով իրենց չար օ  
 թինակ ըլլամ, և ծերուէս ատենը աս  
 գէշ անունը իմ ետեւէս թողում: Սէ  
 որ ըսաւ՝ ուրանալովրս անչափ տարի  
 ալ տան ինձի, ու հանգիստ ապրիմ  
 որչափ որ ապրեցանէ, այսու իմիւ  
 ինչ ձեռքէն ոչ կենդանուէս ատենը՝  
 և ոչ մեռնելէս ետքը կրնամ մէկ  
 տեղմը փախչիլ. ուստի աղէկը ան է՝  
 որ իմ ծերու թէս ինչպէս կը վայլէնէ՝  
 քաջու թ աս աշխրքէս ելլեմ, ու բա  
 րի օրինակ թողում կը տրիճ ներուն.  
 որ անոնք ալ ինձիպէս առանց վախ  
 նալու սրտանց՝ ք օրինացը վրա կեան  
 քերնին տան: Նսանկ ըսելով սի  
 բով

րով զինքը տանջողներուն ձեռքը տը  
վաւ . ու ալ հոգին աւանդելու ատե  
նը հառաչելով ըսաւ , 'տր' դու որ  
ամմէն բանը գիտես , ասալ կըտես  
նես որ ես կրնայի մեռնելէս խալը  
սիլ , բայց քու արդար դատաստանէգ  
վախնալով՝ մարմնովըս չարաւար կը  
տանջուիմ , ու հոգւովս սիրով կը  
համբերեմ : Աւանանկ հոգին տը  
վաւ :

Այդիազարի ետեւէն ուրիշ եօթը եղ  
բար իրենց մօրը հետ մէյտեղ բռնե  
ցին թագաւորին առջևը հանեցին .  
երբոր աս բանիս վրա իրենց սկսան  
հարցունել , մեծ եղբարնին առաջ  
ելաւ՝ ու ըսաւ . ինչ կեցեր պարապ  
տեղը մեզի բան կըհարցունէք , մենք  
պատրաստ ենք կեանքերնիս տա  
լու՝ քան թէ մեր հայրենական օրէնք  
ները թողունք : Ասոր վրա սաստիկ  
սրգողեցաւ թիւրը , ու հրամայեց որ  
շուտմը անոր լեզուն ու ոտվըներուն  
ու ձեռվըներուն մատներուն ծարե  
րը կըտըրտեն , ու գլխուն կաշին քեր  
թեն երեսին վրա դարձունեն : աս  
տանջանքներէս ետեւ երբոր տեսաւ  
որ գեռ ողջ է տղան՝ հրամայեց որ  
կրակին վրա դնեն տապկեն : Ահ  
կալ եղբարքը մօրերնուն հետ աս  
սոսկալի տանջանքներըս տեսնելով  
սկսան մէկմէկու սիրտ տալ , ըսել  
թէ՝

Թէ՛ մե՛նք ալ ասանկ քաջու թ՛ք մե՛ռ  
 նինք , ու մեր անունը՛ և հոգինիս  
 փրկենք՛ ի փառս ւնյ : Մ՛նոր ետեւէն  
 երկրորդ եղբարը առաջ քաշեցին , ու  
 ասորալ գլխուն կաշին մազերովը քեր  
 թեցին երեսին վրա ձգեցին , ու կը  
 սէին՝ հնազանդէ խոզի միս կեր , բո  
 լոր մարմինդ կտոր կտոր չեղած : ան  
 ալ հաստատուն կենալով իր օրինա  
 ցը վրա՛ ան տանջանքով վախճանե  
 ցաւ . ու հոգին տալու ատենը թա  
 գաւորին ըսաւ , ո՛վ հպարտ ամբար  
 տաւան՝ դուն մեզ աս կեանքէս կը  
 զրկես , բայց դիտնաս որ՝ բոլոր աշ  
 խարքիս թ՛գւրը ւծ՛ մեզի յարու թի  
 առնել կուտայաւ իտենակասն կենօք ,  
 որ հիմա իրեն օրինացը համար կը  
 մե՛ռնինքիոր : Մ՛նկէց ետեւ երրորդ  
 եղբարը կանչեցին , ու մեկալնե  
 թունպէս երբոր լեզուն ուղեցին որ  
 դուրս հանէ , շուտմը հանեց . ու ա  
 նանկ առանց վախնալու ձեռվըներ  
 նալ երկնցուց որ կըտըրտեն , որ թա  
 գաւորնալ զարմացաւ մնաց տղին քա  
 ջասրտուէր վրա : Մ՛նոր մե՛ռնելէն  
 ետքը չորրորդ եղբորնալ ան տան  
 ջանքը տըվին . որ մե՛ռնելուն ատե  
 նը ըսաւ , երանի՛ է մեզի՛ որ նորէն  
 յարու թ առնելու յուսով աս աշխար  
 քէս կըսածնըվինք կերթանք , քան  
 թէ քեզի՛ որ կենդանի ես , ու ան

յարուէն զըկըված ես : Այրբոր հինգ-  
 երորդը ետեւէն սկսան տանջել՝ դէպ'ի  
 թագաւորը նայեցաւ ու ըսաւ , դուն  
 մահկանացու մարդ մը ըլլալով՝ մարդ-  
 կային իշխանութիւնդ ինչ որ կուզես  
 նէ կընես , բայց ասով չի կարծես՝ թէ  
 մեր ազգնալ այ երեսէն բոլորովին  
 ինկած խեղճ մնացերէ , կեցի՛ր քիչմը  
 որ տեսնես այ ամենակարողութիւն՝ թէ  
 ինչպէս քեզ քու ազգովդ պիտի տան-  
 ջէ : Ա եցերբորդն ալ նոյն տանջան-  
 քով մեռնելու ատենը դարձաւ թա-  
 գաւորին ըսաւ , անով մի խաբովի ու  
 հպարտանար՝ որ մեզի ասչափ բան  
 կրցար ընել , որ՝ մենք այ դէմ մեզան  
 չէնուս համար աս չարչարանքներըս  
 կը քաշենք կոր , ուստի զարմանք չէ՝  
 բայց դունալ որ այ դէմ ելեր պա-  
 տերազմ կընես , չի կարծես թէ ա-  
 տոր պատիժը պիտի չի քաշես : Ա-  
 սոնք նահատակվելու ատենը՝ իրենց  
 երանելի մարը քովերնին կեցած՝ իրենց  
 լեզվովը՝ որ ուրիշները չէին հասկնար ,  
 ամմէն մէկուն սիրտ կուտար կըյոր-  
 դորէր որ սիրով ու քաջութեան տան-  
 ջանքներուն համբերեն՝ ի փառս այ :  
 Ատքը երբոր կարգը եօթներորդ եղ-  
 բորը հասաւ , որ ամմէնէն պղտիկն  
 էր . թագաւորը իրեն ամօթ սեպեց  
 որ գոնէ անոնցմէ մէկը՝ իր տըված  
 տանջանքներովը չիկըրցաւ դարձու-  
 թ թ .

նել . անոր համար շատ աս սղտիկիս  
 ետեւէն ինկաւ՝ քովը կանչեց անուշ ա  
 նուշ խօսքերով յորդորեց զինքը , ու  
 մեծամեծ սպարդէներ և մեծուի ի  
 բնն խոստացաւ տալու , միան թէ իր  
 հայրենական օրինացը դառնաւ բայց  
 ետքը տեսնելով որ անանկալ ճար  
 ջեղաւ տղին միտքը փոխելու . կանչ  
 չեց մօրը տրվաւ՝ որ անալ աս բանիս  
 վրա խրատ տա : Մարնալ առջի բե  
 րանը չուղեց խօսիլ . բայց երբոր շատ  
 վրա տրվաւ թագաւորը՝ ինքնալ ա  
 նոր դէմ սկսաւ տղան յորդորել ու ը  
 սել , ողորմէ՛ ինծի իմ սիրելի որդեակս՝  
 յիշէ՛ որ ինը ամիս քեզ արգանդըս  
 կրէր եմ . ու իրեք տարի իմ գիրկըս  
 կաթով սպհերեմ , ու տա հասակդ  
 քեզ հասուցերեմ . քեզ տեսնեմ որ  
 դի . նայի՛ երկինքը ան կա քեզի օղնա  
 կան , ջրլա որ ատ անողորմ դահիճը  
 քեզ վախցունէ . դուն ալ մէկալ եղ  
 բարնեբուդ ճամբուն բունէ՛ մեռնի  
 լը՝ աւելի լաւ սեպէ՛ քան թէ աս աշ  
 խարքիս կեանքը , որ անդին այողոր  
 մու թէ արեւը՝ քեզալ քու եղբար  
 ներուդ հետ նորէն մէկտեղ ինծի  
 առնեմ ընդունիմ : Ան ատենը գեռ  
 խօսքը մօրը բերաննէր՝ որ տղան է  
 վէլօք սիրտ առնելով սկսաւ կանչել .  
 որո՞ն կրսպասէք , ինչ կուշանաք կոր  
 թագաւորին հրամանին չեմ հնա  
 ի զան

զանդիր , հասլա մեր օրինացը հ'նա  
 զանդերեմ , որ մովսէսի ձեռքովը ան  
 տրվերէ : Ատքը դէպ'ի թիւրնալ  
 դարձաւ ու ըսաց , դունալ նվ պիղծ  
 անօրէն մարդ , որ նոյ ծառաները  
 այսպէս կըտանջես , դիտնաս որ ա  
 նոր արդար դատաստանէն պիտի չի  
 խալըսիս . ու քու հարարտութեդ և  
 անդըթուէդ արժանաւոր պատիժը  
 քաշելուդ ատենը՝ իմանաս որ ինքնէ  
 միայն ճշմարիտ անձը , նաև աս ալ  
 դիտնաս որ՝ ես իմ եղբարներուս հետ  
 մեր հայրենական օրինաց համար  
 մարմիննիս ու կեանքերնիս աս չարչա  
 րանքներուս տալով , կըյուսանք ան  
 որ մեզի ասոր տեղը յաւիտենական  
 կեանք կուտա . ու ասով մեր բոլոր  
 ազգին մեղացը թողուիալ ընէ : (Ս)ա  
 գաւորը երբոր աս բաները լսեց , ա  
 ւելի կատողեցաւ աս սրղտիկին վրա ,  
 ուստի աւելի սաստիկ տանջանքով  
 ինքնալ հոն տեղը սպաննել տրվաւ :  
 Աւամէնէն ետե՛ ան երանելի տղո  
 ցը քաջասիրտ և երանելի մարդ . որ  
 ամմէնմէկ որդւոցը հետ կեցած՝ սրբ  
 տովը կընահատակվեր , ու մէկիկ մէ  
 կիկ նոյ ձեռքը կընրվիրէր անոնք ,  
 ինքնալ նոյն տանջանքներով՝ չուշա  
 ցաւ ետենին հասաւ , որ անոնց հետ  
 մէկ տեղ վայելէ նոյ պատրաստած  
 բարիքը :



Գ Լ Ե Օ :

Մասախիա բազանային ու եր որդաոցը Բա  
բեդաշտուիք , և բաշտուիք :

Մատիոքոսի սաստիկ հալածանաց ա  
տենք՝ անուճանի ու սրբակաց քա  
հանամբ կար Եղէմ՝ մատաթիա ը  
սած , սր հինկ հատ հասած կարիճ  
որդիք ունէր . մէկուն անունը յով  
հաննէս , երկրորդինը՝ շմաւոն , եր  
րորդինը՝ յուգամակաբէ , չորրորդի  
նը՝ եղիազար աւարան , հինգերորդի  
նը՝ յովնաթան : Մսիկա տեսնելով  
քոլոր հրէաստանի՝ մանաւանդ Եղէ  
մի այսպիսի խղճութիւն , ալ չի դիմա  
ցաւ իր որդիքը առաւ դնաց մով  
դիմ ըսած քաղաքը քաջվեցաւ . և  
հոն անոնց հետ անմիտիթար կողքար  
ու կուլար իր ազգին սղորմելի գե  
րուէր վրա . ու թէ ինչպէս նոյ տա  
ճարը սղծըվեր է , ու իրեն՝ սբ կահ  
կարասիքը կողոպտըվերեն : աս բա  
ներուս համար ալ սաստիկ սրտցաւէն  
վրայի լաթերնին սրատուտած քուրճ  
կը հագնէին : Մնատենները անտիո  
քոս թագաւորէն խրրկած մարդիք  
ները մովդիմ ալ եկան , ու հրէանե  
րը կըստիպէին որ կուռք պաշտեն : ու  
չատ մարդ վախերնէն հնազանդե  
ցան՝ կռապաշտութի դարձան : Մայց

մատաթիա առանց վախճանալու հա  
մարձակ պիտի տրվաւ իրենց ու ըսաւ  
թէ՛ աշխրջիս բոլոր աղէներնալ թա  
գաւորին հրամանին հնազանդին , ու  
բոլոր ինչ լացիքալ իրենց օրէնքը թո  
ղուն , այսպէս գիտնաք որ՝ ես ու իմ  
որդիքըս և եղբարներըս մեր հայրե  
նական օրէնքը չէնք թողուր՝ ու կուռք  
պաշտեր : Վնդամմը աս բանս ըսել  
նինի՛ տեսաւ մատաթիա որ անդիէն  
մէկ ուրացող հրէամը եկաւ հօն տե  
ղը կուռքին զոհ մատուցանելու .  
ինքնալ ան ատենը սոստիկ անձային  
նախանձայուզուէն չի գիմացաւ՝ ա  
նոր վրան վաղեց՝ ու ոտքով անանկ  
դարկաւ որ՝ ան տեղը կուռքին առջևը  
սատկեցուց անիկա : Աւ ան թադաւ  
ւորական մարդը որ եկեր զինքը կը  
յորդորէր՝ անալ անտեղը մեռցուց ,  
գնաց կուռքը կործանեց . ու սիսաւ  
ամուր ձանով կանչվաւ թէ՛ ով որ  
հայրենական անձային օրինաց կուզէ  
տէր կայնիլ պահպանել իմ հետըս  
դա : և անանկ ինքը իր տղոցմով ի  
րենց ամմէն բաները հօն թողուցին ,  
քաղքէն դուրս ելան մէկ լեռմը դա  
ցին : Վնոր նայելով շատ անձապաշտ  
մարդիք իրենց տընով տեղովը ելան  
քովը գացին , ու մէկտեղ հօն լեռը  
այրերու մէջ անառիկ տեղվանք կը  
բնակէին : Թշնամիները աս բանս որ  
իմա

իմացան , շաբաթ օր էլան վրանին  
 եկան՝ ու կըլորդորէին որ դառնան՝  
 թիւերին հրամանին հնազանդին :  
 Ատքը երբոր տեսան թէ շաբաթ օր  
 վան պատճառով ան հրէաներէն ի  
 րենց դէմ կեցող չիկա , ալ համարձակ  
 վրանին վազեցին՝ ու հազար հոգի  
 ջարդեցին անոնցմէ : Աս որ տեսաւ  
 մատաթիա՝ շատ ցաւեցաւ , ուստի  
 ժողովեց խորհուրդ ըրաւ որ անկէց  
 ետեւ շաբաթ օր թէ որ վրանին թշնա  
 մի դալու ըլլանէ , առանց խղճմտան  
 քի՛ մտային օրինացը համար պատե  
 րազմին : Անկէ ետեւ ուրիշ հրէաներ  
 ալ մատաթիայի քով եկան հետը  
 միաբանեցան՝ ու անչափ շատցան որ՝  
 ալ խումբ կապած կեչէին կռապաշ  
 տից հետ կըպատերազմէին , կուռքե  
 րուն նըվիրած տեղվանքը կաւրէին  
 կըկործանէին , ու բացողները կը ջար  
 դէին , ու մտային օրէնքները պա  
 հել կուտային : Աս քաջութիւններս ը  
 նեւէն ետքը՝ տեսնելով մատաթիա  
 որ օրէ օր ալ իր մահը կըմտենակոր ,  
 առջևը կանչեց իր օրդիքը՝ ու բարի  
 խրատներով իրենց սք նահապետնե  
 րը օրինակ բերելով յորդորեց իրենց  
 օր չի վախնան թշնամիներէն , հասպ  
 սկըսած բարին քաջութեւ առաջ տա  
 նին , մտտաշտու թիւ նորէն հաստա  
 տեն : ու շմաւոն եղբարնին՝ իրենց

դ լիսաւ որ ու հօր տեղ դնելով, և յու-  
դա մակարէն՝ իրենց զօրասկտ , ա-  
սանկ իր հայրական օրհնութիւն անոնց  
տալով հոգին աւանդեց :

Գ Լ : Լ :

Յոգա մակարէն Կաթաբիւնիւր :

Յոգա մակարէն հօրը մեռնելէն  
ետեւ երբոր զօրասկտուիւն ձեռք  
առաւ՝ ջանաց որ իր զօրքը շատցու-  
նէ , ու անոնք միան կընտրէր հետը  
կառնէր , որ միշտ անձային օրինաց  
մէջը հաստատ մնացերէին : Առջի  
բերանը բոլոր վեցհազարի չափ մար-  
դով աստղոնիոսի դէմ ելաւ , որ աւե-  
լի զօրքով իրեն վրա եկերէր . ու յու-  
դա անձային օգնութիւն անանկ յաղ-  
թեց անիկա՝ որ իր ձեռքովը աստղո-  
նիոսը մեռցուց , ու ուրիշ շատ կողո-  
պուտներէն՝ ի զատ աստղոնիոսի թու-  
րը վրայէն առաւ , ու անկէ ետքը ա-  
նիկա ինքը սկսաւ բանեցունել : Աս-  
յաղթութիւն յուդայի անուննոր  
մեծցաւ չորս դին տարած վեցաւ՝ նրէն  
կիմսերոն ըսած ասորեստանի կողմին  
մեծ զօրասկտը՝ ալ աւելի զօրքով  
յուդայի դէմ ելաւ : Յոգայի զօրքը  
իրենց քիչուիւն տեսնելով՝ վախցան  
դէմ դնելու . յուդայալ յորդորելով  
իրենք որ չի վախնան ու սոյ ապաւի-  
նին

'նին' քաջութի վազեց վրանին , ու աւ-  
 թը հարուր հողի ջարդելով՝ թշնա-  
 միներուն բանակը ցիրուցան ըրաւ  
 փախցուց : Ան ատենը անտիոքոս  
 թագաւորը աս յուգայի ըրած յաղ-  
 թութիները բեւով շատ դժվարը ե-  
 կաւ , մտմտաց որ իր բոլոր տէրուէն  
 'նորէն զօրք ժողովէ , ու ինքը իր բո-  
 լոր ուժովը անոր դէմ ելլէ՝ ջնջէ վեր-  
 ցունէ հրէից ազգը : Բայց տեսնելով  
 որ աս բանըս առաջ տանելու բաւա-  
 կան ըստակ չունի իր դանձին մէջը .  
 անոր համար ուզեց որ առաջ պարսից  
 երկիրը երթա զարնէ՝ ու անկէց ըս-  
 տակ հանէ : Աւտի երթալու ատե-  
 նը՝ իր տեղը լիւսիաս անունով մէկ  
 իշխանմը թողուց , ու անոր յանձնեց  
 աս պատերազմիս բաները . և իր ան-  
 տիոքոս ըսած որդիիսլ անոր ձեռ-  
 քը հաւտաց՝ որ ինքը պահէ մեծցու-  
 նէ : Ա իւսիասալ խէր ընելով փիլիսո-  
 սոսի հետ , ( որ եղէմի քաղաքապետն  
 էր , ինչպէս վերը ըսինք , ) աս հրէից  
 դէմ պատրազմին վրա իրեք հողի զօ-  
 րապետ ընտրեց՝ ստղոմէսը , 'նիկա-  
 նորը , ու զօրդիասը . ու ասոնց ձեռքը  
 տրվաւ քառսուն հազար հետեակ  
 զօրք , ու եօթը հազար ձիաւոր . որ  
 երթան բոլոր հրէաստանի երկիրը  
 աւրեն , ու հրէայքը բոլորովին աշ-  
 խարքէս վերցունեն , ինչպէս որ ան-

տիոքոս Թագաւորը մըտմտացերէր ,  
 Վս քանիս յաջողու թեր վրա անանկ  
 ստոյգ էր նիկանոր՝ որ վաճառական  
 ներ կանչեր հետերնին խօսք կասեր .  
 էր՝ որ աս պատերազմիս մէջ գերի  
 բռնած հրէաները իրենց ծախէ՝ ին  
 նըսուէն մարդ՝ մէկ քանքարի , ու կը  
 կարծէր որ՝ միան աս հրէից գերինե  
 րուն գնովը հռոմայեցոց հարուր կմ  
 երկու հարուր քանքարի տարեկան  
 Թագաւորական տուրքը վճարվի :  
 Յուդամակաբէի հետ եղած զօրքը՝  
 որ միան վեց հազարի չափ էին . եր  
 քոր Թշնամիներուն պատրաստուիլը  
 իմացան՝ շատ վախ ինկաւ սրտերնին :  
 Յուդայալ քաջու թք սկսաւ իրենց  
 սիրտ տալ , առջննին դնելով այնչափ  
 մեծամեծ հրաշքները՝ որ անձ ատեն  
 ատեն ըրեր էր՝ իրենց նախահարքը  
 Թշնամիներուն ձեռքէն խալըսելու :  
 Ատքը բոլոր հրէից աղօթք ու պաք  
 դնելով՝ որ անձ աս պատերազմիս բա  
 րի կատարումն տա . զօրքը կարդի  
 գրաւ , ու անանկ Թշնամիներուն դէ  
 մը որ ելաւ , այ օգնու թքը յաղթե  
 լով՝ ան պատերազմին մէջը հրէայքը  
 ինը հազար հողի Թշնամիներէն ջար  
 դեցին , ու մնացածէնալ՝ որ աստին  
 անդին ցրված կըփախէին՝ իրեք հա  
 զարի չափ կոտորեցին , անանկ որ՝ ի  
 րենց ամբարտաւան նիկանոր զօրու  
 պէ .

պետը աղքատի լաթեր հագած՝ ( որ  
 չի ճանչնում ի ու բռնում , ) այնպէս  
 խայտառակաբար անտիոք փախաւ ։  
 Ասկէ՛ ՚ի զատ հրէայքը թշնամինե-  
 րուն բանակէն խելի՛ն կողոպուտալ  
 ձեռք ձգեցին . ու ան վաճառական-  
 ները որ շատ ըստըկով՝ նիկանորի ը-  
 սածինպէս որ իրենք գնելու եկեր-  
 էին , անոնքալ բռնեցին՝ ու ըստակ-  
 նին ձեռվընէն առին . և աս կողո-  
 պուտները յուզայի հրամանովը զին-  
 վորացինկած բաժինէն՝ ՚ի զատ՝ առա-  
 տապէս աղքատաց ու որքոյ բաժնե-  
 ցին ։ Անէ՛ն ետև յուզա նորէն յաղ-  
 թուիննալ ըրաւ մէկալ երկու զօրա-  
 պետներուն՝ տիմոթէոսի ու բաքիդի  
 դէմ , քսան հազարալ անոնց զօրքէն  
 ջարդեց , ու փախցուց իրենք . ու ա-  
 նոնցմէալ շատ կողոպուտ առաւ ։  
 Սիւսիաս անտիոքոսի փոխանորդը ,  
 յուզա մակաբէի յաղթունները որ  
 տեսաւ , ուզեց որ ինքնալ դէմը ել-  
 լէ անոր ուժը փորձէ . ուստի մէկ  
 տարիէն ետքը վաթսուն հազար հե-  
 տեակ զօրքով՝ ու հինկ հազար ձիա-  
 ւորով հրէաստան եկաւ ։ Յուզայալ  
 բոլոր տասնըմէկ հազարով միան անոր  
 դէմ ելաւ , ու աղօթքով իր բոլոր  
 յոյսը նոյ վրա դնելով՝ երբոր սկսան  
 պատերազմիլ՝ մէկէն հինկ հազար  
 ջարդեցին թշնամիներէն , ու անով

բոլոր բանակը ցիրուցան ըրին փա-  
խուցին : Վ. յսպէս որ յաջողեցաւ հը-  
րէից բանը՝ ու ալ գրեթէ բոլոր այլ-  
աղղիները հրէաստանէ հանեցին փա-  
խուցին , անկէ ետե յուգա մակա-  
բէն՝ որ ալ բոլոր հրէից իշխան էր ե-  
ղեր, եկաւ երուսաղէմ , որ իրեք տա-  
րի կռապաշտ այլաղղիներուն ձեռ-  
քը մատնելով իր . ու բոլոր կուռքե-  
րու և կռապաշտական բաներու նը-  
շանները անկէց վերցուց կործանեց .  
ու ձեռք զարկաւ նոյ տաճարը մաք-  
րելու նորոգելու : Վ. նոր մէջը ամ-  
մէն կահ կարասիները նորէն շինեց ,  
ու քհնաները զատեց իրենց կարգին  
կանոնին մէջը դրաւ : և աս յաջո-  
ղուեա համար ՚ի շնորհակալուի նոյ՝  
եօթը որ տօնախմբուի սահմանեց ,  
որ բոլոր հրէայքը ուրախուք կատա-  
րեցին : Վ. յսպիսի հրէից յաջողուի-  
ները տեսնելով իրենց սահմանակից  
կռապաշտ աղգերը , նորէն սկսան  
թշնամուի ընել հրէից գէմ , յուգայ-  
ալ ասոնց ամմէնուն յաղթեց յայանի  
նոյ օգնականութիւն . անանկ որ՝ ան-  
գամ մըն ալ կրպատմովի թէ հինկ փա-  
ռաւոր ձիաւոր կտրիճներ երկինքէն  
ինչամ երեցան սրատերազմին մէջը ,  
որ յուգան մէջերնին առած կրպահ-  
պանէին , ու թշնամիներուն վրանեա  
ձգելով կրկուրցունէին անոնք , որ



չփոթւած իրար կանցնելին , ու աշ  
նանկ կը յաղթուիլին :

ԳՎ : Բ .

Ընդհանուր սապահումը , ու անոր էպիստեմ  
նապած Բֆրնեբուան պարզը հրէից դէմ :

Ընտիրոքոս թագաւորին միտքը դը  
րածը պարսկաստան որ չի յաջո  
ղեցաւ . ու անկէց խայտառակ ետ  
դարձաւ քարիլոնի կողմերն որ հա  
սաւ , հոն լսելով ան իր զօրապետնե  
րուն հրէիցմէ յաղթուիլը . ու յու դա  
մակաբէին հրէաստանի տիրապետե  
լը . սաստիկ կատղեցաւ աս բանիս  
վրա . ուստի ալ ուզեց որ ինքը իր  
զօրքով հրէից վրա ելլէ չիխնայէ ամ  
մէնքը թրէ անցունէ , եղէմ քաղա  
քը հիմնայատակ ընէ : Այլքոր ճամ  
բա ելաւ ու իր կառքը նստած սաս  
տիկ արտորնօք կրակիպէս քշել կու  
տար , որ օրմը ժամմը առաջ հասնի  
աս միտքը դրած անօրէնութիները կա  
տարէ . անատենը նոյ պատու հասնալ  
իր վրան հասաւ . որ յանկարծակի  
կառքէն վար ինկաւ , ու ջարդու բու  
րդ եղաւ բոլոր մարմննը . ու ներ  
սէնալ աղիքներուն զէն գըսաւ որ  
խոցվեցան . ու քիչ քիչ անանկ փրթ  
տեցան որ չորս դիէն որդեր դուրս  
կը թափէին , ու սաստիկ գարշահո

տուէն մարդ քովը չէր կրնար մտե-  
նար : Անտիոքոս ասանկ մահվան  
դուռն որ հասաւ , անատենը խելքը  
վրան եկաւ , իմացաւ որ աս սրտի-  
ծըս անմեղ հրէից վրա ըթած անողոր-  
մութիւններուն համար կը քաշէ . ուստի  
սկսաւ առաջադրու թիւ ընել թէ՛ ա-  
ռողջանալու ըլլանէ՛ հրէից ամմէն  
բաները իրենց դարձունէ , ու տաճա-  
րը առջինինսէս իր ըստըկով ամմէն  
կողմանէ զարգարէ . ու նաեւ ինքնալ  
հրէից ըլլա , և այ մեծ կարողութիւն  
ամմէն տեղ քարոզէ : Այց այ ողոր-  
մութիւն չափը լըցվելով , իր արդար դա-  
տաստանովը երեսէ թողուց ինքը՝ որ  
երթա անանկ չարաչար սատկի օտար  
աշխարքի մէջ :

Իւսիսս երբոր անտիոքոսի մեռնի-  
լը լսեց , շուտմը անոր տղան անտիո-  
քոս անուսով , հօրը տեղը թիւրահան  
աթոռը անցուց , ու իրեն մականուն  
դրաւ՝ եւստատոր կի՛ հօրամոյն՝ իմ  
ազնիւ հօրէ ծնած . ու ինքը իւսիսս  
անոր փոխարքայ ( իմ վէզիր ) եղաւ :  
Ասալ իր հօրը ճամբան բռնեց՝ հը-  
րէից դէմ թշնամութիւն ընելու . ուստի  
նորէն սրատերազմ բացաւ վրանին :  
Այց յուրա մակարէին ըրած քա-  
ջութիւններէն յաղթըվելով , ( որ սս հա-  
մառօտու ես մէջը կը թողունք չէնք  
երկընցուներ . ) ետքը հաշտութիւն  
հէ .

Տետերնին : Մնկէ ետե շատ չանցաւ  
որ՝ դեմեարիոս իրեն հօրեղբօրը որ  
դին եկաւ անտիօք քաղաքը մտաւ ,  
ու ըստաննել տալով աս անտիօքոս  
Թէրը՝ լի սիանալ հետը , ինքը տի-  
րապետեց անոր տէրու իր :

Մնատենը շուտմը աղկիմոս ըսած  
մէկ հրէամը՝ որ առջի սղտորու Թե  
ժամանակը Եղէմ քհնյապետու ի էր  
ըրեր , ու ետքը բարեկարգուէ ատե-  
նը՝ ինկած անկէց վաւնտած էր . Կը  
նաց Թագաւորին ասանկ հասկըցուց  
Թէ՝ քանի որ յուդա մտկաբէն կեցե-  
րէ , ոչ քու տէրու Թիդ հրէաստանի  
վրա ապահով է , և ոչ մեր ազգը հան-  
գիստ խաղաղ կըլլա : Մս ըսած իս  
ուրիշներնալ վրա տրվին՝ տըրդեցին  
Թագաւորը , որ աղկիմոսը մէկ բա-  
քիդ ըսած զօրապետիմը հետ Եղէմ  
խրկեց՝ որ երթան աս հրէից բանե-  
րը կարգի գնեն : Մայց երբ որ եկան  
ասոնք , խաբեբայու թ խէլմը մարդ-  
յուդայի բարեկամներէն բանեցին  
սոյաննեցին . և յուդայիալ ետեէն  
սր ինկան , ու տեսան որ յուդան իր  
եղբարներովը իրենց դէմ յայտնի պա-  
տերազմի պատրաստու Թի կըտեսնէ  
կոր , անատենը Թողուցին դարձան  
Թագաւորին քով , ու նորէն յուդայի  
վրա անանկ գրգռեցին ու սրդողցու-  
ցին Թագաւորը , որ անալ անոնց տէ

զը մէկ երևէ լի իշխանմը նիկանոր ը  
 սաճ՝ աւել լի շատ զօրքով խրկեց որ եր  
 թա յուդան բռնէ, ու իր զօրքը ցըր  
 վէ վերցունէ, ու աղկիմոսը հրէաս  
 տանի քճիյապետ դնէ: Այրբոր եկաւ  
 նիկանոր՝ ու տեսաւ որ յուդա զօրքը  
 վը իրենն դէմ պատրաստըված կեցեր  
 է. ու գիտնալով անոր քաջութիւնը,  
 չուզեց հետը պատերազմ ընել. հա  
 պա ուզեց որ խաղաղութիւն բանը  
 լըմընցունէ: Այց յուդա միշտ իր  
 զգուշութիւն ընելով որ չըլլա թէ խա  
 բէութիւն բանմը ընէ, թող տըվին որ  
 նիկանոր էղէմ եկաւ, ու յուդայի  
 հետ սկսաւ անանկ սաստիկ սիրով  
 ու բարեկամութիւն վարըլիլ, հետը խը  
 նամութիւն ընել, որ աղկիմոս կար  
 ծիք գնաց թէ նիկանորի միտքը բո  
 լորովին փոխըլեցաւ. անոր համար  
 շուտմը գնաց ամբաստանեց թագա  
 ւորին: Ապագաւորնալ շատ սրդողե  
 ցաւ, ու գրեց նիկանորի թէ ատ ձեր  
 րբաճ բարեկամութիւնը չէմ հաւնիր.  
 հապա ինչպէս հրամայեցինէ, ոտը  
 ները ձեռը ընելը կապած յուդան ին  
 ծի խրկես: Աս բանս որ իմացաւ յու  
 դա՝ երեսը ծածկեց. Աիկանորալ  
 ամ կերպով ետեւէ ինկաւ զինքը բըռ  
 նելու. ուստի գնաց էղէմ տաճարը  
 քճիներուն կըպաւ, որ թէ ըսաւ յու  
 դան պահերէքնէ՝ հանեցէք ձեռքը՞

տրվէք. չէ՛նէ ըսաւ, (ձեռքը տաճա-  
րին վրա զարնելով,) աս ւնյ տաճարս  
հիմնայտակ կընեմ, ու ասոր տեղը  
կուռքի մեհեան կըշինեմ: Վահա-  
նաները աս որ ըտեցին, սոսկալով  
տաճարը մտան՝ ու լալով կաղաչէին  
ւնյ որ պահէ իր տաճարը, ու անոր  
բրած հայհոյանքը իրեն չի թողու:  
Նիկանորալ անկէ ետե կատղած՝  
մարդու չէր ողորմէր, հրէայքը տակն-  
ու վրա սկսաւ ընել:

Ըստ ատեններըս հաաքս ըսած մէկ  
ւնձ ապաշտ ու խելացի անուճանի ծեր-  
մը կար էղէմ. նիկանոր ասոր ետեէն  
ինկած վրան հինկ հարուրի չափ զին-  
վոր խրկէրէր՝ որ ողջ բռնեն իրեն բե-  
րեն: Վայց ասիկա աւելի ընտրեց  
քաջութի մեռնիլ քան թէ ան կուա-  
պաշտին ձեռքը իյնալ. ուստի երբ որ  
ալ զինքը բռնելու եղան, ան ատենը  
ասոր ճարը հատած՝ ինք իր ձեռքով  
թուրը իր փորը խոթեց ճրղքեց. ու  
անանկ զինքը պարիսպէն վար ձգեց:  
Ե հոն դեռ չիմեռած՝ այնպէս արուն  
վըլա օտք ելաւ կայնեցաւ՝ փորտիքը  
ձեռքը բռնած դէպի վար երկինքը  
ցուցուց՝ ու ըսաւ, ւոր՝ այսպէս դուն  
ալ իրեն հատուցանես. ու անանկ ին-  
կաւ հողին աւանդեց:

Ետքը նիկանոր իմանալով որ յու-  
գա մահաբէն սամարիտայի կողմերը  
ըլլէ

զօրք ժողոված պատրաստ կեցեր է ,  
 սպասեց ինչպան շաբաթ , ու ան օրը  
 ու զեց որ իր բոլոր ու ժողովրան վազէ :  
 Հեար իր զօրաց մէջ շատ հրէայքաւ  
 կային . ասոնք երբոր աղաչեցին որ  
 ան օրը թողու՝ շաբաթը մը պահեն  
 ինչպէս ամ հրամայերէ . նիկանոր ա  
 սոնց սրբողելով հայհոյեց այ դէմ  
 ու ըսաւ , ամ թող երկինքը հրամայէ ,  
 երկրիս վրա ո՞վ որ ու ժողէ նէ՝ ան  
 կը հրամայէ որ զէնք վերցունեն պա  
 տերազմին : Յուդա մակաբէաւ ան  
 դին իր զօրքը յորդորելու սիրտ տա  
 լու ատենը՝ ամ իրեն մէկ տեսիլքմը  
 ցուցուց , որ իր մարդոցը պատմելով  
 ակելի զօրացան . ու տեսիլքը աս էր .  
 Տեսաւ որ մնիա մը քհնյապէտը իր  
 շնորհալի կերպարն քովէն քեցած՝ ձեռ  
 վըները տարածած հրէից համար ա  
 ղօթք կընէր . ու ցուցունելով անդին  
 կեցած մէկ ուրիշ փառահեղ ծերու  
 նիմը , կըսէր թէ՝ աս երեմիա մար  
 դարէն է , որ եղբայրս իրուք միշտ և  
 հանապաղ ձեզի համար կաղաչէ այ :  
 աս ըսելնին ի՛ երեմիան մէկ ոսկիով  
 պատած թուրմը յուդայի ձեռքը  
 կուտա ու կըսէ . առ աս աստուծ մէ  
 պարգեւած մը թուրքս , ու ասով  
 ըսպաննէ քու բոլոր թշնամիներդ :  
 Ատքը երբորաւ նիկանորի հետ դէմ  
 ադէմ եկան , հրէայքը որ քիչ վոր էին  
 ի

իրենց զօրաստեալին յորդորանքովը  
 սիրտ առնելով՝ ու բոլորովին այ ա-  
 պաւինելով, անանկ քաջութիւնս  
 բազմ ըրին, որ ան մէկ զարնը վեճուն  
 մէջը եռսունը հինկ հազար հոգի  
 թշնամիներէն կոտորեցին, նիկանոր  
 ալ անոնց մէջը. ու մնացածը ցիրու-  
 ցան ըրին: Ատքը ուրախութիւն օրհնենք  
 տալով այ. հրամայեց յուզա որ նի-  
 կանորի գլուխը՝ ու աջ թեւը կտրեն  
 վերցունեն վրայէն. ու եղէմ բերաւ  
 սամէնուն ցուցուց. և անոր հայ-  
 հոյիչ լեզուն հանեց կտոր կտոր ջար-  
 դեց՝ թռչուններուն առջևը ձգեց,  
 ու գլուխը բերդին վրա կախել տը-  
 վաւ. և ան ձեռքնալ որ տաճարին  
 զարկեր սպառնացեր էր՝ թէ պիտի  
 հիմնայատակ ընեմ, տաճարին սու-  
 ջը կախեցին: Այլ աս յազթու թե  
 օրս ալ՝ մեծ տօն սահմանեցին՝ ի շը-  
 նորհակալութի այ:

Գ. Ե. Թ.

Հոգաւ հակաբէն կը մեռնի, սա յոջնաման  
 անոր որչը կանցնի:

Նիկանորը յազթը վեճէն ետքը՝ հրէ-  
 աստանի երկիրը քիչմը ժամա-  
 նակ խաղաղեցաւ. ու ստի յուզանալ  
 ատեն գտաւ հռոմայեցոց գեասպան  
 խրկելու, որ մէջերնին եղած ուխտ  
 ու

ու դաշինքնին նորէն ամուրցունեն ւ  
 Վայց դեմետր թագաւորը նիկանո  
 ըի մեռնելէն ետև՝ նորէն բաքիդը  
 աղկիմոսի հետքսան հազար հետևակ  
 զօրքով, ու երկու հազար ձիաւորով  
 յուդայի դէմ խրկեց: Յուդայի զօր  
 քը, որ անատենը միան իրեք հազար  
 էին, երբոր թշնամիներուն շատու  
 ըութիւր տեսան՝ սրտերնին. կտորեցաւ  
 յուսահատեցան, ու շատնալ քովէն  
 զատուեցան ցրվեցան. սր միան ու թը  
 հարիւր ձիաւորով մնաց յուդա, ու  
 ասոնքալ կը յորդ սրէին զինքը թէ՛  
 աս անգամ որ ասանկ քիչվոր մնացինք  
 ետ կենանք՝ ինչվան սր նորէն մարդ  
 ժողվէնք: Յուդա իրենց պատառ  
 իան տրվաւ քաւ լիցի որ ես թշնամի  
 ներէս երեսըս դարձունեմ փախչիմ.  
 հապա՛ թէ՛ որ ժամանակը հասերէ  
 նէ՛ քաջուք մեռնինք մեր եղբարնե  
 ըր ազատելու համար: Վասնկ ը  
 սաւ՝ ու ան ու թը հարուրով թշնա  
 միներուն մէջը մտաւ, և առտրվանց  
 ինչվան իրիկուն անանկ քաջուք պա  
 տերազմեցաւ, որ անոնց աջ թևը զար  
 կաւ յաղթեց: Վայց ետքը անոնց է  
 տևէն իյնալնինի, ձախ թևին զօր  
 քը եկան զինքը իր մարդիքներովը  
 մէջ առին, ու անատենը յուդայալ  
 նյ այնպէս կարդաւ որ ելովը՝ ինկաւ.  
 ու մնացած զօրքը փախան ցիրուցան  
 է



եղան : Ատրը շմաւոն ու յովնաթան  
 իր եղբարքը՝ եկան վերցուցին յու-  
 գայի մարմինը՝ տարին իրենց հայրե-  
 նական գերեզմանը թաղեցին . ու  
 վրան մեծ սուգ ըրին ինչպսիքը :  
 Յուգայի մեռնելէն ետեւ անտէր որ  
 մնացին հրէայքը , շատ նեղուի կրե-  
 լով բաբիդի ձեռքէն , յովնաթանը  
 անոր եղբարք իրենց քհնյապետ ու ա-  
 ռաջնորդ դրին : Բաբիդ անոր ետե-  
 կէն ինկաւ որ բռնէ սարաննէ . յովնա-  
 թանաւ հետը զօրք ժողոված մէկ ա-  
 նապատ տեղմը քաշվեցաւ : Բաբիդ  
 վրան դնաց ու շարած որ սրորդմ  
 քացաւ հետը . բայց յովնաթան դէմ  
 ելաւ ու անանկ քաջուք պատերազ-  
 մեցաւ՝ որ հազար հոգի կտորեց բա-  
 բիդի զօրքէն՝ ու զինքը փախցուց :  
 Անկէ՛ի զատնաւ ուրիշ անգամմաւ  
 բաբիդ յովնաթանի թշնամիներէն  
 գրգռվելով՝ ու հետը պատերազմե-  
 լով, երբոր յաղթըվեցաւ, ալ իր խել-  
 քը կտրեց որ յովնաթանի քաջուի-  
 նաւ յուգայէն վար չի մընար . ուստի  
 ալ անոր ուղած հաշտուէր՝ բաբիդ  
 խօսք տալով , հրէաստաննէն ելաւ՝  
 ու անտիոք քաղաքը դարձաւ . մանաւ  
 ւանդ որ՝ հոն դեմեար թիւրնալ նե-  
 ղու թէ մէջ էր արէքսանդր եպիփան  
 ըսածին կողմանէ , որ նոր թիւրուի  
 հաստատեց իր սահմանին քովը : Աս-

որ վրա քիչ մը հանդիստ դտաւ յոյնա  
թան, ու մաքմաս քաղաքը նստած,  
սկսաւ ժզիւրդը կառավարել. ինչու  
որ երուսաղէմի բերդը դեռ դեմեա-  
րի թագաւորին զօրաց ձեռքն էր:

ԳՎ: Ժ.

Յոնաթան յահանայապետին հնացած պապ-  
Տոմէինէրը:

Յոնաթանի քաջութիւնը չորս դին  
հռչակիլէլով, աս երկու հրէաս-  
տանի սահմանակից թգւրները գե-  
մեար ու աղէքսանդր՝ որ մէկմէկու  
դէմ էին՝ իրարու ձեռքէն յոյնաթա-  
նը կը ջանային իրենց կողմը դարձու-  
նել, զիսնալով որ անոր օգնուիլը ի-  
րենց շատ ուժ կուտար: Նայց յու-  
նաթան խոհեմութեւն երկու դինալ  
հաւասար կը բռնէր, թէպէտ միա-  
քը բերելով դեմեարի՝ հրէից դէմ  
բրած անօրէնութիւնէրը, անոր բրած  
բարեկամական խոստմունքներուն  
անչափ շէր հաւտար: Հապա աղէք-  
սանդրի վրա աւելի հաւատարմուի  
ուներ, որ զինքը քհնյապետ ճանչ-  
նալով՝ ոսկի թագ ու ծիրանի կապա  
խրկեց իրեն. որ աս մեծ սիրոյ ու  
բարեկամութեան նշան էր: Այտքը գե-  
մեարալ աս բանս լսելով՝ թէպէտ  
նորին բարեկամութեւն թուղթ գրեց  
հը

Տրեխց, որով շատ ազատութիւնը կուտար իրենց . բայց սյսու ամիւ՛ Տրեխցը չի հաւտացին իրեն , հաստատ կեցան աղէքսանդրի հետ :

Ասկէ ետքը աղէքսանդրը պատկերազմելու դեմեարի վրա՛նու քաջութիւն յաղթելով սպաննեց դեմեարը , ու երբոր անոր տէրու թիւր թուր իր տակը առաւ , ստղոմէոս եգիպտացոց թագաւորին հետնալ ուղելով բարեկամանալ՝ անոր կղէոպատրա ըսած աղջիկը իրեն կին առաւ : Այլ թոր աս թիւրական հարսնիքիս սատաճառովը ան երկու թիւորները մէյտեղ ստղոմայիդ քաղաքն էին , յով նաթանալ աղէքսանդր թիւրէն հրապիրոված՝ մեծ մեծ պարգևներով գընաց ան հարսնիքը . ու հոն աղէքսանդրը ինքը շատ մեծարեց , ու նորէն ծիրանի կապա հագցունելով փառաւորեց . և ամենեւին մտիկ չի գրաւ յովնաթանի թնամիներուն՝ որ գայեր վրան ամբաստանուի կրնէին թագաւորին . ու անանկ փառաւորապէս ելաւ նորէն Եղէմ գարձաւ : Աս աղէքսանդր թիւրը քիւմը ատենէն ետքը՝ կամաց կամաց թուլնալով ու զինքը ուրախուէ (կի՛ գէֆքի սէֆայի) տալով , անդիւն՝ մեռած դեմեար թիւրին մեծ որդին դեմեար նիկանոր ըսած՝ ելաւ իր հօրը տէրու թիւր

Թիւր նորէն ձեռք ձգեց, ու անտիօք  
 քաղաքը եկաւ նստաւ. Վսիկա ռի  
 պահելով յօնաթանի վրա՝ Թէ ին  
 չու իր հօրմէն զատվեցաւ՝ աղէքսան  
 դրի դին եղաւ. անոր համար ապօ  
 ղոնիոս մէկմը զօրապետ ըրաւ, ու  
 ութը հազար հետեակ զօրքով և ի  
 բէք հազար ձիաւորով հրէաստան  
 յօնաթանի վրա խրկեց: Վսորդէմ  
 ելաւ յօնաթան իր շմաւոն եղբօրը  
 հետը՝ տասը հազար զօրքով, ու անանկ  
 քաջութիւն տատերազմ ըրաւ, որ անոր  
 ութը հազարը ջարդեց, և դագոն  
 կուռքին տաճարը՝ հոն փախչողնե  
 րուն վրան երեց, ու անոնցմէ շատ  
 կողոպուտ առած անանկ եղէմ դար  
 ձաւ: Վս բանիս համար էվէլքօք  
 ուրախանալով աղէքսանդր Թագա  
 ւորը, նորէն յօնաթանի Թիւրու  
 կան նշան տարդե խրկեց, ու անոր  
 իշխանուն երկիրը մեծցուց: Վնկէ  
 ետե շատ չանցաւ որ մեռուցին աղէք  
 սանդրը, ու ստղոմէոսնալ մեռաւ՝  
 որ խաբէբայութի մտեր յտիշտակեր  
 էր աղէքսանդրի տէրութիւնը, ու իր կը  
 ղէնօրատրա աղջիկը անկէց հաներ  
 դեմեօր Թիւրին տրվեր էր: Աւստի  
 երկուքին մեռնելէն ետքը դեմեօր  
 աւելի զօրացաւ, ու բոլոր իր հօրը  
 Թիւրութիւն տիրապետեց. և ան վերի  
 ըսած պատերազմէն ետե ինքնալ

ակասալ յոյնաթանի հետ բարեկա-  
մութի ընել : յոյնաթանալ անկէ ե-  
տե զինքը գլուխ ճանչնալով շատ  
սլարգեներով գնաց առջևը ելաւ .  
անալ զինքը նորէն մեծարելով հրէից  
ազատուէ գիր տրվաւ :

Մնատենները տրխիսն անունով մէկ  
ղորատեամբ , մեռած աղէքսանդր  
թագաւորին տղան անտիոքոս ը-  
սած՝ կուղէր հօրը տեղը թագաւոր  
դնել . անոր համար դեմեարի վրա  
որ սլատերաղմ ելաւ՝ յոյնաթան դե-  
մեարի ուղածինպէս իրեն իրեք հա-  
զար ինչլացի զօրք օգնական խրկեց .  
որ եկան քաջութեամբ հազար հոգի  
թշնամիներէն ջարդելով ձեռվրնէն  
խաղընեցին դեմեար թիւրը : Վայց  
դեմեարը ինչ որ խոստացեր էր՝  
աս բարերարուէս փոխարէն հրէից  
ընելու , ազատվելէն ետե՝ խօսքէն  
դարձաւ չի կատարեց . անոր համար  
ինքնալ սլատիժը գտաւ , որ ետքը  
բոլոր զօրքը զինքը թողուցին՝ ու ան  
տրխիսնին հետ մէկ եղան , ու զինքը  
փախցունելով անտիոքոսը թագա-  
ւոր ճանչցան իր տեղը : Մնալ եր-  
բօր աթոռը նստաւ՝ ու խառն գաշինք  
հաստատեց յոյնաթանի հետ , և զին-  
քը քհնյպետ ու գլուխ ճանչնալով  
հրէից՝ իրեն թիւրահան ընծաներ  
խրկեց , և անոր շմաւոն եղբարնալ

զօրասլետ դրաւ : Ատքը աս երկու  
 եղբարքսալ շատ քաջու թիւներ ըրին՝  
 անտիոքոս թիւրը իրեն թշնամիսե  
 թէն պահելու . անոնցմէ մէկնալ տրի  
 փոնը եղաւ , որ անտիոքոսը ըսպան  
 նել կուղէր՝ որ ինքը անոր տեղը թա  
 գաւոր ըլլա . ու երբոր տեսաւ որ  
 յոյնաթան քառասուն հազար ու  
 ժ ուլ զօրքով կեցեր է , վախցաւ դէմը  
 պատերազմ բանալու : Աւտի խաբէ  
 ուք հետը սկսաւ բարեկամուի ցու  
 ցունել , ու անանկ զօրքը քովէն հե  
 ռացունելով՝ միայն հազար հոգի հե  
 տը առած պտղումայիս քիչքն որ մտաւ  
 յոյնաթան . տրիփոն քաղ թին դռնե  
 րը վրան գոցել տրվաւ . ու այնպէս  
 զինքը բռնեցին կապեցին , հետի ե  
 կած մարդիքը բոլոր թրէ անցուցին :  
 ու անկէ ետեւ տրիփոն նորէն զօրք  
 ժողվեց , պատրաստըվեցաւ որ հրէ  
 աստանի վրա ելլէ :

ԳՎ : ԺԼ :

Ե Գառն էլ յաջորդէ յոչնախանի :

Արբոր յոյնաթան բռնըվեցաւ , հը  
 թէ աստան անանկ ձան ելաւ թէ  
 մեռած է , ուտի սաստիկ տրտմած՝  
 ու դրեթէ յուսահատած էին հրէայ  
 քը : Ան ատենը շմաւոն ( որ ինչպէս  
 ըսինք՝ մատաթիայի հինկ որդւոց մէ  
 Ե

ջը պինտ մեծերնին էր , ) քովը կան-  
 չեց հրէայքը ու միտիթարեւով սիրտ  
 տրվաւ իրենց՝ ու ըսաց թէ՛ եսալ  
 իմ եղբարնեքուսպէս՝ այ օրինացը ու  
 մեր աղգին աղատուէր համար պատ-  
 րաստ եմ իմ կեանքըս տալու : Աողո-  
 վուրդնալ շատ ուրախացաւ ասոր վը-  
 ըա . ու ինքը յովնաթանի տեղը իրենց  
 առաջնորդ ընտրեցին : Ատքը տրի-  
 փոն երբոր հրէից վրա եկաւ՝ ու տե-  
 սաւ որ շմաւոնը ալ զօրապետ եղած՝  
 սյաաերաղմի աղէկ սպատրաստութի  
 տեսեր է , ինքնալ խաբէուք բանը  
 փոխեց , դեսպան խրկեց շմաւոնի ը-  
 սելու թէ՛ յովնաթանը հարուր քան-  
 քար արծաթ տալիք ունէր թգլրա-  
 կան գանձին , անոր համար քովոս  
 բռնըված կեցեր է . ուստի եթէ կու-  
 զէք որ ազատի , աս ըստակըս խրկե-  
 ցէք , ու անոր երկու տղաքնալ իմ  
 ձեռքս սպտանդ տրվէք , որ զինքը  
 թողում : Շ մաւոն թէնկտ իմացաւ ա-  
 նոր չար միտքը , բայց այսու նմիւ՛ ըսա-  
 ծինպէս խրկեց ան ըստակը ու տղա-  
 քը , մտածելով որ՝ չըլլա թէ՛ աստին  
 հրէաներէն ետքը գըլխացաւուի քա-  
 շէ , որ ըսեն թէ՛ ազահուք ըստակը  
 չիտրվաւ , ու կորսընցուց ան պիտվա-  
 կան մարդը : Աւ անանկ եղաւ . տրի-  
 փոն ասոնք առնելէն ետե՛ջէ թէ՛ յով-  
 նաթանը չիտալըսեց , հապա բռնեց  
 ին

մեռցուցալ . ու ինքը ելաւ իր տեղը  
 դարձաւ : Ան որ լսեց շմաւոն , մար-  
 դիք խրկեց անկէց վերցուց յովսա-  
 թանի մարմինը մովգիիմ քիւքը բե-  
 րաւ իր հօրը ու մէկալ եղբարց գե-  
 ղեզմանը դրաւ : Եւ աս գերեզման  
 ներուն յլրա փառաւոր քարաշէն շին  
 վաճք շինեց , որ յիշատակնին անմուաց  
 մնայ : Անկէց ետեւ ալ շմաւոն զըզվե-  
 ցաւ տրիփոնէ , որ աս յովսաթանի ը-  
 րած անդ թուէն ի զատ՝ դնաց դաղ-  
 տուկ անտիոքոս թագաւորը սպան-  
 նել տրվաւ , ու ինքը անոր թիւրու-  
 թիր յափշտակեց : Աւստի ասալ իմա-  
 նալով որ անդիէն գեմետը թագաւո-  
 րը նորէն իր տէրութիր կուժովցունէ  
 կոր , ինքնալ անոր ընծաներով դեւ-  
 սպան խրկեց , ու անկէց հրէից շատ ա-  
 զատուիներ առաւ :

Ասոր վրա խելմը տտեն խաղաղութի  
 վարեց շմաւոն իր իշխանութիր , ինչ-  
 վան որ անտիոքոս ըսած մէկմը թա-  
 գաւորական ցեղէն , որ սկիզբը շմա-  
 ւոնի բարեկամութի կրցուցունէր , ետ-  
 քը երբոր ելաւ յաղթեց տրիփոնի ու  
 թիւրութիր բոլորովին տիրապետեց ,  
 սկսաւ շմաւոնի հետ թշնամութի եր-  
 թալ , ու տրված ընծաները , Եւ եր-  
 կու հազար իրեն օգնութե համար  
 խրկած զօրքը , անարդեց ետ դար-  
 ձուց : Ատքը աթենոքիոս իր բարե-  
 կա



կամը խրկեց շմաւոնի ըսելու թէ՛  
 իմ հայրենական քաղաքներըս որ աս-  
 չափ տարի բռնուք տիրապետերէք,  
 ու անչափ տեղվանք աւրերէքնէ՛ ա-  
 նոնց դինը տըվէք, ու անկէ՛ ի դատ  
 ասչափ ատենի թիւրական խափան  
 ված մնացած տուրքերը տըվէք. թէ  
 որ չէք ուզեր՝ որ բռնու թիւ վրանիտ  
 ելլեմ: Շմաւոնալ չի վախցաւ իրեն  
 պիսն տըվաւ թէ՛ օտարի երկիրը մենք  
 յափշտակած չենք, մեր հայրենա-  
 կան երկիրները թշնամիներուն ձեռ-  
 քէն առերենք. միայն յօսպէ ու դա-  
 զարա քաղաքներուն համար որ դուք  
 հարուր քանքար կուզէք, անոր ըս-  
 տակը կուտանք: Վս պիսնն որ լտեց,  
 աստիկ սրդողեցաւ թիւրը, ու կեն  
 դեբոս ըսած մէկ զօրապետմը շատ  
 զօրքով հրէաստան խրկեց: Շմաւոն  
 ալ անատենը քսան հազար զօրք տը-  
 վաւ իր երկու տղոցը ձեռքը, որ ա-  
 տոնց մէկը յուգա կըսվէր, ու մէկալը  
 յոհան, ու անոնց սիրտ տըվաւ յօրդո-  
 րեց՝ որ այսուհետեւ իրենք հրէից ազ-  
 դին թշնամիներուն դէմ ելլեն պատե-  
 րազմին, որովհետեւ ինքը՝ ալ ծերու  
 ցեր էր: Վսանկ այ օգնու թիւրը որ ե-  
 լան ասոնք՝ շատ ջարդ տըվին յազ-  
 թեցին թշնամիները, ու յոհան վա-  
 խըստականներուն ետեւէն իյնալով  
 տարաւ հասուց ազովտոսի կողմերը

մէկ բերդմը , ու բերդը վրանին էրեւ  
լով երկու հազար հողիսւլ հոն մեռ-  
ցուց . ու այսպիսի քաջուք հրէաս-  
տան դարձաւ :

Ըն ատենները պտղովէոս աբուբ-  
բէնց ըսած մէկմը կար՝ որ շմաւոնի  
փեսայ էր եղեր . ու երիքովի կողմե-  
րը իշխան դրված էր : Ըսիկա շմա-  
ւոնի տէրու թէր վրա աչք տնկելով  
անդամմը շմաւոն ան կողմերը տես-  
եր թաւնինի , դովք ըսած քաղաքը՝  
պտղովէոս խաբէուք ինքը սեղան մե-  
ծարեց՝ անոր երկու տրղաքնաւ հետը  
մատաթի ու յուդա . ու հոն տեղը  
ուրախուք ուտել խմելէն ետքը՝ յան-  
կարծ պտղովէոս՝ որ իր մարդիքները  
վը պատրաստըված էր՝ վրան վաղեց  
ու սպաննեց շմաւոնը իր տղաքնե-  
րովը և ծառաներովը : Ատքը աս բա-  
նըս շուտմը խրկեց իմացուց անտիո-  
քոս թագաւորին , որ իրեն օգնական  
զօրք խրկէ՝ որ հրէաստանը բռնեն  
տիրապետեն , մակաբայեցոց ձեռ-  
քէն հանեն . ու գազարա քաղաքնաւ  
մարդիք խրկեց՝ որ շմաւոնի մէկաւ  
յովհան տղանաւ հոն բռնեն մեռ-  
ցունեն : Մայց յոհան աս բաներըս  
առաջուց իմանալով շուտմը ան կող-  
մերը բռնեց սպաննեց , ու իր հօրը  
տեղը ինքը անցաւ՝ քահանայապետ  
եղաւ :

Տոս կրվերջանա մակաբայեցոց դիրքը , ու հրէից բոլոր պատմութիւնը , որ հին կտակարանաց դրքերուն մէջ կը պատմուի : Ասոց յարմար կերևա որ ասկէց սկսեալ ինչպէս յօի քօի տն մերոյ ծնունդը , իմ մնացած հարուր եռսունը մէկ տարւան ատենի գրւած խաւոր հրէից ազգին հանդիպածնէրը՝ համառօտ պատմենք , որով շարունակեալ կը կաջի հին կտակարանին պատմութիւնն որ կտակարանին հետ :

Գ Վ : Ժ Կ .

Յաւելուած հրէից պատմութիւնը ինչպէս յօի ծնունդը :

Յոհանն շմաւոնի որդին՝ որ հիւրկանոսալ կոչվեցաւ , ( ինչպէս կըսեն՝ հիւրկանիա դաւառը մէկ յաղթութի մը ընելու պատճառով , ) պտղով մտնի յաղթելէն ետե՛ք բոլոր հրէաստանի ինքը սկսաւ տիրապետել իր հօրը տեղը : Այլ թէպէտ անկէ ետքը անտիոքոս իր թշնամիներէն խաղաղանալով նորէն բոլոր ուժովը եկաւ եղէմ պաշարեց . բայց յոհանն քաջութի պաւտերազմելով բանը հոն հասցուց որ ալ գրեթէ անոր ճարը հատած հատուիրաւ հետը : Ատքը աս անտիոքոս անչափ բարեկամացաւ յոհանի հետ , ու քաջութի դիէն անանկ մեծ

կրօնեպէր անիկա , որ պարսից դէմ  
պիտրղմ ելլալու ատենը յոհաննալ իր  
զօրքովը հեար առաւ , որ հան շատ  
յաղթու իններ ըրաւ : Մայց ետեւ ան  
տիօքոսի բանը ձախորդ երթալով  
երբոր ինքը զինքը ըսպաննեց , ու  
ան պատճառով զօրքն որ ցրվեցան ,  
ան ատենը ալ յոհան փառաւորապէս  
հրէաստան դարձաւ , ու բոլորովին  
տգատու թի գտնելով՝ հրէաստանի  
սահմանը նորէն մեծցուց , բոլոր քո  
վը եղած մանրը աղդերը քաջուք իր  
տակը առաւ : Միայն թէ աս ալ  
կրպատմը վի որ՝ ան ատենները հրէից  
մէջ սադուկեցիի ու փարիսեցիի ա  
ղանդները տարածված ըլլալով , յո  
հան ետքերը զինքը սադուկեցիներ  
ըուն կողմը ցուցուց . որով մակա  
բայեցոց բարի անունը աւրեց , ու ա  
սով ինքնալ իր զաւկրներովը հրէից  
ատելի եղաւ :

Յոհանի հինգ տղոցը մէջէն արիստո  
բուղոս ըսածը հօրը մեռնելէն ետեւ  
առաւ իշխանութիւնը , ու ինքը զինքը  
հրէաստանի թիւր անտէանեց : Ալ  
աս անունս հաստատ պահելու հա  
մար՝ իր մարը , որ անալ իշխանութ  
ետեւէ էր՝ մեռցուց . ու իրեք եղբար  
ները բանտի մէջ գոցել տրվաւ . և  
մէկալ եղբարը անտիգոնոս ըսած ,  
որ իրեն թիւրութե ընկեր էր առեր  
ան

անգամ մը պատերազմէն յաղթուի  
 դառնալնինի, անոր վրայալ արիատո-  
 բուղոս կարծիք առնելով թէ ինքը  
 կուղէ թիւրուիր յափշտակել. անո-  
 ղորմաբար ան ալ մորթել տրվաւ .  
 ի՛նչոյ նոյ գատաստաննալ շատ չուշա-  
 ցաւ՝ վրան հասաւ, որ մէկ տարինն  
 աւելի չի քըշեց իր իշխանուիր . հա-  
 տա ինչպէս կը պատմեն, ուր որ իր  
 եղբորը անմեղ արունը թափել տը-  
 վաւ՝ անտեղը իրմէ այնքան արուն ե-  
 կաւ՝ որ ալ խրխտրված ինկու հո-  
 գին փչեց .

Վրիտոբուղոսի կինը զաւակ չունե-  
 նալով՝ երկանը մեռնելէն ետե իր  
 տագերը մէկը աղեքսանդրոս յան-  
 նէոս ըսածը՝ բանակէն հանել տրվաւ,  
 ու հետը կարգը վեցաւ, և առջի եր-  
 կանը տեղը անիկա թիւր ընտրեց .  
 Մսիկա երբոր իշխանուիր ձեռք ձը-  
 գեց՝ թէպէտ պատերազմական քա-  
 ջու թիւ հրէաստանի սահմանը շատ  
 մեծցուց . բայց իր անկարգութիւն և  
 մանաւանդ անգութ անողորմութիւն  
 սաստիկ ատելի եղաւ հրէից, անանկ  
 որ՝ ալ սկսան գաղտուկ ետեւէն պը-  
 ալտիլ որ զինքը ըսպաննեն . Վղէք-  
 սանդրոս աս իմանալով աւելի կատ-  
 ղեցաւ, ու ինչպէս կըսեն՝ վեց տար-  
 վան մէջը յիստուն հազար հոգիի գը-  
 լուխ կտրեց, և մէկ հեղմալ ութը  
 X 4 հա

Հարուր հոգի հրէից մեծամեծնե-  
րէն , որ աս իրեն ըրած բռնակալու  
Թիները չէին հաւնէր՝ իրեն դէմ կը  
խօսէին , բռնել տրվաւ՝ ու ինքը սե-  
ղան նստած ուրախութեւն ուտել խմե-  
լու ատենը՝ մէկէն ասոնք խաչի վրա  
կախել տրվաւ . ու աս հերիք չէ , ան  
ողորմելիներուն կնիկները ու զաւկը-  
ները իրենց աչաց առջևը բերաւ մոր  
Թել տրվաւ : Վս աղէքսանդրոս Թա-  
գաւորը ետքերը չափէն աւելի զին-  
քը գինիի տալով , և ան պատճառովը  
իրեք տարիալ հիւանտունի քաշէլէն  
ետե՛ իր իշխանութիւնը քսանը եօթը  
տարին մեռաւ : Ատեկն Թէպէտ եր-  
կու որդիք Թողուց՝ մէկը հիւրկա-  
նոս՝ ու մէկալը արիստոբուղոս ը-  
սած , բայց ասոնք դեռ պղտիկ ըլլա-  
լով՝ Թագաւորուն ժառանգուիլը իր  
աղէքսանդրա ըսած կնկանը յանձ-  
նեց . որ ան ալ քհրիստոսի՛ր՝ հիւր-  
կանոսի տրվաւ , ու Թագաւորական  
կառավարուիլը ինքը կընէր , փարի-  
սեցիները առաջ քաշելով՝ ու անոնք  
իրեն կռնակը ընելով , որովհետեւ  
ինչպէս կըսեն՝ անժամանակները աս  
փարիսեցիները բռնէր էին , ու իրենց  
խօսքը խիստ անցուկ էր :

Վղէքսանդրա Թագուհին՝ որ սողո-  
մէ ալ կըսվի , ինը տարի խելօք ու  
խաղաղութեւն կառավարելէն ետքը եր-

բոր մեռաւ՝ բոլորովին հիւրկանոսի  
 ձեռքը մնաց իշխանութիւնը : Աայց հիւր  
 կանոս մէկ թուլ ու անզօր մարդ մը  
 ըլլալով, ու արխատօքուղոս՝ իր եղ-  
 քարը անոր ներհակ՝ յանդուգ ու տա-  
 քարուն՝ ( որ իրեն մօրը ատենէն ինքը  
 գլուխ քաշէր էր, ) հիւրկանոսի վը-  
 րան սլատերազմ ելաւ . ու հիւրկա-  
 նոսը յաղթը վէլով՝ դէմ չի կրնալով  
 դնել խոնարհեցաւ գնաց հաշտուի  
 խնդրեց եղբօրմէն : Արխատօքուղոս  
 ալ աս դաշամք հաշտուիը ըրաւ հե-  
 տը՝ որ թագաւորական ու քննյապե-  
 տական իշխանութիւնը ինքը ընէ, ու  
 հիւրկանոս երթա իր տունը հան-  
 դիստ նստի : Ասանկ իրեք տարիի  
 չափ խաղաղութիւն կենալէն ետքը՝ մէկ  
 անգ իսլատրոս ըսած ունեւոր մարդ մը  
 եղումայեցի կիմասկաղոնացի, նորէն  
 տրդեց հիւրկանոսը, որ գնաց արե-  
 տաս արաբացոց թագաւորին ինկաւ՝  
 որ իրեն իրաւունքը սլատսլանէ . ա-  
 րեւտասալ զօրքով արխատօքուղոսի վը-  
 րա եկաւ, ու արխատօքուղոսը փախ-  
 ցունելով ինքը սկսաւ հրէաստանի  
 վրա տիրապետել : Անչվան որ սկա-  
 րոս ըսած մէկ հումայեցոց զօրապետ  
 մը արխատօքուղոսէ չորս հարուր քան  
 քար առաւ՝ արեւտասի աչքը վախ-  
 ցուց, որ եղէմէ ելաւ գնաց . ու նորէն  
 արխատօքուղոս հիւրկանոսի վրան  
 վա.

վազեց եօթը հազար հողի ջարդեց՝  
անանկ ինքը առաւ տէրու իր :  
Ըսայց ան ատենները պոմպէոս հռո-  
մայեցոց մեծ զորապետը ասորեստա-  
նի կողմերը դառնելով, ( որ տիգրան  
հայոց թագաւորը հռոմայեցոց հետ  
հաշտու թի ընելով իրենց թողուցեր  
էր, որով բոլոր հրէաստան հռոմայե-  
ցոց տէրուէ ներքէն անցեր էր. ) աս-  
երկու եղբարքս՝ հիւրկանոս ու արիս-  
տոբուղոս՝ պոմպէոսի պարդէներով  
դեսպան խրկեցին, ու աղաչեցին որ  
իրենց դատաստանը ինքը կարէ՛ իրաւ-  
ւունքը ցուցունէ : Պոմպէոսալ էր  
բո՛ր հրէաստան երթալու եղաւ որ  
աս բանըս տեսնէ, արիստոբուղոս իր  
վրա վախ ունենալով սկսաւ բերդերը  
ամուրցունել ու պատերազմի պատ-  
րաստուի տեսնել : Ըսայց աս բանըս  
աւելի գէշ եղաւ, ինչու որ՝ պոմպէոս  
ալ թշնամու ք գնաց եղէմը զարկաւ  
առաւ, ու հիւրկանոսը նորէն քահա-  
նայապետ ու թագաւոր դրաւ. և  
հրէայքը հռոմայեցոց հարկատու ը-  
նելով աս տուրքերուս անդիպատրոսը  
վերահեցու դրած՝ ինքը արիստոբու-  
ղոսը իր զաւկներովը կստլած հետը  
առաւ անանկ յաղթու ք հռոմ դառ-  
նալու : Ըս ճամբորդուերս մէջը ա-  
ղէքսանդրոս ըսած արիստոբուղոսի  
մէկ որդին՝ ձեռքէ փախաւ հրէաս-  
տան



տան եկաւ . ու իրեն հետ խելմը զօրք  
 ժողովեց մէկ քանի բերդմը առաւ  
 սկսաւ հռոմայեցոցմէ գլուխ քաշել  
 տիրապետել . անոր վրայալ գարիա  
 նոս հռոմայեցոց զօրապետը հասաւ  
 յաղթեց ցրուեց իրենք, ու աղէքսանդ-  
 րոսը փախուց : Ալ թը տարիէն ետքը  
 արիստոքուղոս իր մէկալ անտիգո-  
 նոս ըսած տղովը հռոմայի բանտէն  
 ինքնալ փախած հրէաստան եկաւ ,  
 ու երբօր աղէքսանդրոս տղին հետ  
 սլատրաստու թի կըտեսներ որ նորէն  
 գլուխ քաշէ , հռոմայեցիք բռնեցին  
 զինքը ու նորէն իր երկու տղաքներու  
 վը հռոմ խրկեցին : Անկէ ալ ետքը  
 թէպէտ յու լիոս կայսեր հրամանովը  
 ազատեցան , բայց ինքը արիստոքու-  
 ղոս ալ մէյմալ ետ չի դարձաւ , հա-  
 սկա հոն պոմպէոսի բարեկամներէն  
 դեղով մեռաւ , ու աղէքսանդրոսալ  
 եկաւ անտիոք քաղաքը բռնըվեցաւ  
 հոն ըսպաննըվեցաւ :

Աս առեաններըս յու լիոս հռոմայեցոց  
 կայսրը՝ պոմպէոսի թշնամին՝ ասո-  
 րեստանի կողմերը գտնըվելով, թէ-  
 պէտ անտիգոնոսը արիստոքուղոսի  
 օրդին՝ գնաց լալով անոր օտքը ինկաւ  
 ու իր հօրը և եղբօրը մահը առջևը  
 դնելով, ( որ միան իրեն կողմը ըլլա-  
 լան հմը պոմպէոսի բարեկամներէն  
 սպաննըվեցան , ) հրէաստանի իշխա-

նուիր ինքը ուղեց առնել . բայց բան-  
 մը չիկրցաւ ընել . որով հետեւ անդի-  
 պատրոս, (որ հիւրկանասի հետ խիստ  
 բարեկամութեամբ կապուելով, մէյտեղ եղ-  
 բօր պէս կրկառավարելին հրէաստա-  
 նը, ) յու լիոսի աչքը անանկ մտած էր  
 որ՝ նորէն անոնց իշխանուիր հաստա-  
 տեց յու լիոս : Ատքը անդիպատրոս  
 կամաց կամաց կառավարուէ մէջ խո-  
 թեց իր երկու որդիքը, մէկին անու-  
 նը փաստայէլ ըսած՝ որ եղէմ դրաւ,  
 ու մէկալը հերովդէս՝ դալիլեայի  
 կողմերը : Աս երկուքսալ իրենց կա-  
 ռավարուէ մէջը շատ խելք ու քա-  
 ջուհներ ցուցունելով՝ ամմէնուն սի-  
 բեւի եղան, մանաւանդ հերովդէսը .  
 անանկ որ՝ հիւրկանասի անունը միան-  
 կար, ու բոլոր կառավարուիր անդի-  
 պատրոս իր տղոցմովը կրտեսներ .  
 ինչպէս որ ինքնալ մէկ ուրիշէմը գե-  
 ղած մեռաւ . ու անկէ ետքը հերով-  
 դէս ալ աւելի երես գտնելով հռո-  
 մայեցոցմէ՝ սկսաւ ինքնիշխան թա-  
 գաւորի պէս վարել իր տէրուիր :  
 Ան Գմկը անտիդոնոսնալ ինչպէս ը-  
 սինք՝ տեսնելով որ հռոմայեցոց աղա-  
 ջելով՝ բանմը չիկրցաւ ընել . դարձաւ  
 բազաիրան ըսած հայոց մեծ զօրս-  
 պետին գիմեց, (որ տիգրան Թագա-  
 ւորը զինքը նորէն շատ զօրքով հռո-  
 մայեցոց դէմ խրրկելէր . ) ու անոր  
խոս

խոստացաւ որ՝ եթէ Տիւրկանոսի տե-  
 ղը զինքը եղէմի քննյապետ ու թա-  
 գաւոր գնէ՛նէ , իրեն հազար քան-  
 քար ոսկի տա՛նու հինկհարուրալ աղ-  
 վոր կնիկ : Տիւրկանոս ու փասայէլ  
 տեսնելով բազափրանի մեծ ուժը , որ  
 զօրքը գնէլ զօրապետին ձեռքը տը-  
 ված՝ վրանին խրկեց . ալ գէմ չի գրին՝  
 հետը հաշտուի ըրին , սիրով ընդու-  
 նեցան իրենք . բայց հերովգէս աւելի  
 շատգէտ փրթաւ , որ շուտմը տունը  
 տեղը ժողվեց գնաց մէկ անառիկ  
 բերդմը մտաւ . ու ետքը անկէց ալ  
 մինաւոր ելաւ հռոմ փախաւ : Ատ-  
 քը երբոր Տիւրկանոս ու փասայէլը  
 անանկ խափված ելան բազափրանի  
 քով գացին՝ որ իրենց բանը հողա-  
 անատենը բազափրան երկուքնալ  
 կապած անտիգոնոսի ձեռքը տը-  
 վաւ : Անտիգոնոս ալ մէկէն Տիւր-  
 կանոսի անկաճները կտրել տրվաւ ,  
 ( կի՛մ ինչպէս կըսեն՝ կատղած ինքը  
 վրան վազեց խածնելով փրցուց , ) որ  
 թէ մէկմնալ բանը փոխվինէ՛քահա-  
 նայապետ չիկրնա ըլլալ . ինչպէս  
 մովսիսահան օրէնքը կարգիլէ , որ  
 այսպիսի օրակասաւոր մարդ քահա-  
 նայապետ չըլլա : Փասայէլնալ բան-  
 տը դրած՝ ձեռվըներնոր կապված կե-  
 ցերէր , յուսահատութէն ինք իրեն  
 գլուխը քարի զարնելով սպաննեց  
 զին .

զինքը : Ա բազափրան՝ անանկ ան  
տիգոնոսը եղէմ թիւր ու քահանայա  
պետ դնելով, հիւրկանոսը բռնած  
ուրիշ հրէից գերիներուն հետը ա  
ռաւ հայաստան տիգրան թիւրին  
տարաւ : Ատքը ատենով աս հիւրկա  
նոսը թէպէտ գերութիւն դարձաւ .  
բայց մէկմընաւ քահանայապետուի  
չըրաւ :

Իսկ հերովդէս ինչպէս ըսինք՝ հռոմ  
որ գնաց՝ աս բաներըս պատմեց, ան  
կէց անտոնինոսի հիւսպատոսին ձեռ  
տեսնէք , սիտոր ատեն գա որ՝ ատոր  
մէկ քարը մէկալին վրա սիտի չի թո  
ղուն : Ի՛նչէ ետքը երբոր գնացին  
ձիթեանեաց լեռը նստան՝ որ տաճա  
րին

րին դիմացն էր . յժ նորէն աս բանիս  
վրա երկան խօսեցաւ , թէ ինչպէս  
սոսկալի պատերազմներով եղէմ պի-  
տի կործանի . և իրեն հաւատացեալ  
ները ինչ նեղութիւնք պիտի քաշեն .  
ու թէ աշխարքիս ետք ինչպէս պի-  
տի մարդիք իրար անցնին . և ինքը  
ինչպէս փառաւորուի պիտոր դա՛ սր  
վերջին դատաստանը ընէ :

Մասններուս ետեւէն՝ աս առակներս  
ալ պատմեց : Մաստենը ըսաւ ար-  
քայուին երկնից կընմանի տասը կու-  
սանքներուն , որ իրենց լապտերները  
( յի ֆէնէճները ) ձեռվընին առած  
դացին որ փեսան ու հարսը դիմաւո-  
րեն : Մտոնցմէ հինկը յիմար ( յի ան-  
խելք կի՛ խէնթ ) էին , ու մէկալ  
հինկը իմաստուն էին : Յիմարները  
լապտերնին ձեռվընին առին , ու շի  
մտածեցին որ՝ հետերնին ուրիշ եղ-  
ալ առնեն . քայց իմաստունները ի-  
րենց լապտերներուն հետք ուրիշ ու  
մանով եղ ալ առին : Մտջի բերանը  
փեսան որ ուշացաւ չեկաւ , ասոնց  
ամմէնուն քունը տարաւ քընացան :  
ետքը կէս գիշերուն յանկարծ ձան-  
եւաւ թէ՛ ահա փեսան կուգալոր՝  
շուտ ըրէք առջևը ելէք : Մաստենը  
աս ամմէն կուսանքը եւան՝ ու սկսան  
լապտերնին շինել : Մայց յիմարները  
տեսնելով որ եղերնին կարճ կուգա-  
կոր ,

կոր, իմաստուններուն ըսին թէ՛ ձեր  
 եղէն քիչ մեզի տրվէ՛ք, որ լազ  
 տերնիս չի մարի: Իմաստուններն ալ  
 ըսին թէ՛ որ մենք տալու ըլլանքնէ՛  
 ոչ մեզի՛ ոչ ձեզի օգտէ, ուստի գնա  
 ցէ՛ք ձեզի համար խանութէն գնե  
 ցէ՛ք: Ընծոնքալ երբոր գնելու գա  
 ցին, ան ատենը փեսանալ եկաւ հա  
 սաւ, ու ո՛վ որ պատրաստ կարնէ՛ հե  
 տը հարսնիքին տունը մտան ու դու  
 ուր գոցվեցաւ: Ատքէն երբոր եկան  
 ան յիմարները՝ ու դու ուր զարնելով  
 կրսէին՝ տէ՛ր տէ՛ր դու ուր բաց մեզի:  
 Ընալ ներսէն պինտ տրվաւ թէ՛ ճըշ  
 մարիտ կրսեմ որ՝ ես ձեզ չեմ ձանչ  
 նար: Ատքը ըսաւ յԾ, ու ըեմն պէտք  
 է որ միշտ արթուն ու պատրաստ կե  
 նաք, ինչու որ՝ չէ՛ք գիտեր անոր գա  
 լու օրը ու ժամը:

Ըսկէ ետքը յԾ ըսաւ թէ՛ ինչպէս  
 վերջի գանձանին փառաւորապէս պի  
 տի ինքը գա բոլոր հրեշտակներով,  
 ու աթոռ փառացնատած, բովանդակ  
 աչխարքիս մարդիքը առջևը պիտի  
 ժողովին. ու անոնք երկու գաս պիտի  
 բաժնէ, արդարները աջ դին՝ և մե  
 ղաւորները ձախ դին: Արդարնե  
 րուն ըրած բարի գործքերը առջևնին  
 գնելով պիտոր ըսէ՛ եկէ՛ք իմ հօրէս  
 օրհնութիւնները ու մտէ՛ք վայելեցէ՛ք  
 արքայութիւն՝ որ ձեզի համար պատ  
 րաս

բաստած էր : Ատե մեզաւորներուն  
չոր գործքերը երեսնին տալով անոնց  
ալ պիտի ըսէ . գնացէ՛ք քովէս անի-  
ծեալներ՝ յաւիտե՛նական կրակին մէ-  
ջը, որ պատրաստուիլած է սաղայէ լի ու-  
իր սատանաներուն : ու անապենը ը-  
սաւ ասոնք յաւիտե՛նական տանջան-  
քը կերթան, ու արդարները յաւիտե-  
նական կեանքը : Աս քարոզներըս  
տալէն ետքը, յս յայտնեց իր աշակեր-  
տացը՝ թէ ասկէ երկու օրէն զատիկ  
կըլլա, ու ան ատենը զինքը պիտի  
հրէաները բռնեն խաչ հանեն :

ԳՎ : ԻՎ .

Յի Ժարմուռիլը, ու Վերջին ընթրիչը :

( ) ատկէն երկու օր առաջ յս որ աս  
վերի բաները կը քարոզէր, հրէից  
քհնյապետները ու ռաբբիները ան-  
ատենը մէկտեղ ժողովեցան կայիա-  
փա քհնյապետին քովը, ու խօսք գը-  
րին որ յսը մէկ կերպովմը բռնեն ըս-  
պաննեն : բայց աս ալ մտմտացին որ  
ան տօն օրերը չընեն, չըլլա թէ ըսին  
ժողովուրդին մէջը մէկ շիթթ ու իմը  
էլէ : Անատեննալ յսի աշակերտ-  
ներուն մէկուն՝ որ յուգա իսկարիով  
տացի կըսվէր՝ սատանան սիրտը մը  
տաւ, ու գնաց ասոնց ըսաւ թէ՛ ին-  
ծի ինչ կուտաք որ ես յսը ձեր ձեռքը  
մատ

մատնեմ : Մտնքալ շատ ուրախա-  
 ցան ասոր վրա , ու իրեն խոստացան  
 որ եռսուն արծաթի (կմ զօլաթա)  
 տան , թէ որ աս բանս գլուխ տանի :  
 Յուդայալ ան ատենէն՝ ետեկ էղաւ .  
 որ առանց ժողովուրդը օտք հանելու  
 մասնէ՝ անոնց ձեռքը տա յօր :  
 Բաղարջակերաց (քի խամուրսուզի)  
 առջի օրը աշակերտները յօի միտքը  
 ձգելով հարցուցին թէ՝ ո՞ւր կուզես  
 որ երթանք պատրաստենք զատկի  
 գառը ուտելու : Յօալ անատենը ձի  
 թենեաց լեռը գտնելով լու՛ պետրո-  
 սը ու յովհաննէսը խրկեց որ աս բանս  
 տեսնեն , ու ըսաւ՝ գնացէք Նղէմ , ու  
 քիքը մտնելնուդպէս մէկ մարդ մը  
 դիմացնիդ կելլէ , որ սափօրը կըռնա  
 կը ջուր կըտանի , ասոր ետեկէն գա-  
 ցէք , ու որ տունը՝ որ ան մըտնէնէ՝ ա-  
 սոր տանըտիրոջը ըսէք թէ . վարդա  
 պետը մեզ քեզի խրկեց ըսելու՝ որ ալ  
 իմատենըս մօտեցերէ , կուզեմ որ  
 զատիկը քովըդ ընեմ իմ աշակերտ-  
 ներուս հետ : անալ ձեզի մէկ մեծ  
 զարդարած վերնատունմը (քի տիվան  
 խանամը) կըցուցունէ . ու հոն ըսաւ  
 սեղանը սպտրաստեցէք : Մտնքալ  
 գացին ըսածինպէս ամմէն բանը ա-  
 նանկ գտան , ու սպտրաստեցին : Մ-  
 րիկվան դէմ յօալ ելաւ հոն եկաւ ,  
 ու երբոր սեղան նստաւ տասվերկու  
 ա .

աշակերտներուլը՝ յժի առջի խօսքը աս  
 եղաւ . խիստ կրքաղձայի ըսաց՝ որ աս  
 զատիկս իմ շարչարուլէլէս առաջ՝ ձե-  
 ղի հետ ուտեմ : Այտքը ուտելու ա-  
 տենը դարձաւ աշակերտներուն ըսաւ  
 թէ՛ ձեզմէ մէկը պիտոր իս մատնէ :  
 Ասոր վրա անոնքալ իրար անցան՝ ու  
 ցաւելով սկսան մէկը մէկալը իրեն  
 հարցունել թէ՛ արդեօք էս եմ մի :  
 Յօալ պիսն տրվաւ թէ՛ ան է՝ որ իր  
 ձեռքը իմ հետքս սկաւառակը (յի  
 թապախը) երկնցուց խօթեց : Ան-  
 ատենը յուդա որ աս բանս կրնէր՝  
 ինքնալ հարցուց թէ՛ արդեօք էս եմ  
 վարդապետ : յօալ իրեն ըսաւ , դուն  
 ըսիր : Աերակուրը ալ լըմըննալու ա-  
 տենը՝ յօ ձեռքը հացմը առաւ օրհ-  
 նեց , գոհուի տրվաւ նոյ , ու ան ման-  
 րեց աշակերտացը բաժնեց ըսելով  
 թէ՛ առէք կերէք աս իմ մարմինս է՝  
 որ ձեզի կրտրվի . ետքը դուքալ ա-  
 սանկ ըրէք իս յիշելու համար : Ասոր  
 ետեւէն բաժակը (յի գինիով գաւա-  
 թը) ձեռքը առաւ օրհնեց ու երկրն-  
 ցուց աշակերտներուն ըսաւ թէ՛ ամ  
 մէնդ ասկէց խմեցէք , որ իմ արունս  
 է՝ նոր ու խաի , որ ամմէնուդ մեղացը  
 թողուն համար պիտի թափվի : (Ա-  
 աս բանովըս՝ յօ պատարագ ին՝ օր խոր-

հուրդը հաստատեց :

Արքորալ սեղանը խալըսելու եղաւ՝

յո վրայի լաթերը մէկ դի գրաւ , ու  
դէնճակ (յի փէշտիմալը) առաւ վը  
րան , ու կոնքին (յի լէնին) մէջը  
ջուր լըցած սկսաւ աշակերտներուն  
ոտքը վլանալ , ու ան դէնճակովը  
սրքել : վլացվէ լու կարդը երբոր պետ  
րոսի հասաւ , պետրոս ետ քաշվէ լով  
ըսաց , տ'ր ատ ինչ է՝ դուն իմ ոտքս  
պիտոր վլանաս , քաւ լիցի ատ բանդ  
չէ՛մ (Թողուր որ ընես : ) Ծաւ իրեն  
ըսաւ , ես ինչ որ կընեմ՝ նէ՝ դուն հի  
մա չէս գիտեր , բայց ետքը կիմա  
նաս : Թէ սրքել չի վլանամ՝ նէ՝ հետս  
մասն ու բաժին չէս ունենար : Ըն  
ատենը պետրոսալ ըսաւ , տ'ր անանկ  
է՛նէ՛ չէ՛ (Թէ միան ոտքս , հաղա ձեռք  
սալ գըլուխսալ վըլա : ) Ծաւ ասոր  
պին տըվաւ Թէ՛ վրան գլուխը վը  
լացված մարդուն՝ ոտվըներէն՝ իզատ  
պէտքը չէ՛ ուրիշ տեղը վըլացվէ լու .  
որ անով բոլորովին մաքուր կըլա :  
Ըսանկ ամմէնուն ոտքը վլանալէն  
ետե՛ յո նորէն լաթերը վրան առաւ  
նստեցաւ՝ ու ըսաւ իրենց . գիտէք  
ինչո՛ւ համար ձեզի ատանկ ըրի . դուք  
իս վարդապետ ու տ'ր կրկանչէք , ու  
չիտակը կրսէք՝ ինչպէս եմ՝ նէ . ու  
րեմն Թէ որ ես ձեր տէրն ու վգտար  
ըլալով՝ ձեր ոտքը վլացի , պէտք է որ  
դուքալ մէկզմէկու ոտքը վըլանաք ,  
ինչպէս որ ձեզի օրինակ տըվի :



Մտոր ետևէն յ՞ թիմբնալ խօսեւէն  
 ետքը սորէն ըսաւ թէ՛ ձեզնէք  
 պիտի իս մատնէ։ Մշակերտները մէյ-  
 մալ սկսան աս բանիս վրա շփոթիլ։  
 ու ան տեղը յսի քով նստած ըլլալով  
 յովհաննէս իր սիրելի աշակերտը,  
 աստիէն պէտրոս անոր աչք ըրաւ որ  
 հարցունէ թէ՛ սո՞վ պիտոր ըլլա ան  
 մատնիչը։ Յսալ իրեն պինս տրվաւ  
 թէ՛ որուն որ ես աս թրջած պատառս  
 տամնէ՛ ան է, ու յուդայի տրվաւ։  
 Ե ան ատենը սատանանալ յուդայի  
 սրտին մէջը աւելի հաստատեց՝ յսի  
 վրա ատելուիլ, ու իր ազահու թէ  
 ախտը։ Մտոր համար յսալ իրեն ը-  
 սաւ թէ՛ ինչ որ պիտի ընեսնէ շուտով  
 ըրէ։ ու աս ըսած իս միտքը ուրիշնէ-  
 ըր չիմացան, հասպա ոմանք ասանկ  
 կարծիք դացին թէ, իրենց դանձա-  
 նակը յուդայի քով ըլլալով յ՞ս ասով  
 իրեն ապրսպրած ըլլա թէ՛ աս տօն  
 օրերըս ինչ որ պէտք էնէ գընէ, կ՞  
 աղքատները հոգա։ Յուդան աս որ  
 լսեց՝ շուտմը դուրս ելաւ, ու ան գի-  
 շեր ատենը վազեց յսի թշնամինէ  
 բուն քովը գնաց՝ որ ալ մատնու թէ  
 բանը հոգա, ինչպէս որ հետերնին  
 խօսք դրերէր։ Յսալ անոր երթալէն  
 ետքը պատրաստարկեցաւ ինքնալ մէ-  
 կալ աշակերտացը հետ ձիթենեաց  
 լեռը երթալու։ Ան ատենը աշու-  
 կերտ

կերտներուն վերջի սիրոյ կտակը ո  
 ւեւէն ետքը , ըսաւ թէ՛ աս դիշերս  
 դուք իս երեսէ պիտի ձգէք : Ասոր  
 վրա շուտմը պետրոս դարձաւ ըսաց .  
 ատ բանըդ ամմէնքնալ ընելու ըլ  
 լաննէ՛ ես չեմ ընէր . հասլա պատ  
 ըստ եմ քեզի հետ բանտը երթալ  
 ու մեռնիլ ալ : Յալ իրեն պիտի տը  
 վաւ թէ՛ ինչ՝ ինծի համար մեռնիլ ,  
 ճշմարիտ կըսեմ քեզի պետրոս , որ  
 աս դիշեր դուն դեռ հաւը ( ցի խո  
 ոողը ) երկու հեղ չի կանչած՝ իրեք  
 հեղ պիտի իս ուրանաս : Վայց պետ  
 ըոս իր խօսքին վրա կեցած կըսէր թէ՛  
 իս մեռցունելուալ ըլլաննէ՛ չեմ ու  
 բանար : ու ասանկ մէկալ աշակերտ  
 ներնալ ըսին :

Գ | Ի | Թ | .

Յի պարտեւը աշօնելէ , ըմբռնուան , դա  
 դապարտելէ , եւ պետրոսի որդանալ :

Աս բաներէս ետքը՝ դիշերանց ելաւ  
 յս իր աշակերտներովը գէպի ձի  
 թենեաց լեռը երթալու , ու կեղրոն  
 ըսած ձորէն ( ցի տերէյէն ) որ ան  
 ցաւ անդիի կողմը , հան մէկ գէթ  
 սեմանի ըսած գեղմը աշակերտնե  
 ըր թողուց , ու ինքը անոնցմէ իրեքը  
 միան՝ ցի պետրոս յակօվբոս ու յով  
 հաննէս՝ հետը առաւ . քիւմը առաջ  
 գնաց

դնաց մէկ պարտէզմը մտաւ , ու ա-  
 նանց ըսաւ թէ՛ շատ մեծ տրամուէ  
 ու նեղութե մէջ եմ , հոս տեղս ար-  
 թուն կեցեք սպասեցե՛ք ինձի : Ենքը  
 անոնցմէ քիչմը առաջ գնաց հեռա-  
 ցաւ , երեօին վրա ինկաւ հօր ինչ ա-  
 ղօթք ընելու , ու ըսաւ . հայր թէ որ  
 կարելի է նէ՛ աս իմ վրա գալու չար-  
 չարանքներէն խալըսէ իս , հասլա թէ  
 չէ՛ ինչպէս որ կրկամե՛նասնէ՛ անանկ  
 թող ըլլա : ու ան տտենը սաստիկ  
 նեղուէն արուն քրտինք սկսաւ թա-  
 փել . և ան տեղը երկինքէն մէկ հը-  
 րեշտակմը եկաւ քոզը՝ որ մխիթարէ  
 ու սիրտ տա իրեն : Ետքը ելաւ եկաւ  
 տեսաւ որ՝ ան իրեք աշակերտները  
 սաստիկ տրտմուէն ինկած կըքրնա-  
 նային , արթնցուց անոնք՝ ու ըսաւ  
 որ ելէն աղօթք ընեն որ փորձու թե՛  
 մէջ չիյնան . ու ինքը նորէն գնաց ա-  
 ղօթելու : Ետքը մէկմալ դարձաւ  
 քովերնին ու նորէն արթնցուց , ու  
 գնաց : Ենք անգամը որ եկաւ , այ-  
 սուհետե ըսաւ պառկեցե՛ք ու հանգ-  
 չեցե՛ք , ահա ժամանակըս հասաւ որ  
 թշնամիներուս ձեռքը մատնըվիմ ,  
 ելլենք առջևնին երթանք :  
 Ես որ կըսէր՝ մէյմալ անդիէն բազ-  
 մուի մարդիքներուն՝ բռնող զինվոր  
 ներալ հետերնին , ու յուգայալ առ-  
 ջևնին ինկած , ջահերով ( իմ մաշա-  
 լա .

լաներով), որը թուր առած ձեռքը,  
 որը բիր՝ (իմ սօփա,) եկան մօտեցան  
 յնիքով: Մն առենը յուզա՝ ինչպէս  
 որ անոնց նշան տրվեր էր յոր ճանչ  
 նալու ու բռնելու, գնաց յոր սագաւ  
 ու ըսաց՝ բարե քեզ վարդապետ:  
 Յաւ ալինն տրվաւ. յուզա ըսաւ՝  
 իս սագանելով եկերես որ մատնես:  
 Ապքը ան բազմու թէր առջևը ելաւ  
 կեցաւ յն, ու հարցուց անոնց, ու  
 կրփնտռէք: Մնոնքալ ըսին. յն նա  
 զովրեցին կուզենք: Յաւ անոնց ը  
 սելունպէս թէ՛ ան էս եմ. յուզայի  
 հետ ան ամմէնքը սոսկալով ետ ետ  
 դացին ու գետինը զարնըլեցան: Մն  
 որ եզաւ՝ նորէն մէյմալ անոնց հար  
 ցուց յն, թէ՛ ուլ կուզէք: անոնքալ  
 նորէն ըսին. յն նազովրեցին: Յաւ  
 ալինն տրվաւ թէ՛ ձեզի ըսի որ էս եմ.  
 ուստի թէ՛ որ իս միան կուզէք նէ,  
 թող տրվէք ըսաւ՝ մէկալ աշակերտ  
 ներուն համար, որ բաներնին երթան:  
 Մն առենը երբոր ասանկ թոյլ տը  
 վաւ, ու բռնեցին կապեցին յոր, ու  
 շակերտները աս բանին չի դիմանա  
 լով՝ դէմ կեցան, ու յծէն հրաման ու  
 զեցին որ դանախով զարնեն անոնք.  
 ու ան շփոթուէ մէջը շուտմը պետ  
 բոս մէկուն վրա թուրը ինջեցուց՝ ու  
 անոր աջ անկաճը թուրը վրայէն, որ  
 աս՝ քահանայապետին ծառաներէն  
 մէկ.

մէկնէր՝ մաղքոս ըսած : Վայց յի հոն  
տեղը վրա հասաւ անկաճը բժշկեց ,  
ու պետրոսի ըսաւ թէ՛ թուրրտ տեղը  
դիր , հօր օյ ինձի տըլած չարչարա-  
նաց բաժակը պիտի չի խամ՛մ մի . ինչ  
կարծես թէ՛ չե՛մ կրնար իմ հօրս աղա-  
չել՝ որ հիմա հոս եօթանասունվեր  
կու հազարէն աւելի հրեշտակ խրկէ՛  
որ իս ասոնց ձեռքէն խալըսէ . քայց  
ան ատենը ըսաւ՝ չէր կատարվէր ան  
դրած մարգարէութիւները , որ ըսերեն  
թէ՛ պէտք է որ ասանկ ըլլա :

Ետքը յոր անանկ բռնած կապած ,  
առաջ առին տարին աննա քճնյա  
պետին , որ յսի սկսաւ հարցունել  
փնտռել իր աշակերտներ ժողվելուն՝  
ու ըրած քարոզութիւններուն վրա : Յի  
ալ իրեն պիտի տըլաւ թէ՛ ես ծածուկ  
բան չե՛մ խօսած , իմ տըլած քարոզ-  
ներըս ամէնքը լսեր են , ինձի ինչ  
կը հարցունես , լսողներուն հարցուր :  
Վս որ ըսաւ յս , ան ատենը ծառա-  
ներէն մէկը՝ աստակ ( յի շամաւմր )  
զարկաւ յսի ու ըսաց՝ ատանկ պա-  
տասխան կուտաս քահանայապետին :  
Յալ իրեն ըսաւ , թէ որ ծուռ բան  
մը խօսեցանէ՛ ըսէ ինչ է . հապա թէ  
չիտակ է ըսածըս , ինչու ինձի կը  
զարնես : Ետքը անկէցալ հանեցին  
յս կայիափա քճնյապետին առջևը  
բերին , ու հոնալ բոլոր քճնաները  
ու

ու կարգացողները մէյտեղ եկերէին՝  
 որ յօի դատաստանը տեսնան ւ ասոնք  
 սկսան սուտ վկա փնտռել, որ անով  
 յոր դատապարտեն ու ըսպաննեն .  
 բայց ճորով երկու հոգի գտան՝ որ աս  
 բանըս վրան վրկայեցին թէ՛ մերք  
 մեր անկաճովը ասկէց լսեցինք որ կը  
 սէր թէ՛ ես կրնամ այ տաճարը քա  
 կեր, ու իրեք օրվան մէջ նորէն շի  
 ներ : Բայց այսու ամի՛ն աս վկանե  
 բուս ըսածնալ մէկմէկու նման չէր :  
 Են ատենը քննապետը ելաւ կայ  
 նեցաւ՝ ու ըսաւ յօի թէ՛ ինչո՛ւ ասոր  
 տխնը չես՛ի տար, յո ամենեկին լուռ  
 կեցաւ բան չըսաւ : Բննապետը նո  
 ղէն ըսաւ յօի՛ քեզ այ անունովը կերդ  
 վընցունեմ որ ըսես թէ՛ դուն քան ես  
 այ որդին : Են թմկը յո պին տրվաւ  
 թէ՛ դուն կըսես որ ես եմ, որ վերջին  
 դատաստանին օրը ամսային կարողու  
 թքս երկինքին ամպերուն վրա պիտոյ  
 իմ դալըս տեսնէք : Ես որ լսեց քա  
 հանայապետը կատղեցաւ, վրայի լա  
 թերը պատռեց ու ըսաւ, տեսէք սը  
 վոր ըրած հայհոյանքը, այսու հետև  
 վկայալ պէտքը չէ, որ ամմէնքդ լսե  
 ցիք . ուրեմն ինչպէս կերևնա ձեզի :  
 Ենոնքալ պին տրվին թէ՛ մեռնելու  
 արժանի է : ու անտեղը շուտմը մէ  
 կը մէկալը սկսան նախատելով յօի ե  
 լեսը թքնել, զարնել՝ ու հազար քա  
 ին

մահաբանք նախաատինք ըսել իրեն , և  
 ոմանքալ գլուխը լաթմբը ձգեցին որ  
 չխտեսնա , ու անանկ կըզարնէին՝ ու  
 ծաղրընէ լով կըհարցունէին՝ [Թէ որ  
 ք՞ն էս նէ՝ մրգրէացիք գիտցի՞ր ո՞վ  
 քեզի զարնողը :

Վստեներս պէտրոս՝ որ ինքնալ յօի  
 ետեէն ք՛հայապէտին տունը եկերէր ,  
 երբոր դուրսը ծառաներուն հետ  
 նստէր կըտաքնար , ան տեղը ք՛հայա  
 պէտին աղախինը եկաւ՝ ու վրան  
 նայեցաւ ըսաւ իրեն , հա՛ դուն տլ  
 յո՛նազովրեցիին հետ էիր : Ստրոս  
 ալ ամմէնուն առջևը ուրացաւ ու ը-  
 սաւ , ես ան չե՛մ ճանչնար , չե՛մ գի-  
 տեր դուն ինչ կըսես : ու աս որ եղաւ՝  
 ետեէն մէկմը հաւը կանչեց : Ատքը  
 երբոր նստած տեղէն դուրս եկաւ  
 պէտրոս՝ ու թիչ կնիկմընալ զինքը տե-  
 սաւ , ու անալ ըսաւ անտեղք եղած  
 մարդիքներուն [Թէ՛ անալ յո՛նազով-  
 րեցիին հետ էր : անոնքալ վրա տա-  
 լով որ հարցուցին՝ մէկմալ ուրացաւ  
 պէտրոս՝ երգումընէ լով [Թէ՛ ես ան  
 մարդը չե՛մ գիտեր չե՛մ ճանչնար : Վհ  
 կէ ետքը քիչմընալ որ անցաւ՝ ք՛հայա  
 պէտին ծառաներուն մէկը , որ ան  
 անկաճը կտրած մաղքոսին ազգա-  
 կան էր . տսիկայալ պէտրոսը տեսաւ  
 ծինպէս ըսաւ [Թէ՛ դուն ան չե՛ս մի՛  
 որ էս քեզ պարտէղը տեսա անոր հե-  
 ինչ

տը : աս բանիս ուրիշներն ալ տէր է  
լան , ըսին թէ՛ իրաւ որ աս ալ յօի  
հետ էր , որ ինքնալ գալիլեացի է՛  
ինչպէս իր լեզուն կը ցուցունէ : Ին  
ատենը պետրոս ալ՝ երրորդ անգամ  
սկսաւ նշողելով ( ին՛ն ալ լեթ տալով )  
էրդ վրննալ թէ՛ չէ՛մ ճանչնար ատ  
մարդը : ու շուտմը ըսած ինչպէս՝ հաւն  
ալ անդ իէն երրորդ անգամ կանչեց :  
Յալ ան ատենը որ անդ ին չարչարա  
նաց մէջ էր՝ գլուխը վերցուց դէպ՛ի  
պետրոսը նայեցաւ . ու աս նայելը  
վրս՝ պետրոսի միտքը ինկաւ յօի ըսա  
ծը , ու շուտմը ինքիւրէն գալով՝ սաս  
տիկ զղջացաւ , ձգեց անկէց դուրս  
ելաւ . ու սկսաւ լալ ողբալ իր ըրած  
ուրացու թիւր :

ԳՎ : Լ :

Յ պիղատոսի դատաստանը կը հանեն , ու  
դէնիւ լարլարելէն էտե կը դատաստարտեն որ  
խալվի :

Յ սյսպէս ան հինգ շաբթի դիշե  
րը տանջուլիւ լէն ետքը . ու ըրա թ  
որը առտրվանց կանուխ նորէն մէկ  
տեղ ժողվեցան բոլոր քահանաները  
ու կարգացողները՝ խօսք դրին որ ալ  
չու շացունէն զինքը շուտով սպաննեն :  
Իայց հրէաները իշխանու ի չունենալ  
ով աս բանըս գլուխ տանելու , ա  
նին



յին յոր պիղատոսի տարին , որ հառի-  
 մայեցոց գիէն դատաւոր դրած էր  
 էղէմի վրա : Ան ատենը յուգանալ  
 տեսնելով որ՝ յս դատապարտեցաւ որ  
 մեռնի՝ իրեն մէկ զղջումնը եկաւ .  
 ուստի տարաւ քհնյապետներուն ետ  
 տրվաւ ան իր առած եռսուն արծա-  
 թին , ու ըսաւ թէ՛ մեղա որ տանկ  
 արդար մարդու արունը մտա : Ա-  
 նոնքալ ըսին թէ՛ մեր ինչ հոգն է ,  
 դուն գնա մտմտա : Յուգայալ ան  
 ըստակը տարաւ տաճարը ձգեց , ու  
 յուսահատուէն գնաց զինքը կախեց  
 խրխոզեց : Քհնյապետներնալ՝ ան  
 ըստակը արունի գին է ըսելով՝ ար-  
 ժանի չի տեսան որ տաճարը առնեն ,  
 հատրա խորհուրդ ըրին ու անով մէկ  
 բրտի ագարակնը ( ՚յի չէօմէկձիթի  
 թառւամը ) գնեցին , որ օտարական  
 ներու ( ՚յի խարխախներու ) գերեզման  
 նոց ըլլա . ու աս պատճառովս ետքը  
 ան տեղը արունի ագարակ ըսվեցաւ :  
 Չիմա գանք որ՝ երբոր յոր պիղատո-  
 սի առջև հանեցին , սկսան վրանս ուտ  
 բաներ ըսել թէ՛ աս մարդս մեր ազ-  
 դը կը մոխրցունէ , ու թող չիտար որ  
 կայսերը հարկ ( ՚յի խառաձ ) տանք ,  
 ու կըսէ թէ՛ ինքը քոր՝ ՚յի մեսիան  
 է՝ ու թալար է : Պիղատոս ալ յոր ա-  
 ռանձին կանչեց քովը առաւ՝ ու հար-  
 յուց իրեն թէ՛ դուն հրեաներուն

Թի րն ես մի : Յսալ պինն տրվաւ Թի  
 անանկ է՝ ինչպէս որ ըսիր , բայց իմ  
 Թիւրու Թիս աս աշխարքիս վրա չէ ,  
 հասա Թի անանկ ըլլար նէ՝ իմ ծա  
 ւաներրս չէին Թողուր՝ որ աս հրէա  
 ներուն ձեռքը իյնամ . ու ես աշխարք  
 եկա որ ճշմարտութիւն քարոզեմ : Այի  
 դատոս նորէն առաւ յս ան հրէանե  
 րուն առջևը ելաւ ու ըսաւ Թի՝ ես  
 աս մարդ ուս վրա վնաս ( ցի սուչ ) չեմ  
 գտնար , որ զինքը սպաննել տամ :  
 Ան ատենը անոնք նորէն կատղած՝  
 սկսան կերպ կերպ բաներ ըսել յսի  
 վրա : Յսալ ամենեին պինն չէր՝ իտար ,  
 այնչափ որ՝ պիղատոսալ զարմացաւ  
 Թի յս ինչպէս բերանը չի բանար զին  
 քը արդարացունէր : Ատքը անոնց ը  
 սածէն երբոր իմացաւ պիղատոս որ  
 յս գալիլէացի է , ու ասով հերովդէ  
 սի իշխանուէ ներքև կիյնար , վրայէն  
 ԹօԹվեց՝ յսը հերովդէսի խրկեց , որ  
 ան օրերը եղէմ եկեր էր : Հերովդէս  
 ալ առջի բերանը երբոր յսը տեսաւ  
 շատ ուրախացաւ , ինչու որ՝ շատոնցմէ  
 լսերէր յսի վրա , ու հետաքրքրու թ կու  
 ղէր որ մէկ հրաշքմալ իր առջևը ընէ  
 յս . ու ստի սկսաւ շատ բաներ յսի  
 հարցունել Վայց յսէն ամենեին մէկ  
 պինամը որ չի լսեց , անոր համար քա  
 մահրելով ու ծաղր ընելով վրան ձեր  
 մակ լաԹմը ձգել տրվաւ , ու նորէն  
 պի .

պիղատոսի դարձուց՝ որ ինքը յսի դա-  
տաստանը տեսնէ :

Ընտանիքը պիղատոս յսի ամբաստա-  
նողներուն յայտնի ըսաւ թէ՛ դուք  
ասիկա ինձի բերիք ըսիք թէ մէկ  
խառնարար մարդմընէ , բայց ինչ  
պէս դուքալ տեսաք՝ ես վրան ատձեր  
ըսածներէն բանմը չեմ գտներ . ինչ  
պէս հերովդէս ալ տեսաւ որ անանկ  
բանմը չէ՛ ըրէր՝ որ մեռնելու արժա-  
նի ըլլա , ուրեմն քիւմը պատիժ տանք  
ասոր՝ ու թողունք որ երթա , ինչպէս  
դուք ալ սովորուի ունիք՝ որ զատկին  
մէկ բանտարկեալմը ազատէք , թող  
աս յօ քօ ըսածը ըլլա : Ըստ ատեննե-  
րըս բանտը մէկ չարագործ մարդաս-  
պան աւաղակմը կար՝ յետու բարաբ-  
բա անուսով . ուստի երբոր պիղատոս  
աս բանս առջենին դրաւ , քահանայս  
պետները ու իշխանները ժողովուր-  
դը յորդորեցին , ու անանկ ամմէն  
քը մէկ բերան կանչեցին թէ՛ կու-  
զէնք որ բարաբբան արձըկես , ու յօը  
մեռցունես : Ըսոր վրա պիղատոսալ  
աղէկ հասկընալով յսի անմեղունիք՝  
ու անոնց չար նախանձը , և ուղեւով  
որ յօը խալըսէ , բանը ուշացուց , ու  
նորէն հարցուց թէ՛ հապա ինչ կու-  
զէք որ ընեմ ձեր հրէից թագաւորը :  
Ընտնքալ կանչեցին թէ խաչը հանէ ,  
թող խաչալի : Ընտն ալ ըսաւ , ինչո՞ւ ,  
ինչ

ինչ շարք բան գործեց, եւ մեռնելու  
 վնասմբ անոր վրա չի տեսաւ : Վնոնք  
 ալ ամմէնքը աւելի կատղած ոտք կո-  
 խեր՝ կը կանչվաւինն թէ՛ կուզենք որ  
 խաչահանես : Սիղատոս ան ատենը  
 ջուր ուզեց ու առջևնինն ձեռքը վը-  
 լաց՝ ըսաւ թէ՛ ես իմ ձեռքըս ատար-  
 դար մարդուն արունովը չեմ պլըշտը-  
 կեր, դուք գիտէք : Վսոր երբոր բո-  
 լոր ժողովքնալ պիտն տրվաւ թէ՛ թող  
 մեր վրա ու մեր տղոցը վրա ըլլա ա-  
 տոր արունը. ան ատենը սիղատոսալ  
 յոր իր զինվորներուն ձեռքը տրվա-  
 ւոր տանջեն : Վնոնքալ ան ատենը յս  
 աղէկմը ծեծելէն ետեւ, մէջերնինն ա-  
 ռին՝ լաթերը վրայէն հանեցին, ու  
 ծաղր ընելով վրան մէկ կարմիր լաթ-  
 մը ձգեցին. մէկ փուշէ ոլորած պը-  
 տակմը կի՛ թագմը գլուխը անցու-  
 ցին, ու ձեռքը մէկ եղէգմը (յի խա-  
 միշխմը կտոր) տրվին գաւազանի տեղ.  
 ու զինքը անանկ նատեցուցած՝ կու-  
 գային առջևը ծունկ կըչոքէին, ու  
 ծաղր ընելով կըսէին՝ ողջ լեր թիւր  
 հրէից, ետքը կելլէին երեսը թքնե-  
 լով ան եղէգը ձեռքէն կառնէին՝ ա-  
 նով գլխուն կըղարնէին, ու սմանք-  
 ալ երեսը ապտակ (յի շամառ) կը  
 զարնէին :

Ետքը սիղատոս յոր այսպիսի ողոր-  
 մելի կերպարանքով նորէն հրէանե-  
 րուն

բուն առջևը հանեց՝ ու ըսաւ, դիտ-  
 նաք որ ես ասոր վրա դատաւարտե-  
 լու բան չի դտա, ահա ձեր մարդը  
 ձեզի, դուք առէք ինչպէս կուզէք՝ սե-  
 խաչեցէք: Անոնք ալ պիտի տրվին թէ՛  
 մեր օրէնքը կըսէ որ այդ պիտի մարդը  
 պէտք է որ խաչվի, ինչու որ ինքը  
 զինքը այ որդիի տեղ կը դընէ: Աս  
 որ լսեց պիղատոս՝ սիրտը վախմը ին-  
 կաւ, ուստի նորէն յոր առանձին ա-  
 ռաւ, ու սկսաւ իրեն հարցունել թէ՛  
 դուն ինչ ես, ուսկից եկերես: Յա-  
 ալ ասոր ամենեւին պատասխան չի  
 տրվաւ: Պիղատոսալ ըսաւ, ինչ է  
 ատ՛ հետըս չէ՞ս ու զեր խօսիլ, չէ՞ս գի-  
 տեր որ իմ ձեռքս է իշխանութիւն քեզ  
 խաչ հանելու կի՞ թէ խաչըսելու: Աս  
 ատենը յօալ ըսաւ, դուն իմ վրա իշ-  
 խանութի չէիր ունենար՝ թէ որ վերէն  
 քեզի տրված չըլարնէ, անոր հա-  
 մար սլ որ իս քեզի մատնեցնէ՛ մեծ  
 յանցաւորը (յի սուչուեն) ան է: Աս  
 բանիս վրա ալ պիղատոս կուզէր որ  
 յօ ազատվի. բայց հրէաները նորէն  
 սկսան կանչվա տել, ու պիղատոսի ա-  
 սանկ ըսել թէ՛ ատ մարդը ազատեա-  
 նէ՛ հռոմայեցոց կայսերը բարեկամը  
 չէ՞ս. ինչու որ՝ ով որ զինքը թիւր կը  
 նէ՛ անիկա կայսերը դէմ դու իս կը  
 վերցունէ: Աս ատենը պիղատոս նո-  
 րէն յոր հրէից առջևը հանեց ու ը-

սաց , ահա ձեր Թիւրքը ձեզի կուտամ : Մնոնքալ նորէն սկսան կանչել , վերցնւր վերցնւր մեր մէջէն ատմարդը , ու խաչ հանէ : Պիղատոսալ հարցուց ըսաւ Թէ՛ ի՞նչ է՛ կուզէք որ ես ձեր Թագաւորը խաչ հանեմ : Քիչայետներնալ ասոր պի՛նն տրվին Թէ՛ մենք կայսերէն՝ ի զատ Թագաւոր չունինք : Ատքը երբոր ալ ուրիշ ճար չի տեսաւ պիղատոս , ինքնալ վճիռը կտրեց ան ուրբաթ օրը՝ հրէից պասքայի տօնին կէս աւուր ատենը , ու ձեռվընին տրվաւ որ առնեն տանին ուղածնինպէս յն խաչը հանեն , ու յեսու բարաբբա աւազակը ազատեն :

## ԳՎ : ԼԵ :

Յնի խաչելու թիւրքն ու Ռադամը :

Պիղատոսի զինվորները անատենը յնր բռնեցին մէջերնին առին , ան կարմիր լաթը վրայէն հանեցին ու իր լաթերը նորէն հագուցին , անանկ խաչը ուսը (յի օմուզին վրա) դրած սկսան դէպի գողգոթա լեռը տանիլ : Ճամբան երթալնինի մէկ մարդմը դիմացնին ելաւ՝ որ սիմոն կիւրենացի կըսվէր , ասիկայալ բռնեցին որ յնի հետ վերցունէ տանի ան խաչափայտը : Յնի ետեկն շատ ժո

դովուրդ էրիկ մարդ կնիկ մարդ կեր-  
 Թային, ու գու թերնին շարժելով կու-  
 լային յսի խղճուէ վրա : Յալ գար  
 ձաւ ըսաց ասոնց. դատերք է զէմի, իմ  
 վրաս մի լաք, հասլա ձեր վրա ու ձեր  
 որդւոցը վրա լացէք. ատեն պիտոր  
 գա որ՝ երնէկ ըսեն ամու շներուն որ  
 զաւակ չեն բերէր. ու սաստիկ նե-  
 զու թէն լեռներուն պիտի ըսեն թէ՛  
 վրանիս փլէ՛ք մեզ ծածկեցէք՝ որ աս  
 խղճու թիներըս չի տեսնենք : Թէ որ  
 կանանչ ու դալար ծառին այսպէս  
 կրնեն՝ ինչպէս կրտեսնէք իմ վրա,  
 հասլա չորցած ծառին ինչ պիտի ըլ-  
 լա : Արբորալ գողգոթա լեռը հա-  
 սան, յսի լեղիով խառնած գինի տը-  
 վին, անալ համը առաւնէ՛ չուղեց  
 խըմել : Ատքը լաթերը վրայէն հա-  
 նած անանկ մերկ յոր խաչին վրա հա-  
 նեցին դամեցին : ու իրեն երկու դին  
 մէկ մէկ աւազակ մարդ իքալ հրէա-  
 ները ան օրը բերին խաչել տըվին,  
 որ ասով աւելին ախատինք ըլլա յսի :  
 Յոր խաչին վրա ելաւ, առջի խօսքը  
 իր խաչ հանողներուն վրա աղօթելը  
 եղաւ՝ որ ըսաց. Հայր իմ՝ Թողու թի  
 տուր ասոնց որ չեն գիտեր ինչ կը  
 նեն : Պիղատոս մէկ տախտըկիմը վրա  
 յսի յանցանքները (քի սուչը) ասանկ  
 գրել տըվաւ՝ Թէ ասիկա է՝ Յա՛ Աս  
 զովրեցի Սաղաւոր Հրէից. ու աս

բանքս իրեք լեզվով՝ Իմ հրէաներէն ,  
 հռոմայեցիերէն ու հռոմերէն ըրաւ ,  
 ու խաչին վրա դնել տրվաւ , որ ամ-  
 մէն ազդեցական ու խմանան : Եւ  
 որ տեսան հրէաները՝ սիղատոսի ա-  
 ղաչեցին որ անանկ չի գրէ՝ Թագա-  
 ւոր հրէից , հասպա՝ ասանկ Թէ՛ ին-  
 քը ըսաւ որ Թիքրեմ հրէից : Վիզա-  
 տոսալ իրենց պիտն տրվաւ Թէ՛ գը-  
 ըածս դըրած է , փոխել չըլլար : Եւ  
 ստենը զինվորները յտի լաթերը ա-  
 ոխն չորս բաժին ըրին՝ մէջերնին  
 բաժնեցին , ու պատմութեանը կիմ կա-  
 պան վերէն՝ ի վար բոլորը հուսված  
 քով գործած ըլլալով՝ մեղքքնցան  
 կտորտեւ : ուստի վրան վիճակ ձգե-  
 ցին՝ որ անանկ մէկուն ինկաւ :  
 հրէից քննապետները ու իշխաննե-  
 րը ուրիշ իրենց մարդիքներովը՝ ան  
 Թմկը յտի առջևը եկած՝ օխ ըսելով  
 հաղար նախատանք կուտային ու քա-  
 մահրելով կըսէին , Թէ որ քու ըսա-  
 ծիդ պէս դուն այ որդին եսնէ՝ քեզ  
 հիմա խալըսէ , առ խաչեդ վար ին-  
 ջիր՝ որ քեզի հաւատանք : տեսէք որ  
 վոր՝ որ ուրիշները ազատեց , ու ինքը  
 զինքը չիկրնար ազատել : յոյսը այ  
 վրա դրերէնէ , Թող ամ հիմա զին-  
 քը ասկէց ազատէ : ( ) ինվորներնալ  
 անոնց ըրածը տեսնալով , իրենքալ  
 ծաղը ընելով բաներ կըսէին : Վաւ  
 խաչ-



խաչված աւազակներուն մէկը դարձաւ յսի ըսաց . թէ որ դուն քոն եսնէ՝ քեզալ մեզի հետ ասկէց ազատէ : Բայց մէկալ աւազակը ահիկա չեխեց թէ՛ ւոյ չէս վախնար , որ դունալան պատիժը կը քաշեսկոր . մենք ըսաւ արժանապէս մեր ըրածին պատիժը առերենք , բայց ասիկա մէկ չար բանմը չէ՛ գործած : Ետքը դարձաւ յսի ըսաւ , ւո՛ր յիշէ իսերբոր քու թիւրու թիւղ գասնէ : Յօալ իրեն պին տըվաւ թէ՛ ճշմարիտ կըսեմ քեզի՝ որ ասոր դրախտը իմ հետըս պիտի ըլլաս :

Յսի խաչելուէ ատենը իրեն ազգականներէնալ քովը եկեր կեցերէին . ասոնց մէջը յօ տեսնելով իր մարը կոյսն մարիամ , ու իր սիրական յովհաննէս աշակերտը , մօրը ցուցունելով ան աշակերտը՝ ըսաւ թէ՛ ահա՛ քու որդիտ , ու աշակերտինալ իր մայրը ցուցունելով ըսաց՝ ահա քու մարըդ : Ե անկէ ետքը յովհաննէսալ կոյսն մարիամ յսէ որք մնացած՝ իր տունը առաւ պահեց : Յօ վեց ժաւին (յի սահաթին) խաչին վրա բեւեռ վելունպէս՝ արեւը խաւարեցաւ՝ ու բոլոր աշխարք մթընցաւ իրեք ժամի չափ , ու ինը ժամին ատենները՝ կէսօրը իրեք ժամ անցած՝ յի ամուր ձանով կանչեց՝ Ալի էլի լամ սաբաբա

՚ի, որ ըսել է, իմ անձս իմ անձս,  
 ինչն իս երեսէ թողերես: Այտքը եր-  
 բոր ըսաւ, թէ ծարսէրեմ, շուտմը  
 մէկը վաղէց ու սպունգը (յի սիւնիէ-  
 ըր) հոն քացախը թաթխեց՝ ու եղէ-  
 դիմը վրա անցուցած դէպ՛ի յօի բե-  
 րանը երկնցուց: Յաւ երբոր ան քա-  
 ցախը բերանը առաւ, ըսաւ՝ ալ ամսէն  
 թան լըմընցաւ: Աւ նորէն ամուր ձա-  
 նով կանչէց ըսաւ՝ հայր քու ձեռքդ  
 կաւանդեմ իմ հոգիս, ու անանկ գը-  
 լուխը վար ծռեց՝ հոգին տրվաւ: Ան  
 ատենը եղէմի տաճարին վարագ ուրը  
 վերէն՝ իվար երկուք ճղքովեցաւ, եր-  
 կրաշարժու թի եղաւ, ու ապառաժ  
 քարեր պատուեցան, գերեզմաններ  
 թաղվեցան, ու շատ արդար մարդիք-  
 ներ յարուի առած՝ եղէմի մէջը շատ  
 մարդոց երևցան՝ յօի ճշմարիտ յա-  
 րու թիը հաստատելու համար: Ան  
 ատեղը հարիւրապետնալ իր զինվոր-  
 ներով աս հրաշքները տեսնելով՝ սոս-  
 կացին՝ ու յօի համար ըսին թէ՛ ճշմա-  
 րիտ աս մարդըս այ՛ որդի էր: Ամա-  
 նապէս քովը գտնելված ժողովուրդ-  
 նալ խղճալով յօի վրա՝ կուրծքեր-  
 նին զարնելով ելան ետ դարձան:  
 Այրբորալ իրիկունը մտեցաւ՝ հրէա-  
 ները խղճմտանք ընելով թէ օրինաց  
 դէմ՝ չըլլա որ ան խաչածներուն մար-  
 մինները ինչպէս մէկալ օրը խաչին  
 վրա

վրա մընան, որ ան շաբաթնորը ի  
րենց մեծ ածնախամբունի էր . գացին  
պիղատոսէն ու զեցին որ անոնց ծընկ  
վընէրը ջարդեն՝ որ շուտով մեռնին,  
ու անկէց վերցրվին : Աւտի եկան  
զինվորները առաջ ան երկու աւա  
զակներուն ծընկվընէրը ջարդելով  
մեռուցին . ետքը երբոր յօր տեսան  
որ հոգին աւանդերէ, անորը չիջար  
դեցին . հասա զինվորներուն մէկը  
ձեռքի տէգովը (յի մզրախովը) յսի  
կողը խոցեց . ու շուտմը արուն ու  
ջուր բղխեց կողէն :

Մնատէնը յովսէփ արեմաթացին,  
որ ինքնալ հրէից իշխաններէն մէկն  
էր, ու գաղտուկ յսի աշակերտու թի  
կընէր՝ գնաց պիղատոսէն հրաման  
առաւ, որ ինքը երթա յսի մարմինը  
խաչէն ինջեցունէ, ու գերեզման դը  
նէ : Աւտի նիկողիմոս ըսած իշխա  
նին հետ, (որ անալ ծածուկ յսի ա  
շակերտներէն էր,) եկան խաչէն ինջե  
ցուցին յսի մարմինը՝ ու մեծ արանքով  
ղրմուսեցին . ու մաքուր կտաւով սա  
տած՝ հոն խաչելուէ տեղին մօտ մէկ  
ոյարտէզիմը մէջ՝ նոր քարէ փորած  
գերեզմանը դրին, ու մէկ մեծ քա  
րովմը գերեզմանին գուռը գոցեցին՝  
եկան գացին : Վայց շաբաթ առտը  
վանցնորէն պիղատոսի գացին քահա  
նայապետները ու փարխեցինէրը,

ըսին թէ՛ կը յիշէնք որ ան խաբէ բան  
 ողջէրնէ՛ կըսէր թէ՛ իրեք օրէն ետե  
 յարուի պիտի առնեմ, ուստի հրա  
 ման տուր որ՝ գերեզմանին քով աս  
 իրեք օրըս պահապան կենա, որ չը  
 լա թէ իր աշակերաները գիշերանց  
 գան մարմինը գողնան, ու ժողովը  
 դին մէջը ձան հանեն թէ՛ յարու թի  
 առաւ. և ասով ետքի մուրու թիւ  
 առջինէն գէշ ըլլա: Պիղատոսալ ը  
 սաւ թէ՛ գացէք ինչպէս կուղէք նէ՛  
 անանկ ըրէք: Ենոնքալ գացին գե  
 ղեզմանին քարը աղէկմը ամուրցու  
 ցին, ու կընիք (քի մէօհիւր) զարկին  
 վրան, ու քովը զինվորներ սահա  
 պան դրին:

ԳՎ. ԼՏ.

Յի քառասոր յարու թիւ, ու աշակերտաց  
 երևոտմը:

Եաբաթ իրիկունը իւղաբեր կա  
 նայքը, քի մարիամ մագդաղե  
 նացին, մարիամ յակոբայ ըսածը,  
 յոհաննա ու սողոմէ՛ մէկտեղ եկան,  
 խունկեր ու անուշահոտ եղեր առին,  
 որ երթան յի մարմինը նորէն օժէն՝  
 աւելի պատիւ ընեն: Աստի առաջ  
 վանց կանուխ երբոր ելան որ գե  
 ղեզմանը երթան՝ ճամբան անձրկե  
 րին թէ՛ ան գերեզմանին մեծ քարը  
 ուղ

սիլ սիտոր վերցունէ . բայց հոն հառ-  
 նե ընունալէս՝ յանկարծակի մէկ շարժ-  
 մը եղաւ , ու երկինքէն լուսաւոր ձու-  
 նիալէս Քերմակ լաթերով հրեշտակ  
 մը ինջաւ , ու ան դռանը քարը մէկ  
 դի դրած վրան նստաւ : Աս բանս որ  
 եղաւ , ան պահայանները վախէն մե-  
 ու լիալէս հոն տեղը գետինը ինկան :  
 ու ետքը անոնցմէ ոմանք քաղաքը  
 վաղեցին քհնյապետներուն պատմե-  
 ցին : անոնքալ մէյակդ խորհուրդը  
 ըին , ու խէլմը ըստակ տրվին անոնց ,  
 որ աս հրաշքս դադարուկ պահէն , ու  
 անանկ ձան հանեն թէ՛ գիշերանց ի-  
 ընք որ քուն էին՝ յո՛ի աշակերտները  
 եկեր անոր մարմինը գողցերէն . ու  
 ըսին՝ թէ՛ որ աս ձանս դատաւորին  
 անկաճը հասնինէ՛՝ դուք մի վախնաք  
 անհոգ կեցիք , մենք բանը կը շի-  
 նենք : Աւ անանկ հրէաներուն մէջը  
 աս սուտ խօսքըս փրովեցաւ :

Հիմա գանք որ , երբոր աս իւղաբեր  
 կանայքը գերեզմանին դուռը ասանկ  
 բայ գտած ներս որ մտան , հոն յո՛ի  
 մարմինը չի գտան . հապա անոր տեղը  
 երկու լուսաւոր հրեշտակ տեսան , որ  
 մէկը դարձաւ ասոնց ըսաւ . մի վախ-  
 նաք , դուք եկերէք որ յո՛ւր գտնէք ,  
 բայց հոս չէ՛ յարուի առերէ , ինչ  
 պէս որ ձեզի առաջուց ըսերէր : ու  
 իրենց ասալ ըսաւ որ՝ երթան յո՛ի ա-

շակերտացը աս բանս աւետիս տան :  
 Վայց ասոնցմէ մարիամ մագդաղե-  
 նացին , ինչպէս կըսեն՝ առջի բերանը  
 շուտմը տեսած ինպէս որ յօի մարմի-  
 նը գերեզմանին մէջը չէ՝ վազեց ե-  
 կաւ պետրոսն ու յովհաննէսը գտաւ ,  
 ու ըսաւ իրենց թէ՝ մեր տէրը գե-  
 րեզմանէն վերցուցերեն , ու չենք գի-  
 տեր ո՛ւր գրերեն : Վնոնքալ ելան հե-  
 ար գերեզմանը եկան՝ տեսան որ ի-  
 րաւ ըսած ինպէս յօի մարմինը հօն չի-  
 կա : ուստի իրենքալ թողուցին նորէն  
 դարձան մէկալ աշակերտներուն աս  
 բանս պատմելու : Վնատենը մագ-  
 դաղենացին որ մինակ գերեզմանին  
 քովը կեցած կուլար , ան հրեշտակ-  
 ները իրեն հարցուցին թէ կը՛նիկ ին-  
 չու կուլաս : Վնալ ըսաւ թէ՝ հասպա-  
 իմ տորոս աս գերեզմանէս վերուցե-  
 րեն , ու չեմ գիտեր ո՛ւր տարեր գրեր  
 են : աս ըսելն ինի՛ ինչպէս եղաւ որ՝  
 գէպի ետեւը դարձաւ ու մէկ մարդ-  
 մը տեսաւ , որ յօ էր . ու ինքը չի  
 ճանչցաւ , կարծեց թէ պարտեղպան  
 մընէ : Վնալ հարցուց իրեն , կը՛նիկ  
 ինչու կուլաս , սի՛ կըսինտուես : Վն-  
 ալ ստիմն տրվաւ թէ , տէր թէ որ  
 դուն առի՛րնէ , ինգրեմ որ ինծի ը-  
 սես՝ ո՛ւր տարիր գրիր , որ ես երթամ  
 անկէց վերցունեմ : Վնատենը յօալ  
 իր սովորական ճանովը զինքը կանչա-  
 ծին :

Տինպէս՝ մարիամ. մազ գաղենացին  
 շուտմբ իմացաւ, ու իրեն պինն ար  
 վաւ՝ ընթացունի, (յի հրամանէ վար  
 դատկեա) ու վազէց որ ոտվընէրը արւ  
 լլովի. բայց յի չի թողուց որ ան ժա  
 մանակը իրեն մոտենա, հասպա ասըս  
 պըրեց որ երթա աշակերտներուն  
 պատմէ, ու ըսէ թէ ինքը առ ան  
 սիտի համբառնա : Ատքը յի ան  
 տեղէն անյայտ եղած ինպէս՝ ինքնաւ  
 շուտմբ վազէց գնաց աս բանը աշա  
 կերտներուն պատմելու :

Ան օրը յի մէկաւ աշակերտներէն  
 երկու հոգի՝ էմմաուս գեղնոր կեր  
 թային աս բաները խօսելով. յաւ  
 առանց զինքը անոնց յայտնելու քո  
 վերնին եկաւ, ու հետերնին երթա  
 լով ինքնաւ հարցուց իրենց թէ ատ  
 ինչ բանի վրա է ձեր խօսքը, ինչու  
 ատանկ տրտում կերթաք : Անոնցմէ  
 մէկը որ կղէտպաս կրօմէր՝ գարձաւ  
 իրեն ըսաւ թէ՛ գուն միան մնացե  
 ըս էղէմ՝ որ աս օրերըս հոն եղած  
 բաները չիմացար : որ ինտոր ան յի  
 նազովրեցին սքն ու արդար մարդը,  
 մեր իշխանները բռնեցին խաչին վրա  
 սպաննել տրվին. որ մենք յոյսերնիս  
 վրան գրերէ ինք թէ ան պիտի իէլա  
 ցիքը փրկէ : ու ետքը ասաւ ըսին թէ՛  
 ինչպէս ան կնիկները հրեշտակներէն  
 լեւր են թէ՛ յո՞ր ողջ է : Աս բանե  
 ըրս

ըրս լսելով՝ յժալ երեսնին տրվաւ որ  
 ինչպէս մըտվընին չեն բերեր մար  
 դարէից քնի վրա ըսածնէրը՝ որ կա  
 տարվեցաւ . ետքը մէկիկ մէկիկ ի  
 բենց վդմտելով՝ երբորալ իրիկվան  
 դէմ էմմաւուս հասան, յս անանկ  
 ցուցուց թէ ինքը ալ առաջ պիտոր  
 երթաւ . անոնքալ իրիկուն է ըսելով  
 չի թողուցին ու հետերնին բռնեցինս  
 Ատքը երբոր մէկ տեղ սեղան նստան  
 ուտելու . յս հացը ձեռքը առաւ որհ  
 նեց՝ ու կտրտելով իրենց ձեռքը տա  
 լունպէս, աջվընին բացաւ, որ ճանչ  
 ցան զինքը . ու շուտմը առջենէն ա  
 ներևոյթ եղաւ : Անոնքալ ելանս որ  
 բէն էդէմ մէկալնոնց եկան, ու դեռ  
 իրենք իրենց հանդըպած բանը չի ը  
 սած, լըսեն որ մէկալ առաքեալները  
 իրենց կըպատմէին թէ՛ յս յարու թի  
 առեր է, ու պետրոսի երևցերէ :  
 Հոն առաքեալքը մէկ տեղ ժողոված՝  
 հրէաներուն ահէն դռները դոց, եր  
 բոր աս բաներուս վրա շիոթած կը  
 զուրուցէին, յս նորէն յանկարծ մէ  
 ջերնին երևցաւ, ու ողջոյն ձեզ ը  
 տա՛ւ էս եմ մի վախնաք : անոնքալ  
 որ ահաած կեցերէին . յս եկէք ըսաւ  
 ձեռքս ու ոտքս բռնեցէք որ իմանաք  
 թէ՛ ես եմ : Ատե աս բանս հաստա  
 տելու համար իրենցմէ կերակուր ու  
 ղեց, անոնքալ քիչմը խորված ձուկ



ու մեղք ունէին , ան տրվին , յսալ  
 առաւ առջևնին կրտորմք անկէց կե-  
 րաւ . ու ետքը իրենց հոգւոյն սբյ  
 շնորհքը պարգևելով՝ հրաման տը-  
 վաւ , որ ալ երթան չորս դին աշխարք  
 քարոզեն : անանկ աներեւոյթ եղաւ :  
 Ասատէսը թումասս առաքեալը հոն  
 չեր , ուստի ետքը երբոր դարձաւ քո-  
 վերնին եկաւ , ու անոնցմէ լսեց որ  
 կրսէին թէ մէնք հիմա յսր տեսանք .  
 թումասս ըսաւ որ ես ինչպիսն որ իմ  
 աչքովրս անոր ձեռացը մէջի գամին  
 նշանը չիտեսնեմ , ու ձեռքովրս չի  
 բռնեմ , ու ձեռքրս խոցված կողը չի  
 խոթեմնէ չեմ հաւտարու : Նոր համար  
 ասկէ ու թը օրէն ետքը երբոր բոլոր  
 աշակերտները նորէն հոն տեղը ժող-  
 ված՝ թումասսալ մէջերնին էր , յս մէկ  
 մալ երեցաւ իրենց , ու ողջոյն տալէն  
 ետե՛ դարձաւ թումասսի ըսաւ , եկի՛ր  
 ձեռքովրդ իմ ձեռվըներուս խոցե-  
 րուն տեղը բռնէ նայէ , ու ձեռքրդ  
 կողըս խոթէ , անանկ անհաւատ մը լ-  
 լար , հապա հաւատացեալ եղիր : Ան  
 ժամանակը թումասսալ հաւատալով  
 կանչեց ըսաւ . տէ՛ր իմ և անձ իմ :  
 Հնալ իրեն պին տրվաւ թէ՛ գուն  
 իս տեսար՝ ու անանկ հաւատացիր ,  
 երանի՛ անոնց որ իս չի տեսած՝ ինծի  
 հաւատան :

Ասկէ ետքը անգամընալ աշակերտ-  
 նէ


ները տիբերեա ծովուն քովը ձուկ  
բռնելու ատենը՝ իրենց երեցաւ յօ,  
ու անանք որ բոլոր գիշերը դատեր  
էին՝ ու բան չէին բռնած . յօ իրենց՝  
ծովուն մէկ կողմը ցուցուց, որ ուռ  
կաննին հոն ձգեն . երբոր անանկ ը  
րին, շուտմը հարուրյիստունի չափ խո  
շոր ձկներ ուռ կաննին մէջը առին, ա  
նանկ որ՝ ճորով առանց պատուելու  
վեր քաշեցին : աս հրաշքիս վրա աշա  
կերտներնալ իմացան որ ինքը յօն է,  
ու տի քովը եկան ժողվեցան, ու մէկ  
տեղ նստան ան ձկներէն եփեցին կե  
րան : Ատելէն ետքը յօ պետրոսի ի  
րեք հեղ հարցուց թէ՛ իս կըսիրե՞ս  
մի . պետրոսալ բոլորով պատիւ պինս  
տըվաւ որ՝ այն անոր դունալ գիտես որ  
քեզ կըսիրեմ : Յօալ իրեն ըսաւ՝ ա  
տանկ է՛նէ՛ իմ դառներըս ու իմ ոչ  
խարներըս արած է : Ա յօ ասով պետ  
րոսի իրեք անգամ ուրացուէ մեղաց  
դեղը դրաւ, ու իրեն թողու թի տը  
վաւ՝ հետը հաշտըվեցաւ . ետքը վրան  
մարդարէն թիալ ըրաւ՝ որ ծերու  
թի ատենը վօ այ մարտիրոսու թի

իր կեանքը պիտի տա :

Մս մէկ քանի պատմածներէս՝ իզատ,  
ու ըիչ շատ անգամ յարուի առնելէն  
ետեւ (ան քառսուն որը՝ որ աշխարքիս  
վրա կեցաւ՝) յօ իր աշակերտացը  
երեցաւ, ու քրիստոնէական հաւատ

քին բաները իրենց սորվեցուց : Այս  
 քի անգամն որ երևցաւ , իրենց ա-  
 պրսապրեց որ՝ սպասեն ինչպիսի ինքը  
 հոգին սքը խրկէ , որ գա իրենք շը-  
 նորհքով լեցունէ . ու անկէ ետքը ալ  
 երթան իր աւետարանը բոլոր աշ-  
 խարքիս քարոզեն : Անկէ ետե յժ  
 մէյտեղ ժողովեց իր աշակերտները ու  
 առաւ անոնք բեթանիայի քովը ձի-  
 թենեաց ըսած լեռը ելաւ , և հոն  
 օրհնելով իրենք՝ անոնց աչաց առջևը  
 դէպ՛ի երկինքը համբարձաւ դնաց :  
 Աւերքորալ ամպերուն մէջը մտաւ  
 աներևոյթ եղաւ . ան տեղը երկու  
 հրեշտակ ձերմակ լաթեր հագված  
 երևցան աշակերտներուն ու ըսին ,  
 ո՛վ գալիլեացիք՝ ինչ զարմացեր կը-  
 նայիք դէպ՛ի երկինքը , աս յսր որ  
 ձեզմէ զատվեցաւ երկինքը դնաց ,  
 նոյն կերպովը փառաւորապէս պիտի  
 մէկ օրմը նորէն դառնա : Աշակերտ-  
 ներնալ անանկ յսի երկրպագուի ը-  
 նելով ու ուրախուք՝ փառք տալով նոյ  
 երուսաղէմ դարձան :





# Մ Լ Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Պատմութի Գործոց Առաքելոց :

## Գ Լ Ե

Հոգւոյն սբյ գալուստը՝ ու հասարացելոյ շարնալը :

**Ք**անքիկները համբառնալու առանձն ինչպէս որ ասլըսպրերէր՝ բոլոր առաքեալները և աշակերտները մէյտեղ՝ մէկ տունմը ժողովեցան, կոյսն մարիամալ հետերնին, ու անդադար աղօթք ընելով կըստասէին հոգւոյն սբյ գալուն: Են օրերը պետրոս առաքեալը մէջերնին ելաւ ըսաւ որ՝ յուզայի մատնիւն տեղը՝ որ կորեր գացերէր, մէկ ուրիշը ընտրեն, որ տասլերկու առաքելոց համրանքը լրման մընա: Աստի երկու հոգի, ինչպէս կըսեն՝ ան քօի աշակերտներէն, ընտրեցին առաջբերին, մէկին անունը յովսէփ կի՛ յուստոս ըսած, մէկալինը մատաթիա: ու աղօթք ընելով վիճակ որ ձգեցին ասոնց վրա, մատաթիայի ելաւ վիճակը, ու անանկ ինքը առաքելոց կարգը մտաւ:

Համբարձմանէն տասն օր որ անցաւ՝

որ ալ պենակ հոստէ էր , նի զատկէն  
 յիսուեն օր ետե , առարվան գէմ  
 յանկարծակի երկինքը գոռալով մէկ  
 սաստիկ հովմը ելաւ՝ եկաւ ան առ-  
 նը մտաւ թընտացուց՝ ուր որ ասոնք  
 ժողոված կեցեր կըսպասէին . ու ի-  
 բենց ամմէն մէկուն գլխուն վրա մէկ  
 մէկ կրակի բոցիպէս լեզուի ձևով  
 լուս երևցաւ . (որ ան դրարվանց նը-  
 շան եղաւ թէ հողւոյն սրբ շնորհքը  
 եկերէ վրանին .) Վս եղածինպէս՝  
 ամմէնքը հողւով սրբով լեցված՝ սկը-  
 սան կերպ կերպ լեզուներով համար-  
 ձակ զուրուցել ու քարոզել քնի հա-  
 ւատքը : Վնատենը դրսի ուրիշ եր-  
 կիրներէն շատ հրէաներ որ եղէմ  
 ուխտ եկերէին , երբոր աս բանըսի-  
 մացան ու վազեցին հոն եկան , առ-  
 սան որ ասոնք իրենց երկրին լեզու-  
 ները կըզուրուցենկոր՝ մէկը պարս-  
 կերէն , մէկը սրարթաերէն , մէկը  
 հոռմերէն , մէկը արապերէն , ու ալ  
 ուրիշ շատ լեզուներ . պաշէցան մը-  
 նացին , աս ինչ զարմանալի բան է  
 ըսին՝ որ աս միամիտ գալիլէացի մար-  
 գիքը այսպիսի լեզուներ կըխօսին .  
 Վն մարգիքներէն ոմանքալ եղան որ՝  
 քամահրելով կըսէին թէ ասոնք գի-  
 նովցերեն : Պեարոս առաքեալը ան-  
 ատենը մէկալ առաքեալներուն հե-  
 տը մէկ եղած՝ ասոնց այնն տրվաւ  
 թէ՛

Թէ՛ գինով չենք, դեռ առտու է՛ գի  
նի չկորսնալիր . հասպա՛ հողւով սքով  
լցած ենք, ինչպէ՛ս յովէլեայ մարգա  
րէին բերնովը առաջուց ըսերէր անձ ,  
Նեղէն յոգացոյ իմէ՛ ի վէ ան ճարճոյ , եւ  
ճարճարէասցին ուստերք չեր եւ դատերք չեր  
իւ : Արքը յսի վրա խօսքը դարձու  
նելով՝ համարձակ առջևնին գրաւ  
զուրուցեց Թէ՛ աս յո՛նազովրեցին որ  
անչափ հրաշքներովը , (որ դուքալ  
տեսերէք ,) ցուցուց Թէ՛ ինքը ճշմա  
րիտ մեծիան է . ու դուք երբոր ասի  
կա ըսնեցիք խաչին վրա մեռցուցիք ,  
ինքնալ մարգարէից ըսած ինպէ՛ս՝ որ  
մեռնելէն յարու թի առաւ երկինքը  
համբարձաւ , անկէց հողին սք խըր  
կեց մեզի , որոյ նշանը դուք հիմա  
մեր վրա կը տեսնէք ու մեզմէ կը լը  
սէք : Ասքարողու թիովը ան լսողնե  
րէն իրեք հազար հողի չափ զղջա  
ցան՝ ու դարձան մկրտովեցան , քսի  
հաւատացեալ եղան : Աւատոնք ամ  
մէնը առաքելոց քովէն չէին բաժնը  
վեր , միշտ անոնց քարոզները մտիկ  
կը դնէին . հացերնին , աղօթքնին ,  
ամմէն բաներնին մէյտեղ . անոնկ  
որ՝ մէջերնին խմըս քուկըդ չիկար :  
անձալ առաքելոց ձեռքովը շատ հը  
րաշքներ գործելով՝ մէկալ ժողովուրդ  
նալ իրենցմէ կը պատկառէր, ու ասով  
որի, որ հաւատացելքը կը շատնային :

Գ. Լ. Բ.

Ի ծընե կադէն բժշկութիւնը :

Առաքեալները ան օրերը շատ անգամ տաճարը կերթային աղօթք ընելու . անգամ մը հանդըպեցաւ որ պետրոս ու յովհաննէս առաքեալը մէյտեղ իրիկվան ժամուէն երթալնի նի՝ տեսան որ տաճարին դռանը բռնվը մէկ կաղ (յի քէօթրում) մարդ մը կար քառսուն տարեկան, որ միշտ հոն կը բերէին կը դնէին, որ ողորմու թի կը մուրար : Ասիկա երբոր ան առաքեալներէն ողորմու թի ու զեց . պետրոս առաքեալը դարձաւ ըսաւ իրեն . նայի՛ ինչ կըսեմ, ես արժաթ ու ոսկի չունիմ, հասպա՛ ունեցածըս ան է որ քեզի կուտամ, յի քի նազովը ցիին անուշովը կըսեմ որ՝ ոտքի վրա ելլես ու քալես : այսպէս ըսելով անոր ձեռքէն որ բռնեց վեր վերցուց, շուտ մարդը բժշկուեցաւ, վաղելով ինքնալ հետերնին տաճարը մըտաւ, ու շնորհակալ ըլլալով փառք կուտար նոյն : Աս հրաշքիս պատճառովը շատ ժողովուրդ զարմանալով եկան ան առաքեալներուն վրան թափեցան, տեսնելով որ ան բժշկուած մարդը՝ որ իրենքալ աղէկ կը ճանչնային, եկեր բռներ անոնք ամմէն .

նուն կրցուցունէր աս բարիքը իրեն  
 ընողները : Ատրոս առաքելն ալ ան  
 տեղը նորէն անոնց յսի վրա քարոզե-  
 լով որ անոր անունովը աս բժշկու-  
 թիս կատարվեցաւ , ու յորդորելով  
 իրենք որ դառնան յսի դէմ ըրած ա-  
 նորէն ու իննն ապաշխարէն . անանկ  
 զղջում բերաւ որ՝ ան սրնալ հինկ հա-  
 զար հոգի դարձան հաւատացեալե-  
 զան : Վայց առաքելներուն դեռ քա-  
 րոզութիւնն բերաննին էր՝ որ հրէից  
 քահանայատէտները և տաճարին իշ-  
 խանները սրդողելով վրանն հասան ,  
 ու երկուքնալ բռնեցին ան գիշերը  
 բանտը դրին . ու մէկալ առտուն ան-  
 նա ու կայիափաք հայտէտներուն առ-  
 ջւը ժողով ժողված՝ հոն բերին ա-  
 սոնք , ու սկսան քննել հարցունել  
 թէ՛ դուք որո՞նք զօրութիւն կի՞մ անունո-  
 վր առ կաղը ոտք հանեցիք : Վնատե-  
 նը պետրոս հոգւով սքով լցված՝  
 պինս տրվաւ թէ՛ աս ինչ զարմանա-  
 լի բան է որ՝ դուք որ ինչլացոց իշ-  
 խաններն էք մեզ դատիրտել կուզէք  
 ան ողորմելի մարդուն աս բարիքըս  
 ընելնուս համար . որ յսի քսի անու-  
 նովը բժշկրվեցաւ , ան որ դուք խաչ  
 հանեցիք մեռուցիք , ու ան ինքը յա-  
 րուց . ու բոլոր ստեղծուածոց գլուխ  
 ըրաւ , անանկ որ՝ ուսանց անոր մարդ-  
 չիկըրնար փրկուէ հասնիր : Հրէից իշ-  
 խան



խաններն ալ տեսնելով սուտ քեղոց այս  
 պիտի խորունկ բաներով համարձակ  
 զուրուցվածքը, կը դարմանային վրայ  
 նին . դիտելին կը ճանչնային որ ա-  
 սանք ըռամիկ տղէտ մարդիք էին՝ որ  
 յնի հետը կը քալէին . և մէկալ դիէն-  
 ան բժշկելոված մարդը առջևնին տես-  
 նելով, պատանձեցան մնացին . Սու-  
 տի խորհուրդ ըրին որ բանը ժողո-  
 վըրդոց մէջ շատ չի տարածված,  
 իրենց աղէկմը ապրսպրբեն որ՝ մէյ-  
 մալ յնի անունը բերաննին չառնեն,  
 անոր վրա մարդու բան չիխօսին : Վ-  
 ռաքեալներն ալ ասոր պիտի տրվին թէ՛  
 ատ ըլլալու բան է՝ որ անձ թողունք՝  
 ու ձեզի հնազանդինք . մենք չենք  
 կրնար մեր տեսածը ու լըսածը պա-  
 հել չիղուրուցել : Վնոնքալ ձարեթ-  
 նին հատած՝ որ չըլլա թէ ասոնց պա-  
 տիժ տաննէ՝ ժողովուրդը ոտք ելլէ .  
 անանկ թող տրվին որ երթան : ու  
 երբոր եկան մէկալ սուտքեղոց և հա-  
 ւատացեղոց աս բաները պատմեցին՝  
 անոնքալ ամմէնքը փոռք տրվին նոյ :  
 Վտրը միաբան նոյ աղօթք ըրին, որ  
 իրենց ուժ կարողութի տա համարձակ  
 բնի աւետարանը քարոզել, ու հրաշք-  
 ներով հաստատել : անձալ նշան թէ  
 լսերէ իրենց աղօթքը, ան կեցած  
 տեղերնին շարժմը հանեց, ու հող-  
 լոյն սթյ նոր ուժմը եկաւ վրանին :

ԳՎ : Գ .

Լ՛նանիայի ու սափերայի պատիժը , և առաջ  
 քեզոց Գարուչուհիէն :

Լ՛սնոր քօի հաւատացեալներն որ ը-  
 սինք՝ ամմէնքը միաբան առաքե-  
 լոց հետ մէկ սիրտ մէկ հոգի եղած ,  
 իրենց ունեցած ըստակնին բաներնին  
 կը բերէին առաքելոց ձեռքը կուտայ-  
 ին , որ անոնք ամմէնուն հաւասար  
 բաժնեւում բոլոր հաւատացելոց պի-  
 տանաւ որ ուիր թէ հոգևոր՝ թէ մարմ-  
 նաւոր՝ իրենք կը հոգային . անանկ  
 որ՝ երկիր կմ տեղալ ունեցողները  
 տեղերնին կը ծախէին՝ ու անոր ըս-  
 տակնալ լըման իրենց կուտային : Ինչ  
 պէս որ ասանկ ըրաւ յովսէփ ըսած  
 մէկը՝ որ ետքը անունը բառնաբա-  
 կոց վեցաւ : Բայց ասոնցմէ մէկ մարդ-  
 մը անանիա անունով իր սափիրտ ը-  
 սած կնկանը հետ մէյտեղ խօսք դը-  
 րած՝ երբոր իրեն ագարակը (ցի չիֆտ-  
 լիկը) որ ծախեց , անոր ըստակը ա-  
 ռաւ քովը վար դրաւ . ու միանքիչմը  
 բան տարաւ առաքելոց ձեռքը տը-  
 վաւ , անանկ ցուցունեւում թէ՛ ան-  
 չափ է եղեր ան ագարակին գինը :  
 Պետրոս առաքելալը իմանալով ասոր  
 խաբէքայութիւնը , քովը գնաց յանդի-  
 մանեւում ըսաւ իրեն . անանիա ինչու  
 դուն

դուն սատանային մուկցիր՝ ու հոգին  
 աք խաբէլով ան ըստրկէն խոռեցիր .  
 ասանկ գիտնաս որ՝ դուն ասով չէ՛ թէ  
 մարդ՝ հասլա ւնձ ուղեցիր որ խաբէտ  
 լ՛նանիան աս ըսածին պէս՝ անտեղը  
 գետինը ինկաւ հոգին տըվաւ : ու  
 շուտմը եկան իր ծառաները անկէյ  
 վերցուցին տարին զինքը թաղեցին :  
 լ՛սոր վրա իրեք ժամ որ անցաւ , կը  
 նիկը իր էրկանը գլուխը եկածը չի  
 գիտցած , երբսր ինքնալ եկաւ պետ  
 րոսի առջևը ելաւ . պետրոս անորալ  
 նորէն հարցուց թէ՛ իրաւ անչափ ըս  
 տրկով ծախեցիք ան տեղը : Արնիկ  
 նալ ըսաւ թէ՛ հրամերես այնպէս է :  
 լ՛նատենը պետրոս անորալ երեւը  
 տըվաւ թէ՛ ատ ինչ է որ դուք եր  
 կուքդալ մէյտեղ խօսք դրերէք որ  
 հոգին նք փորձէք . ահա ըսաւ անոնք  
 որ քու էրիկըդ դրանը առջևը թա  
 ղեցին՝ քեզալ հոն տանին թաղէն :  
 Արնիկնալ շուտմը հոն յանկարծակիի  
 եկաւ՝ ինկաւ մեռաւ . ու ըսածիննիս  
 անալ տարին էրկանը քովը թաղեցին :  
 և աս պատիժներըս շատ ահ ու սոս  
 կում ձգեցին լսողներուն սիրտը :  
 լ՛նկէ ետև առաքեալները հոգւով  
 սրվ լցված՝ շատ հրաշքներ քժչկուի  
 ներ սկսան ընել , անչափ որ՝ աս բս  
 ներըս ձանձրնալէլով՝ ուրիշ քաղքնե  
 ղէնալ հիւանտներ ու ցաւադարներ

կառնելին Եղէմ կրքերէին : ու պա-  
 րպապ ատեն չի գտնալով որ ամմէնը  
 առաքելոց քովը տանին , ոմանք ալ ա-  
 նանկ իրենց պատգարակով ( քի թէ ճ-  
 կերէով ) հիվանդները ճամբուն վրա  
 կրգնէին , որ պետրոս անկէ անցնել-  
 նինի՛ գոնէ շուքը վրան զարնէ՛ ու ա-  
 նով բժշկելովին : Աս հրաշքները տես-  
 նելով ու քարոզութիւնը լսելով շատ  
 մարդ կրդառնային հաւատացեալ  
 կըլլային , ու անով բոլոր ժողովուր-  
 դը առաքեալներէն կըստատկառէին ,  
 որ իրենց թշնամիներնալ սիրտ չէին  
 ընել անոնց դպչելու : Ապայ ետքը  
 քչոյապետը սադու կեցոց հետ մէկե-  
 ղած՝ սաստիկ նախանձէն ալ չի դիմա-  
 ցան , ու առաքեալները բռնել տրվին  
 բանան որ դրին , ան գիշերը հրեշ-  
 տակ ան՝ մարդ չիմացած եկաւ բան-  
 ար բացաւ՝ ու իրենց ըսաւ որ չի վախ-  
 նան տաճարը երթան առջինինպէս  
 քարոզութիւնին ընեն : Ատրվանց  
 երբոր քչոյապետը մարդիք խրկեց՝  
 որ բանտէն առնեն իրենք սինոդոսին  
 առջեր բերեն : անոնք ալ գացին հոն  
 մարդ չիգտան . ու դարձան ըսին թէ  
 գացինք տեսանք որ բանտը աղէկ  
 գոց էր , ու պահասականները դրանք  
 քով կեցեր կըստահպանէին , ետքը  
 բանտը բանանք նայիք որ մէջը մարդ  
 չիկա : Աս բանիս վրա սինոդոսնալ

շիսթած որ կըզարմանար . ան ատե-  
 նը մէկմը եկաւ իրենց պատմեց թէ՛  
 ան ձեր բանտը դրած մարդ իբր հիմա  
 տաճարը կեցած ժղիգոց քարոզ կու-  
 տան : Աստի նորէն ետեւին մարդ  
 խրկեցին , որ ժղիգին վախէն անու-  
 շու թի կանչեց բերաւ առաքեալնե-  
 ըր : ու քչյայետը վրանին սրդողէ-  
 լով ըսաւ թէ՛ ձեզի չապրսպըրեցինք  
 չըսինք որ մէյմալ ան յսին վրա բե-  
 ըաննիդ չի բանաք , որ դուք բոլոր  
 եղէմ քիբը ատ ձեր աղանդովը լե-  
 ցուցիք . ու անով մեզալ անիրաւ կու-  
 ղէք ցուցունել թէ՛ մեք ան մարդուն  
 արուսը մտերենք : Ատրոսալ մէկալ  
 առաքեալներուն հետ պին տրլին  
 թէ՛ պէտք է որ մեք աւելի մյ հնա  
 ղանդինք՝ քան թէ մարդու . ու ա-  
 նանկ համարձակ խօսեցան յսի վրա ,  
 ու իրենց ըրած անօրէնուիր երեսնին  
 տրլին , որ անոնքալ առ բաներըս լը-  
 սելով նօրէն կատղեցան . ու ալ սկսան  
 խօրհուրդ ընել որ առաքեալները  
 մեռցունեն : Վայց ան ատենը մէջեր-  
 նին գամաղիկէլ ըսած մէկ աաք բիմը ,  
 որ օրինագէտ ու խօսքիտէր մարդէր .  
 ասիկա ելաւ իրենց խօրհուրդ տրլաւ  
 ըսաւ որ՝ ատ մարդիբը թող տրվէք ,  
 դուք բան մընէք ատոնց . տեսնե՛նք՝  
 թէ որ մարդ կային է ատոնց բռնած  
 ճամբաննէ՛ ինքիրեն կըոչընչանա կեր-

Թա, (ինչպէս որ քիչմբ առաջ էլաւ  
 Թեղասը, ետեւէն յուդա գալիլեա  
 ցին, որ խելմբ մարդիք գլխէ հանե  
 ցին, ու ետքը ցիրուցան եղան կորան  
 գացին.) հասլա Թէ ըսաւ աստուծ  
 մէնէնէնէ՝ գիտնաք որ ատոնք չէք կըր  
 նար աւրեր վերցուներ. և անով նմա  
 մարտալ կըսեպվիք: Վս գամաղիլի  
 ըսածին Թէպէտ ամմէնքը հաւնե  
 ցան, բայց այսու նմիւ մէկ ծեծմբ  
 քաշեցին առաքելոց, նորէն ասլըս  
 պրեցին որ մէյմալ յոի վրա քարոզ չե  
 տան, ու անանկ Թողուցին որ եր  
 Թան: Վնոնքալ էվիլք ուրախուի  
 ցուցուցին ասոր վրա՝ որ յոի համար  
 նախասովելու արժանի եղան. ու  
 մտիկ չըլին՝ նորէն իրենց քարոզուիլը  
 չէին գադրէր կընէին:

ԳՎ: Գ.

Ստեփանոսի պատմութիւնը:

Երբոր ալ օրէ օր շատցան հաւա  
 տացեալքը, ասոնց մարմնաւոր  
 հոգնալ էվելցաւ առաքելոց վրա.  
 ուստի աս բանիս համար ժողովք ը  
 րին՝ սահմանեցին որ աշակերտներէն  
 եօթը հոգի ընտրեն դնեն, որ ասոնք  
 հաւատացելոց մարմնաւոր սխտանա  
 ւորութիւր հոգան, ու իրենք բոլոր  
 հոգեօրին և քարոզուէ հետ ըլլան:

Ու

Աւստինք էին ան ընտրելիւսնէրը ,  
 ստեփանոս , փիլիպպոս , պրոքորոն ,  
 նիկանովրա , տիմոթէա , պարմենա ,  
 նիկողայոս : Աս եօթը հագիիս մէջը  
 ( որ սարկաւաք ըսվեցան , ) գլխաւո-  
 ըր ստեփանոս , մէկ բարի ու հոգւոյն  
 սբյ շնորքով լցված մարդմընէր , որ  
 անոր ձեռքովը շատ հրաշքներ  
 կընէր , ու քարոզուիւ և վիճարանու-  
 թիւ անանկ կըրպասանձեցունէր հը-  
 ըկայքը , որ ալ ճար չունէնալով ա-  
 նոր դէմ զուրուցել , սկսան վրան  
 զրպարտուի ( ցի իֆտիրա ) ընէլ թէ  
 ինքը ան ու մովսէսի դէմ միշտ հայ-  
 հոյանք կըխօսի : Անանկ բռնեցին  
 զինքը քհնյասպետին առջևը դատաս-  
 տան քաշեցին . երկու սուտ վկայ  
 գրին , որ կըսէին թէ մենք լսեցինք  
 որ աս մարդըս կըսէր թէ յսնազով  
 բեցին աս տեղըս պիտի կործանէ , ու  
 մովսէսի մեզի տըված օրէնքը պիտի  
 փոխէ : Վհնյասպետնալ երբոր հար-  
 ցուց իրեն թէ անանկ է մի . անատե-  
 նը ստեփանոս բերանը բացաւ ու  
 շնորհալի կերպով սկսաւ իրենց տեղ-  
 նիտեղը երկան անաշունչէն ցուցու-  
 նէլ թէ իր ըրած քարոզուիւ յսի վրա  
 ճշմարիտ ու շիտակ է , ու երեսնին  
 տըվաւ հրէից ազգին խտաւարտուիւ  
 և չարուիւ , որ անչափ սբ մարդարե-  
 նէր հալածեր ու մեռցուցեր են , որ

ամմէնը քնի գալուստը կըմարդա-  
րէանային , ու ետքը եկան անալ  
մատնեցին սպաննեցին :

